4745

Ե. Թոփչեան

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Մասն առաջին

ԹԻՖԼԻՍ
Տպարան ընկ. «Օրոմն» Типогр. т-ва «Оромъ»
1909

9(56)
Թ-83 I

9(56)
Թ-83
5 OCT 201

Ե. Թոփչեան

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԻԱՆ

ԵՒ ՀԱՅԵՐԸ

Armeniae Universitas Erevanensis

Մաս առաջին

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
47745
47745

ԹԻՖԼԻՍ
Տպարան ընկ. «Շրոմա» ✦ Типогр. т-ва «Шрома»
1909

19 APR 2013

XIX-րորդ դարի առաջին կիսաշրջանից Թիւրքիայում հրապարակ է իջնում նոր սերունդը՝ հին, մաշուած կարգերը վերացնելու և նորը հաստատելու ձգտումով։

«Ծերունի Թիւրքիայի» հանդէպ կանգնում է «Երիտասարդ Թիւրքիան», աշխատելով հայրենի երկիրը փրկել քայքայման կորստաբեր անդունդից և յարութիւն տալ Օսմանեան վաղեմի հզօրութեանը։

Այդ նշանաբանով գործող երիտասարդ թիւրքերը, թէև սակաւաթիւ ու յաճախակի անաջողութիւնների, հալածանքների ենթարկուած, բայց և այնպէս անյողդողդ շարունակում են իրենց փշոտ ու խոտորնակ ուղին։

Նրանց ձգտումներին որոշ ընթացք տուող և առհասարակ երիտասարդ թիւրք շարժման ռահվիրաներ են հանդիսանում գլխաւորապէս Ռաշիդ, Ֆուադ, Ալի ու Միդհատ փաշաները։

Ապա, Սուլթան Համիդի ջանքերով, հոսանքը կարճես պահ մի կանգ է առնում, տեղի տալով բռնութեան ու ռէակսիոնի ծանր հարուածներին։

Սակայն 90-ական թուականներից նա նորից վերակւում է, տարէց տարի զարգանում, նոյն իսկ զօրքի շարքերը մտնում։

Եւ մի գեղեցիկ օր ամբողջ աշխարհը ականատես է դառնում հոյակապ փաստին՝ տեղի է ունենում Օսմանեան մեծ յեղաշրջումը, յարութիւն է առնում միդհատեան սահմանադրութիւնը և ազատութեան ձայնը քաղցր մրմունջներով անցնում է Բալկաններից, Բոսֆորի ափերից դէպի Անատոլիա, Միջագետք, Սիրիա ու Արաբիա։

Սկիզբն է դրւում Թիւրքիայի վերածնութեան։ Եւ բազմաթիւ ազգեր վառ արշալոյսի հանդէպ կանգնած ակնապիշ սպասում են բացւող վարդագոյն օրերին։

Բայց որպէսզի հասկանալի լինի այդ պատմական երևոյթը և պարզւի ցանկալի հեռանկարը, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, թէ ինչ էր ներկայացնում «Ծերունի Թիւրքիան», ինչպէս

էր նա կազմակերպուել, հզօրացել և ինչ պատճառներից քայքայման վիճակին հասել։

Անցեալի պատկերը կը նպաստէ լուսաբանելու ներկան։ Ծերունի Թիւրքիային քննութեան ենթարկելը կը հեշտացնէ արժանի գնահատութիւն տալու երիտասարդ Թիւրքերի ժամանակակից գործունէութեանը։

Հէնց այդ նպատակով ներկայ աշխատութիւնը գալիս է ցոյց տալու թէ ինչ էր Թիւրքիան անցեալում և թէ ինչպէս հասաւ նա իր այժմեան վիճակին։

Դրա հետ զուգընթացաբար նա ուրւագծելու է, թէ Թիւրքիայի բազմացեղ ազգաբնակութեան խոշոր մասերից մէկը—առանձնապէս հայ ժողովուրդը ինչպիսի պայմաններում էր շրջապատուած հին օրերին, նրա ղեկավար ու գործօն տարրերը ինչ յարաբերութիւն են ունեցել երիտասարդ Թիւրքերի հետ յանուն ազատութեան և թէ ինչ սպասելիքներ ունեն նրանք ապագայից։

Թիւրքահպատակ ազգերի ինքնորոշման ու ընդհանուր հայրենիքի ներքին վերակազմութեան այս փոթորկոտ շրջանում առաւել ևս մեծ նշանակութիւն է ստանում վերոյիշեալ հարցերի լուսաբանութիւնը, իբրև ուղեցոյց ապագայի համար։

Եւ եթէ ներկայ աշխատութիւնը այդ տեսակէտից գէթ փոքրիկ ծառայութիւն մատուցանէ ընթերցողներին—մենք մեր նպատակին հասած կը լինենք։

Ն. Թոփչեան

Նոյեմբեր

Ա. ԹԻՒՐՔԻԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԶՕՐԱՆԱԼԸ

Թիւրքերի նախնական հայրենիքը.—Գաղթականութիւն դէպի արեւմուտք.—Թիւրքերը-մահմեդական.—Նրանց ռազմական դերը.—Օսմանեան պետութեան հիմնելը.—Արագընթաց հզօրութիւն.—Թիւրքիան՝ հիւանդ։

Թիւրքերը դեռ մի քանի դար Քրիստոսի ծննդից առաջ ապրում էին միջին Ասիայում։

Նրանք շատ յաճախ ընդհարւում էին չինացիների հետ։

Վերջիններս երկար ժամանակ աշխատում էին բարեկամական կապեր հաստատել Թիւրքերի հետ և դրանով սանձահարել նրանց արշաւանքները, բայց բոլոր փորձերն ապարդիւն են անցնում։

Վերջապէս լցւում է համբերութեան բաժակը, վառւում է հայրենասիրական կայծը և չինացիները ոտքի են կանգնում, հայրենիքը պաշտպանելու և անհանգիստ ու աւերիչ հարևաններին հեռու վանելու նպատակով։

Կռիւը յաջողութեամբ է վերջանում։ Չինացիները յաղթանակում են, ստիպելով Թիւրքերին շարժուել դէպի արևմուտք ու հարաւ։

Այժմեան Թիւրքեստանն է դառնում ընկճուած Թիւրքերի ապաստարանը, բայց այստեղ էլ նրանք երկար չեն մնում։ Կարճ միջոցից յետոյ սկսւում է գաղթականական մի հոսանք դարձեալ դէպի արևմուտք, դէպի Կասպից ծովի այս կողմը։

Այդ ղազթականների հրամանատարը՝ Սալիւրը 960-թւականին մի քանի հազար ընտանիքների հետ ընդունում է իսլամական կրօնը։

Նոր կրօնը, համապատասխանելով թիւրքերի աւերիչ հակումներին և ջէննաթի հուրիների հեռանկարով վառելով նրանց երևակայութիւնը, ամենակարճ միջոցում տարածւում է ամբողջ ժողովրդի մէջ, դառնում է ոգևորութեան աղբիւր, յաղթանակների նպաստող մի ազդու գործօն։

Բաղդադի խալիֆները կրիտիկական րոպէներում թիւրքերի օգնութեանն էին դիմում, դրանց միջից էին հաւաքում օգնական զօրքեր՝ իսլամի փառքը տարածելու համար։

Իբրև ռազմիկ տարր, թիւրքերը վերջ ի վերջոյ այնպիսի բացառիկ նշանակութիւն ստացան, որ ոչ մի խալիֆ առանց դրանց համաձայնութեան չէր կարող գահ բարձրանալ։

Արաբական տիրապետութեան այդպիսի թուլութիւնը քաջալերում էր թիւրք հրոսակներին և աւելի գրգռում թալանելու, աւերելու տենչանքը։

Նրանք հետզհետէ շարժւում էին դէպ առաջ, դէպ արևմուտք, հրով և սրով սարսափի մէջ գնելով շրջակայքը։ Բաւական երկար ժամանակ ամբողջ արևմտեան Ասիայի պատմութիւնը պտտում էր թիւրքերի և նրանց զանազան տոհմերի շուրջը։

Սակայն դրանց հիմնած մանր ու խոշոր պետութիւնները մնայուն, հաստատուն կազմ չէին ստանում, այլ գալիս անցնում էին պատմութեան ուղիով իբրև մի փոթորիկ՝ աւերիչ, քայքայիչ հետքերով։

Համեմատաբար աւելի երկարատև կեանք է ունենում սելջուկեան թիւրքերի հիմնած պետութիւնը, որ XI-րորդ դարում հզօրութեան գագաթնակէտին էր

հասել, իր իշխանութեան տակ ունենալով լայնարձակ երկիրները Խորասանից մինչև Եգիպտոս ու Սիրիա, Հայաստանից ու Քիւրդիստանից սկսած մինչև Վրաստան։

Բայց դրանից յետոյ սկսւում է քայքայման շրջանը։ Այն ժամանակ, երբ Չինգիզ խանը 50,000 արիւնռուշտ մոնղոլների գլուխն անցած շարժւում էր Կասպից ծովի արևելեան ափերից դէպի Հայաստան, երբ նրա յաղթական սուրը արիւնով էր ներկում փոքր Ասիայի դաշտ ու լեռները—ահա այդ ժամանակ սելջուկեան իշխանութիւնը արդէն ջլատւած, մի քանի մասերի էր բաժանւած, ուստի և անկարող էր դիմադրել թշնամուն։

Ռազմական թարմ ոյժը տրորում, ընկճում է հինը և Չինգիզ խանը դառնում է գերիշխող։ Նրանից յետոյ իշխանութեան ղեկը ընկնում է Էրթօղրուլի ձեռքը, որը բարեկամական յարաբերութիւն է հաստատում սելջուկեան Ալլահէդդին սուլթանի հետ և աջակցութիւն ցոյց տալիս նրան՝ յոյների դէմ պատերազմելիս։

Վերջապէս Ալլահէդդինի մահից յետոյ Էրթօղրուլի որդին—Օսմանը յայտարարում է իրեն իբրև սուլթան և միահեծան տէր դառնում սելջուկեան բոլոր երկիրների (1300 թւականին)։

Ահա այդ օրւանից է հաշւում այժմեան Թիւրքիայի սկիզբը։ Իր հիմնադրի՝ Օսմանի անունով նա կոչւում է Օսմանեան պետութիւն։

Օսմանի մահից յետոյ (1326 թ.) գահ է բարձրանում նրա որդին Օրխանը, որը նշանաւոր է ոչ միայն իբրև պատերազմող, աշխարհակալ սուլթան, այլ և իբրև օրէնսդիր ու կազմակերպիչ։ Նա հրատարակել է բազմաթիւ օրէնքներ, որոնց շարքում նշանաւոր տեղ է բռնում այն օրէնքը, որ թելադրում է հպատակ քրիստոնեաների երեխաներին հաւաքել,

յատուկ խնամքով կրթել իսլամի ոգու համեմատ և չափահասութեան տարիքը լրանալուց յետոյ զինուոր դարձնել։

Հէնց այդ զինուորներն են, որ ենիչերի անունն ստացան և օսմանեան պատմութեան մէջ մի արինոտ էջ աւելացրին իրենց քաջութեամբ ու բարբարոսութեամբ։

Մանուկ հասակից նրանց հեռացնում էին հայրենի տանից, հարազատ ծնողներից և մոլեռանդ մոլլաների դաստիարակութեանն յանձնում, ամեն կերպ աշխատելով ատելութեան թոյնը աւելացնել նրանց սրտի մէջ դէպի քրիստոնեաները, գեաւուրները։ Դրանով պէտք է բացատրել այն մոլեգնութիւնն ու դաժանութիւնը, որ դարերի ընթացքում գործադրել են ենիչերիները քրիստոնեաների վերաբերմամբ։

Դրանով պէտք է հասկանալի դառնայ, թէ ինչպիսի պատուհաս էր քրիստոնեայ ազգաբնակութեան համար այսպէս կոչուած «մանկաժողովը», այսինքն իւրաքանչիւր տարի քրիստոնեայ երեխաներ ժողովելը ենիչարական բանակի համար։

Սուլթան Օրխանի հաստատած այդ օրէնքը աւելի կամ պակաս չափերով, երբեմնակի ընդմիջումներով, գործադրւեց երկար ժամանակ և միայն բարենորոգիչ սուլթան Մահմուդն էր, որ ոչնչացրեց (1826 թ.) ենիչերիների ահարկու շարքերը։

Օրխանին յաջորդում են սուլթան Մուրադ Ա. (1360—1388 ր.) Պայազիտ, Ա. (1388—1402), Մեհեմմեդ Ա. Չելեպի (1413—1421), Մուրադ Բ. (1421—1451), Մեհեմմեդ Բ. Ֆաթիհ (1451—1481), որը տիրեց Կ. Պոլսին և վերջ դրեց բիւզանդիական կայսրութեան (1453 թ.) Պայազիտ Բ. (1481—1512), Սելիմ Ա. (1512—1520) և Մեծն Սուլէյման Ա. (1520—1566),

որոնք անվերջ պատերազմներով ընդարձակում են Թիւրքիայի սահմանները, գագաթնակէտին են հասցնում նրա հզօրութիւնը։

Միայն Մեծն Սուլէյմանը 13 պատերազմ է մղել հարեւանների դէմ. տիրել է Ռոդոս, Բէլգրադ, Բաղդադ քաղաքներն իրենց շրջակայ երկիրներով, Թիւրքական ահարկու նաւատորմը հաստատել է Սև, Արխիպելագոս և Միջերկրական ծովերում ու Պարսկական ծոցում։

Դա օսմանեան հզօրութեան ամենափայլուն շրջանն էր, երբ սուլթանը իշխում էր Եգիպտոսից, Արաբիայից մինչև Կարպատեան լեռները, Ադրիատեան ծոցից մինչև Կասպից ծովն ու Կովկասեան լեռները, երբ յաղթանակներով պսպղում էր իսլամի կիսալուսինը և ինքնագոհ շեշտերով հնչում էր մուէզզինի մելամաղձիկ ազանը.

—Լա իլահէ հիլլ Ալլահ, Մուհամմեդ ռեսուլ Ալլահ։ (Չկայ Աստուած բացի Աստծուց և Մահմեդը նրա մարգարէն է)։

Բայց այդ հզօրութիւնը միայն արտաքին էր, ամրակուռ հիմքից զուրկ։

Կուլտուրական ոյժը, սոցիալ տնտեսական էվոլիւսիոնը չէր Թիւրքիային այդպիսի ծաւալ տուողը, այլ միայն հուրը և սուրը, ռազմական ահը և սարսափը, որ յարատև լինել չէր կարող։

Նա թէև տիրապետել էր Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ամենահարուստ ու բարեբեր երկիրները, թէև բազմաթիւ ու բազմազան ազգութիւնների գլխին գերիշխող էր դարձել, բայց իրականապէս թոյլ էր ու անզօր, որովհետև ազգաբնակութեան մի խոշոր հատուածը, մահմեդական տարրը իբրև ռազմական մի բանակ ամեն կերպ խուսափում էր արտադրող աշխատանքից, կուլտուրական առաջադիմութիւնից։ Միւս

մասը՝ քրիստոնեայ տարրը բացառիկ հալածանքների առարկայ էր դարձած, կեանքի ու գոյքի ամենատարրական ապահովութիւնից էլ զրկուած։ Իսկ ամբողջի վրայ ծանրացած էր ընդհանուր բռնակալական լուծը իր կործանիչ ազդեցութեամբ, քայքայիչ գործօններով։

Բայց զէնքի միջոցով ձեռք բերած հզօրութիւնը որքան դիւրութեամբ բարձրացել էր, նոյնքան արագութեամբ էլ պէտք է տապալուէր, անհետանար։

Եւ իսկապէս։ Մեծն Սուլէյմանից յետոյ Թիւրքիայի աստղը դէպի ներքև է թեքւում և պարտութիւնները միմեանց յետևից գալիս են նրա խաւարն աւելացնելու։

Յետագայ սուլթանները՝—Սելիմ Բ. (1576—1575 թ.), Մուրադ Գ. (1574—1594), Մեհեմմեդ Բ. (1594—1603), Ահմեդ Ա. (1603—1618), Օսման Բ. (1618—1621), Մուրադ Դ. (1622—1639), Իբրահիմ Ա. (1639—1648), Մեհեմմեդ Դ. (1648—1692), Ահմեդ Բ. (1692—1694), Մուստաֆա Բ. (1694—1703), Ահմեդ Գ. (1703—1736), Մահմուդ Ա. (1730—1754), Օսման Գ. (1754—1757), Մուստաֆա Գ. (1758—1773), Աբդուլ Համիդ Ա. (1773—1788), Սելիմ Գ. (1788—1807), Մահմուդ Բ. (1808—1839), Աբդուլ Մեջիդ Ա. (1839—1860), Աբդուլ Ազիզ (1860—1876), Մուրադ Ե. (1876—1876) և վերջապէս սուլթան Համիդ (1876 թ.-ից մինչև օրս)—իրենց քաղաքականութեամբ միայն զարկ են տալիս Օսմանեան երկրի ներքին ու արտաքին քայքայմանը, դնելով նրան հիւանդոտ վիճակի մէջ։

Օսմանեան կայսրութիւնը, ասում է մեզ պատմութիւնը, ներկայացնում է մի զինուորական բանակ։ Տիրապետելով նորանոր երկիրներ, նուաճելով բազմազան ժողովուրդներ, այդ բանակը ոչ մի ուշք չէր դարձնում նրանց զէթ տնտեսական զարգացման վրայ,

որ նոյնիսկ բռնակալական պետութիւնների համար մի անհրաժեշտ գործօն է ներկայացնում։ Կոպիտ ուժով հնազանդեցնելով հպատակներին, կառավարութիւնն ամբողջ դարերի ընթացքում իր օրէնսդրութեամբ ու ներքին քաղաքականութեամբ ամեն կերպ նպաստում է ազգաբնակութեան մի բնորոշ շերտաւորման։ Նա հովանաւորում է մահմեդական տարրին, որ, իբրև տիրապետող, իրաւունք է համարում արտօնեալ վիճակի ձգտել, աշխատանքից խուսափել, իբրև մի անվայել գործից։ Նա սանձարձակ հալածանքների ենթակայ է դարձնում ռայաներին, որոնք թէև աշխատում են, բայց միշտ զրկուած ու քաղցած մնում. թէև հլու հնազանդութեամբ տանում են իրենց ծանր խաչը, բայց և այնպէս կրկնակի բռնութիւնների, հարստահարութիւնների են ենթարկւում կառավարութեան ու մահմեդական մոլեռանդ տարրի կողմից։ Այդպիսով բացի դասակարգային բնական շերտաւորումից աւելի վաղ և աւելի արագ կերպով թիւրքահպատակ ազգաբնակութեան մէջ տեղի է ունենում մի այլ տեսակի շերտաւորում—ցեղային, կրօնական, որ շատ յաճախ անհրաժեշտ է դարձնում միևնոյն ազգի տարբեր տնտեսական-սոցիալական շահեր ունեցող տարրերի միաւորումը և գործակցութիւնը ընդդէմ ընդհանուր թշնամու։

Եւ առաջ է ընթանում Թիւրքիայի քայքայման պրոցեսը երկու տարբեր ուղիներով։

Մի կողմից քրիստոնեայ ազգութիւններն են գլուխ բարձրացնում և զէնքի միջոցով ազատութեան ձգտում։ Դրա հետևանքը՝ Թիւրքիայի անվերջ անդամահատութիւնը, որի ապացոյցն են Սերբիան, Յունաստանը, Ռումինիան, Բօլգարիան, Չերնօգորիան և այլն։ Միւս կողմից մահմեդական տարրն է ըմբոստա-

նում բռնակալ ռեժիմի ստեղծած կարգերի դէմ և նոյն իսկ ազգային սեպարատիստական ձգտումներ արտայայտում, ինչպէս օրինակ արաբները, ալբանացիները։ Նոյն իսկ իրենք թիւրքերը վերջ ի վերջոյ գլուխ են բարձրացնում իրենց փադիշահի դէմ և ժողովրդական յախուռն շարժումներով արտայայտում ծովացած դըժգոհութիւնը։

Բայց չափազանց ուշ է տեղի ունեցել այդ փոփոխութիւնը։ Երկար, արիւնոտ դարերի անցեալ է հարկաւոր եղել դրա համար։

Պատճառները բազմազան են. սակայն դրանց շարքում մի առանձնայատուկ տեղ է բռնում իսլամական կրօնը։ Դրա վրայ յենուած սուլթանները շարունակել են իրենց բռնակալական քայլերը, դրա կապանքներով դարերով կաշկանդուած է մնացել մահմեդական մասսան կոյր մոլեռանդութեան ու յետամնացութեան ծոցում։

Առհասարակ կրօնական զգացմունքներն ու դաւանանքները խոշոր դեր են խաղում այնտեղ, ուր դեռ չէ թափանցել գիտութեան լոյսը, ուր մուտք չէ գործել քննադատող, վերլուծող մտածողութիւնը իր բանական պրպտումներով։

Իսկ արեւելեան ազգերի ու յատկապէս թիւրքերի վերաբերմամբ այդ դերը աւելի խոշոր է, որովհետև երկար դարերի ընթացքում իսլամը հանդիսացել է գրեթէ միակ աղբիւրը ոչ միայն զուտ կրօնական, այլ և քաղաքացիական օրէնսդրութեան։

Սուլթանները միշտ աշխատել են ղուրանի, շերիաթի թելադրումներով արդարացնել իրենց բոլոր քայլերը։

Վեզիր ու վալի, զափթիա ու հասարակ մուլլէմ— բոլորն էլ նոյն օրինակով են ղեկավարել իրենց կենցաղի, իրենց վարմունքի մէջ։

Իսլամը ինչ չափերով նպաստել է Թիւրքիայի հըզօրանալուն, նոյն չափերով էլ զարգացրել է քայքայման սաղմերը։

Բ. ԻՍԼԱՄԻ ԴԵՐԸ

Ղուրանը.—Իսլամը և ազգային հարցը.—Աշխարհի երկու մասերը ըստ ղուրանի.—Իսլամի դերը պատերազմների ժամանակ.—Ղուրանն ու աւետարանը.—Խալիֆ Օմարի պատուիրանները.—Ղուրանը իբրև քաղաքացիական օրինագիրք.—Իրաւական անհաւասարութիւն.—Նմուշներ հայ իրականութիւնից.—Հիւպատոսների կարծիքները.—Իսլամի դերը մահմեդականների վերաբերմամբ.—Ընտանեկան կեանք.—Մահմեդական կինը.—Կրթական գործը։

—

Ղուրանն է իսլամական իմաստութիւնների աղբիւրը, որ ներկայացնում է մի ժողովածու 114 գըլուխներից և 6666 այաթներից բաղկացած։ Իսկ այդ աղբիւրի թելադրութեամբ ամբողջ իսլամը բաժանւում է երկու մասի՝ հաւատ և ծէս։

Հաւատը թելադրում է հաւատալ՝ 1) միակ Աստծուն, 2) հրեշտակներին, 3) ղուրանին, 4) մարգարէներին, որոնց շարքում Մահմեդն է գլխաւորը, 5) յարութեան և վերջին դատաստանին և 6) ճակատագրին։

Ծիսական մասը պահանջում է 1) օրական հինգ անգամ աղօթք անել, 2) ողորմութիւն տալ, 3) ռամազան ամսին պահք պահել և 4) ուխտ գնալ Մեկկա, Մեդինա։

Սակայն իսլամական կրօնի ոչ մի մասը, ոչ մի պատուիրանը պատմական այնպիսի խոշոր դեր չէ խաղացել, ինչպէս մահմեդականների ու այլակրօնների յարաբերութեանց վերաբերեալ պատուիրանները։

Հին դարերից սկսած Արաբիայում ապրում էին բազմաթիւ հրէաներ, քրիստոնեաներ, որոնց հետ արաբները վարւում էին բարեկամաբար։ Սկզբներում ինքը Մահմեդն էլ աշխատում էր չխզել այդ բարե-

կամութիւնը։ Սակայն երբ իսլամը խոր արմատներ ձգեց արաբական ցեղերի մէջ, երբ Մահմեդի շուրջը բաւական ոյժ հաւաքուեց, այն ժամանակ նա նոր կրօնը հրի և սրի ասպարէզ դարձրեց, և պատուիրեց բռնութեամբ տարածել իր վարդապետութիւնը, զէնքի միջոցով խոնարհեցնել օտարադաւաններին։

Արաբների մոլեռանդութիւնը գրգռելու նպատակով նա հետզհետէ աւելի բնորոշեց «Ջըհադ ֆիլլահ»-ը (պատերազմ կրօնի, Աստծոյ համար)—այնպէս որ անհաւատների հետ պատերազմելը վերջապէս մահմեդականների գլխաւոր պարտականութիւնը դարձաւ։ Կռուեցէք անհաւատների հետ, ասում է Ղուրանը, մինչև որ վերջանայ մոլորութիւնը և ամեն տեղ տարածւի ձեր կրօնը [1]...

—Անհաւատներին պատահելիս սպանեցէք, գլխատեցէք մինչև որ բոլորովին ոչնչանան։ Գերիներին պահեցէք պինդ շղթայած [2]...

Մարգարէ, նախանձախնդրութեամբ կռուիր անհաւատների, կեղծաւորների հետ և եղիր դաժան ու անգութ նրանց վերաբերմամբ։ Գեհենն է նրանց բնակարանը [3]...

Մահմեդականների կարծիքով ամբողջ աշխարհը բաղկացած է երկու մասից՝ ա) «Դարուլ իսլամ—իսլամի երկիր» և բ) Դարուլ խարբ—պատերազմների երկիր», ուր ապրում են ոչ մահմեդականները, որոնց ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնելու համար հարկաւոր է անդադար պատերազմ մղել։

Երկրագնդի ամբողջ ազգաբնակութիւնը ըստ իսլամական օրէնքների քաղաքական տեսակէտից բաժանւում է չորս տեսակի [1]։

1) Ղուրան VIII սիւրա 40 այեաթ,
2) » XLVII » 4 »
3) » LXVI » 9 »
» IX » 79 »

1) Ուղղափառ մուսլիմներ, որոնք վայելելու են բոլոր արտօնութիւնները։

2) Զիմմիներ—այսինքն այն բոլոր ազգութիւնները, որոնք թէև դաւանում են ուրիշ կրօն, բայց ընդունել են իսլամի գերիշխանութիւնը և ապրում են իսլամական երկրներում։

3) Մուստամիններ—օտարահպատակներ, որոնք ապրում են իսլամական երկրներում ամանի, այսինքն ապահովութեան երաշխաւորութեան հիման վրայ։

4) Խարբիներ—այն բոլոր ազգութիւնները, որոնք չեն դաւանում իսլամը, ապրում են իսլամական երկրներից դուրս, ուրեմն և չեն վայելում օրէնքի հովանաւորութիւնը։

Իսլամը թելադրում է սրբազան պատերազմ—Ջըհատ մղել, մինչև որ բոլոր անհաւատները ընդունեն Մահմեդի վարդապետութիւնը։

Եւ մահմեդականները մեծ եռանդով իրագործել են այդ միսսիան։ Ջըհատը—սրբազան պատերազմն էր իսլամի շուտափոյթ տարածման պատճառը, ինչպէս նաև Օսմանեան պետութեան հզօրացման մեծ չափով նպաստողը։ Քրիստոնեաների հետ պատերազմելիս սուլթանները միշտ հրապարակ էին հանում մոլլաներին և նրանց ստիպում՝ գրգռել զօրքի մոլեռանդութիւնը, յիշեցնելով այն վայելքները, այն փառք ու պատիւը, որ խոստանում է Մահմեդը, անհաւատների դէմ մարտնչողներին, արեան գնով իսլամը պաշտպանողներին։

Թիւրք զինուորի համար ինչ փոյթ, թէ պատե-

1) Տես Гиргасъ: „Права Христіанъ на мусульманскомъ востокѣ, եր. 9.

բազմի դաշտում պիտ զրկւի երկրային կեանքից, պիտ անջատւի իր մերձաւորներից։ Չէ՞ որ նրան աւելի լաւ կեանք է սպասում ջեննաթում—չքնաղ հուրիների գրկում։

«Աստծու համար մարտնչողները, ասում է Ղուրանը, իրենց երկրային կեանքով կըգնեն երկնային կեանքը։ Թէ յաղթելու և թէ մեռնելու դէպքում նըրանք կըստանան մեծ վարձատրութիւն [1])... Սրբազան պատերազմներում սպանւածներին մեռած մի համարէք. նրանք կենդանի են, Աստծու մօտ են, արդէն ստացել են իրենց վարձատրութիւնը և մխիթարւում են Ալլահի առատաձեռնութեամբ։ Նրանց համար չըկայ ոչ երկիւղ, ոչ տխրութիւն [2])...»

Այդպիսի վարդագոյն խոստումները ոգևորութեան ու անձնազոհութեան մի անսպառ աղբիւր էին ներկայացնում մոլեռանդ զինւորների համար, մանաւանդ քրիստոնեաների դէմ մղած պատերազմների ժամանակ։

Բայց այդ պատերազմները, ղուրանական այդ ներշնչումները հետզհետէ աճեցրին թիւրքերի վատ հակումները, կոպտացրին նրանց մարդկային զգացմունքները և ստեղծեցին այնպիսի մի կացութիւն, որ նրանցից շատ-շատերի համար անդատապարտելի գործ դարձաւ այլադաւաններին սպանելը, նրանց կանանց ու աղջիկներին բռնաբարելը, ունեցւածքը թալանելը, իզուր տեղը ամբողջ գիւղ ու քաղաքներ ոչնչացնելը։

Դրա կենդանի վկաներն են Թիւրքիայի պատմութեան արիւնաներկ էջերը, Լիբանանի, փոքր Ասիայի, Բալկանեան թերակղզու դաշտ ու հովիտները,

Սուլթանական կառավարութեանը երբէք չէր աջողւի իր կլասիկ խժդժութիւնները գործադրել

[1]) Ղուրան IV սուրա 76 այեաթ
[2]) » III » 163—164 »

քրիստոնեաների վրայ. նա երբէք չէր կարողանայ ամբողջ Կրիտ կղզին արեան գետերով խեղդել, Բոսնիայում-Հերցոգովինայում մի քանի օրւայ մէջ հարիւրաւոր գիւղեր ոչնչացնել մօտ 40,000 մարդկանց հետ միասին [1]) (1876 թ.), հայկական նահանգներում էլ սիստեմատիկ ջարդերով 300,000 զոհեր խլել, ամբողջ գաւառներ բնաջինջ անելով և տասնեակ հազարաւոր ընտանիքների տանից—վաթանից զրկելով. տարագիր դարձնելով։—Այո՛, նա անկարող կըլինէր այդ բոլորն անել, եթէ մահմեդական մասսան իր մոլեռանդութեամբ ու դարաւոր ատելութեամբ դէպի քրիստոնեաները՝ աջակից չըհանդիսանար, պարարտ հող չըներկայացնէր այդպիսի գործերի համար։

Որպէսզի աւելի ակներև դառնայ այն կրօնական անդունդը, որ բացւած է միևնոյն պետութեան երկու տարբեր խաւերի՝ մահմեդականների ու քրիստոնեաների միջև, բաւական է համեմատութեան դնել մի քանի քաղւածքներ ղուրանից ու աւետարանից։

Ղուրանն ասում է [2])	Աւետարանն ասում է [3])
Աստւած վրիժառու է։ Անհաւատներ են նրանք, որոնք ասում են, թէ Մարիամի որդի Յիսուսը Աստւած է։ Ո՜հ հաւատացեալներ, երբ որ պատահէք նրանց, սպա-	Աստւած սէր է... Յիսուս նրա միածին որդին է... Հետևեցէք նրա վարդապետութեանը, որ քարոզում է հաւատ, սէր, երկայնամտութիւն, համբերատա-

[1]) Синьобосъ: «Политическая исторія Европы» հատոր. II, եր. 217
[2]) Ղուրան սուրա V. այեաթ 19, 50, 56, 77 և 164. Սուրա VIII, այեաթ 17. » XIV, 48 » XCI. այեաթ 8 » XXXV, այեաթ 9։
[3]) Աւետարան ըստ Յովհ. Գլ. ա. Գլ. ժէ. 3 Գլ. ժ. Ըստ Մարկ. Գլ. ժբ. 31. Ղուկ. Գլ. Զ. 35—37։ Թուղթ առ Հռովմ. Գլ. ժբ առ Տիմոթէոս Գլ. բ. գ. դ. 1-4. 2. 10.

նեցէք, հալածեցէք, մինչև որ բոլորը մահմեդական դառնան։ Անդադար պատերազմեցէք նրանց հետ և Աստուած կըվարձատրէ ձեզ։ Քրիստոնեաներին հաշտութեան մի հրաւիրէք. նրանց հետ մի բարեկամանաք... Գեհենն է նրանց բնակարանը...

րութիւն։ Քարոզեցէք Աստծու խօսքը... Աղօթեցէք բոլոր մարդկանց համար, որովհետև Նա ցանկանում է, որ բոլորը փրկւին... Եղէք ներողամիտ և բարերար։ Սիրեցէք ձեր թըշնամիներին, բարութիւն արէք ատելիներին։ Ոչ ոքի չարի փոխարէն չարութեամբ մի պատասխանէք...

Պատկերը լրացնելու համար աւելացրէք դրա վրայ նաև խալիֆ Օմարի պատուիրանները, որոնցով արգելւում է քրիստոնեաներին՝ զէնք կրել, թամբած ձի նստել, մահմեդականների նման շորեր հագնել, իրենց կրօնական ծէսերը հրապարակով կատարել և այդ միևնոյն ժամանակ յանձնարարւում է յարգել մահմեդականներին, զիջել նրանց պահանջներին։

Կատարելապէս տիրոջ և ստրուկի, աղայի և ծառայի յարաբերութիւններ։

Ճիշտ է, ղուրանի մէջ հանդիպում են և բազմաթիւ այեաթներ՝ մարդասիրութիւն, ներողամտութիւն ու հաշտութիւն քարոզող, բայց դժբաղդաբար դրանք մեռած տառ են մնացել կեանքում։

Տգէտ ամբոխը մոլեռանդ հոգևորականութեան ու բռնակալ կառավարութեան ազդեցութեամբ օգտել է միայն այն պատուիրաններից, որոնք յագուրդ են տալիս նրա հակումներին, առօրեայ շահերին։

—«Իսլամը, իրաւացի կերպով նկատում է Պիշօնը[1]), երկրագնդի զանազան վայրերում, զանազան ազգերի

[1]) Carl Pischon: Der Einflüss des Islam auf das häusliche, sociale und politische leben seiner Bekenner» եր. 139.

մէջ տարածել է այնպիսի բռնակալութիւն, որի նմանը դժուար է գտնել»։

Նա երկար դարերի ընթացքում փորել է կրօնների ու ազգերի անհաւասարութեան անդունդը։

Բայց միայն այդքանը չէ։ Նա իր խոր դրոշմն է դրել ոչ միայն կրօնական, այլ նաև սօցիալական կեանքի վրայ։

Իսլամական երկիրներում Ղուրանն է քաղաքացիական օրէնքների աղբիւրը։

Եւ քանի որ նրա հիմունքները ամբողջապէս անհամբերատարութեան թոյնով են շաղախւած, քանի որ դէպի այլակրօնները ատելութեան զգացմունքն է յանձնարարւած, ուստի քաղաքացիական օրէնքներն էլ նոյն ոգին են կրում։

Չը կայ հաւասարութիւն օրէնքի առաջ։ Դատաստանական կեանքում ղեկավարող սկզբունքն է ոչ թէ արդարութիւնը, այլ այս կամ այն ազգին պատկանելը։

Դատարանները երկու տեսակի է բաժանւած՝ մահմեդական (շերիէ)—դատարաններ, որոնց բարձրագոյն ղեկավարն է շէյխ ուլ իսլամը և խառը կամ նիզամիէ, որոնց անդամներ են բացի մահմեդականներից նաև քրիստոնեաներ։ Առաջին տեսակի դատարաններում զուտ մահմեդականների գործերն են քննւում, իսկ երկրորդ տեսակի դատարաններում՝ քրիստոնիաների ու մահմեդականների միջև պատահած վէճերը։

Սակայն այդպիսի ստորաբաժանումներն էլ չեն օգնում գործին։

Ոչ մահմեդականների վկայութեանը արժէք չէ տրւում։ Նրանց բողոքը միշտ կասկածանքով է քննութեան ենթարկւում։

—«Գիւղի մէջ, ասում է հայոց ազգային ժողովին

ներկայացրած մի տեղեկագիր [1]) շուկայի մէջ, տան մէջ, ուր որ ըլլայ, ոչ մահմեդական մը կըծեծուի կը նախատուի և այլն: Դատարան պիտի երթան. բայց ո՞վ պիտի վկայէ. տեսնող մահմեդականք չեն երթար վկայելու: Ոչ մահմեդականին վկայութիւնն ալ չի ընդունուիր: Այդպիսով դատը ինքնին կը կորսուի:

Դատարանէն դուրս երբ յանցաւոր մահմեդականը պարզերես կելնէ, ալ ինչ կըլլայ ամբաստանողին վիճակը. կամ ասանկ պարագայի մէջ ո՞ր ոչ-մահմեդականը կը համարձակի դատ բանալ, մինչդեռ իր յանցաւոր ելնելուն և բանտարկութեան կամ տուգանաց ենթարկելուն կանխաւ ապահով է:

Ուրիշ կերպ մը. մահմեդական մը կրնայ զրպարտել ոչ մահմեդական մը և վկաներու ունկնդրութեամբ զայն դատապարտել տալ:

Այս պատճառներուն համար շատ վնասներ, առևանգութիւնք և մինչև իսկ սպանութիւնք ալ պատահած են և յանցաւորն առանց պատժոյ թողլուութիւն վայելած:

Ստացուածքի իրաւունքն ալ այդ միջոցով երբեմն կըփչանայ, դժուարութիւն մը ծագած ատեն՝ մահմեդական վկաներու յենլով:

Քիւրդերը և ուրիշ հարստահարողք այս միջոցէն ոյժ կառնեն և կը քաջալերուին:

Գողութիւնք ալ այս միջոցաւ կը յաճախեն...»

Թէ իրաւական հողի վրայ կատարուած զեղծումներն ու անարդարութիւնները ինչ ահռելի չափերի էին հասած—կարելի է գաղափար կազմել նրանից, որ 1850—1870 ժամանակաշրջանում միայն հայերից և միայն հայոց պատրիարքարանի անունով ստացուած

[1]) «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ» 1871 թ. եր. 473

հաւաքական թագրիրների—բողոքագրերի թիւը հասնում էր 517-ի, այն է [1]).

1) Պաշտօնեաների պէս-պէս զեղծումների մասին . 198
2) Կանանց և անչափահաս մանուկներին բռնի կերպով մահմեդական դարձնելու մասին . 32
3) Առևանգութեան, մարդասպանութեան և այլ չարիքների մասին 248
4) Եկեղեցիների շինութիւնը, զանգահարութիւնը և մեռելների յուղարկաւորութիւնը արգելելու մասին 27

Ընդամենը 517

Այդքանը միայն գրաւոր թագրիրները, որոնք հասել էին մինչև պատրիարքարան: Հապա քանի բռնութիւններ, անիրաւութիւններ էին կատարել լռութեան, անյայտութեան մէջ, քանի տառապանք ու հեծեծանք խեղդուել էին մինչև Բոսֆորի ափերին հասնելը:

Եւ միայն հայերը կամ Բոսֆորի այս կողմում՝ փոքր Ասիայում ու Սիրիայում ապրող ոչ մահմեդականները չէին այդ վիճակում:

Անհաւասարութեան ու բռնութեան լուծը սուլթանական կառավարութեան հետ միասին ծանրացած էր ամեն տեղ: Թիւրքահայաստանից ոչ պակաս բազմաթիւ ու բազմազան փաստեր մատակարարում էր և Բալկանեան թերակղզին ու Թիւրքիայի միւս վայրերը:

Ահա թէ ինչ էին գրում այդ մասին անգլիական հիւպատոսները դեռ 1850—1860 թ. իրենց պաշտօնական զեկուցումների մէջ:

Պրիշտին (Ալբանիա) հիւպատոս մ—ր Բլունդ՝

—...Եթէ մահմեդականների և քրիստոնեաների

[1]) Ibid եր. 477—478

մէջ մի որեւէ վէճ կայ, այն ժամանակ քրիստոնեանե-րի վկայութիւնը չի ընդունւում ոչ մի պայմանով։

Բոսնիայի հիւպատոս Ջոհրար՝

—Քրիստոնեայ վկաներին երդւեցնում են Ղուրա-նով։ Երբեմն էլ բոլորովին չեն ընդունում նրանց վը-կայութիւնը...

Զմիւռնիայի հիւպատոս Զարլս Բլունդ՝

—Ներքին նահանգներում քրիստոնեաների ու-նեցւածքը յափշտակելը սովորական երեւոյթ է...

Բելգրադի հիւպատոս Լոնգվորտ՝

—Մահմեդականները շարունակաբար առեւանգում և բռնաբարում են բուլղար աղջիկներին և գեղեցիկ կանանց...

Դարդանելի հիւպատոս Աբբոտ՝

—«Այստեղ սովորութիւն է դարձել գինւորական ծառայութիւնից ազատել այն մահմեդականներին, ո-րոնք առեւանգում, մահմեդական են դարձնում քրիս-տոնեայ աղջիկներին...»

Առաջ բերած կարծիքները բաւական են ցոյց տալու համար, թէ ինչպիսի դժոխային կացութեան էր մատնել իսլամը ոչ-մահմեդական տարրերին, թէ ա-նարդարութեան ու անհաւասարութեան ինչ ծանր լուծ էր դրել նրանց վզին։

Բայց նա կորստաբեր ազդեցութիւն է ունեցել նաև իր հարազատ զաւակների վրայ, թէև տարբեր տեսակէտից։

Մահմեդական մասսան, թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքում, ղեկավարւելով Ղուրանի թե-լադրումներով, բնականաբար կաշկանդւած է մնացել նախապաշարումներով՝ հեռու գիտութեան լոյսից, կուլ-տուրական առաջադիմութիւնից։

Բաւական է մի թռուցիկ հայեացք ձգել մահմե-

դական ընտանիքի վրայ, բաւական է գիտել նրա ան-
դամների փոխադարձ յարաբերութիւններն ու առօրեայ
կենցաղը, որպէսզի համոզւենք, թէ որքա՜ն ծանր,
սարկական մթնոլորտ է տիրում այդտեղ։
Ճիշտ է, կինը դեռ քաղաքակիրթ երկրներում էլ
չէ հասել կատարեալ իրաւահաւասարութեան, դեռ ֆե-
մինիստական շարժումը այդտեղ էլ շատ բան ունի
անելու, բայց ոչ մի տեղ նա այնպէս իրաւազուրկ ու
արհամարւած չէ, ինչպէս մահմեդական աշխարհում։
Նա ստրուկն է, տղամարդու հաճոյքի առարկան
այդ բառի ամենալայն իմաստով։ Ղուրանի պատւի-
րանների համաձայն կինը պէտք է իր կեանքն անց-
կացնէ հարեմում, հեռու տղամարդկանց հասարակու-
թիւնից։ Փողոց դուրս գալիս նա պէտք է երեսը ծած-
կէ խաչմաղով, փաթաթւի ֆարաջայով, որպէսզի չը-
գայթակղւի և գայթակղութեան պատճառ չդառնայ։
Հասարակական կեանքի հետ նա ոչ մի առնչութիւն
չունի, բայց ընտանիքում էլ նրա կարծիքին, պահանջ-
ներին ու տրամադրութիւններին արժէք տւող չըկայ։
Տղամարդն է տան տէրը, տնօրէնը։ Կինը բոլոր
հարցերում պէտք է ենթարկւի նրա կամքին, հաճոյք-
ներին։
Գնահատւում է կնոջ ոչ այնքան խելքը կամ կըր-
թութիւնը, որքան նրա ֆիզիքական յատկութիւնները,
արտաքին գեղեցկութիւնը։
Իւրաքանչիւր ուղղափառ մուսլիմ իր հարստու-
թեան համեմատ կարող է վերցնել մի քանի կանայք։
Ցանկացած րոպէին նա կարող է արձակել մէկին,
միւսին, ընդունել նորերին—մի խօսքով վարւել նը-
րանց հետ ինչպէս ընտանի կենդանիների կամ երե-
խայական խաղալիքների հետ։ Ապահարզանն ու

[1]) Տես Ղուրան, սուրա՝ 2, 4, 33, 65, 66 և այլն։

ու ամուսնութիւնը ոչ մի տեղ այնքան հեշտ չեն կատարւում, որքան մահմեդականների մէջ։

Հասկանալի է, իհարկէ, որ կնոջ այդպիսի ստրկական վիճակը, հարեմական կեանքը անվերջ դաւերով, խանդոտ կռիւներով իր խոր դրոշմն է թողնում նաև մատաղ սերնդի վրայ։

Տգէտ, իրաւազուրկ, միայն սեռական յարաբերութիւններով հետաքրքրւած մահմեդական կինը անկարող է ցանկալի ազդեցութիւնն ունենալ իր երեխաների վրայ և նրանք մեծանում են մեծ մասամբ առանց որևէ դաստիարակչական խնամքի։

Ընտանիքից դուրս ղպրոցները պէտք է լինէին նրանց վրայ ազդողը, մտաւոր պաշար մատակարարողը, բայց դժբաղդաբար դրանք էլ չափազանց աննախանձելի վիճակի մէջ են՝ անկարող իրենց կոչման ծառայելու։

Իւրաքանչիւր մահմեդական պարտաւոր է որոշ քանակութեամբ Ղուրանի սուրաներ անգիր իմանալ աղօթք անելու համար։ Այդ հանգամանքը մի դրդիչ պատճառ է, թէ գիւղերում և թէ քաղաքներում տարրական դպրոցներ ունենալու, ուստի և այդ դպրոցների թիւը բաւական մեծ է Թիւրքիայում։

Սակայն ինչպէս այլ ասպարէզներում, նոյնպէս և դպրոցական կեանքում տիրապետողը Ղուրանի ոգին է։ Տարրական դպրոցների—(քիթթապիէ)—ամբողջ ծրագիրն ու դասնթացը կայանում է նրանում, որպէսզի երեխաները սովորեն արաբական ու թիւրքական տառերը ճանաչել և Ղուրանի սուրաները անգիր անել։ Դասաւանդութեան ձևը այդտեղ բառի բուն նշանակութեամբ հնադարեան է։ Ծալապատիկ նստում են երեխաները բաց գետնի կամ փսաթի վրայ և բարձրաձայն կրկնում Ղուրանի սուրաները, մեծ մասամբ առանց հասկանալու նրանց իմաստը [1]։ Ուսուցիչը երկար ճիպոտը ձեռքին, նստած կամ կանգնած, հետևում է այդ ժխորին, մերթ ընդ մերթ հարցումներ տալով, դիտողութիւններ անելով, իսկ երբեմն էլ ճիպոտի հարւածներով կարգի հրաւիրելով «անուշադիրներին», «անկարգներին»։

Այդպէս 4—5 տարի տարրական դպրոցներում անցկացնելուց յետոյ, երեխաները կարող են մտնել Ռուշդիէ կոչւող դպրոցները, որ համեմատաբար աւելի լայն ծրագիր ունեն։ Այստեղ բացի Ղուրանը անգիր անելուց սովորեցնում են գրել-կարդալ, թւաբանութիւն և տարրական աշխարհագրութիւն։ Ռուշդիէի դասընթացն աւարտողները կարող են զանազան պաշտօնների մտնել՝ քարտուղար, գրագիր և այլն։

Աւելի բարձր են մեդրեսէները, որոնք դրեթէ բացառապէս մզկիթներին կից են լինում։ Այդտեղ սովորեցնում են բացի արաբական, թիւրքական ու պարսկական լեզուներից նաև փիլիսոփայութիւն, աստւածաբանութիւն և պատմութիւն։ Կ. Պօլսում կան մեդրեսէներ մասնագիտական բաժիններով՝ ֆակուլտետներով, որոնց շարքում գլխաւոր տեղն է բռնում իրաւագիտականը։ Իրաւագիտութեան ուսմունքը բաժանւած է 4 մասերի՝ ա) հաւատի ուսմունք, բ) քաղաքացիական իրաւունքի ուսմունք, գ) աւանդութիւնների ուսմունք և դ) Ղուրանի ուսմունք։

Մեդրեսէի դասընթացն աւարտող սոֆտաները (ուսանողները)—կարող են ուսուցչի, իմամի (հոգևորական) կամ դադիի (դատաւոր) պաշտօն ստանալ։

Իսկ եթէ դրանից յետոյ համալսարանական բարձրագոյն դասընթացն էլ անցնեն կամ եօթ տարի շա-

[1]) Տես Luttke: „Der Islam und seine Völker“ եր. 174

բունակ իրաւագիտութեան վերոյիշեալ չորս մասերն էլ ուսումնասիրեն, կարող են մուդիրի, մոլլայի և այլ բարձր պաշտօններ ստանձնել։ Դեռ Կ. Պոլսի տիրապետող Մահմեդ II-ի օրով հաստատուած [1]) է իսլամական գիտնականների՝ ուլեմաների հինգ աստիճանները, որոնցից բարձրագոյնը մոլլայի տիտղոսն է։ Այդ բարձր մոլլաների շարքից փադիշահը ընտրում է շէյխ ուլ իսլամին, որը սուլթանից յետոյ ամենաազդեցիկ անձն է Թիւրքիայում։

Բացի վերոյիշեալներից Թիւրքիայում կան նաև մի քանի մասնագիտական դպրոցներ (բժշկական, զինուորական և այլն), ինչպէս նաև համալսարանի նըմանութիւն ունեցող մի բարձրագոյն դպրոց «Academie des sciences», որ շինուած է դեռ 1850 թ. մեծ վեզիր Ռեշիդ փաշայի ձեռքով և որտեղ բարձր գիտութիւններ են աւանդւում։

Ուշագրաւն այն է, որ թիւրք կառավարութիւնը չընայելով իր հալածանքներին ու բռնակալութեանը, բաւական ազատութիւն է տուել քրիստոնեաներին կրթական գործում։ Շնորհիւ այդ, այսպէս ասած՝ կրթական-կուլտուրական աւտոնոմիայի հայերը, յոյները և բոլգարները ունեն իրենց ազգային տարրական ու միջնակարգ դպրոցների ցանցը և այդ տեսակէտից համեմատաբար շատ բարձր են կանգնած թիւրքերից։

Բաւական խոշոր դեր են խաղում Թիւրքիայում նաև միսիօներական դպրոցները, բայց մահմեդական մասսան դրանց վրայ շատ խորթ աչքով է նայում, իբրև գեաւուրների հիմնարկութեան վրայ։

Այսպէս թէ այնպէս կրթական գործը, որ բոլոր երկրների կուլտուրական առաջադիմութեան աստի-

[1]) Hammer: «Ceschichte des Osmanischen Reiches» I, եր. 594

ճանաչափը կարող է համարուել, Թիւրքիայում շատ խղճուկ պատկեր է ներկայացնում։

Ամենայետամնաց երկիրներն անգամ տարէց տարի աւելացնում են ծախսերը դպրոցների վրայ, իսկ Թիւրքիան բոլորովին հոգ չէ տանում այդ մասին։ Այսպէս օրինակ. դպրոցական գործի վրայ ծախսած գումարներից ընկնում է իւրաքանչիւր բնակչին միջին հաշւով [1])

1	Շվեցարիայում . .	5	ռուբլի	40	կոպ.
2	Անգլիայում . . .	3	»	80	»
3	Գերմանիայում . .	3	»	50	»
4	Հոլլանդիայում . .	3	»	»	»
5	Բոլգարիայում . .	1	»	90	»
6	Աւստրիայում . . .	1	»	60	»
7	Իտալիայում . . .	»	»	80	»
8	Սերբիայում . . .	»	»	40	»

Ուրեմն յիշատակուած պետութիւններից կրթական տեսակէտից ամենավերջին տեղն է բռնում Սերբիան։ Դժբաղդաբար Թիւքիայի վերաբերեալ վիճակագրութիւն չըկայ։ Սակայն եւրոպացի ճանապարհորդներից Էմիլ Լավելէն թռուցիկ կերպով նկատում է իր աշխատութեան [2]) մէջ, թէ Թիւրքիան Սերբիայից էլ ստոր մակերևոյթի վրայ է կանգնած իր կրթական աստիճանով։ Սուլթանական հարեմի վրայ աւելի փող է ծախսւում, քան թէ բոլոր ժողովրդական դըպրոցների վրայ։

Օրինակ թէև կառավարութիւնը Տրապիզոնի վիլայէթից տարեկան ուղղակի հարկ է վերցնում [3]), մօտաւորապէս 34 միլլիօն ղուրուշ, բայց նոյն վիլայէթի

[1]) „Ежегодникъ народной школы“ вып. II եր. 374—376

[2]) Emil Von Lavele: «Die Balkan länder» Leipzig. 1888.

[3]) V. Qinet: «La Turquie d' Asie» հատոր I, եր. 36.

գիւղօրեարի վրայ ծախսում է միայն 244,000 ղուրուշ, մօտ 21900 ռուբլի: Ընդունելով որ Տրապիզոնի վիլայէթում մօտ 940000 բնակիչ կայ, ուրեմն իւրաքանչիւր բնակչի վրայ պետութիւնը ունեցել է գիւղացական ծախս մօտաւորապէս 4 ղուրուշ=34 կոպէկի:

Էրզրումի վիլայէթից հարկ վերցնում է տարեկան մօտ 25 միլլիօն ղուրուշ, իսկ կրթութեան համար ծախսում է միայն 135000 ղուրուշ [2]:

Միւս վիլայէթներում դրութիւնը աւելի վատ է:

Սակայն այդ դեռ բոլորը չէ: Քանակից աւելի մեծ նշանակութիւն ունի որակը: Իսկ այդ տեսակէտից Թիւրքիան առաւել ևս յետամնաց է: Վերևում առաջ բերած հակիրճ տեղեկութիւններից էլ պարզ երևում է, որ Թիւրքիայի բոլոր գիւղօրեարում՝ տարրականից սկսած մինչև բարձրագոյնը ղուրանի ոգին է իշխողը, ղուրանի պատւիրաններն են ուղղութիւն տուողը:

Անտախապաշտութիւնը, հնաւանդ յետադիմական գաղափարները չափազանց սահմանափակ մտաւոր հորիզոն են ստեղծում թիւրք պատանեկութեան ու երիտասարդութեան համար:

Կնոջ կատարեալ ստրկութեան, հարեմական կեանքի կործատարեր ազդեցութեան մթնոլորտում սկսւած ընտանեկան կրթութիւնը վերջանում է գրեթէ բացառապէս ղուրանական վարդապետութեամբ առգուած գիւղացական կրթութեամբ:

Եւ այդպիսով խակական գիտութեան փրկարար լոյսը մնում է բաւական հեռու թիւրքական հորիզոններից. ազիտութեան, յետամնացութեան խաւարը թանձր քօղով ծածկում է թիւրք ժողովրդի գիտակցութիւնը, լայն ասպարէզ թողնելով ամեն տեսակի

²) Ib d երես 176.

նախապաշարմունքների ու անտախապաշտութիւնների համար:

Այդ խաւարի շնորհիւ է, որ Թիւրքիայում դեռ այնքան մեծ ազդեցութիւն ունեն դերվիշական [1]) բազմաթիւ միաբանութիւնները—(մեվլևլի, րուֆայի, շեմսի և այլն)—իրենց թլիսմներով, կրօնական պարերով և բազմազան «հրաշագործութիւններով»:

Նոյն պատճառով է, որ թիւրք մասսայի մէջ այնպէս տարածւած է ֆատալիզմը՝ ճակատագրին հաւատալը, որը խեղդում է նախաձեռնութեան, ինքնուրոյնութեան ու աշխատութեան շինարար դերը:

Օսմանեան սուլթաններից մէկը՝ Աբդիւլ Ազիզը այսպէս է պատկերացնում ֆատալիզմը՝ [2]).

Մարդու կեանքը Աստուծոյ ձեռքին է.
Գահ ու իշխանութիւն նրանն է:
Իմ բաղդն էլ գրւած է իմ ճակտին
Եւ ես խոնարհւում եմ նրա առաջ:

Նոյնանման կոյր հաւատով դէպի ճակատագիրը կաշկանդւած է և ամբողջ ժողովուրդը:

Ամփոփելով առաջ բերած դիտողութիւնները, տեսնում ենք, որ թէ ընտանեկան և թէ կրթական ասպարէզներում թիւրքերի համար նախանձելի ոչինչ չը կայ:

Կառավարութիւնը ոչ միայն ջանք չէ թափում գիւղօրեարը կարգաւորելու, կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար, ոչ միայն չի փորձում վատ բարքերի ու կրօնական մոլեռանդ նախապաշարմունքների դէմ մաքառել, այլ ընդհակառակը ամեն կերպ քաջալերում է եղած դրութիւնը, որովհետև ժողովրդական ազիտութիւնն ու յետամնացութիւնն է ձեռնտու նրան:

¹) Е. Водовозовъ: „Турки“ եր. 70—76

²) «Народы въ Турціи» եր. 83

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐ

Թիւրքիայի մեծութիւնը. - Վիլայէթներն ու սանջակները. — Ազգաբնակութիւն. — Երկրի բնական հարստութիւնները. — Հողատիրութեան ձևերը. — Երկրագործութիւնը և նրան վնասող պայմանները. - Անասնապահութիւն. — Ջկնորսութիւն. — Արդիւնագործութիւն. — Հաղորդակցութեան միջոցներ. — Վաճառականութիւն:

—

Երեք աշխարհամասերի՝ Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի բարեբեր ու ընդարձակ վայրերն է բռնում Օսմանեան կայսրութիւնը: Նա ունի 2742200 քառ. կիլոմետր տարածութիւն և մօտ 28 միլլիօն բնակիչ, չըհաշուելով աւատական երկիրները (Եգիպտոս, Կիպրոս և այլն):

Ամբողջ կայսրութիւնը բաժանուած է 30 վիլայէթների կամ կուսակալութիւնների և 6 ուրոյն սանջաղների, այն է [1]).

Անուն	Տարածութիւն	Բնակիչ	Իւրաք. քլ.
1. Կ. Պօլիս	3,900	1,250,000	310
2. Այտըն	55,900	1,396,000	25
3. Ատանա	39,900	425,000	11
4. Գաստամունի	50,700	961,000	18
5. Գոնիա	102,100	1,069,000	10
6. Գոսովա	32,900	1,038,800	31
7. Դարապ.-Ղարպ	1,033,400	1,261,000	1
8. Տրապիզոն	32,400	948,500	29
9. Եանեա	17,900	527,000	30
10. Եէմէն	191,100	750,000	4
11. Էրզրում	49,700	645,700	13

[1]) Տես «Ընդարձակ օրացոյց ազգ. հիւանդ.» 1908 թ. եր. 107.

Անուն	Տարածութիւն	Բնակիչ	Իւրաք. քլ.
12. Էնգարէ	70,900	932,000	13
13. Էտիրնէ	38,400	1,028,000	27
14. Խիւտավէնտիկեար	65,800	1,636,800	25
15. Հալէպ	86,600	995,000	11
16. Նիճագ	250,000	300,000	1
17. Ճեզայիրը-Պահրը Սէֆիտ	6,900	323,200	47
18. Մամուրէդ-Իւլ-Ազիզ	32,900	575,200	29
19. Մօնաստիր	28,500	338,000	29
20. Մօսուլ	91,000	351,200	4
21. Շգոտրա	10,800	294,000	28
22. Պաղտատ	141,000	614000	5
23. Պասրա	138,800	433,000	3
24. Պէյրութ	16,000	533,000	33
15. Պիթլիս	27,100	398,000	15
26. Սելանիկ	35,000	1,130,800	33
27. Սըվազ	62,100	1,057,000	17
28. Սուրիա	95,900	719,500	20
29. Վան	39,300	379,800	9
30. Տիարպէքիր	37,500	471,500	13

Ուրոյն Սանճաղներ

Անուն	Տարածութիւն	Բնակիչ	Իւրաք. քլ.
1. Գալասի Սուլթանի	6,6000	129,000	20
2. Գուտսը Շէրիֆ	17,800	341,000	20
3. Զօր	78,800	100,000	1
4. Իզմիտ	8,100	229,500	27
5. Չաթալճա	1,900	60,000	32
6. Ճեպէլ Լիպնան	3,100	200,000	65

Ընդհանուր առմամբ ամբողջ կայսրութեան մէջ ազգաբնակութեան խտութիւնը շատ չնչին աստիճան է

կազմում, այն է՝ իւրաքանչիւր կիլօմետրի [1]) վրա մօտ 10 հոգի կամ իւրաքանչիւր վերստի վրա մօտ 11 հոգի Բայց կան վիլայէթներ, որտեղ ազգաբնակութեան խըտութիւնը դրանից էլ պակաս է, այսպէս օրինակ [2])։

Մօսուլի վիլայէթում իւրաքանչիւր քառ. կիլօմետրի վրա կայ 4 բնակիչ, Բաղդադի վիլայէթում 6։ Էրզրումի վիլայէթում 9։

Ցամենայն դէպս ամենախիտ բնակչութիւն ունեցող վիլայէթում այդ թիւը 39-ից չէ անցնում։ Այնինչ ուրիշ երկրներում այդ թիւը հարիւրից էլ անցնում է։ Օրինակ—իւրաքանչիւր քառ. վերստի վրա ապրում են [3])։

Բելգիայում	270 հոգի.
Անգլիայում	156 »
Իտալիայում. . . .	132 »
Գերմանիայում . . .	126 »
Ճապոնիայում . . .	124 »
Աւստր. Ունգար. . . .	85 »
Ֆրանսիայում . . .	83 »
Կովկասում	25 »

Առաջ բերած թւերից պարզ երեւում է, որ Թիւրքիայի ազգաբնակութիւնը իր տրամադրութեան տակ ունի շատ ընդարձակ հողեր։ Եւ եթէ դրա հետ միասին աչքի առաջ ունենանք այդ հողերի բարեբերութիւնն ու այլ յատկութիւնները, այն ժամանակ կարելի է համարձակօրէն կարծել, թէ ժողովուրդը այդ տեղ ն… խանձելի կենցաղ պէտք է ունենայ, տնտեսական … յիքներով շրջապատուած։

[1]) Կիլօմետրը վերստից քիչ պակաս է, այսինքն մօտ … 30 սաժէն։

[2]) W. Pressel: «Les Chemins de fer en Turq… d'Asie» եր. 65—67։

[3]) „Народный Календарь“ 1908 г. եր. 50։

Սակայն՝ իրականութեան մէջ բոլորովին հակառակն է։ Վերեւում յիշատակուած երկրներից ոչ մէկում թշուառութիւնը այնպիսի ահռելի չափերի չէ հասնում ինչպէս Թիւրքիայում։ Տնտեսական չարիքները ոչ մի տեղ այնքան ցայտուն գունաւորում չեն ստացել, ինչպէս Թիւրքիայում։

Անցնենք փաստերին, նախ յիշելով թէ այդ երկիրը բնական ինչպիսի հարստութիւններով է օժտուած։

ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ չափազանց առատ են Թիւրքիայում։ Կլիմայական ու աշխարհագրական տարբեր պայմանների մէջ գտնուող ընդարձակ վայրերը օժտուած են և տարբեր բուսականութեամբ ու բերքերով։ Բամբակն ու ծխախոտը, մետաքսն ու ափիոնը, անթիւ—անհամար տեսակների տանձն ու խընձորը, խաղողն ու ձիթապտուղը, դեղձն ու ծիրանը, սեխն ու ձմերուկը, նարինջն ու կիտրոնը, մի խօսքով գործածելիք լաւագոյն պտուղները առատութեամբ արտադրւում են Թիւրքիայում։

Զովաշունչ լեռները բոլոր դիւրութիւններն ունեն անասնապահութեան համար։

Ընդարձակ դաշտերը—երկրագործութեան անգնահատելի գոհարներն են։

Հարուստ անտառները, լայնատարած ծովափնեայ վայրերը արդիւնաշատ աղբիւրներ են ձկնորսութեան … արդիւնագործութեան բազմազան ճիւղերի համար։

Հապա հանքերը։ Ո՞րքան առատ են նրանք։ Մի- … պաշտօնական տեղեկութիւններով նրանց թիւը … [1])։ Այդքանը միայն բացուած ու աւելի կամ պա… չափով շահագործւողները, իսկ քանիսը կան գետ-տակ թաղնուած, անուշադրութեան մատնուած։

[1]) V. Quinet: «La Turquie d Asie» հատ. I. եր. …—18

Վիտալ Կինէյի տեղեկութիւնների համեմատ մի-այն Տրապիզոնի վիլայէթում 118 հանքեր կան, այն է.

Տրապիզոնի սանջակում.

Արծաթախառն արճիճի		21	հանք
Պղնձի	»	34	»
Արճիճ ու պղինձ	»	3	»
Մարգանեց	»	2	»
Երկաթի	»	10	»
Քարածուխի	»	2	»

Գիւմիշխանէի սանջակում

Արծաթախառն արճիճ		37	»
Պղինձ	»	7	»

Սամսոնի սանջակում

Արճիճ—արծաթ	»	1	»
Մարգանեց	»	1	»

Միւս վիլայէթներում էլ կան բազմաթիւ հանքեր, բայց ի հարկէ մեծագոյն մասը անխնամ և շահագործումից զուրկ:

Իր նամակներում շեշտելով այդ ցաւալի իրողութիւնը, գերմանացի յայտնի զօրավար Մօլտկէն նըկատում է [1].

—«Այդ ընդարձակ երկրում ո՞րքան հարստութիւններ դեռ մնում են չըշահագործուած: Քանի, քանի գետեր են վազում անօգուտ, մինչդեռ կարող էին բազմաթիւ ջրաղացների ույժ տալ: Անվերջ անտառներ, որոնցից օգտուել անկարելի է ճանապարհներ չը լինելու պատճառով: Ո՞րքան հանքեր են պարունակում լեռները, որոնք սպասում են շահագործող ձեռքերի: Այդ բոլոր հարստութիւնները 50—100% օգուտ են

[1]) Moltke: «Briefe über Zustande und Begebenheiten in der Turkei» եր. 281

խոստանում, բայց մօտեցող չըկայ, քանի որ հարկերի քանակը կարող է 50—100%-ից էլ անցնել:

Ահա այդ է պատճառը, որ կապիտալը մնացել է փակ պատերի մէջ պահուած և չէ կատարում իր իսկական դերը: Դրամատէրերը վախից բան չեն սկսում»:

Այդպիսով տիրող պետական կարգերը և կուլտուրական յետամնացութիւնը այնքան աւերիչ դեր են խաղացել, որ Թիւրքիան չընայելով իր լայնածաւալ անտառներին ու ծովերին, բազմազան հանքերին ու դաշտերին և ճոխ բուսականութեանը, այնուամենայնիւ ողբալի վիճակի մէջ է ընկած: Վառ գոյներով պատկերացնելով այդ վիճակը, իտալացի սոցիօլոգ Ֆերրերօն ի միջի այլոց ասում է [1]).

—«Փոքր Ասիան—արևի սիրասուն զաւակը, ամենաչքնաղ և պտղաւատ վայրը, հին հայրենիքը այնքան քաղաքակրթութիւնների, աշխարհի շտեմարանն ու ծաղկած այգին, որտեղից բոլոր կողմերն ուղարկւում են ցորէն, գեղձ, սալոր, ծիրան, և այլ օգտակար ու ախորժելի բոյսեր—այժմ ըստ երևոյթին գրեթէ բոլորովին կորցրել է իր նախկին պտղաւէտութիւնը: Թիւրքիան այլ ևս չէ արտադրում հաց, որ բաւականացնէ նրա գործածութեան համար և Կ. Պօլիսը սովի կը դատապարտուի, եթէ մի քանի օրով դադարի ալիւրի ներմուծումը Ռուսաստանից ու Վենգրիայից»...

Ապա հեղինակը նոյնպիսի փոփոխութիւնը շեշտում է նաև անասնապահութեան, այգեգործութեան ու տնտեսութեան այլ ճիւղերի վերաբերմամբ և եզրակացնում, որ բոլոր ցաւոտ երևոյթների պատճառը պետական կարգերն են: Դրա՛նց շնորհիւ է, որ երկրի բնական հարստութիւնները կորցրել են իրենց արժէքը, չեն մշակւում, չեն շահագործւում: Դրանց ազդեցութիւնն

[1]) Г. Ферреро: «Милитаризмъ» եր. 95

է, որ քրիստոնեայ տարրին դարձրել է հողազուրկ և գլխաւորապէս վաճառականութեամբ պարապող, իսկ մահմեդական տարրին՝ հողատէր, պաշտօնեատէր կամ զինուորականներ:

Սակայն իրենց ձեռքում կենտրոնացնելով հողատիրութիւնը, մահմեդականները չեն կարողացել օգտուել նրա բարիքներից, ուստի և ամենաբարեբեր հողերն անգամ յաճախ մնացել են անմշակ ու ապարդիւն:

Առհասարակ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԵԱՆ պայմանները բաւական ինքնատիպ պատկեր են ներկայացնում Թիւրքիայում:

Գոյութիւն ունեն հողատիրութեան երեք ձևեր 1) Վակուֆ 2) Միրի և 3) Միւլք:

1) Վակուֆ կոչւում են այն հողերը, որ պատկանում են մզկիթներին. սրան են վերաբերում՝

1) Վակուֆ-էլ-սարահ—կոչւում են այն հողերը, որ իւրաքանչիւր յաղթութիւնից յետոյ տրւում է մզկիթներին, հիւանդանոցներին, ուսումնարաններին և ուրիշ կրօնական ու բարեգործական հիմնարկութիւններին, որպէս նուէր՝ նրանց գոյութիւնը պահպանելու համար:

2) Վակուֆ-էլ-կայամանի—այն հողերը, որ միւնոյն նպատակով նուէր է տրւում զանազան անհատների կողմից:

3) Աղեթ—կամ ժամանակաւոր վակուֆ—որ հողերի մեծամասնութեանն է վերաբերում. դրանք այն հողերն են որոնք ինքնակամ տրւում են մզկիթներին, որ յարքունիս գրաւելու վտանգից ազատուին: Հողատէրը իր հողը կամ որպէս նուէր է տալիս, կամ թէ չէ մի չնչին գնով մզկիթներին է ծախում տներ և կամ մի հողի կտոր: Այս դէպքում հողատէրը դառնում է իր հողերի լոկ կապալա-

տու և չնչին կապալավարձ է վճարում և' սրա ժառանգները իրաւունք ունեն օգտուելու այդ հողից. կամ թէ չէ նա իրաւունք ունի իր կենդանութեան ժամանակ օտարներին տալ, սակայն դրանով նա կը զրկէր իր հողատիրական իրաւունքներից:

II. Միրի կամ արքունական հողեր, որոնք հինգ կարգի են բաժանւում:

1. Այն կալուածները, որոնց եկամուտը ամբողջովին մտնում է արքունական գանձարանը:

2. Մեվալ կամ ազատ հողեր (այսինքն անմշակ հողեր):

3. Սուլթանի սեփական հողերը:

4. Էմլակ—Հումայուն կամ այն հողերը, որոնց տէրերը իրենցից յետոյ ժառանգ չեն թողել:

5. Սուլթանի և կայսերական ընտանիքի միւս անդամների հողերը:

III. Միւլք—հողերի մասնաւոր սեփականութիւն, որի սեփականատէրը կարող է ազատ օգտուել նրանից և կամ ծախել ուրիշին. միայն անժառանգութեան դէպքում նա դառնում է կառավարութեան սեփականութիւն: Սակայն այս մասնաւոր հողատիրութիւնն էլ առանց սահմանափակումների չէ. օրինակի համար, մարգագետինները չի կարելի վարելահող դարձնել, կամ ծառեր ու խաղողի թփեր տնկել, կամ անտառը ոչնչացնել ու արտ դարձնել առանց սուլթանի իրադէի: Իսկ այս իրադէն ահագին ծախսեր է պահանջում:

Բացի սրանից, հողատէրը առանց կառավարութեան թոյլտուութեան, առանց հարկի իրաւունք չունի իր հողի ցախերը կամ յարդը այրել:

Հողաբաժինները ժառանգներին անցնելիս սեփականատէրը պարտաւոր է յատուկ տուրք տալ գանձարանին՝ արժէքի $2^1/_2$ $^0/_0$-ը, իսկ մէկ ուրիշին ծախելիս $5^0/_0$-ը:

Բախշիշները—կաշառքներն էլ, ի հարկէ, անպակաս են։

Ընդհանուր առմամբ մասնաւոր հողատիրութիւնը այնպիսի ծանր պայմանների մէջ է դրած, որ շատ քչերն են ձգտում հողային սեփականութիւն ունենալու։ Հէնց այդ պատճառով էլ հողերը չափազանց չնչին գնով են վաճառւում։

Վիճակագրութեան բացակայութեան շնորհիւ դժուար է ճիշտ ասել, թէ Թիւրքիայի հողերի ո՞ր մասն է է վակուֆ, ո՞ր մասը միրի և ո՞րը միւլք։

Յայտնի է միայն մօտաւորապէս, որ վակուֆները բոլոր հողերի երկու երրորդն են կազմում։ Չը նայելով, որ դրանցից տարեկան աւելի քան 20,000,000 ղուրուշ եկամուտ է ստացւում[1]), բայց և այնպէս այդ գումարը չի բաւականացնում մզկիթների պահպանութեան համար և կառավարութիւնը իւրաքանչիւր տարի դեռ մի քանի միլլիօն էլ պետական գանձարանից է տալիս։

Թիւրքիայի գլխաւոր մասը՝ Փոքր Ասիան բնութիւնից նշանակւած է երկրագործական ծաղկած վայր լինելու, բայց իրականապէս բոլորովին հակառակն է։ Մշակւում է երկրի միայն $40^0/_0$. դրա $^3/_4$ էլ վակուֆներ են, այնպէս որ մասնաւոր սեփականութիւնը ամբողջ տարածութեան $10^0/_0$-ից էլ պակաս է[2])։

Մշակման ձևերն էլ նահապետական են, ուստի և մեծ արդիւնք չեն տալիս։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ յետամնացութեանը նպաս-

[1]) Տես՝ «Народы въ Турціи» եր. 116

[2]) Տես «Tschichatschew: «Asie Mineure» եր. 68, Naumann: «Vom Holdenen Horn zu dém Quellen des Euphrat» եր. 454 և Kannenberg: «Kleinasiens Naturschätze» եր. 120։

տում են ոչ միայն հողատիրութեան այդ հիւանդոտ պայմանները այլ և այն իրաւակարգը, որ տիրում է Թիւրքիայում։

Այդտեղ դեռ մինչև օրս կան վայրեր, ուր գիւղացիութիւնը կատարեալ ստրկութեան է ենթարկւած և կառավարութիւնը ոչ մի միջոց չէ ձեռնարկում դրա դէմ։

Իբրև նմուշ բաւական է յիշել խաֆիրութիւնը, որ գոյութիւն ունի Տարօնում։ Դա գրեթէ օրէնքի ույժ ունեցող մի սովորութիւն է, որով քիւրդ աղաները իւրաքանչիւր տարի որոշ հարկ են վերցնում հարևան հայ գիւղացիներից։

Խաֆիրատու քիւրդ աղաները վարւում են հարկատու գիւղացիների հետ, ինչպէս ստրուկների հետ, այսինքն ծախում են, գնում են նրանց իբրև ապրանք։ Նրանք խաֆիրութեան տուրք վերցնում են գիւղացու բոլոր հասոյթներից։ Միջին քանակը իւրաքանչիւր ընտանիքից տարեկան՝

7 կոտ հացահատիկ
8 նուկի բուրդ
1 լիդր իւղ
$^1/_2$ լիդր մեղր
2 ոչխար

Այդ բոլորի հետ միասին նաև մրգեղէն, գործւածքներ և այլն։

Խաֆիրատու քիւրդական աշիրեթներից յայտնի են պալագցիները, ճելալցիները, բադրանցիները, խարզանցիները և այլն։

Ճիշտ է, վերջին տարիներս կամաց-կամաց վերանում է այդ ստրկական կացութիւնը, բայց հետքերը դեռ մնում են։

Երկրագործութեանը սոսկալի հարւած է տալիս

և սալաֆը—այդ խրատեսակի վաշխառութիւնը, որ կորստաբեր չարիք է Թիւրքիայի գիւղացիութեան համար և զարգացել է գլխաւորապէս հարկահանութեան աւերիչ սիստեմի շնորհիւ։

Կարիքաւոր գիւղացին շատ անգամ մահուան սպառնալիքի տակ ստիպւած է լինում պարտք վերցնել՝ հարկը վճարելու համար։ Վերցնում է փողով, բայց վճարում մթերքներով կամ աշխատանքով։ Իսկ թէ ինչ չափերի է հասնում շահագործումը, կարելի է գաղափար կազմել հետևեալ թւերից.

Վերցնում է	Վճարում է
1) 15—20 դահեկան,	իսկ 6 ամսից յետոյ մի ոչխար =40—50 դահեկան
2) 12—15 դահեկան,	իսկ 6 ամսից յետոյ 1 այծ= 35—40 դահեկան
3) 10—12 դահեկան,	իսկ 6 ամսից յետոյ մի լիդր ծխախոտ=25—30 դահեկան։

Աշխատանքով վերադարձնելու դէպքում աւելի մեծ է լինում շահագործումը։ Այնպէս որ եթէ տոկոսների վերածենք, դուրս կը գայ որ գիւղացին վճարում է տարեկան 200% և աւելի։

Ճիշտ է թիւրք կառավարութիւնը իբր թէ ունի այսպէս ասած «երկրագործական բանկ», որ չափաւոր տոկոսով փոխառութիւն պէտք է տայ գիւղացիներին, բայց դա միայն անունով, ձևականօրէն գոյութիւն ունի՝ առանց ցանկալի օգնութիւնը հասցնելու գիւղացիութեանը։

Սալաֆից ոչ պակաս չարիք է և շահագործման մի այլ միջոց, որ յայտնի է միրիբայութիւն անունով։

Կարիքաւոր գիւղացին միրիբայ է դառնում հետևեալ ձևով. Նա պարտք է վերցնում աղայից որոշ

գումար և քանի չէ վերադարձրել այդ գումարը, իր ամբողջ ունեցւածքով ծառայում է աղային։

Նա վարում, ցանում, կալսում է և արդիւնքը կիսում աղայի հետ։ Բացի դրանից նա կատարում է և ուրիշ աշխատանքներ աղայի համար։ Մի խօսքով նա դառնում է աղայի ծառան—ստրուկը։ Եւ այդպէս անվերջ տարիներ։

Կարծես այդքան չարիքները բաւական չէին, վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում առանձնապէս Թիւրքահայաստանում աւելացել է մի նոր տեսակի չարիք։

Լեռնաբնակ քիւրդ աղաները գրաւում են հայ երկրագործների հողերը և դեռ ստիպում նրանց, որ յատուկ ագարակներ—չիֆտլիկներ շինեն իրենց համար։

Այդ ձևով բաւական գրաւումներ են արել և չիֆտլիկներ շինել տւել, օրինակ, պալագցի աշիրեթը Շատախի և Խութայ շրջանում, ճիպրանցիները -Բուլանըխում, սէյդանցիները՝ Մշոյ դաշտի հիւսիսային սարաւանդում։

Նոյնը արել են Մշոյ դաշտում, օրինակ.

1) Օսման աղան	. .	Փիթար գիւղում
2) Հասան »	. .	Խոբեր »
3) Մահմուդ »	. .	Խալխալդաղ »
4) Իբրահիմ »	. .	Գոմս »
5) Համիդ »	. .	Սուլուխ »

Կարծում ենք կարիք չըկայ երկար բացատրելու, որ այդպիսի սարսափելի իրականութեան մէջ չէր կարող զարգանալ երկրագործութիւնը։

Խեղճ ու կրակ գիւղացիութիւնը հեշտութեամբ թողնում է իր հողը ու օտար երկրներ գաղթում, իսկ շատերն էլ գերադաս են համարում երկրագործութեան փոխարէն բոլորովին այլ զբաղմունք ընտրել։

Եւ ծաղիկ երկիրը չորանում, քայքայւում է տարէցտարի.

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ բաւական զարգացած է Թիւրքիայում, մանաւանդ մահմեդական տարրերի մէջ։

Այդ տեսակէտից առանձնապէս նշանաւոր է Անգօրայի վիլայեթը, որտեղ ոչխարների թիւը հասնում է մօտ 2 միլլիօնի, իսկ այծերի թիւը մօտ $1^1/_2$ միլլիօնի։

Էրզր. վիլայէթ.[1]) կայ մօտ 600,000 գլ. եզ, կով, գոմէշ.
» » » » 64,000 » ձի
» » » » 52,000 » էշ ու ջորի
» » » » 2,300,00 » այծ ու ոչխար։

Միւս վիլայէթներում էլ այդ թւերը բաւական խոշոր են։

Իւրաքանչիւր տարի Թիւրքիան արտահանում է ահագին քանակութեամա բուրդ և ղըֆտիկ։ Օրինակ նա արտահանել է [2]) միայն ղըֆտիկ.

1893 թ. . . . 35,506,556 ղուրուշի
1894 » . . . 54,772,000 »
1895 » . . . 73,275,660 »

Մեծ մասամբ դէպի Անգլիա, որտեղ մշակում են և պէս-պէս գործւածքքներ պատրաստում։

Թիւրքահայաստանում քիւրդ ցեղերի գրեթէ բացառիկ զբաղմունքն է կազմում անասնապահութիւնը։

ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ Թիւրքիայում շնորհիւ ընդարձակ ծովափերին ու բազմաթիւ լիճ ու գետերին թէև ունի բնական բոլոր դիւրութիւնները, բայց հինավուրց կարգերի պատճառով արդիւնաբերութեան այդ աղբիւրն էլ ողբալի վիճակի մէջ է։

[1]) Տես V. Quinet: «La Turque d' Asie» հատոր 1, երես 147

[2]) Dr. Crunzel: «Die Wirtschaftlichen Verhältnisse Kleinasiens». Wien 1897. եր. 50

—Կառավարութիւնը, իրաւացի կերպով նկատում Մակ Կօան[1]), ձկնորսութիւնից չէ ստանում ցանկալի եկամուտը. արդիւնաբերութիւնը ծանրաբեռնւած է անկանոն հարկերով և սպառումը չափազանց սահմանափակ է։

Ձկնորսութեան վայրերը կապալով են տրւում շատ չնչին գներով, սակայն ծախւող ձկի վրայ մեծ հարկ է դրւում, այն է արժէքի 21% անաղ ձկի համար և 31% աղածի համար։ Բացի դրանից ձկնավաճառը 3% էլ պէտք է վճարէ Բալըղ Խանէին, այսինքն ձկան շուկաների վարչութեանը։

Արդիւնաբերութեան այլ և այլ ճիւղերի այդպիսի յետամնացութիւնից յետոյ բնական է տեսնել ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ աւելի վատթար վիճակը։

Միայն կեանքի ու գոյքի ապահովութեան բացակայութիւնը չէ, որ ազդում է դրա վրա։

Թիւրքիան եւրօպական պետութիւնների շարքում մի բացառիկ տեղ է բռնում իր արտաքին քաղաքականութեամբ։

Ենթարկւած լինելով մեծ պետութիւնների զօրեղ ազդեցութեանը, միջազգային դաշնագրերով ու բազմաթիւ կօնցեսսիաներով առանձնաւած ունենալով այլ և այլ պարտաւորութիւններ օտար երկիրների հանդէպ, Թիւրքիան գրեթէ բոլորովին զրկւած է ինքնուրոյն քաղաքականութիւնից, մանաւանդ տնտեսական հարցերում։

Ժամանակակից պետութիւններից իւրաքանչիւրը ձգտում է հովանաւորել մայրենի արդիւնագործութիւնը, որպէսզի դրանով վերջինս ծաղկի ու զարգանայ։

Օտար երկիրներից ներմուծւող ապրանքների վրա մաքս նշանակելով կառավարութիւնը արհեստա-

[1]) «Нашъ новый протекторатъ».

կան ձևով բարձրացնում է նրանց գինը, որով մի կողմից եկամուտի աղբիւր է ստեղծում իր համար, իսկ միւս կողմից մայրենի երկրում պատրաստուած նման ապրանքների սպառմանը նպաստում, դրա հետ միասին զարկ տալով տեղական արդիւնագործութեանը: Դրանից տուժում են, ի հարկէ, սպառողները, բայց աւելի արագ զարգանում արդիւնագործութիւնը:

Պրոտեկցիոնիզմի այդ քաղաքականութիւնը գրեթէ բացակայում է Թիւրքիայում: Օտար երկրեայ կապիտալիստները բոլոր դիւրութիւններն ունեն Թիւրքիա ապրանքներ ներմուծելու:

Դրանով պէտք է բացատրել այն իրողութիւնը, որ օրինակ Ռուսաստանի շաքարը Թիւրքիայում աւելի էժան է ծախւում (10—12 կոպ. ֆունտը), քան թէ բուն Ռուսաստանում [1]) (15—16 կոպ. ֆունտը), անգլիական, գերմանական ու ֆրանսիական ապրանքները այդտեղ աւելի էժան են ծախւում, քան թէ Ռուսաստանում, որովհետև վերջինս դրանցից մաքս է վերցնում, այն ինչ Թիւրքիան կամ ոչինչ չէ վերցնում կամ վերցնում է չափազանց աննշան մաքս:

Այդպիսով Թիւրքիան դառնալով մի տեսակ բաց շուկայ եւրոպական կապիտալիզմի համար, չափազանց դանդաղ կերպով է զարգանում տնտեսապէս: Կապիտալիստիկ արդիւնագործութիւնը այդտեղ սաղմային վիճակի մէջ է գտնւում:

Շատ գաւառներ դեռ բնական տնտեսութեան աստիճանի վրա են կանգնած:

Իւրաքանչիւր ընտանիք պատրաստում է այն ամէնը, ինչ որ հարկաւոր է ուտելիքի, վառելիքի ու հագնելիքի համար: Փողով առևտրի փոխարէն տեղի է ունենում ապրանքների փոխանակութիւն:

[1] Երկրի ներսում գործածւող շաքարից կառավարութիւնը ակցիզ է վերցնում:

Մարդաշատ կենտրոններում զարգացած են արհեստները, որոնցով զբաղւում են գլխաւորապէս քրիստոնեաները:

Կան առարկաներ, որոնք թէև պատրաստուած են այդ արհեստանոցներում նահապետական ձևով, բայց որոշ հռչակ են վայելում և նոյն իսկ արտահանւում են երկրից դուրս:

Այսպէս օրինակ նշանաւոր են Թիւրքիայի սաֆեանն—(կաշի) ու կտաւը, շալն ու մետաքսէ գործուածքները, ինչպէս նաև գորգ ու կապերտները:

Արհեստանոցային արդիւնագործութիւնը գտնւում է մի տեսակ անցողական վիճակի մէջ: Այդտեղ նկատելի է ուժեղ ձգտումն դէպի գործարանային սիստեմը: Այսպէս օրինակ Զմիւռնիայի մօտ կան գորգագործարաններ, ուր աշխատում են 3000-ի չափ կանայք: Դիարբեկիրում կան կաշու արհեստանոցներ հարիւրաւոր բանւորներով: Նոյնը և մի քանի այլ կենտրոններում:

Թիւրքիան ունի նաև բազմաթիւ գործարաններ՝ գլխաւորապէս Կ. Պոլսում ու շրջակայքում: Դրանցից ամենանշանաւորն է Դոլմա Բախչէում գտնւող ձուլարանը զէնք ու թնդանօթների, ինչպէս նաև ֆէսի ու մահուդեղէնի գործարանը Իզմիդում:

Բացի այդ բոլորից տարէցտարի բազմանում են մասնաւոր կապիտալիստական ձեռնարկները գլխաւորապէս եւրոպական ընկերութիւնների նախաձեռնութեամբ.

Դրանցից կարևորներն են [1]).

1) Ռէժի ընկերութիւնը, որ հիմնւած է 1884 թ. և Մուհարրէմ ֆերմանով 30 տարւայ արտօնութիւն ունի ամբողջ Թիւրքիայի ծխախոտի մշակման շահա-

[1]) «Ընդ. օրացոյց ազգ. հիւանդանոցի» 1908 թ. եր 410

գործումը։ Նրա դրամագլուխն է 100 միլլիօն ֆրանկ՝ 200,000 բաժնեթղթերի բաժանուած։ Ընկերութիւնը վճարում է տարեկան 750,000 ոսկի «հանրային պարտուց վարչութեանը» Dette Publique։

Դրա փոխարէն նա, իբրև մենարտօնեալ, հաւաքագնում է բոլոր վայրերից տասցուղ ծխախոտը, մըշակում և վաճառքի հանում։

Խեղճ գիւղացիութիւնը այդ ընկերութեան միջոցով կրկնակի ու եռակի չափերով հարստահարւում է։

2)Անատոլիի Օսմանեան երկաթուղու ընկերութիւն, որ հիմնուած է 1889 թ. Բեռլինի «գերմանական բանկի» նախաձեռնութեամբ 99 տարի ժամանակով և 60 միլլիօն ֆրանկ դրամագլխով։ Ընկերութիւնը շահագործում է երկաթուղու հետևեալ գծերը.

1. Հայդար փաշա-Իզմիտ . . 92 կիլօմ.
2. Իզմիտ Էնկիւրի . . . 486 »
3. Էսկիշէհեր Գոնիա . . 445 »
4. Համիդիէ Ադաբազար . . 9 »

3) Իզմիր Գասաբա երկաթուղու ընկերութիւնը ուր կազմուած է անգլիացիների ձեռքով 16 միլլիօն ֆրանկ դրամագլուխով, մենարտօնութիւն ունենալով շահագործելու 93 կիլօմետր երկարութեան այդ գիծը։

4) Իզմիր-Այտըն երկաթուղու անգլիական ընկերութիւնը 1 միլլիօն 784,00 ոսկի դրամագլխով.

5) Մերսին-Թարսուս Ադանա երկաթուղու Օսմանեան ընկերութիւնը 175,000 անգլիական ոսկի դրամագլխով։

6) Տրամվայի ընկերութիւն Կ. Պօլսում, որ ունի 100,000 դրամագլուխ և արտօնութիւն մինչև 1918 թ. շահագործելու տրամվայը.

7) Շիրէթը խայրիէ ընկերութիւն, որ մինչև 1953 թ. արտօնութիւն ունի Բոսֆորի եզերքներում շոգենաւեր բանեցնելու։

8) Կ. Պօլսի ջրի ընկերութիւն՝ 20 միլլիօն ֆրանկ դրամագլխով և մինչև 1957 թ. պայմանաժամով։ Արտօնութիւնն է Տէրքոսի լճից Բերա, Կալաթա և Բոսփորի եւրոպական եզերքը ջուր բերելը։

9) Էրէյլիի հանքային ընկերութիւն 10 միլլիօն ֆրանկ դրամագլխով, որ մինչև 1946 թ. արտօնութիւն ունի յատուկ ֆիրմանով որոշուած սահմաններում գտնուած հանքերը շահագործել։

10) Պալիա զարա այտընի հանքային ընկերութիւն $4^1/_2$ միլլիօն ֆրանկ դրամագլխով, որ արտօնուած է շահագործելու Խիւտավէնտիկարի կուսակալութեան Գարասի սանջաղի հանքերը։

11) Քասամոնային հանքային ընկերութին 3 միլ-
ֆրանկ դրամագլխով։

12) Գարասուի հանքերի Օսմ. ընկերութիւն 6
միլլիօն ֆրանկ դրամագլխով.

13) Շիրքէթը խայրիյէ Համիդիէ Սելանիկի և Քէսէնտերէի ծովախորշերում շոգենաւեր բանեցնելու արտօնուած ընկերութիւն 75,000 ոսկի դրամագլխով։

14) Դերձանի եւ կերպասի օսմանեան անանուն ընկերութիւն 45,000 անգլիական ոսկի դրամագլխով։ Արտօնուած է Կ. Պօլսի շրջականերում կերպասի, փանելայի, դերձանի, ֆէսի և բամբակի գործարաններ ունենալու։

Մենք յիշեցինք զուտ արդիւնագործական ձեռնարկներով զբաղուած ընկերութիւնները, բայց թողնելով ֆինանսական-բանկային հաստատութիւնները, որ նոյնպէս բաւական շատ են։

Առաջ բերած ցանկից պարզ երևում է, որ արդիւնագործական ամենախոշոր ձեռնարկները եւրոպացիների ձեռքում են կենդրոնացած։

Եւ դա հասկանալի է։ Թիւրքահպատակը զուրկ է գոյքի ապահովութիւնից, այն ինչ եւրոպացի կապիտալիստները իրենց պետութիւնների հովանաւորութեան վրայ հիմնւած ունին և ապահովութիւն և շահաւէտ արտօնութիւններ։

Այդպիսի պայմաններում բնականօրէն օտար կապիտալները ներս են խուժում Թիւրքիայի խորշերը և ամրացնում կապիտալիստիկ արդիւնագործութեան արմատները։

Երկրի արդիւնաբերութեան ու արդիւնագործութեան զարգացման հետ սերտ կապւած են ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Այդ տեսակէտից Թիւրքիան նախանձելի պատկեր չէ ներկայացնում։

Երեք միլլիոնից աւելի քառ. կիլօմետր տարածութիւն ունեցող պետութեան սահմաններում հազիւ 1,024 պօստային կայարան կայ և 188,034 կելօմետր երկարութեամբ հեռագիր [1]) այսինքն 3—4 անգամ պակաս, քան փոքրիկ Շվեցարիայում, չը նայելով որ վերջինիս տարածութիւնը Թիւրքիայից գրեթէ հարիւր անգամ փոքր է։

Աւելի խղճալի են ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ։ Ամբողջ Թիւրքիայի երկաթուղիների երկարութիւնը հազիւ 4385 կիլօմետրի է հասնում, այն է՝

Եւրոպական Թիւրքիայում

1. Պօլիս—Մուստաֆա փաշա	356	կիլօմետր
2. Տեսսալոնիկ—Գուլելի Բուրկազ	99	—
3. Սելանիկ—Միտրովիցա	327	—
4. Սելանիկ—Տեսսալոնիկ	510	—
5. Սելանիկ—Մօնաստիր	219	—

ընդամենը 1511

[1]) «Ընդարձակ օրաց.» 1908. եր. 106.

Ասիական Թիւրքիայում

1. Հայդար փաշա—Էնկիւրի	578	կիլօմ.
2. Էսկիշեհիր—Գօնիա	435	—
3. Գօնիա—Պուլկուրլու	200	—
4. Իզմիր-զասաբա—Ալաշեհեր	169	—
5. Մաղնիսա—Սոմա	92	—
6. Ալաշեհեր Աֆիոն Գարահիսար	252	—
7. Իզմիր—Այտըն Տինէր	518	—
8. Մուդանիա Պրուսա	41	—
9. Մերսին—Թարսուս—Ադանա	67	—
10. Եաֆա—Երուսաղէմ	87	—
11. Պէյրութ—Շամ—Մզերիպ	247	—
12. Ռայաք—Համմա	188	—

ընդամենը 2874

Բացի դրանից այժմ շինւում է Շամից դէպի Մեկկա տանող Համիդիէ Հեճազի երկաթուղին, որից արդէն 500 կիլօմետրը պատրաստ է։ Աւելի հոյակապ ձեռնարկ է ներկայացնում գերմանացիների ձեռքով շինւող Բաղդատի երկաթուղին [1]), որը 2,579 կիլօմետր երկարութեամբ կտրել անցնելու է ամբողջ Անատօլիան ու Միջագետքը, այդպիսով միացնելով Բօսֆորը Պարսից ծոցի հետ։

Թիւրքիայի խճուղիներից ամենանշանաւորն է Տրապիզոնից դէպի Պարսկական սահմանագլուխը տանողը, որ ունի 594 կիլօմետր երկարութիւն, այն է [2])։

Տրապիզոնից—Բայբուրդ . . .	193 կիլօմ.
Բայբուրդից—Էրզրում	121 »

[1]) Տես այդ մասին Dr. C. Lehman: «Armenien und Mesopotamien» ինչպէս նաև Dr. P. Rohrbach: «Die Bagdadbahn»։

[2]) Vital Quinet: «La Turqie d' Asie» I, եր. 27, 148 և 163

Էրզրումից—Բայազեդ	264	»
Բայազեդից մինչև պարսկ. սահմ. . .	17	»
Ընդամենը	594	»

Միւս ճանապարհներից ուշադրութեան արժանի են.

Կիրասոնից—Կարահիսար . . .	122	կիլոմ.
Օրդուից—Սըւազ	82	»
Սամսոնից—Սըւազ	59	»

Բոլորն էլ Տրապիզոնի վիլայէթում։

Էրզրումից—Հասան-Ղալէ . . .	33	»
Հասան-Ղալից—Խնուս . . .	66	»
Խնուսից—Մուշ	88	»
Մուշից—Բիթլիս	66	»

Էրզրումից մինչև Վան 396 կիլոմետր ճանապարհ է, այն է.

Էրզրումից—Խնուս	99	կիլոմ.
Խնուսից—Մանազկերտ . . .	88	»
Մանազկերտից—Արճէշ . . .	110	»
Արճէշից—Ճանիկ	55	»
Ճանիկից—Վան	44	»
Ընդամենը	396	»

Բացի վերոյիշեալներից Էրզերումի վիլայեթում կարևոր տեղ է բռնում և Էրզերումից դէպի Երզնկայ տանող ճանապարհը 176 կիլոմ. երկարութեամբ։

Միւս վիլայէթներից առանձնապէս հարուստ է ճանապարհներով Սըվազի վիլայէթը, որ ունի 1,202 կիլոմետր ճանապարհ, որի գլխաւոր մասերն են.

Սըվազից—Սամսոն	286	կիլոմ.
Սըվազից—Խարպուտ . . .	122	»
Սըվազից—Ղայսարիէ . . .	148	»
Սըվազից—Օրդու	212	»

Այդ, ինչպէս նաև բոլոր միւս վիլայէթներում եղած ճանապարհները ոչ միայն խճուղի չեն, այլ նոյն իսկ կանոնաւոր հասարակ ճանապարհ չեն բառի բուն իմաստով։

Թէև կառավարութիւնը իւրաքանչիւր տարի ազգաբնակութիւնից յատուկ հարկ է վերցնում—եօլփարասի անունով, թէև մարդիկ է հանում ճանապարհների նորոգութեան համար, բայց և այնպէս դրութիւնը չէ փոխւում։ Այսպէս օրինակ միայն Էրզրումի վիլայէթի 742 կիլոմետր ճանապարհների վերանորոգութեան համար պաշտօնական տեղեկութիւնների համեմատ [1]) մի տարւայ ընթացքում ժողովրդից վերցրել են.

123,924 բանւոր
1,267 արհեստաւոր
5,727 սայլ
4,380 ձի և այլ անասուն

Բայց և այնպէս նոյնիսկ Տրապիզոն—Բայազեդի նշանաւոր խճուղին կանոնաւոր վիճակի մէջ չէ եղել։

Պատճառն այն է, որ տեղական իշխանութիւնը հոգում է ոչ այնքան ճանապարհների կանոնաւորութեան մասին, որքան բաշխիշներ պոկելու։ Վերևում յիշած հարկը՝ փողով ու մարդկանցով, մի անսպառ աղբիւր է է այդ տեսակէտից։

Այդպիսի պայմանների շնորհիւ ազգաբնակութիւնը անվերջ զոհաբերութեան է ենթարկւում յանուն ճանապարհների բարեկարգութեան, այն ինչ ճանապարհները մնում են նոյն խղճուկ դրութեան մէջ։

Մէջ տեղը օգտւողը լինում են միայն տեղական մանր ու խոշոր իշխանաւորները։

[1]) Ibid եր. 163–168

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Թիւրքիան թէև չափազանց յետամնաց է իր արդիւնագործութեամբ, թէև չունի յամառր հաղորդակցութեան միջոցներ, բայց և այնպէս նրա վաճառականութիւնը համեմատաբար բաւական բարձր աստիճանի վրայ է։ Նրա ներածումը համնում է տարեկան 585,667,556 ֆրանկի, իսկ արտածումը կամ արտահանութիւնը՝ 315,000,000 ֆրանկի։

Վաճառականութեանը մեծ չափերով նպաստողը Թիւրքիայի լայնատարած ծովափերն են իրենց բազմաթիւ նաւահանգիստներով։ Ծովային յարմար հաղորդակցութիւնը մասամբ լրացնում է երկաթուղիների ու խճուղիների պակասորդը։

Թիւրքիայի առևտրական շարժման մասին գաղափար կարելի է կազմել նրանից, որ միայն մի տարւայ ընթացքում նրա նաւահանգստներն են մտել [1]).

147,164 առագաստանաւ և
40,870 շոգենաւ, ընդամենը
34,382,877 տակառաչափով։

Ներմուծում են գլխաւորապէս գործարանային արտադրութիւններ, իսկ արտահանում են հում նիւթեր (բուրդ, մրգեղէն, հացահատիկներ, անասուն, և այլն)։

Թիւրքիան միջազգային շուկայում բաւական կարևոր տեղ է բռնում մետաքսի արտահանութեամբ։

Այսպէս օրինակ միայն մի տարւայ ընթացքում արտադրել [2]) են մետաքս.

Ջինաստանը . . .	11,000,000	կիլօգրամ
Ճապոնիան . . .	6,000,000	»
Իտալիան . . .	3,443,000	»

[1]) «Ընդ. Օրացոյց», 1908, եր. 108.

[2]) M. Schlagintweit: «Deutsche Kolonisations bestrebungon» եր. 18

. .	650,900	»
Ֆրանսիան . . .	571,000	»
Թիւրքիան . . .	275,000	»
Պարսկաստանը . .	245,000	»
Աւստրօ-Ունգար. . .	84,000	»
Սպանիան . . .		

Պակաս նշանակութիւն չունի նաև բամբակի առևտուրը։ Բամբակը մշակւում է գլխաւորապէս Անատոլիատուրը։ Բամբակը մշակւում է գլխաւորապէս Անատոլիայի, Ադանա և Այի և Կիլիկիայի կողմերում՝ Այտըն, Ադանա և Ա-

Պակաս նշանակութիւն չունի նաև բամբակի առևտուրը։ Բամբակը մշակւում է գլխաւորապէս Անատոլիայի և Կիլիկիայի կողմերում՝ Այտըն, Գասապա և Ադանա գաւառներում, որտեղ կան նաև բամբակի գործարաններ։ Թիւրքիայից արտահանւում է տարեկան աւելի քան 500,000 հակ բամբակ [1])։

Թիւրքիայի հետ առևտրական յարաբերութիւններ պահպանող ամենախոշոր վայրերն են Անգլիան, Ֆրանսիան, Աւստրօ-Ունգարիան, Գերմանիան և Ռուսաստանը։ Այսպէս օրինակ ըստ Վիտալ Քինէի Տրապիզոնի նաւահանգստի վաճառականութիւնը հետևեալ պատկերն է ներկայացնում։ Մի տարւայ ընթացքում այդտեղից.

	Արտահանել է	Ներմուծել է
Անգլիան	523,731 ֆրանկի	5,664,771 ֆր.
Աւստրիա) Գերմանիա)	209,920 »	2,235,931 »
Ֆրանսիա	1,256,090 »	1,590,900 »
Ռուսիա	269,673 »	648,000 »

Գրեթէ նոյն համեմատութեամբ և միւս կենտրոններից։

Սակայն վերջին տարիներս շնորհիւ թիւրք-գերմանական սերտ բարեկամութեան առանձնապէս ուժեղացել էր Գերմանիայի ազդեցութիւնը, այդ պատճառով էլ տարէց տարի աւելանում էր Գերմանիայի թէ ներմուծումը և թէ արտահանութիւնը Թիւրքիայից։

[1]) Տես «Մըշակ» 1908 թ. № 151.

Ամփոփելով վերևում առաջ բերած փաստերն ու դիտողութիւնները, մենք տեսնում ենք, որ Թիւրքիան թէև ունի ընդարձակ տարածութիւն և բնական առատ հարստութիւններ, բայց և այնպէս տնտեսապէս չափազանց յետամնաց է և խղճալի։

Կառավարութիւնը փոխանակ օգտւելու իր բարեբեր վայրերից, փոխանակ զարկ տալու ազգաբնակութեան տնտեսական ու կուլտուրական առաջադիմութեանը, ընդհակառակը, հէնց ինքը իր ստեղծած կարգերով դարձել է մի չարիք և հզօր խոչընդոտ այդ առաջադիմութեան հանդէպ։

Նա կարծես ստեղծւած է եղել միմիայն նրա համար, որ քամէ երկրի հիւթերը, դժբաղդացնէ ժողովրդին և այդ միևնոյն ժամանակ առատաձեռնութեամբ ծախէ ու բաշխէ օտարներին այն իրաւունքներն ու հարստութիւնները, որոնք հէնց բնիկ ժողովրդի ձեռքով կարող էին շահագործւել, եթէ տանելի լինէին շրջապատող պայմանները, եթէ բռնակալութեան մուրը խեղդած չլինէր ամեն մի ազատ թռիչք։

Կառավարութեան այդ կործանարար դերը երկրի տնտեսական կենցաղի նկատմամբ աւելի ակներև կը դառնայ, եթէ քննութեան ենթարկենք հարկահանութեան սիստեմը։

Դ. ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Սուլթանների քաղաքականութիւնը.—Կրօնական-ազգային խտրութիւնը.—Բէդել-էսկերիէն.—Աշար և միւս հարկերը.—Կեղեքման նմուշներ.—Բռնութեան սարսափներ.—Քիւրդերի, չերքեզների դերը.—Կառավարութիւնը ինչ է տանում ժողովրդից և ինչ է անում։

—

Իւրաքանչիւր պետութիւն իբրև մի մեծ ընտանիք ունի իր ծախսերը, որոնց համար անհրաժեշտ են և եկամուտներ։ Այդ եկամուտների շարքում գլխաւոր տեղն են բռնում հարկերը՝ ուղղակի և անուղղակի։

Թիւրքիան էլ միւս բոլոր պետութիւնների նման հաւաքում է ժողովրդից զանազան հարկեր։

Բայց ինչպէս ամեն ինչ, նոյնպէս և հարկերը այստեղ բոլորովին այլ բնոյթ են կրում, քան քաղաքակիրթ երկրներում։ Կառավարութիւնը կարծես իւրաքանչիւր քայլափոխում միայն մի նպատակի է հետեւում, այն է՝ ճնշել ու կեղեքել ազգաբնակութեանը, առանց որևէ բարիք տալու նրան։

Հասկանալի է, ի հարկէ, որ այդպիսի պետութեան հիմքը հէնց ինքը ժողովուրդն է իր աղքատութեամբ։

Յիշատակելով այդ դառն ճշմարտութիւնը և Թիւրք պետութեան բացասական կողմերի ամենամեծ յանցանքը գցելով Թիւրք մասսայի վրայ, Գլադստօնը [1]) նկատում է.

—«Թիւրքերը նման չեն ոչ Հնդկաստանի հեզ

[1]) „Болгарскіе ужасы и восточный вопросъ“ եր. 9—10.

մահմեդականներին, ոչ Սիրիայի ասպետ սալահդիններին և ոչ էլ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերին: Նրանք ուր որ մտել են, այնտեղ թողել են արիւնաշաղախ հետքեր, ուր որ հաստատել են իրենց տիրապետութիւնը—այնտեղ խեղդւել է քաղաքակրթութիւնը».

Եւ իսկապէս: Թիւրք մասսայի ռազմական ոյժով ամրապնդելով իրենց գահը, սուլթանները ամեն կերպ աշխատել են քաջալերել, գուրգուրել այդ ոյժը և ամեն ինչ զոհաբերել յանուն այդ ոյժի: Նրանք իրենց քաղաքականութեամբ արծարծել են թիւրք մասսաների մէջ այն գաղափարը, թէ խաղաղ կեանքը, քրտնաթոր աշխատանքը միայն ստրուկներին, գեաւուրներին է վայել, իսկ ազնւատոհմ մուսլիմները իրենց արժանապատւութիւնը միշտ բարձր պահելու համար պէտք է սիրեն զէնքն ու զրահը, ռազմի դաշտն ու արիւնոտ արկածները:

Արգելելով ոչ մահմեդականներին զէնք կրելն ու զինւորական ծառայութեան մտնելը, սուլթանները ընդհակառակը ջերմագին քաջալերել են մահմեդականներին այդ ասպարիզում:

Նրանք ոչ մահմեդականների համար սահմանել են յատուկ հարկ՝ բեդել էսկերիէն, որը նախկին խարաջի տեղն է բռնում և սոսկալի մի չարիք հանդիսանում ազգաբնակութեան գլխին: Ինչպէս յայտնի է մշտական զօրք—նիզամ հաստատելու օրից սկսած կառավարութիւնը վերցնում է [1]) 20—40 տարեկան հասակ ունեցող իւրաքանչիւր 135 հոգուց մի զինւոր: Ոչ մահմեդականները այդ զինւորների փոխարէն հարկ են վճարում, այսինքն իւրաքանչիւր զինւորի փոխարէն 5000 ղուրուշ [2])

[1]) Տես „Сборникъ консульскихъ донесеній вып. V. եր. 535.

[2]) Ղուրուշը հաւասար է մօտ $8\frac{1}{2}$ կոպէկի.

տարեկան կամ ուրիշ խօսքով ասած վերոյիշեալ 135 հոգուց իւրաքանչիւրը վճարում է 5000: 135=38 ղուրուշ. բայց ժամանակի ընթացքում այդ հարկը աւելացել է և 38-ի փոխարէն դարձել է 43 ղուրուշ կամ մօտաւորապէս 3 ր. 70 կոպ.:

Այդ հարկը ինքն ըստինքեան գուցէ այնքան ծանր չլինէր, եթէ թիւրք պաշտօնեաները իրենց աւանդական սովորութեամբ օրինական ամեն չափ ու սահման մի կողմ թողած անյագօրէն չըշահագործէին խեղճ ու կրակ ժողովրդին:

Կանոնաւոր վիճակագրութեան բացակայութիւնը և քրիստոնեաների այսպէս ասած՝ օրէնքից դուրս կացութիւնը հրէշաւոր մի չարիք է դարձրել բեդել էսկերիէ հարկը: Ահա թէ այդ մասին ինչ է գրում 1871 թ. հայոց ազգային ժողովի տեղեկագիրը [1]).

—«Ազգահամարի ճշտութիւն չըկայ և մեռնող, գաղթող, բոլորովին անյայտ եղողներու տուրքն ալ մնացեալներէն պահանջելու ստիպում կըլլայ: Այս պատճառաւ կրօնափոխութեան կըդիմեն, որպէսզի պակսողներու փոխարէն իրենց վրայ բարդուած աւելորդ տուրքէն ազատելով, միայն իրենց անձնական տուրքը վճարեն:

Իւրաքանչիւր արու, մինչև անգամ նորածինն ալ շուրջ 38 ղուրուշ տարեկան տուրք պիտի վճարէ—(25% զեղջմամբ, որ շնորհւած է մանկանց և զառամելոց և այլն բաժնին համար)—բնակարար աղքատ գիւղացի մը 6—7 անչափահաս արուներու և իր զառամեալ կամ հաշմանդամ հօրը կամ եղբօրը անձնական պիտոյքը հոգալէ զատ, անոնց համար տուրք ալ վճարելու պիտի պարտաւորուի...»:

[1]) «Ատենագրութիւնք ազգային ընդհանուր ժողովոյ» 1871 թ. եր. 469.

Այդ ցաւոտ շեշտերը հնչում էին դեռ 1871 թուականին. բայց մի քանի տասնեակ տարիներ անցնելուց յետոյ էլ դրութիւնը չէ փոխել։ Նոյն դաժան պայմաններից մինչև օրս հալ ու մաշ է լինում թշուառ ժողովուրդը։

Դրա պերճախօս ապացոյցն է Թիւրքիայի ներկայ իրականութիւնը, որի մասին գաղափար կարելի է կազմել հետևեալ նմուշից.

—Բուլանըղ գաւառի Գարադըլ գիւղի (120 տուն) հարկը 1902 թ. 63,000 ղուրուշ էր։ Նոյն տարին բռնութեամբ խլում են ժողովրդից 37,368 ղուրուշ և դրանով անել վիճակի մէջ գցում բազմաթիւ ընտանիքներին։ 50 ընտանիք գաղթում են գիւղից։ Հետևեալ տարին մնացածներից պահանջում են 163,000 ղուրուշ հարկ, բայց հազիւ հաւաքել են կարողանում 63,000 ղուրուշ։ Նորից գաղթում են 25 ընտանիք։ Գիւղում մնում են 45 ընտանիք, մօտ 200 արու անդամներով, բայց և այնպէս զինուորական տուրքը պահանջում են 730-ի համար։

Բայց միայն զինուորական տուրքը չէ, որ ծանրացած է ոչ մահմեդական ազգաբնակութեան վզին։ Բոլոր միւս հարկերի ծանրութիւնն էլ աւելի զգալի է նրանց համար, քան թէ մահմեդականների, որովհետև պաշտօնեաների, հարկահաւաքների անվերջ զեղծումների դէմ նրանք բողոքելու և պաշտպանելու հնարաւորութիւն չունեն։

Ո՞ր գեաւուրը կը համարձակւի ձայն բարձրացնել, թէ իրենից աւելորդ պահանջ են անում, քանի որ այդ վարմունքի միակ պատասխանը բանտը, տուգանքն ու տանջանքն է միայն։

Եւ շնորհիւ այդպիսի պայմանների երբեմն սոսկալի չափեր է ընդունում գնահատութեան և պահանջի

անարդարութիւնը աշարի, էմլաքի վերգիսիի, թեմէթթիի, աղնամի, եօլ-փարասու վերաբերմամբ, չըհաշւելով այլ մանր հարկերը։

Աշարը։ Դեռ արաբական տիրապետութեան օրերում գոյութիւն ունէր թէ տասանորդ և թէ բազմաթիւ այլ հարկեր, թէև քիչ տարբեր ձևակերպութեամբ։ Հարկ վերցնում էին երկրի բերքից ու ամբողջ ունեցւածքից։ Մինչև 4 ուղտագին—(այդ ժամանակ ուղտը գնահատութեան չափն էր)—ունեցւածքից ոչինչ չէին վերցնում։ Իսկ դրանից բարձրի համար վերցնում էին [1]).

4—25	ուղտագին	ունեցւածքից	1 ուղտի ձագ.
25—35	»	»	1 երկու տար. էգ ուղտ
35—45	»	»	1 երեք » » »
45—60	»	»	1 չորս » » »

Նոյն համեմատութեամբ հարկ վերցնում էին և կովերի ու ոչխարների համար։ Հարկից ազատ էին ձիերը, թռչունները այծերն ու ստրուկները։

Երկրի բերքից էլ վերցնում էին տասանորդ։

Օսմանեան տիրապետութիւնը հաստատելով հարկահանութեան այդ հին ձևերը, աւելի ևս ծանրացրեց նրանց չափը։

Այդ տեսակէտից ամենասոսկալին է աշարը—տասանորդը։ Աշխատաւոր գիւղացիութիւնը արիւն-քրտինքով մշակելով հողը, պարտաւոր է նրա ամեն տեսակի բերքից բաժին հանել կառավարութեանը, տասանորդ տալ։ Սակայն ժամանակի ընթացքում այդ պահանջը հասել է 10-ից մինչև 12%։ Կառավարութիւնը անհրաժեշտ է համարել աշարի վրայ աւելացնել $1\frac{1}{2}$ % իբր թէ «երկրագործական բանկի» հա-

[1]) August Bebel: «Die Mohammedanische Arabische Kulturperiode». 1884 եր. 144.

մար և $1/2$ % էլ իբր թէ ժողովրդական կրթութեան համար [1]։ Ասում ենք «իբր թէ», որովհետև դրանցից ոչ մէկը և ոչ էլ միւսը իր բուն նպատակին չէ ծառայում, թէև ժողովուրդը վճարում է իր բերքի ոչ թէ տասանորդը, այլ 12-րորդ մասը, այսինքն $1/10$-ի փոխարէն $1/8$-րորդականը։

Սակայն այդ էլ ոչինչ, եթէ օրինական սահմաններից չանցնէր և հաւաքելու ձևը անվերջ կեղեքումների աղբիւր չը դառնար։ Սովորաբար իւրաքանչիւր տարի վիլայէթի կամ առանձին սանջակների աշարը աճուրդով տրւում է կապալառուների, որոնք իրենց կողմից բաժանում են մանր կտորների և ուրիշներին տալիս, ի հարկէ որոշ օգուտ վերցնելով։

Իւրաքանչիւր աշարճի կառավարական զինուորների ուղեկցութեամբ անցնում է գիւղից-գիւղ և հաւաքում աշարը։

Ահա հէնց այդ ժամանակ է, որ թափւում են գիւղացիների գլխին դժոխային սարսափները, շահագործման ամենածանր հարւածները։

Եմլագ վերգիսին կալւածական տուրքն է, որի քանակութիւնը հասնում է դաշտերի համար (արազի վերգիսի) — արժէքի 3%, տների համար (միւլքիէ) քաղաքներում — արժէքի 8%, իսկ գիւղերում — 5%։

Թեմէթթին առանձին տուրք է վաստակի վրա։ Այդ տուրքը վճարում են արհեստաւորները իրենց եկամուտի 3—4% և վաճառականները՝ տարեկան մօտ 30, 50 և 80 ոսկի, նայելով գործի մեծութեանը։

Աղնամը մանր տաւարի հարկն է, որ վերցնում են իւրաքանչիւր գլխի (ոչխար կամ այծ) — համար 5 ղուրուշ կամ մօտաւորապէս 42 կոպէկ։

[1]) W. Totomianz und E. Toptschian: «Die soz. Ökonomische Türkei» եր. 47.

Յօլ փարասին կամ ճանապարհների հարկը վերցնում են իւրաքանչիւր տղամարդուց, 15 տարեկան հասակից սկսած՝ 16 ղուրուշ տարեկան կամ մօտաւորապէս 1 ռ. 40 կոպէկ։ Կարելի է փոխարէնը 4 օր աշխատել։

Կան օրէնքով սահմանւած վարչութիւններ, յանձնաժողովներ, որոնց պարտականութիւնն է գնահատել ու գանձել այդ տուրքերը։ Եւ ահա հէնց այդտեղից ծնունդ է առնում շահագործման, անարդարութեան չարիքը։ Տուրք վճարողը եթէ նախապէս բաշխիշներով չարժանանայ գնահատողի և հարկահաւաքի հովանաւորութեանը, այդ դէպքում նա ստիպւած պէտք է լինի վճարել կրկնակին ու եռակին։ Մասնաւոր կալւածքները, տները գնահատելիս, արհեստաւորների եկամուտը կամ վաճառականների ձեռնարկի մեծութիւնը որոշելիս, ինչպէս նաև տաւարի թիւը, ճանապարհի հարկատուների քանակը նշանակելիս այդ պաշտօնեաները անսահման ասպարէզ ունեն իրենց կամայականութիւնների համար։

Այդ տեսակէտից աշարը ամենայարմար միջոցն է զեղծումների, կեղեքումների համար։ «Այս չափ ցորէն կամ բամբակ կուտայ այս արտը, այսչափ դրամ պիտի տաս—կըսէ աշար հաւաքողը [1]—(դրամ կառնեն և ոչ բերքին տեսակէն)։ Եթէ բերքին տէրը դժկամակի տալ, միւլթեզիմը ալ աւելի կը հակառակի և բերքը երեսի վրա կը թողու—(զի մինչև տասանորդը չառնուի բերքը իր շտեմարանը չի բարձուիր), որ կրնայ շատ ֆլասներու ենթակայ ըլլալ. ապա առջի ուզած տասանորդին կրկնապատիկը կը պահանջէ ու կառնէ…

Եթէ բերքին տեսակին տասանորդ առնուի, նոյն իսկ բերքին տիրոջը բառնալ կուտան առնւած տասա-

[1]) «Ատենագրութիւնք» եր. 471։

նորը և խեղճերը օրերով կը սպասեն Պէյլեկ ամպարին դուռը, որ բերքը չափւի ու վերցւի։

Միւլթեզիմները շատ անգամ ժամանակին չեն գար և այնպէս բերքը երեսի վրա կը մնայ ու կը փտի. ապա կուգան և այն վնասեալ ու փտեալ բերքերուն համար ողջի արժէքով դրամ կը պահանջեն։

Այս պարագային մէջ գեղապետաց օգնութեամբը աղքատն ամեն տեսակ տառապանաց կը ենթարկւի։ Միւլթէզըմներու հետ գաղտնի ընկեր եղող պաշտօնեայք անոնց շահուն միայն կը ծառայեն և խեղճ հողագործը հարստահարեալ՝ իր ունեցածը վրա կուտայ և տակաւին չի կրնար միւլթեզիմէն ձեռքէն ազատիլ։

Ձմրան մօտ և երբեմն ի մէջ ձմրան միւլթէզիմներուն ի գիւղօրէ ելնելէն խիստ վնասակար արդիւնքներ յառաջ կուգան։ Գիւղացին պարտաւոր է ձրիաբար կերակրել միւլթեզէմն ու անոր գործակալները, որչափ ժամանակ որ հիւր մնան իրենց գիւղը, անոնց հաւնեցնելու եղանակաւ. երբեմն ալ կանանց պատիւը կարատաւորւի»...

Եւ այդպիսի պայմաններում, ինչպէս նկատում է Գօլց փաշան[1], շատ անգամ խեղճ ու կրակ գիւղացին վճարում է իբրև տասանորդ կամ աշար ոչ թէ 12% իր արդիւնքի, այլ 40%, այսինքն կէսից քիչ պակաս, չը հաշւած միւս ծախսերը, բաշխիշներն ու զրկանքները։

—«Գաւառէ մը հասած տեղեկագրի մէջ, ասում է հայոց ազգային ժողովի յիշատակագիրը[2], 10 կալւած նշանակւած են յականէ, յանւանէ, որոնք Գաւէմի տեսրով 59,000 ղուրուշ արժէք ունեն, իսկ Թահրիրէ էմլաքի հաշւով 527,942 ղուրուշ և ըստ այսմ կալւա-

[1]) «Anatolische Ausflüge».

[2]) «Ատենագրութիւնք ազգ. ժողովոյ» 1871 թ. եր. 470։

ծական տուրք կուտան»։ Ուրեմն մօտ 10 անգամ աւելի։

—«Միևնոյն տեսակի գանգատներ կան, շարունակում է յիշատակագիրը, Թեմեթթի տրոց վրա։

Տեղեր կան, ուր հողագործներէ և իրենց տան պիտոյքը արւեստող կանանցմէ անգամ Թեմեթթի կը պահանջւի»։

Այդպէս անցեալում, իսկ ներկայումս աւելի վատ։ Այսպէս օրինակ 1907 թ. Մուշից մի մասնաւոր նամակով գրում էին վստահելի աղբիւրից.

—«Մահմեդականները բողոքելով նւազեցնում են իրենց վճարելիք թեմեթթին. իսկ հայի բողոքը ո՞վ է լսողը։ Այդպիսով հայի շահագործումն անսահման է։ Օրինակ Մուշ քաղաքում հայ արհեստաւոր միականի Մանուկը վճարում է 30 ղուրուշ թեմեթթի, այն ինչ հարուստ Մուստաֆա աղան միայն 25—30 ղուրուշ»...

Աղնամի վերաբերմամբ էլ զեղծումներն անպակաս են։ Պաշտօնեաները կաշառք վերցնելու նպատակով դիտմամբ թիւը աւել են նշանակում։ Այսպէս օրինակ Մուշ գաւառի Պօսթաքենդ հայաբնակ գիւղը 1903 թ. ունեցել է 1215 ոչխար, այն ինչ պաշտօնեան նշանակել է 1750։ Գիւղացիները 12 ոսկի կաշառք են տալիս, բայց թիւը հազիւ իջնում է մինչև 1515-ը։ Նոյն գաւառի Մասնիկ գիւղի ոչխարների թիւը 1900 թ. եղել է 1630, այն ինչ պաշտօնեան նշանակել է 2340. պակասեցնելու խոստումով նա բաշխիշ է պահանջում գիւղացիներից։ Տալիս են 1400 ղուրուշ, բայց չարաբաստիկ թիւը մնում է անփոփոխ, որովհետև պաշտօնեային շատ քիչ է թւում բաշխիշը։

Եօլ-փարասին կամ ճանապարհների համար տուրքը հաւաքելիս նոյնպէս տեղի են ունենում բազմազան կեղեքումներ։ Շատ անգամ տուրքը հաւաքում են փողով և ապա մարդիկ պահանջում այս կամ այն ճա-

նապարհը շինելու, նորոգելու նպատակով։ Օրինակ 1904 թ. Գոմս գիւղի ազգաբնակութեանը ստիպում են 162 մշակի փոխարէն 2268 ղուրուշ կանխիկ դրամ վճարել։ Վճարում են։ 1—2 շաբաթից յետոյ իշխանութիւնը խիստ հրամանով պահանջում է 25 սայլ և 40 մշակ։ Գիւղացիները բողոքում են, աղերսում են, յիշեցնում որ հարկը արդէն կանխիկ դրամով վճարել են, բայց ապարդիւն։ Նրանք ստիպուած են լինում նորից բաշխիշ տալ պաշտօնեային 100 ղուրուշ, 1 ոչխար, 1 բարդ խոտ, որից յետոյ հազիւ աջողւում է պահանջուած 25 սայլն ու 40 մշակը իջեցնել 6 սայլի և 20 մշակի՝ 6 օր աշխատեցնելու պայմանով։

Հարկահանութեան չարիքները Թիւրքիայում անծայր, անսահման են և փաստերը անթիւ, բայց վերևում առաջ բերուած նմուշներն էլ բաւական են գաղափար տալու համար այն գժոխային կացութեան մասին, որի մէջ տանջւում է ամբողջ ազգաբնակութիւնը և առանձնապէս քրիստոնեաները։

Բայց պատկերը ամբողջացնելու համար պէտք է աչքի առաջ ունենալ, որ հարկահանութեան տնտեսական լծի հետ կապուած են և բռնութեան դաժան հարուածները։ Ահա փաստեր.—Երիշտեր գիւղում հարկահաւաք արար Աբդիւլլահը 1904 թ. ձմեռը գլխիվայր կախում է ծերունի տանուտէր Ղազարին ու նրա գլխին, վրաները սառը ջուր լցնում և ծեծել տալիս, որպէսզի հարկը շուտ հաւաքէն։ Նա այդ գազանութիւնը դադարեցնում է միայն այն ժամանակ, երբ պահանջած հարկերի հետ միասին ստանում է և 3 ոսկի բաշխիշ։

Դրմետր գիւղում նա 7 հայերի բեխերն է փետում։

Սուլուխում նոյնպէս։

Գոմսում նա 24 տղամարդկանց և 31 կանանց փակում է մի գոմի մէջ, վրաները սառը ջուր լցնում և ծեծում։

Խէյպան գիւղում ձմռան ցրտաշունչ օրերին հարկահաւաքները մերկացնում են 27 կանանց, աղջիկների ու տղամարդկանց և վրաները սառը ջուր լցնելով ծեծում սոսկալի կերպով։

Եւ այդպէս անվերջ օրինակներ՝ մէկը միւսից աւելի դաժան, աւելի սոսկալի։

Տնտեսական այդպիսի կեղեքումների, բռնակալական այդպիսի հալածանքի բնական հետևանքն այն պէտք է լինէր, որ ժողովուրդը թողնելով իր տունն ու վաթանը, դիմէր դէպի օտար երկիրները, գաղթէր իր բնիկ հայրենիքից։

Սակայն այդ էլ չէ փրկում։ Մնացածները ըստիպուած են լինում գաղթածների հարկերը վճարել և դեռ տուգանքներ էլ կրել նրանց պատճառով։

Իբրև ապացոյց բաւական է առաջ բերել հետևեալ համեմատական աղիւսակը Մուշի շրջանի մի քանի գիւղերի.

Գիւղեր.	Առաջ քանի տուն	1906 թ. քանի տուն	1906 թ. քանի հոգի բանտում	Քանի ոչխ. ունէին	
				Առաջ	1906 թ.
1. Առվարինջ	174	152	13	3000	540
2. Սուլուխ	76	62	4	1850	620
3. Գոմս	96	27	27	2600	»
4. Խէյպիան	103	43	3	2500	320
5. Ցրոնք	181	160	14	7000	1200
6. Ջիարէթ	156	104	2	2800	550
7. Կուրավու	121	53	17	300	220
Ընդամենը	907	601	80	20050	3450

Այդպիսով 7 գիւղի ագգարնակութեան մօտաւորապէս $^{1}/_{3}$ մասը պակասել է գաղթականութեան և այլ պատճառների շնորհիւ, 80 հոգի կամ իւրաքանչիւր գիւղից մօտաւորապէս 11 հոգի բանտի խոնաւ խուցերի զոհ են դարձել, ոչխարների քանակն էլ պակասել է 7 անգամ, բայց չընայելով այդ ամենին մնացած ազգարնակութիւնը ստիպւած է եղել առաջւանից դեռ աւելի հարկեր վճարել։ Այսպէս օրինակ Ջիարէթ գիւղի զինւորական հարկը եղել է առաջ 13,000 ղուրուշ, իսկ 1906 թ. պահանջել են 30,000 ղուրուշ։ Խէյպիան գիւղի զինւորական հարկը եղել է 8,500 ղուրուշ, իսկ 1907 թ. 16,700 ղուրուշ, վերջին առաջ 4700 ղ., իսկ 1906 թ. 9200 ղ. այդպէս է նաև միւս գիւղերում։

Սակայն այդ դեռ բոլորը չէ։ Քրիստոնեայ ագգարնակութիւնը միայն կառավարութեան կողմից չէ կեղեքւում, հալածւում։ Այդքան «օրինական հարկեր» վճարելուց յետոյ էլ նա ստիպւած է կատարել քիւրդերի ու չերքեզների պահանջները։

—«Քիւրդերը, ասում է բարօն Նօլդէն[1]), Թիւրքիայում վայելում են մի առանձին անկախութիւն։ Նրանք հայերին իրենց հպատակներն են համարում և նոյնիսկ առանձին հարկ վերցնում նրանցից»։

Այդ միևնոյն փաստը հաստատում է անգլիացի հեղինակ Մակ Կօանը գրելով[2]), «Քիւրդական բէկերը իւրաքանչիւր տարի այցելում են հայոց գիւղերը և առանձին հարկ վերցնում, որը կոչւում է սուրէա, այսինքն հաշտութեան հարկ»։

Առանց այս հարկը վճարելու ոչ մի երաշխաւո-

---

[1]) «Reise nach Innerarabien, Kurdistan und Armenien» եր. 224.

[2]) Макъ Коанъ: «Нашъ новый протекторатъ»

րութիւն չկայ քիւրդական աւազակութիւններից ու թալանից։ Շատ անգամ պատահում է, որ թէև բէկերի պահանջը կատարում են, բայց և այնպէս ազատ չեն մնում թալանից։

Կան վայրեր, որոնք օրինական հարկերից ոչ պակաս քանակութեամբ ապօրինի հարկեր են վճարում։ Նմուշի համար բաւական է յիշել հետևեալ փաստը, որ արձանագրւած է անգլիական կապոյտ գրքի մէջ.

—Ջեզիրիէ գայմակամութեան Մանսուրիա անունով հայարնակ գիւղը վճարել է 1893 թ. քիւրդ Մուստաֆա փաշայի ապօրինի պահանջներով 13,000 ղուրուշ և այդ միևնոյն ժամանակ կառավարութեան օրինական հարկեր 14,000 ղուրուշ[1])։

Գիւղի թշւառ ժողովուրդը բողոքում է Մուստաֆա փաշայի կեղեքումների դէմ։ Բայց դրա հետևանքը լինում է կատարեալ անտարբերութիւն կառավարութեան կողմից, այն ինչ զայրացած փաշան «ըմբոստ գիւղացիներից» վրէժը լուծելու համար իր ոչխարների հօտը բաց է թողնում յիշեալ գիւղի ցանւած արտերը և նորից մօտ 2300 ղուրուշի վնաս պատճառում։

Գիւղացիները դառն փորձից խրատւած այլևս ոչ ոքի չեն բողոքում։

Անատոլիայի քիւրդերի դերը Բալկանեան թերակղզու վրայ կատարել են չերքեզներ, բաշիբոզուկները։ Թիւրքիայի բոլոր վայրերում[2]) էլ առանձնա-

---

[1]) Մանրամասները տես իմ գրքում «Die sôz. ökonom. Türkei» եր. 59.

[2]) Բալկանեան թերակղզու վրայ կատարւած կեղեքումների ու բռնութիւնների մասին տես Christophilos Alethes: «Die Lage der christen in der Türkei», ինչպէս նաև Kinkel «Vortrag über die Herzegowina». (Zûrich 1877)։

պէս քրիստոնիաների վիճակը եղել է սարկալեան, ողբալի։

Կառավարութիւնը ամեն տեղ միայն մի նշանաբան է ունեցել՝ գզլել ժողովրդից ինչ որ հնարաւոր է և դրա փոխարէն գրեթէ ոչինչ չանել։

Այդ քաղաքականութեան պերճախօս ապացոյցներից մէկն էլ պետական եկամուտքի թւերն են։ Առաջ բերենք մի երկու նմուշ.

Վիտալ Քինէի[1]) հաւաքած տեղեկութիւնների համեմատ կառավարութիւնը 1888 թ. ունեցել է Տրապիզոնի վիլայէթից։

Մ ո ւ տ ք

	Պիաստր
1. Վերգի	7,648,989
2. Բեդել էսկերիէ . . .	2,660,501
3. Աշար	17,095,610
4. Աղնամ	4,804,499
5. Թապու	392,034
6. Անտառներից	284,550
7. Հանքերից	127,650
8. Ջկնորսութիւնից. . . .	236,721
9. Զանազան	872,311
Ընդամենը	34,122,865

Ծ ա խ ք

	Պիաստր
1. Վարչութիւն	3,620,607
2. Ղադիների, միւֆթիների ռոճիկ .	294,330
3. Դատաստանական բաժին . .	1,262,080
4. Կրթական-դպրոցական . .	244,239
5. Հարկահաւաքութեան համար .	1,017,787
6. Առողջապահութեան . . .	8,760

[1]) «L′ Turquie d′ Asie» I. եր. 35։

7. Ոստիկանութեան . . .	2,627,294
8. Անտառների և հանքերի վարչ. .	138,192
9. Տասանորդը հաւաքելու . ,	2.159,106
10. Հասարակական աշխատանքներ .	1,867,510
11. Օթեաններին, որբանոցների .	834,691
12. Զանազան	10,384
Ընդամենը	13,984,980

Ուրեմն միայն մի վիլայէթից կառավարութիւնը զուտ արդիւնք է ստանում 20,187,885 պիաստր կամ մօտաւորապէս երկու միլլիօն րուբլի.

Էրզրումի վիլայէթում նոյն թւականին կառավարութիւնը ունեցել է [1]).

Մուտք . . .	24,997,904 պիաստր
Ծախք . . .	10,716,283 »
Զուտ արդիւնք	14,281,621 պիաստր.

Այսպէս և միւս վիլայէթներում։

Այդ թւերը դիտելուց յետոյ բնականօրէն հարց է առաջ գալիս—եթէ Թիւրքիայի ազգաբնակութիւնը կեղեքման ծանր լծի տակից այդքան առատ հարկեր է տալիս, եթէ կառավարութիւնը իր վիլայէթներից այդքան խոշոր արդիւնքներ է ստանում—հապա ինչու նա միշտ սնանկ է, փողի կարօտ. ինչու շարունակ օտար պետութիւնների դուռն է բաղխում նիւթական օժանդակութիւն ստանալու համար։

Այդ հարցի պատասխանը գտնելու համար պէտք է աչքի առաջ ունենալ, թէ ինչպէս են ծախսւում ժողովրդի արիւն-քրտինքից քամած փողերը. ուրիշ խօսքով ասած՝ պէտք է քննել, թէ ինչեր են անում սուլթանն ու իր գործակալները իբրև պետական վարիչներ։

Ուշադրաւ է այդ քննութիւնը նաև այն տեսակէտից, որ կլըրացնէ Թիւրքիայի ազգաբնակութեան տառապանքի սև պատկերը։

[1]) Ibid եր. 176.

Ե. ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Սուլթանը խալիֆ.—Նրա ազդեցութիւնը.—Ինչպէս են ծախւում ժողովրդական փողերը.—Աբդուլ Ազիզի և Աբդուլ Համիդի հարեմները.—Հարեմի ծախսերը.—Սուլթանը և միւս միապետները.—Պաշտօնեաները.—Բաշխիշի դերը.—Մինիստրներ ու լրտեսներ:

—

—Փադիշահ—այսպէս են մեծարում Օսմանեան հպատակները իրենց միապետին:

Եւ փադիշահը նրանց աչքում ամէն ինչ է. կեանք, գոյք, պատիւ ու բաղդ—բոլորը նրանից է կախւած—այդպէս է մտածում Թիւրք ամբոխը:

Տգիտութիւնը մոլեռանդութեան հետ միացած ստեղծել են մի առանձին հմայք սուլթանի անւան շուրջը:

Եւ դա հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենանք այն պատմական դերը, որ ունեցել են սուլթանները դարերի ընթացքում:

Նրանք եղել են ոչ միայն պետութեան գլուխ, այլ և պատերազմների ղեկավար ու կրօնական բարձրագոյն ներկայացուցիչ:

Ամբողջ մահմեդական աշխարհը, բացի շիաներից, de jure համարում է սուլթանին իսլամի խալիֆ—մահմեդի փոխանորդ: Եւ սուլթանները, ցանկանալով ուժեղ պահել այդ ազդեցութիւնը ամբոխի աչքում, իրենց արքունիքում խիստ հսկողութեամբ պահպանում են մահմեդականութեան ամենախոշոր սրբութիւնները:

1) Սանջակի շերիֆը—(Նւիրական դրօշակը—որով

Մահմեդը առաջին անգամ առաջնորդեց ամբոխին դէպի Մէկկա:

2) Խալիֆ Օմարի յաղթական դրօշակը:

3) Խըրխայի շերիֆը—Մահմեդի վերարկուն:

4) Բէյարէի արծաթէ բանալին և այլ իրեր:

Եւ սուլթանները աշխատել են օգտւել իրենց դիրքից ոչ միայն ներքին, այլ և արտաքին քաղաքականութեան մէջ: Այսպէս օրինակ 189 -ական թւականներին, երբ Զինաստանում ուժեղ չափերի էր հասել բոքսերների շարժումը եւրօպացիների դէմ, սուլթան Աբդուլ Համիդը, իբրև խալիֆ, մի հրովարտակով կոչ արեց չինացի մահմեդականներին՝ խաղաղւել և դադարեցնել շարժումը եւրօպացիների դէմ:

Ռուս-թիւրքական պատերազմների ժամանակ գրեթէ միշտ էլ երևացել են յատուկ քարոզիչներ Կովկասում, որոնք սուլթան-խալիֆի անունից դրդել են մահմեդականներին իսլամի յաղթանակին նպաստել:

Գրեթէ իւրաքանչիւր տարի սուլթանը մարդկանց կամ յատուկ ․րութիւնների միջոցով յարաբերութիւն է պահպանում առհասարակ բոլոր երկրների մահմեդական իշխանաւորների ու համայնքների հետ: Բացառութիւն են կազմում միայն շիաները, որոնք սուլթանին չեն ճանաչում իբրև խալիֆ:

Եւ այդ բոլորի հետ միասին սուլթանը մի առանձին հովանաւորութիւն է ցոյց տալիս Կ. Պօլսի վրայով դէպի Մեկկայ ուխտ գնացողներին:

Այդպէս արտաքին աշխարհի հանդէպ: Իսկ ինչ վերաբերում է բուն Թիւրքիային—այդտեղ, ինչպէս նկատեցինք, սուլթանը միահեծան տէր ու տնօրէն է և՛ աշխարհական և՛ կրօնական ասպարէզներում:

Միաձնեայ աբսօլիւտիզմը Թերևս ոչ մի տեղ

այնպիսի անհելի չափերի չէ հասել, ինչպէս Թիւրքիայում։

Սուլթանի իւրաքանչիւր հայեացքը հրաման է, իւրաքանչիւր խօսքը՝ ահազանգ։ Ո՞վ կը համարձակւի նրան որևէ նկատողութիւն անել․ բանտի, աքսորի ու կախաղանի հեռանկարը լռութեան սանձն է դրել ամենքի բերանին, իսկ ամբոխային տրամադրութիւնն ու տիրող կարգերը միշտ ամուր են պահել այդ սանձը։

Այդպիսի պայմաններում ինչեր չեն արել սուլթանները։ Նրանք իրենց անձնական քմահաճոյքները աւելի բարձր են դասել, քան թէ ամբողջ երկրի բաղդը, ամբողջ ազգաբնակութեան բարօրութիւնը։

Այն ժամանակ, երբ թշւառ ժողովուրդը գալարւում էր սովի ճանկերում, սուլթան Աբդուլ Ազիզը հապճեպով պալատներ էր շինում Բոսֆորի ափերին, նոյն իսկ սովատանջ ժողովրդի արիւն քրտինքից հարիւր միլլիօններ հաւաքել տալով։

Այն ժամանակ, երբ գաւառներից սիրտ մորմոքեցնող ձայներ էին հնչում օգնութեան աղերսանքով, սուլթանական արքունիքից դաժան հրամաններն էին բարձրանում.

—Փող տւէք...

Եւ տալիս էր ժողովուրդը։ Բայց ու՞ր էին գնում այդ փողերը։ Սուլթանը իւրաքանչիւր տարի տասնեակ միլլիօններ էր ծախսում միայն իր հարեմի համար, որտեղ 1200 կին ու հարճեր կային, մօտ 6000 ծառայողներ և 800 խոհարարներ, որտեղ օրական միջին հաշւով 1200 եզ ու կով էր մորթւում ձրիակերների հսկայ բանակը կերակրելու համար։

Այդպէս էր սուլթան Աբդուլ Ազիզը։ Իսկ այժմեան սուլթանը... Նա գերազանցեց իր նախորդին։ Նրա հա-

րեմը մի ամբողջ քաղաք է, միայն այն տարբերութեամբ, որ քաղաքում մարդիկ և՛ ուտում են և՛ աշխատում, իսկ սուլթանական հարեմում միայն ուտում են առանց որևէ աշխատանք թափելու։ Կերակրողը, ի հարկէ, թշւառ ժողովուրդն է։

Սուլթանը իւրաքանչիւր տարի ծախսում է ժողովրդական փողերից մօտ 50 միլլիօն ռուբլի իր հարեմի վրա։

Յիսո՜ւն միլլիօն... Եթէ ընդունելու լինենք, որ մի գիւղացու, մի արհեստաւորի կամ բանւորի ընտանիքը տարեկան ծախսում է ոչ աւելի քան 500 ռ., այն ժամանակ դուրս կը գայ, որ այդ գումարով կարող էին ապրել 100 հազար ընտանիք․ ուրիշ խօսքով ասած սուլթանի ընտանիքը վայելում է հարիւր հազար ընտանիքների ապրուստի միջոցները։

Նրա կանանց թիւը հասնում է 300 [1])։ Բայց որովհետև սուլթանական իւրաքանչիւր կինը ունի մի քանի աղախիններ ու հարճեր և բացի դրանից կան նաև ընդհանուր աղախիններ․ ուստի հարեմի բոլոր կանանց թիւը հասնում է 4000-ի։

Աւելացրէք դրա վրայ և բազմաթիւ պաշտօնեաներին ու ծառաներին և այն ժամանակ կըստացւի մի հսկայ բանակ, այն է.

30 սենեկապետ

80 թիկնապահ

100 քարտուղար

30 զւարճարան

---

[1]) Այս և յետագայ թւերը վերցրած են հետևեալ աղբիւրներից.

1) «Contemporary Bewiew» 1898.

2) «Братсая помощь» Джаншіева.

3) Кази-Бекъ: «Современная Турція».

4) «Politikos: «Европейскіе монархи».

50 հանդիսապետ
60 բժիշկ
30 դեղագործ
80 որսորդ
20 սուրճ մատակարարող
50 գրադարանապետ
20 թարգմանիչ
1000 լակէյ (սպասաւոր)
725 խոհարար և նրանց օգնականներ
400 երաժիշտներ, երգիչներ, դերասաններ
300 ներքինի
50 վարսաւիր...

Այդպէս ցուցակը կարելի է անվերջ շարունակել. բայց բաւական է։ Դրանից էլ կարելի է գաղափար կազմել, թէ ձրիակերների ինչպիսի վոհմակ է ներկայացնում սուլթանական հարեմը։ Այդտեղ մարդկանց ընդհանուր թիւը հասնում է 12,000-ի։

Դրանց ուտեստի, հագնելիքի և այլ պիտոյքներ մատակարարելու համար կան յատուկ կապալառուներ, որոնք ունեն և բազմաթիւ գործակալներ։ Վերջիններիս պարտականութիւնն է շրջել մայրաքաղաքի շուկաները և մթերքների ամենաընտիր տեսակները հասցնել հարեմ։

Եւ ինչեր չէ սպառում սուլթանական 12,000-նոց այդ ընտանիքը—հարեմը։ Օրական [1]) 100 պուդ ձուկ, 60 պուդ բրինձ, 15 պուդ սուրճ և շաքար։ Նոյն համեմատութեամբ էլ միւս մթերքներից։

Միայն հարեմի ապրուստի ծախսերը չեն, որ խոշոր գումարներ են սպառում։ Սուլթանին բաւական թանկ է նստում և իր կանանց ամուսնացնելը։

Թերևս տարօրինակ հնչեն այդ խօսքերը իրերի

[1]) Տես «Европейскіе монархи» եր. 16—18.

դրութեանը անծանօթ ընթերցողների ականջին, սակայն ճշմարտութիւն են պարունակում իրենց մէջ։ Հնաւանդ սովորութեան համեմատ [1]) սուլթանը իր մերձաւոր պաշտօնեաներին երբեմն վարձատրում է, իր կանանցից նւէր տալով նրանց։ Սիրելի պաշտօնեան դառնում է մի տեսակ փեսայ սուլթանին և ստանում է նրանից իբրև օժիտ իր կնոջ համար առնւազը 75,000 ր., չըհաշւելով կնոջ սեփականութիւն կազմող թանկագին իրերը, զարդերը, ինչպէս նաև այդ ամուսնութեան հետ կապւած բարձր պաշտօններն ու շքանշանները։

Այդ ձևով սուլթանը իւրաքանչիւր տարի մի քանի տասնեակ կին է ամուսնացնում։ Բայց դրանով նրա հարեմը չէ կրճատւում, որովհետև սուլթանական փեսաները ընդունւած սովորութեան համեմատ, իբրև շնորհակալութեան արտայայտութիւն, նւիրում են սուլթանին մի-մի գեղեցկուհի օրիորդ։ Այդպիսով կենդանի ապրանքների մի տեսակ փոխանակութիւն է կատարւում։

Բացի դրանից իւրաքանչիւր տարի սուլթանի ծննդեան օրը նրա մայրը նւէր է տալիս մի օրիորդ։

Հասկանալի է, իհարկէ, որ ամեն մի պատահական օրիորդ չէ կարող փադիշահի կինը դառնալ, ուստի թէ սուլթանի «փեսայ» պաշտօնեաները և թէ նրա մայրը յատուկ գործակալներ են ուղարկում գաւառները, որպէսզի որոնեն, ընտրեն գեղեցիկ սեռի գեղեցկագոյն ներկայացուցիչներին՝ սուլթանի հարեմի անդամ դարձնելու համար։

Մի կողմ թողնելով այն հարցը, թէ որքան ապականիչ են այդ բարքերը, կարելի է ասել, որ սուլ-

[1]) Ibid եր. 15.

թանական հարեմը մի անյագ տղրուկ է Թիւրքիայի արիւնաքամ սրտին կպած։

Թշուառ ընտանիքների ձեռքից չոր հացն են խլում, աղի արցունքով ցօղած վերջին զուրուշներն են հաւաքում այլև այլ ձևերով և հարեմի ծախսերը հոգում։

Այսպէս օրինակ մի գեղեցիկ օր Եըլդըզից հրաման է գնում [1]) Կարինի վալիին, թէ իսկոյն հաւաքիր և ուղարկիր 15,000 ոսկի՝ զօրքի ռոճիկը վճարելու համար։ Եւ հրամանը կատարւում է, բայց փողը ոչ թէ զօրքին է տրւում, այլ Եըլդըզ ուղարկւում։ Նոյն միջոցին Տրապիզոնի վիլայէթից պահանջւում են 10,000 ոսկի, որից 5,000-ը իսկոյն տրւում է հարէմի ներքնապետին։

Ինքը սուլթանը անձնապէս հսկայական հարստութիւնների տէր է։ Նրա մասնաւոր սեփականութիւնը կազմող կալուածքները սփռուած են երկրի ամենածաղկաւէտ վայրերում և տարեկան 650,000 ոսկի—(մօտ 6 միլլիօն ռուբլի կամ 18 միլլիօն ֆրանկի)—եկամուտ են բերում [2])։

Ուրիշ երկրներում էլ, իհարկէ, միապետները խոշոր գումարներ են ծախսում իրենց պէտքերի վրայ, բայց դրեթէ ոչ մի տեղ ժողովրդական փողերի շռայլութիւնը այնպիսի չափերի չէ հասնում, ինչպէս Եըլդըզում։ Այսպէս օրինակ ֆրանսիական «Journal des Debats» թերթի—(1908 թ.)—տեղեկութիւնների համեմատ Ֆրանսիայի հանրապետութեան նախագահը ստանում է տարեկան մէկ միլլիօն 200 հազար ֆրանկ ռոճիկ, իսկ միւս երկրների միապետներն ստանում են տարեկան.

[1]) «Further correspondence resp. the asiatic province of Turkey» (Blue Book), 1881.

[2]) Տես «Արևելք» 1908 թ. № 6887

1) Պրուսսիայի թագաւորը	20	միլլիօն	ֆրանկ
2) Իտալիայի	»	15	»
3) Անգլիայի	»	23	»
4) Սպանիայի	»	10	»
5) Պօրտուգալիայի	»	9	»
6) Դանիայի	»	$1^1/_2$	»
7) Աւստրիայի կայսրը		20	»
8) Եապոնիայի	»	13	»

Իսկ սուլթանի միայն հարեմական ծախսերը դրանից անհամեմատ աւելի են, այսինքն մօտ 14 ֆրանկ տարեկան։

Կարծում ենք բացատրութիւններն աւելորդ են։ Թւերը չափազանց պերճախօս են։

Սուլթանի օրինակով գործում են և բոլոր միւս պաշտօնեաները։ «Каковъ попъ, таковъ и приходъ» —ասում է ռուսական առածը։ Ինչ դեր որ խաղում է սուլթանը ամբողջ պետութեան մէջ, նոյնը անում են վալին ու նրա օգնականը՝ մօավինը վիլայէթում (նահանգ), մութասարիֆը—սանջակում—(գաւառ), գայմաքամը—կազայում (գաւառակ), միւդիրը—նահիէում—(գիւղաշրջան) և մուխտարը—կարիէում—(համայնքում)։

Իւրաքանչիւրն իր շրջանում տէր ու տնօրէն է։ Կան, ի հարկէ, օրէնքներ, բայց դրանք թղթի վրայ են և ոչ թէ իրականութեան մէջ։ Ինչպէս որ սուլթան Աբդիւլ Համիդը 30 տարի Օսմանեան սահմանադրութիւնը մեռած տառ էր թողել, ճիշտ այդպէս էլ նրա գործակալները ամեն օրէնք մոռացութեան տալով միայն իրենց քմահաճոյքներով են ղեկավարւում, ամենագլխաւոր ուշադրութիւնը կենդրոնացնելով միայն մի կէտի վրայ՝ այն է որքան կարելի է շատ փող գողել պետական գումարներից կամ շորթել ժողովրդից, բաշխիշներ վերցնել—մի խօսքով շուտ հարստանալ։

Եւ դա հասկանալի է, եթէ աչքի առաջ ունենանք թէ ինչպէս է կազմակերպւում թիւրքական բիւրօկրատիայի մեխանիզմը։

Այստեղ պաշտօնները տրւում են մարդկանց ոչ թէ ըստ արժանիքների ու ընդունակութիւնների, այլ բոլորովին հակառակը։ Ով որ լաւ կապեր ունի Ելդըզում, ով կարողանում է մեծ բաշխիշներ տալ բարձր իշխանաւորներին—նա էլ ստանում է ցանկալի պաշտօնը։ Այդ իսկ պատճառով երբեմն պատահում է, որ անգրագէտ մարդիկ էլ վալիներ ու գայմակամներ են դառնում։

Բաշխիշների ճանապարհով վերև բարձրացող պաշտօնեաները, բնականաբար բաշխիշներով էլ աշխատում են իրենց «զոհաբերութիւնները» ծածկել և սև օրւայ համար էլ գումարներ հաւաքել։ Այդպիսով կաշառակերութիւնը դառնում է մի սովորական ու անհրաժեշտ գործօն օսմանեան կառավարչական սիստեմի։ Դրան նպաստում է նաև այն, որ պետական գանձարանը չափազանց անկանոն կերպով է վճարում ռոճիկները։

Կաշառակերութիւն՝ հարկահանութեան ու դատավարութեան ժամանակ։

Կաշառակերութիւն՝ վարչական բոլոր ասպարէզներում։

Հասարակ գրագրից ու մուխտարից սկսած մինչև վալին, նախարարն ու նոյն իսկ մեծ վեզիրը բռնւած են այդ հիւանդութեամբ։

Հասկանալի է, ի հարկէ, թէ ինչ պէտք է լինի այդպիսի պաշտօնէութեան դերն ու ազդեցութիւնը։

Դրանցից իւրաքանչիւրը լինելով մի չարիք ժողովրդի համար, միևնոյն ժամանակ գաղտնի ու յայտնի, ներելի ու աններելի բոլոր միջոցներով պայքար է մղում իր նմանների դէմ։

Այդ ասպարիզում էլ առաջնութիւնը սուլթանին է պատկանում։

Դաւերի մթնոլորտում գահ բարձրացած Աբդուլ Համիդը իր շուրջը շարունակ դաւեր է տեսնում, ուստի և լրտեսների ու գաղտնի ոստիկանութեան վոհմակներով է շրջապատել Ելդըզը, դրանց վրայ հսկայական գումարներ ծախսելով։

Նրա ներքին քաղաքականութիւնը ամբողջապէս ազդւած է անվերջ դաւերի հեռանկարից։

Ահ ու սարսափից առաջացած կասկածամտութիւնը անբուժելի հիւանդութիւն է դարձել սուլթանի համար։ Նա կասկածում է բոլորին, վախենում է բոլորից։

Նրա պաշտօնեաներից իւրաքանչիւրն էլ բռնւած է նոյն ախտով։—«Թիւրք կառավարութեան մինիստրները, իրաւացի կերպով նկատում է Բ. Շտերն[1]), ոչ այլ ինչ են, եթէ ոչ երկիւղից ձուլւած բռնակալութիւն։

Ահա ձեզ ոստիկանութեան մինիստրը։ Չնայելով, որ նա ներքին գործոց նախարարին է հպատակւում, բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում, ոչ միայն նրա, այլ և նոյն իսկ մեծ վեզիրի վրայ։ Նա շարունակ որոգայթներ է լարում երկուսի դէմ և դրա համար էլ նրանցից աւելի զօրեղ է։ Նա տեղեկութիւններ է հաղորդում միմիայն Սերալին և միայն այնտեղից է պատւէրներ ստանում։

Անցագրային վարչութիւնը ոստիկանութեան նախարարութեան մի մասն է կազմում։ Բայց այդ անցագրային վարչութեան վերատեսուչը Թէզքերէ (անցագիր) բաց թողնելու ժամանակ ահագին դժւարութիններ է ստեղծում, եթէ նոյն իսկ ոստիկանութեան

[1]) «Հիւանդ մարդը» եր. 5.

մինիստրը պատահմամբ անցագիր ցանկացողի համար երաշխաւորում է։ Չէ որ այդ երկու պարոնները միմեանց մահացու թշնամիներ են և դրանցից ամենափոքրը ամենաուժեղն է, որովհետև իր մեծի դէմ Սէրալում ոտգայթներ է լարում։ Ներքին գործոց մինիստրն էլ նրանից պակաս չէ։ Նա էլ նոյնպէս Եըլըզ-Քիօշկում ոստիկանութեան մինիստրի, Պերայի, Բէշիկթաշի և Սկիւտարի նահանգապետների դէմ, որոնք իր ստորադրեալները և միևնոյն ժամանակ մրցակիցներն են, ինտրիգներ է սարքում։ Իսկ դրանք բոլորը միասին դողում են պալատական ոստիկանութեան գըլխաւորից, ալբանացի Թայիր փաշայից, որը կարդալ, մինչև անգամ իր անունը գրել չգիտէ, բայց չնայելով դրան աւելի զօրեղ է, քան վերոյիշեալ բոլոր պաշտօնեաները միասին։ Ժամանակ առ ժամանակ երևան է գալիս պալատական որ և է լրտես, որը ոստիկանութեան դեր է խաղում, իսկ գործում է ընդդէմ իսկական ոստիկանութեան»։

Եւ այդպիսի երևոյթները սովորական են թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում։

Անծայր կաշառակերութիւն ու անսահման դաւադրութիւն—ահա երկու ցայտուն յատկանիշները թիւրք պաշտօնեաների։

Իսկ տուժողը՝ դարձեալ ժողովուրդն է։

Զ. ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ

Ի՞նչ էր կատարւում երկրի ներսում.—Արտաքին ազդեցութիւններ.—Մեծ պետութիւնների և կապիտալիզմի ձգտումները.—Թիւրքիայի կորուստները.—Ջանքեր դրա դէմ։

—

Ի՞նչ են ասում վերևում առաջ բերած փաստերն ու դիտողութիւնները։

Թիւրքերը իբրև ռազմական բանակ շարժւել են արևելքից դէպի արևմուտք և հրով ու սրով հաստատել սուլթանական իշխանութիւնը։

Իսլամը իբրև հասարակական կեանքի մի գործօն կաշկանդիչ ազդեցութիւն է ունեցել իր հետևողների վրա, յետ կասեցնելով նրանց քաղաքակրթական առաջխաղացութիւնից։

Երկրի տնտեսական գործօններն էլ բռնակալական միահեծանութեան շնորհիւ զրկւել են իրենց դրական արժէքից և խղճուկ աստիճանների վրա կանգ առել։

Հարկահանութիւնը իր կամայական սիստեմով ու անօրինակ ծանրութեամբ դժոխային չարիքներ է ծընեցրել խեղճ ու կրակ ժողովրդի համար։

Իսկ սուլթանն ու նրա գործակալները՝ թիւրքական իշխանութիւնը—մինչև ծայրը լցրել են դառնութեան բաժակը, լրացրել են թշւառութեան մութ, մռայլ պատկերը։

Ի՞նչ պէտք է լինէր այդպիսի պայմանների ենթարկւած երկրի բաղդը։

Պատասխանը պարզ է։

Նա պէտք է քայքայման ենթարկւէր թէ ներսից և թէ դրսից։

Ներսում ժողովրդական կեանքը, ենթարկւած լինելով ծայրահեղ բռնակալութեան ու հալածանքների՝ չէր ընթանում իր բնական ուղիով, չէր զարգանում ցանկալի չափով։

Եւ քայքայւում էր ազգաբնակութիւնը ծանր հարկերից, կեանքի ու գոյքի անապահովութիւնից։

Նրա ծաղիկ ոյժերը փոխանակ հայրենի երկրի բարեբեր դաշտերը մշակելու, բազմազան հարստութիւնները շահագործելու, ստիպւած էին լինում պանդխտութեան ցուպը ձեռք առնել և օտար հորիզոնների տակ բաղդ ու կեանք որոնել։

Իսկ դրսից, ընդհակառակը՝ մեծ պետութիւնները տարէցտարի աւելի ու աւելի տարածում էին իրենց ազդեցութեան ցանցերը ամբողջ Թիւրքիայի վրա, աշխարհակալական ոտնձգութիւնների հետ միասին։

Եւ կապիտալիզմը յառաջուն քայլերով մղում էր իր ներկայացուցիչներին դէպի այդ շահաւէտ վայրը՝ բազմապիսի կոնցեսսիաներ ձեռք բերելու և շուկաներ ստեղծելու՝ իր արտադրած ապրանքների համար։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Մենք տեսանք, որ ազգաբնակութիւնը շնորհիւ ազգային-կրօնական խտրութիւնների բաժանւած էր երկու հակադիր մասերի։ Եւ դրանցից քրիստոնեաները բացի ընդհանուր ճնշման ու կեղեքման ենթարկւելուց, տառապում էին, տանջւում էին նաև իբրև ոչ մահմեդականներ՝ գեաւուրներ։

Ի՞նչ էր դրանց վիճակը...

—Հալածանք կրօնական, սոցիալական և տնտեսական ասպարէզներում։ Կեանքի ու գոյքի կատարեալ անապահովութիւն։ Իսկ կառավարութեան կողմից ջերմագին քաջալերութիւն գործադրւող անարդարութիւնների վերաբերմամբ։

Այդպիսով նրանք դարձել են երկրի խորթ զաւակները, ուստի աւելի շուտ և աւելի մեծ թափով ձգտել են ջախջախել բռնութեան ու անարդարութեան շղթաները և ձգտել դէպի ազատութիւն, թէկուզ արեան գետերի միջով։

Յեղափոխութեան սերմերը ամենից առաջ դրանց շարքերում են պարարտ հող գտել, որովհետև կուլտուրապէս էլ դրանք աւելի բարձր են կանգնած, քան մահմեդականները։

Զարմանալի չէ ուրեմն, որ դեռ XVIII-րորդ դարի վերջերից կազմակերպւում են յունական հետերիաները, որոնք տասնեակ տարիներով անհաւասար կռիւ են մղում թիւրքական բռնակալութեան դէմ, մինչև որ Յունաստանը անկախ պետութիւն է դառնում։

Նոյն ժամանակաշրջանից ծնունդ է առնում սերբիական շարժումը, որ Միլօշ Օբրենովիչի ղեկավարութեամբ հսկայական չափերի է հասնում, վերջի վերջոյ դարձեալ մի խոշոր կտոր անդամահատում Թիւրքիայից և սահմանագծում մի նոր պետութիւն՝ Սերբիան։

Այդ միևնոյն ազգային յեղափոխական ուղիով ձեռք են բերում իրենց ազատութիւնը՝ նաև Չերնոգորիան, Ռումինիան, Բօլգարիան, Կրետէն։

Ուրի՞շ խօսքով ասած միայն XIX-րորդ դարի ընթացքում Օսմանեան պետութիւնից անջատւում են [1]).

	Տարածութիւն		Ազգաբնակութիւն
1. Յունաստանը	64679	քառ. կիլօմ.	2,434,000
2. Սերբիան	48,303	»	2,494,000
3. Չերնոգորիան	9,080	»	228,000
4. Ռումինիան	131,353	»	5,913,000
5. Բօլգարիան	95,706	»	3,744,000
Ընդհամ.	349,121	քառ. կիլօմ.	14,713,000

[1]) Թւերը վերցրել ենք Prof. juraschek: „Ceographischstatistische Tabellen“ և Kurschners „Jahrbuch“-ից։

Բացի դրանից իրականապէս Թիւրքիայի ձեռքից դուրս եկած կարող են համարուել և Անգլիայի ազդեցութեան ենթարկուած Եգիպտոսն ու Կիպրոսը, Աւստրո-Ունգարիայի՝ Բօսնիա—Հերցոգովինան, ինչպէս նաև ինքնավար Կրետէ և Սամօս կղզիները, ուրիշ խօսքով ասած՝ եւ 1,071,100 քառ. կիլօմ. տարածութիւն, 13 միլլիօնից աւելի ազգաբնակութեամբ, այն է.

	Տարածութիւն		Ազգաբնակութիւն
1. Եգիպտոս	994,275	քառ. կիլօմ.	11,206,000
2. Կիպրոս	9,282	»	238,000
3. Բոսնիա-Հերս.	58,460	»	1,488,000
4. Կրիտէ	8,618	»	310,000
5. Սամօս	468	»	54,800
Ընդ.	1,071,103	քառ. կիլօմ.	13,297,800

Ուրեմն եթէ նոյն իսկ հաշուի չառնենք պատերազմների շնորհիւ Ռուսաստանի ձեռքն անցած ընդարձակ նահանգները—(Բեսարաբիա, Կարսի, Բաթումի շրջանը և այլն)— այնուամենայնիւ ստացւում է մի սոսկալի պատկեր այն կորուստների, որ ունեցել է Թիւրքիան իր տիրապետութիւններից:

Նա կորցրել է ընդամենը 1,420,224 քառ. կիլօմետր տարածութիւն 28,010,800 ազգաբնակութեամբ, այսինքն կորցրածը աւելի է, քան այժմեան ունեցածը:

Սակայն այդ դեռ բոլորը չէ: Մեծ պետութիւնները, իրենց քաղաքական-տնտեսական ազդեցութիւնը շատ հեռուն տարածելով, մի բնորոշ հովանաւորութիւն են հաստատել Թիւրքիայի գլխին, մերթ՝ տառապող քրիստոնեաներին պաշտպանելու, մերթ՝ մի այլ պատրուակով:

Այդպիսով «հզօր» Թիւրքիան հետզհետէ դառնում էր դիպլօմատիական խաղերի կուախնձոր: Օրէց-օր աւելի ու աւելի մեծ չափերի էին հասնում նրա

պետական ինքնուրոյնութիւնը խախտող արտաքին միջամտութիւնները, ոտնձգութիւնները:

Դրա հետ միասին տարէցտարի զարգանում, բոցավառւում էր յեղափոխական շարժումը թիւրքական լծի տակ դեռ տառապող քրիստոնեայ ազգաբնակութիւնների:

Ուրիշ խօսքով ասած՝ իր ամբողջ թափով շարունակւում էր Թիւրքիայի ներքին ու արտաքին քայքայումը:

Աչք փակել այդ ցաւոտ երևոյթի հանդէպ, անտես առնել կատարւող անցքերը չէր կարելի, որքան էլ բռնակալութիւնը դրա համար ջանքեր թափէր:

Թիւրքիան կանգնած էր կործանման ճանապարհի վրայ: Այդ տեսնում էին, զգում էին ոչ միայն ազատամիտ թիւրքերը, այլ և սուլթանները իրենց արքունականներով:

Եւ ահա այդ ճանապարհը փակելու համար սկսւում են մի շարք բարենորոգչական փորձեր, որոնց գլուխ գործոցն է երիտասարդ թիւրքերի կազմակերպած վերջին յաղթական յեղաշրջումը, և սահմանադրութեան վերահաստատումը:

Է. ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Հին ցաւը.—Ենիչերիների դերը և նրանց ոչնչացումը.—Ռաշիդ փաշան.—Խատտի Շերիֆը.—Թանզիմատը.—Ղրիմի պատերազմը և Խատտի Հիւմայունը. Դրութիւնը չէ փոխւում.—Ապստամբական կայծեր.—Պարիզի կոմմունան և երիտասարդ թիւրքերը: Հիասթափումն:

—

Թիւրք հասարակութեան մէջ կային անհատներ, որոնք շատ վաղ ըմբռնել էին հայրենիքի ցաւերի պատճառը և կոչ էին անում սխալ ճանապարհից հեռանալու: Բայց դրանք այնքան հազւագիւտ էին, այնքան բացառիկ, որ ոչ մի ազդեցութիւն չէին կարող ունենալ իրերի ընթացքի վրայ: Այսպէս օրինակ դեռ XVIII-րորդ դարի վերջին Կուչիբէյ անունով մի թիւրք հեղինակ մատնանիշ է անում սուլթանների սխալ քաղաքականութիւնը, այլակրօններին չափազանց հալածելու վնասակարութիւնը և նոր օրէնքներ ու կարգեր հաստատելու անհրաժեշտութիւնը:

Բայց ո՞վ էր լսողը: Այդպիսի կոչերը, որքան էլ խիզախ լինէին, խեղդւում էին ամբոխային մոլեռանդութեան ու կառավարական բռնակալութեան մթնոլորտում:

Դարերի անցեալը այնպէս ամրացրել էր չարիքների արմատը, որ նոյն իսկ սուլթանական փորձերը երբեմն քարացած արգելքների են հանդիպում և ապարդիւն մնում:

Զէնքի, ռազմական ուժի օգնութեամբ հզօրացած սուլթանները մեծ կախման մէջ էին հէնց այդ ուժից:

Ենիչերիները—օսմանեան զինւորական ուժի այդ կատաղի ներկայացուցիչները այնպիսի ազդեցութիւն էին ձեռք բերել, որ նոյն իսկ վեզիր ու սուլթան նրանցից քաշւում, երկնչում էին:

Զինւորութիւնը ենիչերիների համար ժառանգական սեփականութիւն էր դարձել և նրանք պետութեան մէջ դարձել էին ահարկու մի ուժ:

Նոյն իսկ սուլթաններ էին գահընկէց անում և մահացնում [1]:

«Ընկեցիկ արարեալ են յաթոռոյ, ասում է Ա. Պէրպէրեան [2], զութեսին թագաւորս Օսմանեան տէրութեանն, և 'ի մահ հրաւիրեալ»: Այդքան զօրեղ էին զգում իրենց ենիչերիները:

Պարզ է, ուրեմն, որ Թիւրքիայում որև է բարենորոգում մտցնելու համար անհրաժեշտ էր հէնց դրանցից սկսել:

Այդպէս էլ վարւում է Սուլթան Մահմուդը: Նա լուրջ ուշադրութիւն է դարձնում կանոնաւոր զօրք կազմակերպելու վրա և այդ գործի ղեկավարութիւնը յանձնում է մի երիտասարդ պրուսացի սպայի: Դա Մոլտկէն էր, որ ապագայում համաշխարհային հռչակ ստացաւ իր ռազմագիտութեամբ:

Մռայլ գոյներով նկարագրում է Մոլտկէն իր նամակներում Թիւրքիայի վիճակը, նրա ժողովուրդների ազիտութիւնը և իշխանութեան կատարեալ ապիկարութիւնը:

«Բարենորոգումներ, ասում է նա [3], հեշտ չէ դրանց իրականացումը Թիւրքիայում: Այդ հարցում

---

[1]) Ш. Сеньобосъ: „Политическ. Исторія" томъ II եր. 203.

[2]) Ա. Պէրպէրեան «Պատմութիւն հայոց» եր. 180.

[3]) Moltke: «Briefe über Zustände und Begebenheiten in der Turkei» երես 413:

ժամանակակից Թիւրքիան նման է Մեծն Պետրոսի ժամանակւայ Ռուսաստանին։ Աւելի վատ։ Ռուսաստանում չէին սիրում եւրոպացիներին, իսկ Թիւրքիայում ատում են նրանց և առհասարակ բոլոր քրիստոնեաներին»։

Սակայն սուլթան Մահմուդ դիմում է վճռական քայլի, այսինքն բարենորոգումներն իրականացնելու նպատակով փորձում է ընկճել ամենախոշոր խոչընդոտին՝ ենիչերիներին

—«Արդ, ասում է Ա. Պերպէրեան [1]), սուլթան Մահմուդ արքայ գաղտնի խորհրդով Յարութիւն աղայի Պէզճեան, որ հաւատարիմ սիրելին էր արքայի և մտերիմ խորհրդակից նմին, յինքն յանկուցեալ զմի ի գլխաւոր ուստայից ենիչերի զօրաց, որ կոչէր Տօգուզունճու ուստա, և մեծամեծ պարգևս և պատուութիւնս և հարստութիւնս խոստացեալ նման հնարս խնդրէ ի նմանէ կործանելոյ զայս չարագործ օճագ ապստամբ ենիչերի զօրաց և նա խոստանայ նմա երդմամբ զայս գործ ի գլուխ տանել խորագիտութեամբ»...

Սուլթանը իսկոյն Բեօյուկ ադա աատրիճան է տալիս այդ ուստային։ Եւ կազմակերպւում է լայն դաւադրութիւնը։ Ամենից առաջ զանազան պատրւակներով հեռացնում են ենիչերիների ղեկավարներին Անատոլիայի զանազան քաղաքները։ Ապա սկսւում են խոստութիւնները մայրաքաղաքում մնացածների համար։

Վրայ է հասնում 1826 թ., երբ յունական ապստամբութիւնը իր գագաթնակէտին էր հասած։ Սուլթանի հրամանով և Մօլտկէի ղեկավարութեամբ կազմակերպւում են նոր զօրագնդեր արաբներից և այլ ցեղերից։ Սուլթանը հրամայում է, որ ենիչերիների իւրաքանչիւր հօրդա 150 զինուոր տայ այդ գնդերի

[1]) «Պատմութիւն հայոց» եր. 181.

համար։ Վերջիններս հակառակւում են և դրանով իսկ արագացնում իրենց կործանումը։

Վճռւում է մի օրւայ մէջ ոչնչացնել ըմբոստներին։ Նախապէս պատրաստած ունենալով հաւատարիմ զօրք ու թնդանօթներ, սուլթանը անձամբ դուրս է գալիս ժողովրդի մէջ շէյխուլիսլամի և այլ մեծամեծների հետ։ Դուրս են բերում և կրօնական սրբութիւնը՝ սանջագի-շէրիֆը, որով ձեռնարկը կրօնական բնոյթ է ստանում։

Ապա առաջ են անցնում ճառախօսները և ամբոխին հասկացնում, թէ ինչպէս ենիչերիները հակառակւում են խալիֆի՝ սուլթանի կամքին, թէ որքան մեծ սրբապղծութիւն է նրանց վարմունքը։

Այդ նախապատրաստական միջոցներից յետոյ զօրքը շարժւում է դէպի ենիչերիների զօրանոցները։ Մի կողմից թնդանօթներն են կրակում, իսկ միւս կողմից հրդեհ գցում, այնպէս որ անյաղթելի համարւած ենիչարական գնդերը երկու կրակի մէջ ընկած ոչնչանում են։ Շատերին էլ ծովն են նետում. այդպիսով վերանում է անհարկու խոչընդոտը բարենորոգումների։

Եւ այդ դէպքը այնքան ոգեւորիչ ազդեցութիւն է թողնում, որ թիւրք նշանաւոր բանաստեղծ Իզզէթ մօլլան սուլթան Մահմուդի անունով մի ձօն [1]) է շարադրում, որով գովաբանում է ենիչերիների ամբողջ անցեալը և մեծ երջանկութիւն համարում Թիւրքիայի համար նրանց ոչնչացումը։

Ենիչերիների օճախը ոչնչացնելուց յետոյ սուլթան Մահմուդը ամենից առաջ զինւորական բարենորոգումն է իրականացնում, կազմակերպելով եւրոպական նմանողութեամբ մշտական զօրք։

[1]) Տես Ա. Պէրպէրեան. «Պատմութիւն հայոց» եր. 186.

—«Բայց ինչ նմանողութիւն էր դա, հեգնօրէն բացականչում է Մօլտկէն իր նամակներում, շորերը նման էին ռուսականին, կանոնները՝ ֆրանսիականին, հրացանները՝ բելգիականին, սրերը՝ անգլիականին, և բոլորի հետ թիւրքական տիւրբաններ և վենգրիական թամբեր...»

Որքան էլ խայտաբղէտ լինէր նոր զօրքը իր արտաքինով, բայց և այնպէս նա մի նորութիւն էր Թիւրքիայի համար։

Սուլթանը միայն դրանով չի բաւականանում։ Թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում պաշտօնեաները արդէն ստեղծել էին մի տեսակ ազնուականութիւն, իրենց պաշտօնները դարձնելով ժառանգական։ Սուլթանը մի հրամանով արգելում է այդ սովորութիւնը, դրանով խոչնդոտ կանգնեցնելով ազնուականութիւն հաստատելու դէմ։ Նա ուշք է դարձնում նաև հագուստի, մօրուքի, արտաքին նիստ կացի վրայ և աշխատում է հէնց ինքը կենդանի օրինակ դառնալ ուրիշներին։

Մենակ չէր, ի հարկէ, սուլթանը իր բարենորոգչական գործերում։ Կար մի փոքրիկ խմբակ, որ տոգորուած էր հայրենիքի վերածնութեան հարցով և բարենորոգումն էր համարում դրա բանալին։

Երիտասարդ Թիւրքերն էին դրանք, որ եւրոպական և յատկապէս ֆրանսիական գրականութեան ու պատմութեան ազդեցութեամբ կրթուած, երազում էին վերստեղծել Թիւրքիայի վաղեմի հզօրութիւնը, ոչընչացնել նրա կաշկանդիչ շղթաները և ծերացած, դէպի գերեզման նայող Թիւրքիայից դարձնել մի նոր՝ երիտասարդ Թիւրքիա։

Այդ խմբակի պարագլուխն էր Ռեշիդ փաշան, որ ամենայն իրաւամբ ոմանց կողմից օսմանեան Բէշելիօն է համարւում։

Դեսպանական կարևոր պաշտօններ վարելով եւրոպական երկու խոշոր կենտրոններում՝ Պարիզում ու Լօնդօնում, նա հեռուից էլ բաւական ազդեցութիւն է ունենում հայրենիքի քաղաքական գործերի վրա։

Սակայն այդ ազդեցութիւնը աւելի լայնանում է, երբ Կ. Պօլիս է վերադառնում և մեծ վեզիրի պաշտօնն ստանձնում։ Սուլթան Մահմուդի բարենորոգչական տրամադրութիւնից քաջալերուած նա մշակում է մի հոյակապ ծրագիր լայն բարենորոգումների։

Թիւրքական Magna Charta-ն էր այդ ծրագիրը՝ հռչակաւոր «Խատտի Շէրիֆը», որ հրատարակեց Գիւլխանէի արքունիքում, սուլթան Մահմուդի յաջորդ Աբդուլ Մէջիդի օրով—(1839 թ. 3 նոյեմբերի)։

Եւրոպական ներկայացուցիչների, բարձրաստիճան պաշտօնեաների, թիւրք, հայ, յոյն, բուլղար ու հրէայ ժողովրդական պատգամաւորների ու խուռն բազմութեան ներկայութեամբ և 101 թնդանօթաձգութեան շեշտերի տակ կարդացւում է այդ նշանաւոր հրովարտակը, որ երիտասարդ Թիւրքիայի առաջին խոշորագոյն յաղթանակն էր և արմատական բարենորոգումների ազդանշանը։

—«Ամբողջ աշխարհին յայտնի է, ասում է այդ Խաթթի-Շէրիֆը [1]), որ օսմանեան տիրապետութեան առաջւայ ժամանակներին ամենքը իւրանց կենաց սկզբունք համարում էին Ղուրանի փառաւոր հրամանները և տէրութեան օրէնքները։ Հետևաբար թագաւորութիւնը մեծանում էր և զարգանում, և առանց խտրութեան բոլոր հպատակները հասնում էին բարօրութեան գերագոյն աստիճանին։ Բայց վերջին 150 տարւայ մէջ շատ անյաջող հանքամանքների շնորհիւ և այլ և այլ պատճառներով ձեռք վեր առան սրբազան

[1]) «Փորձ» 1876 գիրք Բ. եր. 147.

օրէնքները յարգելուց, և այդ օրէնքներից ծագած կանոնները իւրանց կենաց մէջ իբր մի առաջնորդող աստղ համարելուց դադարեցին, ուստի հինօրեայ ոյժը և բարօրութիւնը փոխւեցաւ թուլութեան և աղքատութեան: Իսկ տէրութիւնը կորցնում է իր ոյժը, երբ նրա սահմաններում օրէնքները չեն պահպանւում: Այս մտածողութիւնները անդադար զբաղեցնում են մեր միտքը. և մեր գահ նստելու օրից սկսած մենք առանց յոգնելու հոգս ենք տարած հասարակաց օգտի համար, գաւառների բարօրութեան համար և վերջապէս նւաճեալ ազգերի վիճակը բարւոքելու համար: Եթէ ի նկատի ունենանք աշխարհագրական դրութիւնը օսմանեան նահանգների, նոցա հողի պտղաբերութիւնը, բնակչաց խելքն ու ընդունակութիւնը, այն ժամանակ չի կարելի չը համոզւիլ, որ եթէ միայն ճշմարտապէս հոգս տարւի, քանի մի տարւայ մէջ շատ յաջող հետևանքներ կունենանք, ինչպէս որ և ողորմութեամբն Աստծոյ յոյս ունինք տեսնել:

Այս հանգամանքների մէջ, յոյս դնելով ամենաբարձրելոյն ողորմութեան և մեծ մարգարէի օգնութեան վրայ, մենք հարկաւոր համարեցինք նորանոր հիմնարկութեանց ձեռքով տալ օսմանեան պետութեան բոլոր երկիրներին բարօրութիւն և լաւ վարչութիւն: Այդ պետական հիմնարկութիւնները պիտի աչքի առաջ ունենան 1) խոստմունքը, որ ապահովացնում է մեր հպատակների կեանքը, պատիւը և սեփականութիւնը 2) համահաւասար բաժանումը և ժողովումը տէրութեան հարկերի և 3) զօրաժողովի և զինւորական ծառայութեան սահմանադրութիւնը:

Եւ արդարև ինչ կայ մարդուս համար թանգագին, քան կեանքը և պատիւը: Մինչև անգամ այն անձը, որի սիրտը բարախում է բռնաբարութեան ա-

նունը լսելիս, նա ևս, երբ իր կեանքը և պատիւը վըտանգի մէջ է տեսնում, նոյն բռնաբարութեանն է դիմում անձնապաշտպանութեան նպատակաւ և դորանով մեծ վնաս է հասուցանում վարչութեանը և երկրին: Եւ ընդհակառակը, եթէ մէկը ապահովութիւն է վայելում, նա օրինազանց չի գտնւիլ և հետևաբար նորա գործերը պիտի օգնեն տէրութեան և երկրացոց բարօրութեանը: Եթէ չը կայ կայքի ապահովութիւն, ի հարկէ, հայրենեաց և գահակալի ձայնը արձագանք չի գտնիլ այդպիսի երկրում, այդտեղ ոչ ոք չի պարապիլ ընդհանուր բարօրութեան խնդիրներով, քանի որ ամեն ոք զբաղւած է իր անձնական ապահովութեան հոգսերով. հակառակ սորա, եթէ քաղաքացին ապահով է իր կայքերի մասին, այն ժամանակը նորա մէջ, ոչ միայն տեսնւում է ցանկութիւն լայնացնել իր գործունէութիւնը, այլ և նորա սիրտը լի է լինում սիրով դէպի իր գահակալը, իր տէրութիւնը և իր հայրենիքը: Եւ այս զբաղմունքները շարժառիթ են լինում շատ գովելի գործերի:

Ոչ պակաս նշանաւոր է տէրութեան հարկերի համարաժանման խնդիրը, որովհետև տէրութիւնը, որի վրայ դրած է պարտականութիւն պաշտպանել թագաւորութիւնը և այդ պատճառով ծախսերի պէտք ունի, ոչ այլ կերպ կարող է ձեռք բերել զօրք և այլ և այլ պաշտօնատարաց համար պէտք եղած դրամը, եթէ ոչ իր հպատակներից հարկ առնելով: Թէև, փառք Աստծոյ, մեր հպատակները քանի ժամանակից ի վեր ազատ են կեղեքիչ մենավաճառութեան հարկից, որ առաջւայ ժամանակներում սխալմամբ տէրութեան եկամուտներից մէկն էր համարւում, բայց դեռ ևս կայ մի վնասակար և ըստ իր հետևանքի չար սովորութիւն, այն է իլթիզամ, այսինքն տէրութեան հարկերը կա-

պալով տալը այն մենավաճառներին, որոնք խոստանում են աւելի վճարել։ Այս սիստեմը քաղաքական և ելևմտական վարչութիւնները հպատակեցնում է մի մարդու կամաց, երբեմն մի այնպիսի մարդու, որ անսահման կրքերի և ցանկութեանց տէր է։ Եթէ այդ մենավաճառը բարեխիղճ մէկը չէ, այն ժամանակ նա աչքի առաջ կունենայ միմիայն իր անձնական շահերը։

Այս պատճառով այսուհետև Օսմանեան տէրութեան ամեն մի մասը պիտի տայ մի որոշեալ գումար հարկ, որ համապատասխան լինի այդ երկրի ոյժի և կարողութեանը, և բացի այդ որոշեալ գումարից, ուրիշ ոչինչ պահանջւելու չէ այդ երկրից։

Նմանապէս հաստատ կերպով որոշւած պէտք է լինին առանձին օրէնքներով մեր ցամաքային և ծովային զօրութեանց ծախսերը։

Մենք արդէն ուշադրութիւն դարձրինք թագաւորութեան պաշտպանութեան նշանաւորութեան վրայ։ Եթէ համեմատ այս նպատակին բոլոր բնակիչները պարտական են զինւոր տալ, այն ժամանակ հարկ է որ օրէնքներ սահմանւին, թէ որ երկիրը որքան զինւոր տալու է և դոցա ծառայութեան տարիքը չափաւորելու է չորս կամ հինգ տարով։ Անարդարութիւն կը լինէր և երկրագործութեանն ու արհեստագործութեանը մեծ վնաս պիտի հասնէր, եթէ այստեղ աւելի զինւոր առնւէր այնտեղ սակաւ, քան թէ մի երկիր կարող էր զինւոր տալ։ Եւ վերջապէս, եթէ զինւորին ստիպէին ծառայել իր ամբողջ կեանքումը, այդ կը նշանակէր նորան յուսահատութեան հասցնել և միւս կողմից նպաստել երկրի անմարդանալուն։

Այս բոլորը միասին ցոյց է տալիս, որ առանց այլ և այլ օրէնքների, որոնց հարկաւորութիւնը վերը յիշւեցաւ, չը կայ մի որևիցէ տէրութեան համար ոչ

հարստութիւն ու զօրութիւն, ոչ բարօրութիւն, ոչ հանգիստ. իսկ օրէնքների մտցնելուց յետոյ սպասելու է յիշեալ բարիքը։ Այս պատճառով ամենայն յանցանք պէտք է որ, համեմատ Աստուածային օրինաց, նախ քննւի, ապացուցւի և ապա դատապարտւի հրապարակաւ։

Ոչ ոք չը պէտք է պատժւի մահով, ոչ գաղտնի ոչ հրապարակաւ, ոչ թունաւորելով և ոչ ուրիշ միջոցներով, քանի որ օրինաւոր դատավճիռ չէ ստացած։ Նմանապէս ոչ ոք իրաւունք չունի անպատւել ուրիշներին։

Ամենայն ոք իրաւունք ունի իր ամեն տեսակ սեփականութիւնից ուզեցած օգուտը քաղել և վարել ազատաբար, առանց ամենայն արգելքի ում կողմից և իցէ։

Ոչ սակաւ սորանից, յանցաւորի անմեղ ժառանգները չը պիտի զրկւին իրենց օրինաւոր ժառանգութիւնից և դատապարտւածի կայքը յարքունիս չը պիտի գրավւի։

Որովհետև փադիշահի այս ողորմած հրովարտակը վերաբերում է մեր ամեն հպատակներին ինչ կրօնի և դաւանութեան և լինին դոքա, վասն որոյ ամենեքեանք պէտք է հաւասարապէս օգուտ քաղեն սորանից։

Ուրեմն այդպէս ահա, մենք տալիս ենք տէրութեան ամեն հպատակներին անխտրաբար, համաձայն Աստուածային օրինաց, կատարեալ ապահովութիւն նոցա կենաց, պատւոյ և կայից վերաբերութեամբ։

Իսկ ինչ որ կը վերաբերի յիշեալ կէտերին օրինաւոր իրագործութեան, այդ մասին մեր պետական վարչութիւնը ըստ օրինի խորհրդածելուց յետոյ, կը հաղորդակցէ մեր նախարարների և տէրութեան մեծամեցած հետ այն օրերը, երբ մենք կը նշանակենք

հիմնական օրէնքները քննելու և սահմանելու համար՝ այն օրէնքները, որոնք պիտի վերաբերեն կենաց և կալից ապահովութեանը և հարկերի համահաւասար բաժանմանը։

Այս խորհրդածութեանց ժամանակ ամենայն ոք (խորհրդականներից) պարտական է համարձակ յայտնել իւր կարծիքները և խորհուրդ տալ։

Այն օրէնքները, որոնք կվերաբերին զինուորական ծառայութեանը, կքննուին զինուորական խորհրդարանում սէրասքէրի (զինուորական նախարարի) ապարանքում։

Ամեն մի վճռական կերպով քննուած օրէնք ամմիջապէս պիտի մեզ ներկայացուի և մենք մեր փադիշահական ստորագրութեամբ ըստ օրինաց կըվաւերացնենք յաւիտենականապէս։

Որովհետև այս հիմնարկութիւնների միայնակ նպատակն է պահել պահպանել կրօնը, տէրութիւնը, ազգութիւնը և թագաւորութիւնը, այդ պատճառով մենք պարտաւոր ենք չգործել ոչինչ, որ միանգամայն Մեր այս կամքին արգելառիթ լինի։ Իսկ իբր ապահովութիւն Մեր այս խոստման, Մենք պարտաւորւում ենք երբ այս հրովարտակը կբերուի սանջաղի-շէրիֆի (սրբազան դրօշակի) խորանը դրուելու ի պահուստ, իսկոյն յանուն Աստուծոյ տալ Մեր երդումը բոլոր ուլեմների և տէրութեան մեծամեծների ներկայութեամբ և մի այդպիսի երդում կառնենք նոյնիսկ ուլէմներից և մեծամեծներից։

Այդպէս ահա երդուելուց յետոյ ամենայն ոք, թէ ուլեմ լինի նա, թէ բարձրաստիճան պաշտօնեայ և թէ հասարակ ոմն, եթէ միայն այն հիմնարկութեանց դէմ ներգործէ ու այդ բանը հաստատուի, պէտք է համեմատ իր մեղաց պատժուի, չնայելով նրա աստիճանին,

արժանաւորութեանը կամ նշանակութեանը։ Այս մըտքով քրէական օրէնքներ հաստատուելու են։

Որովհետև հիմա տէրութեան բոլոր ծառայողները բաւականին ռոճիկ են ստանում, իսկ քիչ ստացողների ռոճիկներն էլ պէտք է աւելացնուին, —պէտք է որ մի խիստ օրէնք հրատարակուի ընդդէմ քաղաքական անբարոյականութեան և շահասիրութեան, որոնք գլխաւոր պատճառներն են մեր տէրութեան անկմանը։

Եւ որովհետև այս հրատարակուող կանոնադրութիւնները հիմնապէս վերահաստատում են և վերանորոգում հինաւուրց սովորութիւնները, վասն որոյ այս իմ փադիշահական հրովարտակը պէտք է յայտնուի Կ. Պօլսոյ մէջ և կայսրութեան ամենագլխաւոր տեղերում, նաև պաշտօնական կերպով պիտի հաղորդուի Պօլսոյ մէջ գտնուող բարեկամ տէրութեանց դեսպաններին, որպէս զի նոքա վկայ լինեն այս օրէնքների բաշխելուն—օրէնքների, որոնք, եթէ կամենայ Աստուած, պիտի յաւիտեան հաստատ մնան։

Վերջ ամենայնի թող պահէ Աստուած մեզ ամենիս իր սուրբ հովանաւորութեան տակ· իսկ նոքա, որոնք այս օրէնքին դէմ կլինեն, այդպիսիները թող Աստծու պատուհասին արժանանան և զուրկ լինին ամեն տեսակ պաշտպանութիւնից»։

Բաւական է մի թուցիկ հայեացք գցել պատմական այդ հրովարտակի վրայ, որպէսզի հասկանալի դառնայ հետևեալ բնորոշ կէտը։ Սուլթանը Թիւրքիայի քայքայման և ժողովրդի թշւառութեան պատճառը համարում է այն, որ իսլամական հին բարքերն ու օրէնքները չեն յարգւում, չեն պահպանւում։

Անշուշտ դա դիտաւորեալ մի ձև էր մոլեռանդ ամբոխին շոյելու և առհասարակ մահմեդական տարրերի համակրանքը իր կողմը պահելու համար։

Միւս կողմից հրովարտակը մեծամեծ խոստումներ է անում իր բոլոր հպատակների իրաւահաւասարութեան ու բարօրութեան վերաբերմամբ։

Դա էլ մի միջոց էր առանձնապէս քրիստոնեաներին սիրաշահելու համար։

Եւ առհասարակ «Խատտի շերիֆը» առաջին պաշտօնական փորձն էր, թշնամանքի ու ատելութեան անդունդի երկու կողմերում կանգնած մահմեդականներին և ոչ մահմեդականներին հաշտեցնելու, մօտեցնելու նկատմամբ։

Սակայն հրովարտակը մի ուրւագիծ էր, որի հիման վրայ պէտք է մշակւէին իրական միջոցներ, նոր օրէնքներ։ Ռեշիդ փաշան շտապում է այդ քայլն էլ անել։ Նա պատրաստում է այդ օրէնքները Թանզիմատ հայրիջիէն, ապա ներկայացնում է պետական ու զինւորական խորհրդի քննութեանը, որից յետոյ հաստատել է տալիս սուլթանական կնիքով ու ստորագրութեամբ։

Թանզիմաթը լրացնում է այն բարենորոգումները, որ սկսել էր սուլթան Մահմուդը պաշտօնեաների վերաբերմամբ։ Վերացւում է պաշտօնեաների անփոփոխելիութիւնը և նրանց արգելւում է որև է մասնակցութիւն ունենալ հարկերի գանձման մէջ։

Սակայն իրաւունքների այդպիսի կրճատումը դժգոհութիւն է առաջ բերում շահախնդրւած տարրերի կողմից։

Մահմեդական ամբոխն էլ, դրանց դրդմամբ գըրգռւած, լսել անգամ չէր ուզում նոր օրէնքների մասին, որ գեաւուրներին էլ նոյնքան իրաւունք պիտի տային որքան և ուղղափառ մուսլիմներին։

Այդպիսով ժողովրդական ցաւալի յուզումներ են

առաջ գալիս Անդրիապոլսում, Զմիւռնիայում, Ղայսերիում, Ղօնիայում և ուրիշ գաւառներում։

Դրանցից դրդւած սուլթանը 1845 թ. հրատարակում է մի նոր «խատտի», որով ի գործ է հրաւիրում ամենքին և շեշտում, որ իր առաջին խատտիի իմաստը լաւ չեն հասկացել, որ նա միայն բարիքներ է տալու ամբողջ ազգաբնակութեանը և որ ժողովրդի ու պաշտօնեաների խոր տգիտութիւնը վերացնելու համար անհրաժեշտ է դպրոցներ բանալ։

Դրա հետ միասին նա աւելի կրճատում է կուսակալների ու գաւառապետների իրաւունքները, հաստատելով գաւառական ժողովները՝ մեջլիսները. Փաշան առանց մեջլիսի համաձայնութեան իրաւունք չունէր դատելու, հարկ վերցնելու կամ այլ կարգադրութիւններ անելու։

Առաջադիմութեան նշան էին, ի հարկէ, այդ բարենորոգումները, բայց ինչ օգուտ նրանցից, քանի որ մնում էին լոկ թղթի վրայ, մեռած տառ։

Իրականացման խոչընդոտ էին հանդիսանում ոչ միայն այսպէս ասած՝ ծերունի թիւրքերը, հին կարգերի կողմնակիցները, այլ և սուլթանին շրջապատող բարձր պաշտօնեաներից ոմանք։

Երիտասարդ թիւրքերի պարագլուխ Ռեշիդ փաշան ջերմ կողմնակից էր Անգլիայի, ուստի և ամեն կերպ աշխատում էր վերջինիս ազդեցութիւնը ուժեղացնել Թիւրքիայում։

Դրա հակառակ Րիզա փաշան կողմնակից էր Ռուսաստանին և թշնամի Անգլիային։

Եւ սուլթանը տարուբերւում էր այդ երկու հակադիր հոսանքների միջև, մերթ մէկին հովանաւորելով, մերթ միւսին։

Այդպիսով պետական կենդրոնը, նոր օրէնքներ ու

կարգեր հրատարակելով հանդերձ, գործնական միջոցների չէր դիմում նրանց իրականացման համար, այլ գլխաւոր եռանդը վատնում էր արտաքին ազդեցութեան ու մրցման մէջ։

Մեծ պետութիւններն էլ այնքան շահախնդրուած էին Թիւրքիայի բաղդով, որ անտարբեր մնալ չէին կարող դէպի նրա բարենորոգչական ձգտումները։

Այդ ձգտումները անհաճոյ պէտք է լինէին առանձնապէս Ռուսաստանին, քանի որ նա իրեն բնական ժառանգն էր համարում հիւանդ Թիւրքիայի ունեցուածքի։

Դեռ 1844 թ. Նիկոլայ I կայսրը Անգլիայում ճանապարհորդելիս ասում էր[1]).

—Ռուսաստանում երկու կարծիք կայ Թիւրքիայի վերաբերմամբ։ Ոմանք ասում են, որ նա մեռնում է։ Ոմանց կարծիքով էլ՝ նա արդէն մեռած է։

Իսկ 1852 թ. նոյն Նիկոլայ կայսրը անգլիական դեսպանի հետ խօսելիս յայտնում է, որ ժամանակն է պայմանաւորուել Թիւրքիայի թաղման նկատմամբ։

Եւ ահա ներքին ու արտաքին այդպիսի պարագաներում բռնկւում է Ղրիմի պատերազմը (1855 թ.)։

Ռուսաստանը կռւի է դուրս գալիս Թիւրքիայի դէմ, առիթ վերցնելով սուրբ տեղերի և առհասարակ Թիւրքահպատակ քրիստոնեաների պաշտպանութեան հարցը։

Բնական է, ի հարկէ, որ միւս մեծ պետութիւնները չէզօք մնալ չէին կարող, որովհետև Ռուսաստանից ոչ պակաս շահախնդրուած էին Թիւրքիայի ապագայով։

Նրանք զէնքով օգնութեան են հասնում Թիւր-

[1]) Ш. Синьобосъ: «Политич. исторія Европы» томъ II, եր. 211.

քիային, բայց միևնոյն ժամանակ խորհուրդ տալիս նրան որոշ քայլեր անել քրիստոնեաների վիճակը բարւոքելու համար։

Եւ այդ խորհուրդը իրագործւում է։ Սուլթանը մի հրովարտակով թոյլ է տալիս, որ դատարաններում քրիստոնեաների վկայութիւնն էլ ընդունւի քրէական գործերում։ Ապա հրամայում է գաւառներում նոր դատարաններ բանալ մահմեդական կրօնական օրէնքներից միանգամայն անկախ։

Իսկ պատերազմի ամենաեռուն ժամանակը սուլթանական մի նոր հրովարտակը գալիս է յայտարարելու, թէ վերացւում է զինուորական տուրքը, հետևապէս քրիստոնեաներն էլ մահմեդականների հետ համահաւասար կերպով իրաւունք ունին զինուորական ծառայութեան մտնելու։

Սակայն այդ հրովարտակը բոլորովին հակառակ հետևանք է ունենում. Նրանից դժգոհ են մնում քրիստոնեաները, չուզենալով կռւի դաշտ ուղարկել իրենց զաւակներին։ Դժգոհ են մնում և մահմեդականները, չուզենալով տեսնել գեաւուրներին իրենց հաւասար իրաւատէր։ Եւ հրովարտակը մնում է անիրագործելի։

Հազիւ մի տարի անցած դրանից յետոյ սուլթանը դարձեալ իր բարեկամ պետութիւնների խորհրդով հրատարակում է նշանաւոր «Խատտի հիւմայունը», որ աւելի հիմնաւորում ու լայնացնում էր «խատտի շէրիֆի» մէջ յիշուած սկզբունքները։

Ընդամենը 19 յօդուածներ էր պարունակում «Խատտի հիւմայունը», որոնք ասում էին[1])։

1. Իւրաքանչիւր անհատի կեանքի, գոյքի և պատւի ապահովութիւն։

[1]) Յօդուածների բովանդակութիւնը առաջ ենք բերել համառօտելով։

Universitas Erevanensis

2. Հաստատւում են այն բոլոր իրաւունքները, որոնք երբևիցէ տրւած են քրիստոնեայ ազգաբնակութեան։

3. Իւրաքանչիւր համայնքի հոգևոր գործերը կառավարւելու է համապատասխան բարձր հոգևորականութիւնը, որ ռոճիկ պիտի ստանայ պետական գանձարանից։ Ռայաների աշխարհական գործերը կառավարւելու է աշխարհական և հոգևորական պատգամաւորներից բաղկացած խառն ժողովը։

4. Առանձին հեշտութիւններ է տրւում եկեղեցիներ շինելու և վերանորոգելու համար։

5. Ոչ մի պաշտօնեայ առաւելութիւն չը պէտք է տայ այս կամ այն ազգութեանը։ Մահմեդականները արհամարհանքով չը պէտք է վերաբերւին դէպի միւս կրօնները։

6. Կրօնափոխութեան համար ոչ ոքի, նոյն իսկ քրիստոնէութիւն ընդունող մահմեդականին, չը պէտք է դատապարտել։

7-8. Ամեն մի թիւրքահպատակ, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, իրաւունք ունի պետական դպրոցներում սովորելու, ամեն տեսակ ծառայութեան մտնելու։

9-10-11. Համապատասխան դատարանները պիտի վճռեն մահմեդականների և քրիստոնեաների մէջ ծագած վէճերը առանց մի որևէ կողմնապահութեան։

12. Քրիստոնեաներն իրաւունք ունին զինւորական հարկի փոխարէն կամ անձամբ ծառայել իբրև զինւոր կամ իրենց տեղը ուրիշին վարձել։

13. Մէջլիսները պիտի բարեկարգւին։

14. Օտարերկրացիներն իրաւունք ունին Թիւրքիայում սեպհական հողեր ձեռք բերելու։

15. Հարկահանութիւնը պիտի կանոնաւորւի։

16. Պէտք է աւելացնել հանրօգուտ աշխատութիւնները։

17. Իւրաքանչիւր տարի պետական եկամուտների և ծախքերի նախահաշիւ պէտք է կազմել։

18. Ռայաներն էլ պատգամաւորներ պիտի ունենան պետական խորհրդում։

19. Այդ յօդւածում խիստ սպառնալիքներ է կարդացւում կաշառակեր պաշտօնեաներին և խոստումներ են տրւում փողային սիստէմը կանոնաւորելու, նորանոր ջրանցքներ, ճանապարհներ շինելու և այլն և այլն»։

Մեծ խոստումներ էր տալիս «Խաթթի Հիւմայունը» վարդագոյն հեռանկարներ էր պատկերացնում նա Թիւրքիայի ազգաբնակութեան համար, բայց դժբաղդաբար այդ բոլորը թղթի վրա միայն։

Բարենորոգիչ Ռեշիդ փաշայի ուղիով ընթացող Ֆուադ, Ալի և Ջէմալ փաշաների լարւած եռանդն էլ գործին չէ օգնում։

Ցաւոտ ու մռայլ իրականութիւնը մնացել էր գրեթէ անփոփոխ։

Առանձնապէս քրիստոնեայ ազգութիւնների համար եթէ կար մի շօշափելի արդիւնք այդ մեծադղորդ հրովարտակից—այդ այն էր, որ նրանք կամաց-կամաց կազմակերպեցին իրենց ներքին կրօնական-կրթական գործերը և յատուկ վարչութիւններ հիմնեցին դրա համար։

Այդ միևնոյն ժամանակւայ շրջանին է պատկանում նաև հայոց «ազգային սահմանադրութիւնը», որ խմբագրւելով Ռուսինեան, Օտեան և Աղաթոն էֆէնդիների կողմից լոյս է տեսնում 1860 թ. մայիսի 24-ին։

Դա մի քայլ էր դէպի առաջ, բայց կեանքի բաղ-

մաթիւ ու բազմազան պահանջների համեմատութեամբ շատ փոքրիկ քայլ։

Սանձարձակ բռնակալութիւնը շարունակւում էր իր ամբողջ թափով. ծայրահեղ անարգարութիւնը ծաւալւում էր պէս-պէս արտայայտութիւններով։

Սուլթանական կառավարութիւնը Ղրիմի յաղթական պատերազմից յետոյ մազաչափ անգամ չէր աշխատում իր գործերը կարգաւորել, Թիւրքիայի ներքին ու արտաքին քայքայման հիմք կազմող գործօնները վերացնել, այլ ընդհակառակը։ Կարծես բաւական չէր համատարած տնտեսական տագնապը և ժողովրդի հեծեծանքը նրա լծի տակ—սուլթան Աբդուլ Ազիզը մեծ եռանդով շռայլում էր միլլիօնները Բօսֆորի ափերին նորանոր պալատներ շինելու համար։ Ելդըզը վամպիրի նման ծծում էր գաւառների արիւն-քրտինքը, բայց դարձեալ չէր յագենում, ուստի և արտաքին փոխառութիւններով էր պակասը լրացնում։

Այդպիսի պարագաներում բռնկւում են Լիբանանի արիւնոտ դէպքերը (1860 թ.)։ Մահմեդական տիւրզիները յարձակւում են կաթոլիկ քրիստոնեաների վրա և մի քանի հազար հոգու կոտորում։ Թիւրք պաշտօնեաները ոչ թէ արգելք են հանդիսանում, այլ ընդհակառակը քաջալերում են կոտորածը։ Կատաղած ամբոխը այրում է Դամասկոսի եւրոպական բոլոր հիւպատոսարանները բացի անգլիականից. աւերում է բազմաթիւ տներ ու հիմնարկութիւններ։

Նորից յուզւում է Եւրոպան։ Կաթոլիկների պաշտպանութեան համար հրապարակ է մտնում Ֆրանսիան և զէնքի զօրութեամբ ստիպում Թիւրք կառավարութեանը 188 մահմեդականների մահուան դատապարտել, 700 հոգու բանտարկել, Դամասկոսի փաշային հրացանա-

զարկ անել և բազմաթիւ փաշաների ու շէյխերի Աքեայ աքսորել։

Բայց միայն դրանով չէ բաւականանում Ֆրանսիան։ Նրա ջանքերով և Եւրոպայի աջակցութեամբ Լիբանանը ինքնավարութիւն է ստանում (1861 թ.)։ Թիւրքիայի սրտում մի նոր խոց է աւելանում—ինչպէս նկատում են թիւրք հայրենասէրները։

Սակայն դեռ այդ խոցի պատճառած ցաւերը չը վերացած—նոր դժգոհութեան հրդեհն է բռնկւում փոքր Ասիայում։ Այս անգամ հայերն են ըմբոստութեան դրօշակը պարզում։ Թիւրք իշխանութեան կամայականութիւնների հանդէպ ապստամբում է Զէյթունը և հերոսական յաղթանակներով հռչակում իր անունը (1862 թ.)։

Մի քանի տարի յետոյ (1867 թ.) բռնկւում է Կրիտէի ապստամբութիւնը։

Խաղաղութիւն չը կար և Բօսֆորի այս կողմում։ Բալկանեան թերակղզին, առանձնապէս Բօլգարեան հայդուկային գործունէութեան լայն ասպարէզ էր դարձել։ Գալիս էին խմբերը, չափւում բռնակալութեան ոյժերի հետ և ընկնում անհաւասար պայքարից։ Գալիս էին նորերը և այդպէս անվերջ։

Կառավարութիւնը սարսափներով լռեցնում էր խիզախ ձայները, բանտերով կախաղաններով հնազանդութիւն էր հաստատում, բայց դրանով չէր թաղւում դառն իրականութիւնը, չէր վերանում սոսկալի չարիքը։ Ընդհակառակը բոլոր նշաններից երևում էր որ նորից արիւնոտ ամպեր են կուտակւում Օսմանեան հորիզոններում և նրա ամբողջութեանը սպառնալիքներ ուղղում։

Լիբանանից, Զէյթունից մինչև Բալկանեան լեռ-

ները ճնշուած, կեղեքուած ժողովուրդների հեծեծանքի հետ միասին լսւում էր նաև ըմբոստացման ձայնը։

Եւ քանի գնում—այնքան մեծանում, բարձրանում է այդ ձայնը։

Բոլգար կազմակերպութիւնները լարում են իրենց ջանքերը յանուն հայրենիքի ազատութեան։

Բօսնիայից, Հերցոգովինայից բարձրանում են ապստամբութեան կայծեր, իբրև ազդանշաններ պատրաստւող մեծ հրդեհի։

1867 թ. այդտեղ բռնկւում է արիւնոտ փոթորիկը, որ աւերակ է դարձնում ամբողջ երկիրը։ Արեան ու մոխրի մէջ խեղդւում են 180 գիւղ ու քաղաք կոտորւում են մօտ 100,000 անմեղ մարդիկ, գերի են տարւում 20,000-ի չափ գեռահաս օրիորդներ ու կանայք…

Ցնցւում է քաղաքակիրթ աշխարհը այդ խժդժութիւնների հանդէպ։

Սակայն դիպլոմատիան անտարբեր աչքով դիտում է անցքերը, լոկ բանակցութիւններով, հարցապընդումներով բաւականանալով տարիներ շարունակ։

Իսկ երբ բռնկւում է ֆրանս-պրուսական պատերազմը (1871 թ.), այդ անտարբերութիւնը աւելի ևս քարանում է, հասարակական ուշադրութիւնը դարձնելով դէպի արևմուտք, որտեղ երկու խոշոր ազգեր էին չափւում արեան դաշտերում։

Չը տեսնւած պայքար էր դա։

Պրուսիայի յաղթական զօրքերը հասնում են մինչև Պարիզի դռները և հաշտութեան դաժան պայմանները թելադրում։

Ֆրանսիական հայրենիքի այդ ծանր օրերում նորից ասպարէզ են մտնում բուն ժողովրդական ուժերը, հասարակական յայտնի գործիչները և միապետու-

թիւնը տապալւած, Նապոլէօնին գահընկեց արած յայտարարում, փոխարէնը հաստատելով հանրապետութիւն։

Սակայն հարցը միայն դրանով չէ վերջանում։ Աւելի ձախակողմեան տարրերը Պարիզում յայտարարում են կօմմունա, որի համեմատ իւրաքանչիւր գաւառ կատարեալ լիազօրութիւն պէտք է ունենար իր ներքին գործերը տնօրինելու, իսկ այդ ինքնավար մարմինները պէտք է ֆեդերատիւ կապերով կապւած լինէին միմեանց հետ և իրենց ներկայացուցիչներից կազմւած մի մարմնի միջոցով կառավարէին ընդհանուր համազգային գործերը։

Արեան մէջ ծնունդ առած այդ կազմակերպութիւնը՝ կօմմունան արիւնով էլ խեղդւում է հազիւ 72 օր կեանք ունենալուց յետոյ (1871 թ. մարտի 18-ից մինչև մայիսի 28-ը)։

Բայց նրա արծարծած գաղափարները անցնում են գաւառից-գաւառ, երկրից-երկիր և մտքերի որոշ ցնցում առաջ բերում բոլոր այն շրջաններում, որտեղ հեծում էին բռնութեան տակ և ազատութեան լոյսն էին որոնում։

Նրա արձագանքները հասնում են նոյն իսկ մինչև Թիւրքիա։

Երիտասարդ թիւրքերը յայտարարում են, որ Թիւրքիան էլ ձգտելու է այդպիսի կարգերի, որ թիւրքական յեղափոխութիւնն էլ իր նպատակակէտն է ունենալու կօմմունա։

Որքան էլ ուտոպիական լինէր այդպիսի ծրագիրը Թիւրքիայի նման մի յետամնաց երկրի համար, բայց և այնպէս բնորոշ էր այն փաստը, որ թիւրք հասարակութեան մէջ էլ կար որոշ գժգոհ տարր, որի ղեկա-

վարները ծայրահեղ ըմբոստութեան ուղին էին համարում փրկութեան ելքը։

Սակայն խոր համոզմունքը, մշակուած որոշ ծրագիրն ու գործելակերպը պակասում էր երիտասարդ թիւրքերին, ուստի ինչպէս որ րոպէի ազդեցութեան տակ, թերևս Եւրոպայի հասարակական համակրանքը գրաւելու նպատակով, նրանք կոմմունայի կողմնակիցներ էին դարձել—ճիշտ այդպէս հեշտութեամբ էլ մոռացութեան տւին նրան, պարիզեան պարտութիւնը տեսնելով։

Ը ՊԱԼԱՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐ

Սուլթան Աբդիւլ Ազիզի շռայլութիւնը.—Հալածանքներ.—Դրաքննութիւն.—Բօլգարական նոր ապստամբութիւն.—Սօֆտաների դասադուլը.—Աբդուլ Ազիզը գահընկեց.—Սուլթան Մուրադի հրովարտակները.—Սուլթան Մուրադը խելագար.—Աբդիւլ Համիդը գահ է բարձրանում.—Դեսպանաժողով Կ. Պօլսում.—Երիտասարդ թիւրքերի ջանքերը։

—

Զափազանց ծանր էր Թիւրքիայի վզին ընկած տառապանքը։ Իսկ սուլթան Ազիզի անփոյթ կենցաղը անսահման շռայլութիւնն ու անխտեմ քաղաքականութիւնը առաւել ևս զգացնել էին տալիս այդ ծանրութիւնը։

Նրա շրջապատողները լի ու լի օգտւում էին տիրող կորստաբեր պայմաններից և երկրի կացութիւնը օրէցօր աւելի վատթարացնում։

Դա առանձնապէս նկատելի է դառնում ազատամիտ Ալի փաշայի մահից յետոյ։

Որքան որ Ալի փաշան, իբրև մեծ վեզիր, իր գաղափարակիցներով աշխատում էր նոր կարգեր մտցնել Թիւրքիայում և վերացնել նրա վզին ծանրացած չարիքները, նոյնքան միւս բարձր պաշտօնեաները եռանդ էին թափում հակառակ ուղղութեամբ, որ այնպէս ձեռնտու էր նրանց անձնական շահերին։

Որքան որ սուլթան Մէջիդը կողմնակից և համակրող էր եւրոպական քաղաքակրթութեան, նոյնքան սուլթան Ազիզը թշնամի ու արհամարհող էր այդ հոսանքի։

Նրա համար բացի իր անձնական հաճոյքից ուրիշ ոչինչ արժէք չունէր։

Նա իր գահակալութեան հէնց առաջին տարիներում ախոռ է դարձնում այն շքեղ կառուցուածքը արքունիքում, որ սուլթան Մէջիդը յատկացրել էր թատրոնի համար։

«Աքլորներու, որսկան շուներու և այլ և այլ կենդանիներու համար հոյակապ շէնքեր կառուցանել տուաւ պալատին մէջ[1])։ Երկրին ամենէն հռչակուած ըմբիշները համախմբուած էին պալատին մէջ, որոնց գօտեմարտելէն առաւելապէս հաճոյք կը զգար. նոյն իսկ կը պատմուի թէ հանդուցեալը գնահատելով արիութեամբ մարտնչող աքլորի մը քաջութիւնը՝ Օսմանիէ պատուանշան կախած էր անոր վզէն։

Միւս կողմէ եսամոլութիւնն ալ չափազանցութեան տարած էր և ոչ մէկուն կը ներէր որ աննշան դիտողութիւն մը ընէր իր արարքներուն հանդէպ. չէր ներեր որ Ազիզ անունով մարդ գտնուի երկրին մէջ. ամէն անգամ որ մէկը իրեն ներկայանար, անհրաժեշտ էր եօթը անգամ երկրպագութիւն ընէր. չէր ներեր որ ամենաթեթև կերպով մէկը ակնարկ մը նետէ իր կայսերական դէմքին։ Ազիզ անուն մէկը եթէ ադերսագիր տալու հարկին մէջ գտնուէր, պէտք էր փոխէր իր անունը ու Իզէթ կամ անոր մօտ բան մը դնէր.

Հակառակ ծայրահեղ եսամոլութեանը, իր սիրելիներուն ձեռք խաղալիկ մըն էր Ազիզ, որուն ամեն բան ընել կուտային։ Պալատական հացկատակներն ու կանանոցի բաժինը մանաւանդ վերջին ծայր առաջ տարած էին իրենց ազդեցութիւնը Ազիզի վրայ, որուն վերջին տարիներուն՝ մղեցին զայն նման չտեսնուած շռայլութեան մը։ Գոհարեղէնները այլ և այլ ձևերով

[1]) «Ժամանակ» Կ. Պոլիս 1908 թ. № 13.

ու տարազներով ողողած էին պալատը և կայսեր գոհարեղէններու հանդէպ ցոյց տուած այս արտակարգ հակումը մինչև Եւրոպա արձագանքեց, ուրկէ բազմաթիւ շահագէտներ իրենց ապրանքները Պոլիս կը բերէին, սուղ գիներով Ազիզի ծախելու համար։

Ասոնցմէ դուրս մանաւանդ սէր մը ունէր Ազիզ՝ հոյակապ շէնքեր կառուցանելու. միակ մտածումն էր իր բնակութեան յատկացուած պալատները եօթը հրաշալիքներուն կարգը դասել ներքնապէս ու արտաքնապէս. Նախ պալատներէն մէկը կահաւորել կուտար և ամբողջ կահաւորումը լմնալէ ետք կը լքէր զայն ու նոր ոճով մը կը սկսէր կահաւորումը. յաճախ այս երկրորդին ալ չէր հաւներ և երրորդ անգամ կը գնուէին նոր կահ կարասիներ։ Եւ երևակայել որ ամեն կահաւորում հազարներով ոսկիներու կը կարօտէր։ Իր այս քմահաճոյքներուն համար Ազիզ միշտ կը զգուշանար կարող անձերը նախարարութեան հրաւիրելէ և ձեռքի վրայ կը բռնէր Մահմուտ Նէտիմ փաշան, որ ոչ միայն դիտողութիւն չէր ըներ, այլ և կը քաջալերէր ալ կայսրը նոր փոխառութիւններ ընելու, որոնցմէ ինքն ալ կ'օգտուէր մեծապէս։ Այս փոխառութիւններուն մէջ յաճախ անանուն զոհողութիւններ կը կատարուէին որ, նոյն իսկ կայսրութեան արժանապատուութիւնն ալ ոտնակոխ կ'ըլլար, և սակայն դրամի տենչէն բռնուած պալատականներն ու խորհրդականները այդ նրբութիւնները զգալէ շատ հեռու էին. բաւական էր որ դրամ գար, շռայլութիւնները շարունակուէին ու բոլոր հացկատակները իրենց քսակը կը պարարէին...»։

Այդպիսի պարագաներում բնականաբար աւելի խոշոր չափերի են հասնում արքունիքի ծախսերը, աւելի քայքայւում են պետական ֆինանսները։

Սուլթան Մէջիդը 1854 թ. յատուկ հրովարտակով ելևմտացուցակի մէջ սահմանել էր որոշ ռոճիկ իր և իշխանազունների համար՝ ընդամենը մէկ ու կէս միլլիօն Օսմանեան ոսկի—(մօտ 15 միլլիօն ռուբլի)։ Սակայն դա միայն թղթի վրա էր իբրև մի ձևականութիւն։ Իրականապէս սուլթան Մէջիտը վերցնում էր աւելի քան երկու միլլիօն ոսկի։

Իսկ Սուլթան Ազիզի օրով այդ էլ չէր բաւականացնում։ Տասնչորս տարւայ ընթացքում նրա անձնական ծախքերը 50 միլլիօն ոսկուց—(500 միլլիօն ռուբլի)—աւելի էին, չը հաշւած այն հսկայական գումարները, որ նա ծախսում էր պալատների շինութեան վրա։

Եթէ նոյն իսկ արտաքին հանգամանքներ չը լինէին, եթէ ժողովրդական խոր ցաւերը անտես թողնուէին, այնուամենայնիւ սուլթանական այդքան քաջագործութիւններն էլ բաւական էին բողոքի պոռտուկմներ առաջացնելու համար։

Եւ բողոքողներ կային. դրանք սակաւաթիւ «երիտասարդ թիւրքերն» էին՝ Ֆազըլ Մըստաֆա փաշայի, նշանաւոր բանաստեղծներ Զիա փաշայի ու Համըգ Քեմալ բէյի, ինչպէս նաև Ալի Սուավի էֆէնդիի և Միդհատ փաշայի ղեկավարութեամբ։

Բողոքի, քննադատութեան ոգին անցնում է գաղտնի ժողովներից նաև մամուլի էջերը։

Թերթերը կամաց-կամաց սկսում են բաց անել կատարւող շռայլութիւնների ու այլ անարդարութիւնների պատկերը։

Բայց սուլթանի մտերիմները դրա դէմ պատշաճ միջոցներ են ձեռք առնում։ Հաստատւում է գրաքննութիւն՝ սանսիւր, որը և սանձահարում է համարձակ գրիչները։

Երիտասարդ թիւրքերի մի փոքրիկ խմբակ տեղափոխւում է Պարիզ, այնտեղ հրատարակում «Հիւրրիէթ» (Ազատութիւն) անունով մի թերթ և նրա էջերից սլաքներ ուղղում սուլթան Ազիզի իշխանութեան դէմ։

Ահա այդպիսի պայմաններում միմեանց յետևից պոռտկում են նորանոր փոթորիկներ դժբաղդ Թիւրքիայի գլխին։

1875 թւականն էր։ Նորից ոտքի էին կանգնել Բօսնիա—Հերցեգովինան։ Ազատութեան դրօշակը բարձր ծածանւում էր նրանց լեռներում և Հայդուկային խմբերը ամեն կողմերից շտապում էին կեանքի գնով պաշտպանելու այդ դրօշակը։

Սակայն անգործ չէր և կառավարութիւնը։ Ըմբոստներին լռեցնելու նպատակով նա գործադրում էր իր վաղեմի միջոցները՝ ջարդ, աւերածութիւն ու կախաղաններ։

Եւ տնքում էր ամբողջ երկիրը արիւնոտ տառապանքի տակ։

Գիւղ ու քաղաքներ էին աւերւում, հազարաւոր զոհերն էին ընկնում, բայց շարժումը կանգ չէր առնում։

Ընդհակառակը, համաճարակի նման նա վարակում էր հարևան գաւառներն էլ, այնպէս որ վերջ ի վերջոյ ամբողջ Բօլգարիան ապստամբութեան հրդեհի մէջն էր։

Եւ հեռու երկիրներից, մանաւանդ Ռուսաստանից կամաւորների խմբերն էին գալիս, դրամական նպաստներ էին ուղարկւում—ազատութեան համար մարտնչողներին օգնելու, քաջալերելու համար։

Ռուս գեներալ Չերնեաչևը այդ կամաւորների գլուխն անցած, կռւի դաշտում կանգնած, ամբողջ ռուս

ժողովրդի կենդանի համակրանքն էր ներկայացնում ցեղակից բօլգարներին ի քաջալերութիւն։

Եւ շարունակւում էր կռիւը՝ կարծես վերջ չունենալու համար։

Իրերի այդպիսի փոթորկած վիճակում տեղի է ունենում մի անակնկալ դէպք, որ աւելի ևս սաստկացնում է խառնաշփոթութիւնը։ Սալօնիկում բռնկւում է ժողովրդական խռովութիւն մահմեդականութիւն ընդունած մի բօլգար աղջկայ առևանգութեան պատճառով։

Մահմեդական ամբոխը այդ աղջկան ազատելու պատրւակով խմբւում է փողոցներում ու մզկիթներում և սպառնալիքներ թափում քրիստոնեաների հասցէին։

Եւրոպական հիւպատոսները միջամտում են յուզւած բազմութեանը խաղաղեցնելու նպատակով։ Սակայն ապարդիւն։ Ընդհակառակը յուզմունքը աւելի սաստկանում է և ամբոխը օրը ցերեկով, թիւրք իշխանութեան աչքի առաջ, սպանում է ֆրանսիական ու գերմանական հիւպատոսներին։

Դա ատելութեան մի պոռտկում էր, մի ցոյց, որ մահմեդական խուժանը արտայայտում էր դէպի քրիստոնեայ Եւրոպան։

Պարզ է, ի հարկէ, որ անհետևանք մնալ չէր կարող նա։ Եւրոպան ցնցւում է, զայրոյթի նշաններ արտայայտում. Թիւրքիայի ամբողջութեանը սպառնացող վտանգը աւելի մեծանում է։

Թիւրք գիտակից երիտասարդութիւնը մի կողմից սուլթան Ազիզի ներքին քաղաքականութիւնից ծայրահեղօրէն դժգոհ, իսկ միւս կողմից արտաքին վտանգը նախատեսնելով, փորձում է կտրուկ քայլերով նրա առաջն առնել։

Շարժման ռահվիրան է հանդիսանում Կ. Պօլսի ուսանողութիւնը՝ սօֆթաները։ Սալօնիկի արիւնոտ դէպքից միայն մի քանի օր անցած—(1875 թ. մայիսի 10-ին) նրանք խփում են իրենց գրքերը կամ այժմեան տերմինօլօգիայով ասած՝ դասադուլ են յայտարարում։ Ապա իրենց ուսուցիչների հետ միասին ժողովներ գումարելով, նրանք խորհրդակցում են, թէ ի՞նչ անեն, ի՞նչ ճանապարհով հայրենիքը վտանգից ազատեն։

Կառավարութեանը դուր չէ գալիս այդ վարմունքը։ Նրա կարգադրութեամբ սօֆթաների պարագլուխները ձերբակալւում և արտաքսում են մայրաքաղաքից։ Սակայն այդ քայլը աւելի ևս գրգռում է մնացածներին։

Հետևեալ օրը սօֆթաների հազարաւոր բազմութիւնը աղմկալի թափորով դիմում է շէյխ ուլ իսլամի ապարանքը և պահանջ դնում, որ նա անմիջապէս հրաժարւի իր պաշտօնից, որովհետև թոյլ է, անհամապատասխան է։

Յուզւած բազմութեան սպառնալիքներից ընկճւած շէյխ ուլ իսլամը իսկոյն համաձայնում է հրաժարական տալ։

Յաղթական այդ առաջին քայլից յետոյ սօֆթաները դիմում են երկրորդին։ Նրանք գնում են սերասկերի՝ զինւորական նախարար Աբդուլ Քեարիմ փաշայի ապարանքը և այդտեղ էլ պահանջ դնում, որպէսզի մեծ վէզիր Մահմուդ փաշան հրաժարւի և նրա տեղ նշանակւի Միդհատ փաշան։

Քեարիմ փաշան անմիջապէս ուղևորւում է Դօլմա Բախչէ՝ սուլթանին յայտնելու սօֆթաների պահանջը։ Մի քանի ժամ յետոյ Մահմուդ փաշան արդէն մեծ վեզիրութիւնից պաշտօնանկ էր արւած։

Հետևեալ օրը յայտարարւում է նախարարական

նոր կազմի ցանկը, որով Մեհմեդ Ռուշտի փաշան դառնում է մեծ վեզիր, Միդհատ, Հիւսէյին Աւնի և Րէշիդ փաշաները նախարարներ։ Իսկ շէյխ ուլ իսլամ նշանակւում է Հայրուլլահը։

Սակայն դա չափազանց աննշան մի պալլիատիւ էր, որ իրերի ընթացքը փոխել չէր կարող, ուստի կազմակերպւում է մի հսկայական դաւադրութիւն՝ այս անգամ արդէն Միդհատի ու միւս նախարարների ղեկավարութեամբ և բարձր զինւորականների մասնակցութեամբ։

—Սուլթանը թոյլ է, վարչական ընդունակութիւններից զուրկ։ Սուլթանը շռայլում է ժողովրդական փողերը անխնայօրէն։ Սուլթանը անտարբեր է Թիւրքիայի գլխին սաւառնող վտանգի վերաբերմամբ —ուրեմն նա արժանի չէ օսմանեան գահին, Խալիֆի կոչմանը. պէտք է գահընկեց անել նրան—ահա այդպէս են վճռում դաւադիրները և իրագործման միջոցների մասին խորհում։

Եւ իսկապէս, ինչպէս տեսանք, սուլթան Աբդուլ Ազիզը ոչ մի ժողովրդականութիւն չէր վայելում, ուստի և գահընկեցութեան հարցը առանձին բարդութիւններ չէր սպառնում։

Չը նայելով դրան, դաւադիրները մեծ զգուշութեամբ, աստիճանաբար են մօտենում վճռական քայլին։

Նրանք նախ և առաջ բանակցութեան մէջ են մտնում գահաժառանգ Մուրադի հետ և սպառնալիքներով ստիպում նրան համաձայնել վճռական բոպէին դաւադիրների հրահանգներին հետևելու։

Ապա նրանցից երկուսը՝ մեծ վեզիր Մեհմեդ Ռուշտի և Ահմեդ փաշաները մայիսի 29-ին դիմում են սուլթանին և պահանջում, որ նա իր անձնական եկա-

մուտների մի մասը յատկացնէ պետական գանձարանին՝ ընթացիկ անհրաժեշտ ծախսերն հոգալու համար։

Սուլթանը կտրականապէս մերժում է և հէնց միւս առաւօտը հեռագրով իր մօտ կանչում նախկին մեծ վեզիր Մահմուդ փաշային։

Այդ քայլը շտապեցնում է կատաստրոֆը։ Մայիսի 30-ին դաւադիր նախարարներն ու զինւորականները մի արտակարգ խորհրդակցութեամբ վճռում են հէնց նոյն գիշերը իրագործել դաւադրութիւնը։

Նշանակւած ժամին Րեդիֆ փաշան բազմաթիւ զօրքերով շրջապատում է Դօլմա Բախչէ պալատը, ուր ապրում էր սուլթանը։ Այդ միևնոյն ժամանակ գալիս են զինւորական դպրոցի աշակերտների խմբերը, որոնք վաղուց արդէն յայտնի էին դարձել իրենց հայրենասիրական և ըմբոստ ձգտումներով։

Ծովի կողմից էլ սուլթանական պալատը պաշարում են «Մեջիդիէ» նաւի միջոցով, վերջինիս ղեկավարութիւնն ու վերահսկողութիւնը յանձնելով զինւորական նախարար Ահմեդ փաշային։

Բայց այդ պատրաստութիւններն ու ռազմական ոյժերը դեռ բաւական չէին խոշոր քայլը աջողութեամբ գլուխ բերելու համար։

Սուլթանը որոշ ազդեցութիւն ունէր ամբոխի վրա, իբրև իսլամի խալիֆ, իբրև կրօնական պետ։ Կարելի էր նրան զէնքի ոյժով գահընկեց անել, բայց ամբոխի աչքում դա արժէք չէր ունենայ և կրօնական մոլեռանդութիւնը կարող էր օգնութեան հասնել Խալիֆին պաշտպանելու համար։

Այդ հնարաւորութիւնն ևս մէջ տեղից վերացնելու նպատակով դաւադիրները դիմում են պատշաճ միջոցի։ Աչքի առաջ ունենալով, որ կրօնական հարցերում շէյխ ուլ իսլամի կարծիքը ամենաազդեցիկն է և

գրեթէ օրէնքի հաւասար, նրանք նախապէս ստորագրել են տալիս զուրանի, շերիատի վրայ հիմնուած հետեւեալ ֆեթվան[1]), Աբդիւլ Ազիզի հրաժարեցման մասին.

—«Երբ պետութեան գլուխը մտաւոր խանգարման նշաններ ցոյց տայ, երբ վարչական գործերի վերաբերմամբ տգէտ լինի, երբ ժողովրդական եկամուտները իր անձնական ծախքերի համար գործածէ՝ ազգի և պետութեան կարողութիւնից դուրս, երբ կրօնական և քաղաքական գործերի մէջ խառնակութիւն առաջ բերէ և երբ պետութեան գլուխ մնալն ու շարունակելը ազգին վտանգաւոր դառնայ—այդ դէպքում կարող է գահընկեց լինել:

Պատասխան. շերին պատասխանում է՝ «այո»:

Ստորագրեց խոնարհ Հասան Հայրուլլահ, որին Աստուած իր ներողութիւնը շնորհէ:

Ճէմազի Իւլ էվվել 1293 Հէճիր.
1876 թ. Մայիսի 30.

Ահա այդպէս, թէ զինուորական և թէ կրօնական տեսակէտներից նախապատրաստուած, դաւադիրները ձեռնամուխ են լինում ծրագրի վերջնական իրագործմանը:

Գիշերուայ ժամը 2-ին Հիւսէյն Ավնի փաշան ատրճանակը ձեռքին մտնում է գահաժառանգ Մուրադի մօտ, ցոյց է տալիս ֆեթվան և մահուան սպառնալիքով ստիպում հետևել իրեն: Առաջուց պատրաստած կառքը նստելով, նրանք դիմում են դէպի զինուորական նախարարութեան տունը, որտեղ սպասում էին մեծ վեզիրը, Միդհատ փաշան և միւս բարձրաստիճան դաւադիրները:

Այստեղ Մուրադին պաշտօնապէս սուլթան են

[1]) Պրօֆ. Ն. Թումանեան, «Պատմութիւն արեւելեան խնդրոյ» եր. 512.

յայտարարում, անմիջապէս ստիպելով նրան ստորագրել պատրաստի իրադէն, որը հրամայում էր նախկին սուլթան Աբդիւլ Ազիզին հեռանալ Դօլմա Բախչէի պալատից Հին Սէրայը և այլևս ոչ մի գործի չը խառնուէր:

Այդ իրադէն իսկոյն յանձնում են զինուորական գլխաւոր հրամանատար Ռեդիֆ փաշային, որը զինուորական դպրոցի աշակերտների ուղեկցութեամբ ներս է մտնում Դօլմա Բախչէ պալատը և դիմում դէպի սուլթանական ննջարանը:

Գիշերային մթութեան մէջ կատարուող այդ քայլը յանկարծակիի է բերում հարեմի ներքինիներին ու ծառայողներին. սկսւում է իրարանցում: Սուլթանուհի վալիդէն հայհոյական խօսքեր է թափում Ռեդիֆ փաշայի հասցէին. Ինքը Աբդիւլ Ազիզը գայրացկոտ ձայներ է բարձրացնում, բայց այդ բոլորի հանդէպ Ռեդիֆ փաշան սառնասրտութեամբ բաց է անում պատուհանը և ցոյց տալիս պալատի շուրջը կանգնած զօրքերը, ապա կարդում է ֆեթվան ու նոր սուլթանի իրադէն և հրամայում է անյապաղ ենթարկուել իր հրամանին՝ հեռանալ Դօլմա Բախչէից:

Շրջապատող պարագաները կատարում են իրենց դերը: Սուլթանը, որ 15 երկար ու ձիգ տարիներ իր ոտքերի տակ էր պահում Օսմանեան կայսրութիւնը, որ մի հատիկ խօսքով ահ ու սարսափ էր ազդում բոլորի վրայ, խոնարհութեամբ ենթարկւում է իր նախկին ստորադրեալի և այժմեան հրամայողի՝ Ռեդիֆ փաշայի պահանջին:

Նա տեղափոխւում է Դօլմա Բախչէից Հին Սէրայի քեօշկը:

Անցնում է յեղափոխող մութ գիշերը, պատմութեան գիրկը նետելով կատարուած անցքերը:

Լուսանում է Յունիսի 1-ը. Կ. Պոլիսը զարմանքով տեղեկանում է կատարուած պալատական յեղափոխութեան մասին, իսկ փողոցներում սոֆթաների ու զինուորականների հազարաւոր բազմութիւնը թափոր կազմած օդն է թնդացնում.

—Փադիշահմ չօք եաշա... բացականչութիւններով:

—Եաշա, եաշա, կրկնում է ամբոխը, հաւատացած լինելով, թէ փրկութեան լոյսն է բացւում իր առաջ, թէ նոր սուլթանը բարիքների շողքն է սփռելու ցաւատանջ երկրի վրայ:

Իսկ ինչ է լինում նախկին փադիշահի սուլթան Ազիզի վիճակը: Ոմանց ասելով[1]) նա իր գահընկեցութիւնից մի քանի օր յետոյ հետևեալ նամակն է գրում սուլթան Մուրադին.

—«Նախ Աստուծոյ ու ետք Ձեր Կայսերական սեմին կ'ապաստանիմ, Ձեր կայսերական գահակալութիւնը շնորհաւորելով կը ցաւիմ, որ թէև ազգին ծառայելու աշխատած եմ, բայց չեմ յաջողած. յաջողութիւն կը մաղթեմ Ձեր Վեհափառութեան. քաջայոյս եմ որ չի մոռացւիր թէ ազգին պատիւը բարձրացնելու ու տէրութեան ապագան ապահովելու միջոցները պատրաստած եմ: Ձեր Վեհափառութեան յիշեցնելով հանդերձ թէ իմ ձեռքովս զինած զինուորներս այս վիճակին հասցուցին զիս, կը կրկնեմ թէ կարգ եկած է գթալու, մարդասիրելու և նեղուածներուն օգնելու: Կը խնդրեմ որ անտանելի տառապանքներէս ազատէք զիս և մանաւանդ տեղ մը յատկացնէք ինձ: Օսմ. Կայսրութիւնը Ապտիւլ Մէճիտի սերունդին կը յանձնեմ»:

Այդ նամակից ազդուած սուլթանը տեղափոխել է տալիս Ազիզին Չրաղանի պալատի միջնայարկը:

Սակայն նրա ինքնասիրութիւնը դրանով էլ չէ հանգստանում: Հոգեկան ծանր տանջանքները մղում էն նրան դէպի ինքնասպանութիւն: Մի առաւօտ (յունիսի 5-ին) նախկին սուլթան Աբդիւլ Ազիզին գտնում էն իր սենեակում մահացած:

[1]) «Ժամանակ» № 9, Կ. Պոլսի:

Բազմաթիւ բժիշկների պաշտօնական քննութիւնը այդ առիթով հետևեալ եզրակացութեան է յանգում[1]):

—«Մեզի ներկայացուցին տասը սանդիմէթր երկայնութեամբ զոյգ մը մկրատ, խիստ հատու, որոնց մէկ ծայրը կը կրէր կողմնակի դուրս ցցւած մաս մը. մկրատներուն վրայ արիւնի բիծեր կային, և մեզի ըսին թէ նախորդ Սուլթան Աբդիւլ Ազիզ ինք իր ձեռքով բացած էր վէրքերը...

Հետևաբար միաձայնութեամբ կը յայտարարենք.

1. Թէ՝ նախորդ Սուլթան Աբդիւլ Ազիզի մահը առաջ եկած է՝ բազուկներու յօդւածներուն վրայ գտնւած երակներուն հատումին հետևանք եղող արիւնահոսութենէն:

2. Թէ մեզի ցոյց տրւած գործիքը կրնայ կատարելապէս առաջ բերել վերոյիշեալ վէրքերը:

3. Թէ՝ այս վէրքերուն ուղղութիւնը և բնոյթը, ինչպէս նաև զանոնք բանալու համար գործածւած գործիքը մեզ սա եզրակացութեան կը բերեն թէ նախորդ Սուլթանը անձնասպանութեամբ վերջ տւած է իր կեանքին»:

Թէ որքան ճիշտ էր այդ վկայութիւնը դժւար է որոշել, քանի որ դեռ այն ժամանակ հասարակաց կարծիքը ասում էր, որ սուլթան Աբդուլ Ազիզը ոչ թէ ինքնասպանութիւն էր գործել, այլ նրան սպանել էին, բարդութիւններից վախենալով:

Սակայն պալատական արիւնոտ դաւերը միայն դրանով չեն սահմանափակւում:

Նոր րէժիմը աշխատում է Կ. Պոլսից հեռացնել նախորդ սուլթանի բոլոր մտերիմներին ու կողմնակիցներին:

Դա դրդում է մի տեսակ հակադաւադրութեան: Աբդուլ Ազիզի թիկնապահներից մէկը՝ Հասան Չերքէզ մի երեկոյ, խնջոյքի ժամանակ յարձակւում է Հիւսէյն Աւնի փաշայի վրա և սրախողխող անում նրան: Խառնաշփոթութեան ժամանակ սպանւում է նաև զինւորական նախարար Րեշիդ փաշան ու մի քանի զինւորներ, ծառաներ:

[1]) Տես «Արևելեան Մամուլ» 1908 թ. № 43, եր. 1026.

Թէ Արդուլ Ազիզի եղերական մահը, թէ այդ արիւնալի միջնադէպը ծանր ազդեցութիւն են թողնում հիւանդոտ սուլթան Մուրադի վրա: Նրա հոգեկան վիճակը օրէցօր մռայլւում է ու դէպի անկում է մղւում:

Իսկ երկրի վիճակն այնպէս էր, որ անհրաժեշտ էր լարուած, եռանդուն ղեկավարութիւն՝ ներքին ու արտաքին փոթորիկներից անվտանգ դուրս գալու համար:

Դեռ իր գահակալութեան երկրորդ օրը նա հրատարակել էր երկու մեծադորդ հրովարտակներ՝ ի հարկէ, Միդհատ փաշայի ու ընկերակիցների կողմից խմբագրուած:

Մեծ վէզիրի անունով նա գրում էր [1].

Բարձրապատիւ վէզիրս Մէհմէտ Րիւշտի փաշա.

Աստուածային նախասահմանութեամբ և բոլոր հպատակներուն հաւաքական փափաքովը մեր երջանկայիշատակ նախահայրերուն գահը բազմեցանք: Ձեր հաւատարմութիւնն ու կարողութիւնը փորձով ծանօթ ըլլալով մեզ, վերահաստատեցինք Ձեզ եպարքոսական պաշտօնին մէջ, ինչպէս նաև միւս նախարարներն ու բոլոր պաշտօնատարները վերահաստատուած են իրենց պաշտօնին մէջ: Յայտնի է թէ բաւական ժամանակէ ի վեր կառավարութեան ներքին և արտաքին գործառնութեանց մէջ առաջ եկած դժուարութիւնները՝ յոռի տպաւորութիւններ ըրած են հանրային կարծիքին վրա ու անվստահութիւն ներշնչած, որուն հետևանքով երկիրը հոգային և դրամական այլազան վնասներու և վրդովումներու ենթարկուած է: Ուստի՝ ամենէն առաջ անհրաժեշտ է երկրին բարենորոգութեան ձեռնարկել ու կառավարութեան ամբողջ հպատակներուն անդորրութիւնը և բարոյական ու նիւթական երջանկութիւնը ապահովել: Այս արդիւնքին հասնելու համար պէտք է երկրին վարչութիւնը արդար ու ամուր հիմի մը վրայ դնել, ինչ որ մեր փափաքն ու մտադրութիւնը եղած

[1]) «Ժամանակ» Կ. Պոլիս 1908 № 20.

է միշտ: Հետեւաբար Շէրի-ի տրամադրութիւնները գործադրելով հանդերձ, այնպիսի հաստատ օրէնքներ կազմեցէք, որոնք թէ օրուան պահանջներու և թէ ժողովուրդին ընդունակութեանը պատշաճին, և որոնց շնորհիւ մեր Կայսերական ամբողջ հպատակները անխտիր կատարեալ ազատութիւն վայելեն ու առաջդիմութեան ճամբան բացուած ըլլայ բոլոր հպատակներուն առջև, որոնք սիրով միանան Հայրենիքը, ազգն ու կառավարութիւնը պաշտպանելու գործին ու գաղափարին: Ինչ միջոցներ որ անհրաժեշտ են այս նպատակին հասնելու, նախարարներուն հետ խորհրդակցելով ծրագրեցէք և մատուցէք ինձ: Անհրաժեշտ ու կարեւոր է այս նպատակին վրայ հիմնուելով վերակազմել Պետական Խորհուրդը, Արդարութեան, Հանրային Կրթութեան և Ելմտական նախարարութիւններն ու վարչութիւններն և ուրիշ պաշտօնէութիւնները: Այս բոլոր պաշտօնատուններուն բարեկարգութեանը պէտք է հսկել: Տէրութեան գործերը դժուարացնող ամենամեծ խնդիրներէն մէկն ալ ելմտական գործերն են. հետևաբար պէտք է նախ պետութեան ելմտացոյցը ապահովութեան տակ առնել: Այսինքն անանկ օրէնքով մը կապել և այնպիսի խիստ հսկողութեան մը տակ առնել Տէրութեան գանձը, որ ժողովուրդը վստահի թէ ելմտացոյցէն դուրս ծախք պիտի չըլլայ բնաւ: Այս նպատակին օգնելու դիտումով Մալիէ-էն Մեր Անձնական գանձին տրուելիք թոշակէն 60,000 քիսէ [1]) զեղջեցինք այս անգամ: Նոյնպէս Մեր Անձնական գանձին յատուկ Էրէյլիի ածխահանքը և ուրիշ հանքերը, ինչպէս նաև քանի մը գործարաններու վարչութեան հասոյթը Մալիէ-ի գանձին յատկացուցինք:

Պէտք է ուրիշ կողմերէ ալ այս կարգի բարենորոգումներ ու խնայողութիւններ ընելով, ելմտացոյցին հաւասարակշռութիւնը դիւրացնելու ջանք ընել: Եւրոպական տէրութեանց հետ կնքած մեր դաշնագիրներուն ամէնքն ալ նոյնութեամբ գործադրելով հանդերձ. անկեղծաբար կը փափաքինք որ բոլոր Տէրութիւններուն հետ ալ աւելի ամրապնդուի ու զօրանայ մեր բա-

[1]) Մօտ 300,000 օսմ. ոսկի կամ 3 միլիոն ռուբլի:

ընկամութիւնը, մտերմութիւնն ու բարի յարաբերութիւնը: Բարձրեալն Աստուած մեր ամէնքն ալ դէպի բարին առաջնորդէ: Ամէն: Գրուեցաւ 1293 տարւոյ Ճէմազիւլէվվէլ ամսուն 9-րդ օրը»:

Նահանգային կուսակալներին էլ սուլթանը հետեւեալ հրովարտակն է ուղղում.

«Աստուածային նախասահմանութեամբ այս հազար երկու հարիւր իննսունը երեք տարւոյն Ճէմազիւլ էվվէլին եօթներորդ օրը՝ երեքշաբթի, ամբողջ նախարարներուն, վէզիր-ներուն, իւլէմ-ներուն միաձայնութեամբը և մեծ ու պզտիկ ընդհանուրին հաւաքական պահանջումովը մեծ հօրեղբայրս Սուլթան Ապտիւլ Ազիզ Խան գահընկեց եղաւ և Օսմանեան գահուն ու Խալիֆայութեան երջանկաբեր աթոռին վրայ իմ արքայական Վեհափառութեանս գահակալութիւնը տեղի ունեցաւ և արքայական անունս աղօթքի պահուն մզկիթներուն մէջ հռչակուեցաւ խալիֆէութեան յատուկ բանաձեւով և իմ կայսերական բարձր անունս դրոշմուեցաւ տպուած դրամներուն վրայ: Այս իրողութիւնները զեկուցանելու համար գրուեցաւ այս նուիրական հրամանագիրս, որպէս զի բոլոր գաւառներուն ու գիւղերուն բնակչութեանը ծանուցանես ու հռչակես և իմ արքայական անունս կարդացուի բոլոր մզկիթներուն բեմերէն ու քարոզիչները ամբողջ ժողովրդեան աւետեն իմ կայսերական գահակալութիւնս: Դուն որ տեղւոյդ կուսակալն ես, այս բարձրապատիւ հրամանս ստանալուդ պէս դատարաններու արձանագրութեան մէջ գրես զայն ու արձանագրես և ամէն կողմ հանրութեան ծանուցանելով ու հռչակելով՝ վարչութեանդ ենթակայ բոլոր գաւառներուն և գաւառակներուն մէջ հռչակես որպէս զի մզկիթներուն մէջ ուրբաթ օրերն ու Պայրամի օրերը յիշատակութիւնը իմ կայսերական բարձր անուանս ու տիտղոսներուս կարդացուի, և ամէն ոք աղօթէ իմ արքայական կեանքիս ու կայսրութեանս փառաւորութեան ու տեւականութեանը համար: Եւ իմ կայսերական բարեհաճ կամքիս համաձայն ուղղես ընթացքդ և ըստ առաջնոյն երկրին վարչական անդորրութեան ու անթերի հսկողութեան հոգածու ըլլալով,

ամէն ճիգ թափես որ կայսերական ամէն դասակարգի բոլոր հպատակներս անպատճառ արդարութեան շնորհները վայելեն: Գրուեցաւ հազար երկու հարիւր իննսունը երեք տարւոյն Ճէմազիւլ էվվէլ ամսոյն իններն»:

Այդպէս էր սուլթան Մուրադը գուրգուրում իր հպատակներին ու պաշտօնեաներին:

Բայց բաւական չէր հրովարտակներ հրատարակել. հարկաւոր էր և իրականացնել, իսկ այդ անելու շնորհքը չունէր Մուրադը:

Այդ միեւնոյն օրերին երիտասարդ Թիւրքերի պարագլուխները «Օսմանեան հայրենասէրներ» ստորագրութեամբ [1]) մի կոչ են ուղղում եւրոպական պետութիւններին, որպէսզի նրանք չը միջամտեն Թիւրքիայի ներքին գործերին:

—«Եթէ Թիւրքիան, ասում է կոչը [2]) բռնակալի փոխարէն մի խելացի միապետ ունենայ, որը յենուած լինի բոլոր ազգութիւնների ու դաւանանքների ներկայացուցիչներից բաղկացած խորհրդակցական պարլամենտի վրա, այն ժամանակ նա փրկուած կը լինի: Ահա այդ է իսկական վճիռը, որ հակառակ չէ զուրանին: Թիւրք կառավարութիւնը պէտք է ընտրովի լինի»...

Իսկ եւրոպական պետութիւնները դեռ 1875 թ. դեկտեմբերին մի հաւաքական յայտագրով շեշտել էին, որ նրանք պահանջում են, որպէսզի «բարենորոգումների միջոցով վերջ դրուի աւերիչ և արիւնոտ կռւին. քրիստոնէական կրօնը թէ իրաւաբանական տեսակէտից և թէ փաստօրէն դրուի իսլամի հետ համահաւասար պայմանների մէջ, վերացուին քրիստոնեաներից

[1] Այդ կոչը խմբագրողներն էին Միդհատ փաշան և հայ ազգի Օտեան էֆենդին:

[2]) Ш. Сеньобосъ: „Политическ. Исторія“ томъ II եր. 216.

վերցնող աւելորդ տուրքերը և բարենորոգումների իրականացումը կախուած լինի ոչ թէ փաշաների քմահաճոյքից, այլ նշանակւի քրիստոնեաներից ու մահմեդականներից վերահսկիչ խառը մասնաժողով»:

Այդ յայտագրից յետոյ ամիսներ էին անցել, բայց իրերի դրութիւնը մազաչափ անգամ չէր փոխւել: Նոյն արիւնն ու աւերը, նոյն անսահման խժդժութիւնները:

Վերջապէս տեղի է ունենում պալատական յեղափոխութիւնը: Հրատարակւում են սուլթան Մուրադի հրովարտակները: Պետութիւնները այս անգամ էլ կատարեալ անտարբերութիւն են ցոյց տալիս, յետագային թողնելով իրենց անելիքներն ու քաղաքական դիրքը որոշելը:

Սակայն երկար չէ տեւում նոր սուլթանի Մուրադի իշխանութիւնը:

Տեսնելով նրա հոգեկան թուլութիւնն ու անընդունակութիւնը պետական մեծ յեղաշրջման համար, երիտասարդ թիւրքերը պալատական երկրորդ յեղափոխութիւնն են կատարում: Հրատարակւում է շէյխ ուլ իսլամի նոր ֆեթվան, որը սուլթան Մուրադի գահընկեցութիւնը արդարացնում է հետևեալ ձեւով[1]:

—«Եթէ հաւատացեալների հրամանատարը մտաւոր խելագարութիւն ունենայ և իր պաշտօնը կատարելու անկարող դառնայ, այդ դէպքում կարօղ է գահընկեց լինել:

Պատասխան. Շերին ասում է այո:

Ստորագրել է Հասան Հայրուլլահ որին Աստուած իր ներողութիւնը շնորհէ:

12 շաբան 1293. Հէճիր.
(1 սեպտեմբերի 1876 թ.).

[1] Պրօֆ. Կ. Թումայեան, «Ծագումն արևելեան խնդրոյ» եր. 512.

Այդպիսով խելագար սուլթանին Մուրադին բանտարկում են և գահ բարձրացնում նրա եղբօրը՝ այժմեան սուլթան Աբդիւլ Համիդին (1876 թ. սեպ.):

Եւ Բօսֆորի ափերին նորից հնչում են ամբոխի ցնծալի բացականչութիւնները.

—Փադիշահմ չոք եաշա...

Աննպատակ չէր ի հարկէ, այդ կրկնակի գահընկեցութիւնը: Միդհատ փաշան և նրա գաղափարակից երիտասարդ թիւրքերը լարւած ջանքերով ուզում էին հայրենիքի գլխից վտանգը հեռացնել, Թիւրքիայի նոր անդամահատութեան առաջն առնել:

Նրանց կարծիքով միայն սահմանադրութիւնը կարող էր այդ փրկարար դերը կատարել, ուստի և անյողդողդ քայլերով դիմում էին դէպի այդ նպատակակէտը ճանապարհին անխնայօրէն ոչնչացնելով բոլոր խոչընդոտները:

Անյարմար էր սուլթան Աբդուլ Ազիզը—նրան գահընկեց արին ու մահացրին: Անյարմար էր Մուրադը—նրան էլ ասպարէզից հեռացրին, հրապարակ քաշելով ճարպիկ ու ճկուն խելքի տէր Աբդուլ Համիդին, որից նախապէս խոստում էին վերցրել սահմանադրութիւն հրատարակելու:

Մինչդեռ Կ. Պօլսում տեղի էին ունենում այդ դէպքերը, սարսափները աւելի մեծ չափերի էին հասել Բօսնիայում—Հերցեգովինայում: Բաշիբօզուկներն ու կանոնաւոր զօրքերը կատարեալ աւերակ էին դարձրել ամբողջ նահանգներ:

Եւրօպական պետութիւնները կամենալով մի կերպ վերջ դնել այդ խժդժութիւններին, իրենց ներկայացուցիչների խորհրդաժողով են նշանակում Կ. Պօլսում:

Վիճելի հարցերում ամենից շատ շահախնդրւածն ու պայքարողը Անգլիան և Ռուսաստանն էին, ուստի

և նրանց ներկայացուցիչները՝ լորդ Սօլզբէրի և կոմս Իգնատիեվ գրեթէ մի ամբողջ ամիս բանակցութիւններ են վարում, կարծիքներ փոխանակում, մինչև որ պաշտօնապէս համաձայնութեան են գալիս խորհրդաժողովը բաց անել (դեկտեմբերի 23-ին)։

Մասնակցութեան է հրաւիրւում նաև Թիւրքիան՝ իր յատուկ ներկայացուցչի միջոցով։

Բայց հազիւ գումարւում են ժողովականները, հազիւ ծանօթանում են զբաղմունքի առարկաների հետ, երբ թնդանօթի 101 պայթիւններ, դղրդացնելով Բօսֆօրի մթնոլորտը, գալիս են աւետելու, թէ Թիւրքիան արդէն սահմանադրական պետութիւն է։

Դրանից աւելի խորամանկ խաղ, աւելի ազդու ցոյց Եւրոպայի դէմ չէր կարող լինել։ Եւրոպական դիպլոմատները վիճաբանում էին այն մասին, թէ ինչպէս կեանքի ու գոյքի ապահովութիւն ստեղծեն թիւրքահպատակ քրիստոնեաների համար, թէ ինչպէս տանելի կարգեր հաստատեն արիւնոտ իրականութեան մէջ, իսկ սուլթան Աբդիւլ Համիդը Միդհատ փաշայի խորհրդով հրատարակում է «Օսմանեան սահմանադրութիւնը» և դրանով յանկարծակիի բերում դիպլոմատների մեծադղորդ խորհրդաժողովը։

Մասնակի բարենորոգումների փոխարէն Թիւրք կառավարութիւնը ընդհանուր ազատութիւններ էր տալիս։

Պալլիատիւների փոխարէն արմատական միջոցի էր դիմում, երկրի ցաւերը բուժելու համար ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրելով։

Որքան էլ ճիգ թափէր խորհրդաժողովը—դրանից աւելին պահանջել, չէր կարող։

Բայց և այնպէս նա շարունակում է իր նիստերը, թէև բոլորովին փոխուած տրամադրութեամբ։ Նախա-

գծուած պահանջների փոխարէն նա բաւականանում է միայն երկու կէտ շօշափելով.

1. Բոսնիայում, Հերցոգովինայում և Բօլգարիայում առաջին հինգ տարին վալիները պետութիւնների հաւանութեամբ նշանակւին։

2. Տեղական հիւպատոսներից մի յատուկ մասնախումբ կազմել՝ Թիւրք պաշտօնեաներին աջակցելու և նրանց գործունէութեան վրայ հսկելու համար։

Սակայն այդ աննշան պահանջն էլ Թիւրքիայի կողմից անկատար է մնում։ Կառավարութիւնը, սահմանադրութեան վրայ յենւելով հարցը թողնում է պարլամենտի քննութեանը...

Այդպիսով երիտասարդ թիւրքերը հասնում են իրենց նպատակին։ Եւրոպայի միջամտութիւնը Թիւրքիայի ներքին գործերում վերացւում է ինքն ըստ ինքեան։

Եւ սկսւում են ժողովրդական հանդէսները, ուրախութեան ցոյցերը թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում։

Դարաւոր բռնակալութեան ու հալածանքների լծի տակ կորացած մասսան աննկարագրելի ցնծութեամբ դիմաւորում է ազատութեան ճաճանչները։ Սահմանադրութեան բացած հեռանկարը անսահման ոգևորութեան առարկայ է դառնում։

Թ. ՄԻԴՀԱՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Սուլթանական խատտին Միդհատ փաշայի անունով.—Աբդուլ Համիդը գահ բարձրանալուց յետոյ.—Շեղումն խոստումներից.—Ի՞նչ փոփոխութիւններ է մտցնում.—Սահմանադրութեան հրատարակումն.—Նրա բովանդակութիւնը։

—

Թիւրքիան սահմանադրականն... Դա այլ եւս երազ չէր, այլ իրականութիւն, որի մասին ինքը սուլթանը յատուկ «խատտով» հետեւեալն էր գրում Միդհատ փաշային [1]).

Իմ մեծաշուք վէզիրս Միդհատ փաշա.

Մեր տէրութեան զօրութիւնը ժամանակաւ յենալու վրայ էր։ Անոր պատճառը արտաքին խնդիրները չէին, այլ ներքին գործոց վարչութեան մէջ ուղիղ ճամբէ խոտորումն էր, որով իշխանութեան վրայ հպատակաց վստահութեան կապերը թուլցած էին։

Այս պատճառաւ իմ Օգոստափառ հայրս, հանգուցեալ սուլթան Աբդիւլ Մէճիդ, բարենորոգմանց սկիզբ մը շնորհեր էր, Թանզիմաթը, որ Շէրիի նուիրական տրամադրութեանց համաձայն՝ ամենուն կեանքն, ինչքն ու պատիւը կերաշխաւորէր։

Թանզիմաթի փրկաւէտ արդեամբն է, որ պետութիւնն մինչեւ ցարդ ապահովութեան ճամբուն մէջ հաստատ մնաց և մենք ալ յաջողեցանք այսօր հիմնել ու հրատարակել այս սահմանադրութիւնն, որ ազատօրէն յայտնուած գաղափարաց և կարծեաց արդիւնք է։

Այս բարենշան աւուր մէջ յատուկ ջերմեռանդութեամբ կը յիշեմ Օգոստափառ հօրս յիշատակն և իղձը,

[1]) Տես «Փորձ» 1877 թ.

որ արդար իրաւամբ կայսրութեան վերանորոգիչ ճանչուած է։ Աներկմիտ եմ, որ նա ինքնին կը բանար սոյն սահմանադրական զարգացումն՝ որոյ մէջ պիտ մտնենք այսօր, եթէ Թանզիմաթին հրատարակութեան դարը մեր աւուրց պիտոյքներուն յարմարած ըլլար։

Բայց նախախնամութիւնը մեր գահակալութեան ժամանակին պահեր էր այս երջանկաւէտ փոխակերպութիւնն ընելու հոգը, որ մեր ժողովրդոց բարօրութեան գերագոյն երաշխաւորութիւնն է։ Փառք կու տամ Աստուծոյ, որ կարող եղայ գործիք ըլլալ իրեն։

Քաջայայտ է, որ մեր կառավարութեան սկըզբունք ոչ եւս կրնար համաձայնիլ մեր ներքին կառավարութեան մէջ հետզհետէ մտած փոփոխութեանց և մեր արտաքին յարաբերութեանց օր քան զօր ընդարձակման հետ. Մեր ամենէն մեծ բաղձանքն է խաղաղ անհետացնել այն խոչերն, որ ազգին և երկրին արգելք կըլլան իրենց ունեցած բնական հարստութիւններէն ըստ արժանւոյն օգուտ քաղելու, և վերջապէս տեսնել մեր հպատակներն՝ որ քաղաքակրթեալ ընկերութեան մը սեփական եղող իրաւունքներն ստանալով՝ միևնոյն յառաջադիմութեան, միութեան և համաձայնութեան խորհրդով միանան։

Այս նպատակին հասնելու համար օգտակար ու կանոնաւոր կառավարական ձև մը ընդունիլ, կառավարութեան իշխանութեան անկապտելի իրաւունքն անվնաս պահելով, ամեն տեսակ սխալանաց և զեղծմանց առաջքն առնուլ, որք ապօրէն գործոց՝ այսինքն մէկ կամ քանի մը քմահաճ անձանց իշխանութեան արդիւնքն էին, միևնոյն պարտականութիւնն օրինագրել մեր ընկերութիւն կազմող հասարակութեանը այլ և այլ անդամներուն, և կարող ընել զանոնք, որ ազատութեան, արդարութեան ու հաւասարութեան բարիքն

անխտրաբար վայելեն։ Ասոնք էին ամեն շահերն երաշխաւորելու և պաշտպանելու միակ միջոցները։

Այս էական սկզբունքէն կը ծագէր ուրիշ ամենաօգտակար գործի մը անհրաժեշտ պէտքը, այն է մեր հասարակային իրաւունքը խորհրդարանական և սահմանադրական դրութեան մը կապել։ Ասոր համար էր, որ մեր գահակալութեան առթիւ հրատարակած առաջին Խաթթին մէջ խորհրդարանի մը հաստատութեան ստիպողականութիւնը յայտնեցինք։

Կայսերական ամենէն մեծ աստիճանաւորներէ, իւլեմներէ և պաշտօնատարներէ կազմեալ յատուկ յանձնաժողով մը խնամով պատրաստեց սահմանադրութեան հիմունքն, որ յետոյ քննելով ընդունեցաւ մեր նախարարաց խորհրդէն։

Այս հիմնական օրէնքը կը նուիրագործէ վեհապետին արտօնութիւնները, օսմանցւոց ազատութիւնն և քաղաքային ու քաղաքական հաւասարութիւնն օրինաց առջև, նախարարաց և պաշտօնատարաց իրաւասութիւնքն ու պատասխանատուութիւնը, ազգային խորհրդարանին հսկողութեան իրաւունքը, դատական ատեանին կատարեալ անկախութիւնը, պիւտճէին իրական հաւասարակշռութիւնը, վերջապէս գաւառաց մէջ վարչական ապակենտրոնացումը, առանց կենտրոնական կառավարութեան վճռական գործողութիւնն ու իշխանութիւնը տկարացնելու։

Այս ամեն սկզբունքները Շերիի տրամադրութեանց համաձայն ըլլալէ զատ, համաձայն են նաև մեր ընդունակութեանց և բաղձանաց, ինչպէս նաև ամենուն բարօրութիւնն ու երջանկութիւնն ապահովելու վսեմ խորհրդին, որ մեր գերագոյն փափաքն է։

Ջիս Աստուծոյ շնորհաց և մարգարէին օժանդակութեան յանձնելով՝ սոյն սահմանադրութիւնը կայսե-

րական հաւանութեամբ վաւերացնելէ ետև ձեր ձեռքը կաւանդեմ, որպէս զի Աստուծոյ օգնութեամբ անմիջապէս գործադրուի մեր կայսերութեան ամեն երկիրներուն մէջ։

Հետևաբար իմ հաստատուն կամքս է, որ հրատարակէք զայս և ասոր տրամադրութիւններն այս օրէն սկսեալ գործադրել տաք։

Նմանապէս սոյն սահմանադրութեան մէջ յիշուած օրէնքներն ու կանոններն անմիջապէս խորհելու և խմբագրել տալու համար ամենաարագ և ամենաազդու միջոցներ պարտիք ձեռք առնուլ։

Բարձրեալն Աստուած կայսրութեան և ազգին փրկութեանն աշխատողներուն ջանիցն յաջողութիւն պարգևէ»։

Տւեալ յեօթներորդ աւուր Զիլհիճճէի 1293.

Այսպէս ուրեմն նոր սուլթանը՝ Աբդուլ Համիդը գալիս էր կանգնելու Աբդուլ Մեջիդի բարենորոգչական ճանապարհի վրա։ Նա գովեստով էր խօսում Թանզիմաթի մասին և իր հպատակներին սահմանադրական կարգեր էր աւետում։

Բայց որքան անկեղծ էին այդ խոստումները և որքան տևողական—ահա կարևոր հարցը։

Միդհատ փաշային մեծ վեզիրութեան աստիճանին հասցնելով և յատուկ «խատտիով» յանձնարարելով նրան հետամուտ լինել սահմանադրական կարգերի իրականացմանը, այդ միևնոյն ժամանակ նա հրատարակում է (1876 թ. դեկտեմբերի 11/13-ին) և այդ «Սահմանադրութեան» հիմնական կէտերը։

Սակայն դրանք բաւական տարբերւում էին նախնական բնագրից, որ մշակել էր Միդհատ փաշան Օտեան էֆենդիի ու միւս ընկերների հետ։

Եւ տարբերութիւնը աւելի ևս մեծացրել էր թերութիւնները ժողովրդապետական տեսակէտից։

Ճիշտ է կատարուած փոփոխութիւնն ու դրանից առաջացած թերութիւնները բոլորովին աննկատելի պէտք է մնային ընդհանրութեան ուշադրութիւնից, որովհետև ինքնըստինքեան բացարձակ միահեծանութիւնից սահմանադրական կարգերի անցնելը մի խոշոր առաջադիմական քայլ էր և այդ քայլին ականատես օսմանեան ժողովուրդն ու նոյն իսկ արտաքին աշխարհը չէին կարող նրբութիւններով, մանրամասնութիւններով հետաքրքրուել։

Բայց կար մի փոքրիկ խմբակ, որի համար այդ փոփոխութիւը կարևոր նշանակութիւն ունէին, իբրև սուլթանական վերաբերմունքի յատկանիշ։

Դա երիտասարդ թիւրքերի պարագլուխն էր՝ Միդհատ փաշան իր ընկերակիցներով։

Ինչպէս յայտնի է, դեռ սուլթան Մուրադի գահընկեցութեան նախօրեակին դրանք բանակցութեան մէջ էին Աբդիւլ Համիդի հետ, և նրա համաձայնութիւնն էին ստացել ապագայի բոլոր փոփոխութիւնների, ինչպէս նաև սահմանադրութեան բոլոր կէտերի վերաբերմամբ։

Աբդիւլ Համիդը համաձայնուել էր [1].

ա. Անյապաղ հրատարակել նոր սահմանադրութիւնը։

բ. Պետական գործերի մէջ միայն իր պատասխանատու խորհրդականների կարծիքը հարցնել։

գ. Զիա պէյ և Քեմալ պէյ իր անձնական քարտուղարները դարձնել։

Այդ դեռ բաւական չէ։ Համիդը նախնական այդ բանակցութիւնների ժամանակ իրեն ցոյց է տալիս

[1] «Արևելեան Մամուլ» 1908 թ. № 45.

աւելի ծայրահեղ և ժողովրդասէր, քան թէ նոյնիսկ երիտասարդ թիւրքերի պարագլուխները։

Վերջիններս բնականաբար աւելի ոգևորւում են և վճռում են շտապեցնել դաւադրութեան իրականացումը՝ պալատական երկրորդ յեղաշրջումը։

Սակայն երբ փաստն արդէն կատարուած էր և Աբդիւլ Համիդը սուլթան յայտարարուած, իսկոյն փոխւում է վերջինիս քաղաքականութիւնը։

Նա իր փադիշահական բարձր իրաւասութիւնը պաշտպանելու նպատակով մի շարք փոփոխութիւններ է մտցնում այն «Սահմանադրութեան» մէջ, որին վաղուց հաւանութիւն էր տուել։

Այսպէս, օրինակ, նա ջնջում, ուղղում է հետևեալ կէտերը [1].

1. Սահմանադրութեան առիթով Միդհատ փաշային ուղղած «խատտիի» մէջ տիտղոսը պէտք է լինէր ոչ թէ «Եպարգոս» (Սեդարեթէ), այլ գլխաւոր փոխանորդ (բաշ վեքալեթէ)։ Եւ քանի որ փադիշահի փոխանորդը պատասխանատու էր համարւում ժողովրդական ներկայացուցչութեան ու օրէնքի առաջ, ուստի ինքը փադիշահն էլ պատասխանատու էր նոյն ձևով։ Սուլթանը բոլորովին ջնջում է այդ և ընդհակառակը՝ շեշտում, որ «սուլթանը» պատասխանատուութենէ ազատ է։

2. Առանձին յօդուածով յիշւում էր, որ անհրաժեշտ է հիմնել այնպիսի հանրային խորհրդարան—(Մեջլիսի ումումի)—որը համապատասխանէ երկրի ազգաբնակութեան բարքերին (ախլագ) և ընդունակութիւններին—(գաբիլիյէթ)։ Իսկ դրա համար արկա-

[1] Այդ մասին տես՝ Ալի Հայդար Մ. հատի «Միդհատ փաշայի քաղաքական կեանքը» վերնագրով թիւրքերէն գիրքը եր. 199—201.

ւոր է հարցը լայն քննութեան ենթարկել գաւառական մեջլիսներում և ապա պարտ ու պատշաճը տնօրինել։

Սուլթանը ջնջում է այդ յօդւածը և դրանով արգելք դնում ժողովրդական ինքնօրինութեան հանդէպ։

3. Պահանջւում է կրճատել բոլոր աւելորդ ծախսերը և այդ կրճատումը պէտք է սկսել սուլթանից ու նրա պալատից։ Ֆինանսական վարչութեան վրայ պարտականութիւն է դրւում որոշել սուլթանի և բոլոր նրա ազգականների ու ժառանգների ռոճիկները։ Այդ մասին յատուկ հրովարտակով պէտք է յայտարարւի ժողովրդին։

Սուլթանը ամբողջովին ջնջում է այդ յօդւածը, նախորոշած լինելով բաց պահել իր առաջ անսահման ծախսերի դուռը, որի պատկերը տեսանք նախորդ երեսներում—«Սուլթանը և իր գործակալները» խորագրի տակ։

4. Նա ջնջում է նաև այն յօդւածը, որ պահանջում էր սուլթանական հարեմի կրճատումն, այսինքն նաժիշտների, արու ստրուկների (քեօլա) և հարեմապասների արձակումն։

5. «Կանուն էսասին» վերաքննելու և նրա թերութիւնները լրացնելու համար պէտք է կազմւէր մի յանձնաժողով՝ պետական վիւքելաներից—(փոխանորդներից)—գիտնականներից և ժողովրդական ներկայացուցիչներից բաղկացած։ Այդ յանձնաժողովի եզրակացութիւնը պէտք է վերաքննւէր ու վերջնականապէս հաստատւէր մեջլիսում։

Ուրիշ խօսքով ասած՝ ժողովրդին մի տեսակ իրաւունք էր տրւում իր երկրի օրէնքները փոխելու և հաստատելու։

Սուլթանը այդ էլ ոչնչացնում է և դրա փոխա-

րէն մտցնում այնպիսի կէտեր, որոնք բացարձակ հնարաւորութիւն են տալիս սուլթանին ցանկացած դէպքում խոչընդոտ բարձրացնել ժողովրդական ձգտումների դէմ։

Այդ տեսակէտից ամենակարևորն է 113-րորդ յօդւածը, որով սուլթանը հէնց «Կանոն էսասի» հիման վրա իրաւունք ունի պաշարման վիճակ յայտարարել, գոյութիւն ունեցող բոլոր օրէնքները դադարեցնել և իր ցանկացած նոր օրէնքները գործադրել, այդ միևնոյն ժամանակ երկրից դուրս արտաքսելով «վտանգաւոր» համարւած անձերին։

Դա նշանակում է, թէ սուլթանը իրաւունք ունի ոչնչացնել սահմանադրութիւնը հէնց նոյն այդ սահմանադրութեան հիման վրա։

Ահա այդպիսի նախնական փոփոխութիւններից յետոյ միայն Աբդուլ Համիդը հրատարակում է ՄԻԴՀԱՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ, որ հետևեալ կէտերն է պարունակում [1]).

1. Օսմանեան կայսրութիւն.—Օսմանեան կայսրութիւնը կը բաղկանայ իւր այժմու սեփականութիւնն եղող երկիրներէն և առանձնաշնորհեալ գաւառներէն։ Անբաժանելի ամբողջութիւն մը կը կազմէ, որոյ ոչ մէկ մասը չը կրնար երբէք անջատիլ ինչ պատճառաւ և լինի։

2. Կ. Պօլիս Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքն է։ Այս քաղաքը կայսրութեան միւս քաղաքներէն տարբեր յատուկ արտօնութիւն կամ առանձնաշնորհութիւն մը չունի։

3. Օսմանեան վեհապետութիւնը, որ իսլամութեան գերագոյն խալիֆութեան հետ վեհապետին ան-

[1]) Առաջ բերածը պաշտօնական թարգմանութիւնն է, 1876 թ. «Մասիսից» վերցրած։

ձին վրայ կը մնանայ, Օսմանաց ազգատոհմէն եղող կայսերազանց երիցագունին կը վերաբերի՝ ըստ վաղուց ի վեր հաստատեալ կանոնաց։

4. Վեհ. Սուլթանն, իբրև գերագոյն խալիֆ, մահմետական կրօնին պաշտպանն է, միանգամայն ամեն օսմանցոց վեհապետն ու փադիշահն է։

5. Վեհ. սուլթանը պատասխանատուութենէ ազատ է։ Իւր անձը նուիրական է։

6. Օսմանեան կայսերական ազգատոհմին անդամոց ազատութիւնը, անձնական անշարժ և շարժական ինչքը, և ցկեանս յատկացեալ թոշակն ամենուն երաշխաւորութեան ներքև է։

7. Վեհ. սուլթանին վեհապետական իրաւանց կարգէն են հետևեալ արտօնութիւնք. նախարարներ կանուանէ ու կը հրաժարեցնէ, աստիճաններ կուտայ, առանձնաշնորհեալ պաշտօնեաներուն հաստատութեան հրովարտակ կուտայ՝ անոնց շնորհուած արտօնութեանց որոշեալ ձևերով, դրամ կը կոխէ, անունը մզկիթներուն մէջ կը կարդացուի հասարակաց աղօթից ժամանակ, տէրութեանց հետ դաշնակցութիւն կը կնքէ, պատերազմ կը հրատարակէ, խաղաղութիւն կընէ. ցամաքային և ծովային զօրաց կը հրամայէ, զինուորական շարժմունք ընել կուտայ, Շէրիի և օրինաց տրամադրութիւնները գործադրել կուտայ, հասարակային վարչութեան վերաբերեալ կանոններ կըհաստատէ, ոճրադատ ատեաններուն վճռած պատիժները կը ներէ կամ կը թեթևցնէ, ընդհանուր ժողովը կըգումարէ կամ կերկարաձգէ, և եթէ հարկաւոր դատէ, երեսփոխանաց ժողովը կը լուծէ՝ վերստին ընտրել տալու պայմանաւ։

8. Օսմանցւոց հասարակային իրաւունքները.— Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակները առանց

խտրութեան օսմանցի կը կոչուին, ինչ որ ալ լինի անոնց դաւանած կրօնքը։ Օսմանցիի հանգամանքը կը ստացուի կամ կը կորչի օրինաց որոշած պարագայներուն համեմատ։

9. Ամեն օսմանցիք անհատական ազատութիւն կը վայելեն այն պայմանաւ, որ այլոց ազատութեան վնաս չը հասցնեն։

10. Անհատական ազատութիւնը բացարձակապէս անբռնաբարելի է, ոչ ոք կրնայ ինչ և իցէ պատրուակաւ օրինաց որոշած պարագաներին և սահմանած ձևերէն դուրս որ և է պատիժ կրել։

11. Իսլամութիւնը պետութեան կրօնն է։ Պետութիւնն՝ այս սկզբունքը պահպանելով հանդերձ կայսրութեան մէջ ճանչուած ամեն կրօնից ազատ կիրառութիւն կը պաշտպանէ և զանազան հասարակութեանց շնորհուած կրօնական առանձնաշնորհութիւններն հաստատ կը պահէ, այն պայմանաւ, որ բարեկարգութեան և բարի վարուց վնաս չը հասնի։

12. Մամուլն ազատ է օրինաց գծած սահմաններուն մէջ։

13. Օսմանցիք կարող են առևտրական, արուեստական կամ երկրագործական ընկերութիւններ կազմել օրինաց և կանոնագրութեանց որոշած սահմաններուն մէջ։

14. Օսմանեան ազգութեան վերաբերող մէկ կամ քանի մը անձինք իրաւունք ունին ի վնաս իրենց կամ հանրական շահին գործուած օրինազանցութեանց և կանոնազանցութեանց համար խնդրագիր մատուցանել ձեռնհաս իշխանութեանց, նմանապէս կրնան տէրութեանց պաշտօնատարաց ընթացքէն գանգատելու համար բողոքոյ ձևով ստորագրեալ խնդրագրով մատուցանել Օսմանեան ընդհանուր ժողովին։

15. Ուսումն ազատ է։ Ամէն օսմանցի կրնայ հասարակային կամ մասնաւոր դասախօսութիւն ընել օրինաց համաձայն վարուելու պայմանաւ։

16. Ամէն վարժարանք պետութեան հսկողութեան ներքև են։ Համայն օսմանցւոց տրուած ուսումը կանոնաւորելու և միացնելու միջոցներ պիտի խորհուին, բայց զանազան հասարակութեանց կրօնական ուսմանը չը պիտի դիպչուի։

17. Ամէն օսմանցիք հաւասար են օրինաց առաջև, միևնոյն իրաւունքներն ու պարտականութիւններն ունին առ երկիրն՝ առանց կրօնի վերաբերեալ իրաց դիպչելու։

18. Պետական պաշտօններու մէջ ընդունելու պայմանն է Թուրքերէն լեզուն գիտնալ, որ պետութեան պաշտօնական լեզուն է։

19. Ամէն օսմանցիք պետական պաշտօններու կընդունուին իրենց ընդունակութեան, արժանեաց և յաջողականութեան համեմատ։

20. Տրոց որոշումն ու բաշխումն օրինաց և յատուկ կանոնադրութեանց համաձայն կը հաստատուին, իւրաքանչիւր հանգանակողի կարողութեան համեմատ։

21. Շարժական և անշարժ գոյից կանոնաւորապէս հաստատեալ սեփականութիւնն երաշխաւորեալ է։

Մէկու մը անշարժ սեպհականութիւնը չը կրնար ձեռքէն առնուիլ, բայց միայն օրինաւորապէս հաստատեալ հասարակային օգտի համար, արժէքն ալ օրինաց համաձայն կանխաւ վճարելով։

22. Բնակարանն անբռնաբարելի է։ Իշխանութիւնն օրինաց որոշած պարագայներէն դուրս չը կըրնար որևէ մէկու մը բնակարանը բռնութեամբ մտնել։

23. Բնաւ մէկը չը կրնար ստիպուիլ, որ դատավարութեան համար հաստատուելիք օրինաց համեմատ

ձեռնհասութիւն ունեցող ատեանէն զատ ուրիշ ատեանի մը առջև դատ վարէ։

24. Ընչից գրաւումը, տարապարհակն ու տուգանքն արգիլուած են։ Սակայն պատերազմի ժամանակ օրինաւորապէս հաւաքուած հանգանակութիւնք և պատերազմական վիճակէն հարկադրեալ միջոցներն այս տրամադրութենէ բացառութիւն են։

25. Հարկի, տուրքի կամ ուրիշ որ և իցէ անուամբ դրամ չը կրնար երբէք հաւաքուիլ՝ առանց յատուկ օրէնքի։

26. Որ և իցէ ձևերով տանջանք և չարչարանք բոլորովին և բացարձակապէս արգիլեալ է։

27. Նախարարք.—Վեհ. սուլթանը Մեծ-Եպարքոսի և Շէյխ-ուլ-Իսլամի պաշտօնները կը յանձնէ իր բարձր վստահութեան արժանի դատած անձերու։ Միւս նախարարները կայսերական հրամանաւ (իրատէ) կանուանուին։

28. Նախարարաց խորհուրդը Մեծ-Եպարքոսի նախագահութեան ներքև կը գումարի։ Նախարարց խորհրդոյն իրաւասութեան սահմանին մէջ են պետութեան բոլոր կարևոր գործերը, ներքին և արտաքին։ Իր այն որոշումները, որի վեհ. սուլթանին հաւանութեանը պիտի ներկայացուին, կայսերական իրատէով գործադրելի կը լինեն։

29. Իւրաքանչիւր նախարար իր իրաւասութեան սահմանին մէջ իր պաշտօնին վերաբերեալ գործերը կը կարգադրէ։ Այս սահմանն անցնող գործերու համար Մեծ-Եպարքոսին կը դիմէ։

Մեծ-Եպարքոսը՝ զանազան պաշտօնատանց գլուխներէն առ ինքն ուղղեալ տեղեկագրերը գործադրել կուտայ, եթէ պէտք ըլլայ՝ նախարարց խորհրդոյն և յետոյ կայսերական հաւանութեան ներկայացնելով զա-

նոնք, կամ՝ եթէ հարկ չէ՝ ինք անձամբ որոշելով կամ միայն վեհ. սուլթանին հաւանութեան ներկայացնելով. մասնաւոր կանոնագրութիւն մը այս զանազան տեսակ գործերն իւրաքանչիւր նախարարական պաշտօնատանց համար պիտի որոշէ։

30. Նախարարք պատասխանատու են իրենց վարչութեան վերաբերեալ խնդիրներու և գործոց համար։

31. Եթէ երեսփոխանական ժողովոյ անդամներէն մին կամ շատերը նախարարի մը դէմ բողոք բառնալ ուզեն անոր պատասխանատուութեան պատճառաւ և այնպիսի գործոց առթիւ, զորս խորհրդարանն իրաւունք ունի քննելու, բողոքագիր նախագահին կըտրուի, որ զայն կը յղէ երեք աւուր մէջ այն դիւանին, որ ըստ ներքին կանոնագրութեան ժողովոյն՝ պաշտօն ունի բողոքը քննելու և որոշելու թէ հարկ է խորհրդարանին վիճաբանութեան ներկայացնէ զայն։

Դիւանին որոշումը քուէից առաւելութեամբ կըլլայ, ամբաստանեալ նախարարէն պէտք եղած տեղեկութիւններն ու բացատրութիւններն առնելէ ետև։

Եթէ դիւանը յարմար գտնէ բողոքը խորհրդարանին ներկայացնել, այս որոշումը հաստատող տեղեկագիրն հրապարակային նիստի մէջ կը կարդացուի, և խորհրդարանը, ամբաստանեալ նախարարին՝ որ ներկայ գտնուելու պիտի հրաւիրուի, կամ անոր փոխանորդին բացատրութիւնները լսելէ ետև, ներկայ երեսփոխանաց երկու երրորդին բացարձակ առաւելութեամբ կը քուէարկէ տեղեկագրին եզրակացութիւնները։ Եթէ այն եզրակացութիւնները ընդունուին, ամբաստանեալ նախարարը դատաստանի ենթարկող ուղերձ մը կը ղրկուի Մեծ Եպարքոսին, որ վեհ. սուլթանին հաւանութեան կը ներկայացնէ զայն, և բարձրագոյն ատենին առջև յղումը կայսերական իրատէով կըլլայ։

32. Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ նախարարաց դատման եղանակը։

33։ Բնաւ տարբերութիւն չը կայ նախարարաց և անհատից մէջ մասնաւոր դատերի նկատմամբ՝ որք անոնց պաշտօնէն դուրս են։ Այս տեսակ դատերը սովորական ատեաններու կը յանձնուին։

34. Այն նախարարն՝ որոյ դատաստանի ենթարկումն որոշած է բարձրագոյն ատեանին ամբաստանութեան դատարանէն, իր պաշտօնէն կը դադրի, մինչև որ իրեն դէմ եղած ամբաստանութենէն անպարտ ելնէ։

35. Եթէ երեսփոխանաց ժողովը պատճառաբանեալ քուէով մը մերժէ օրինաց ծրագիր մը, որուն ընդունելութեան վրայ նախարարք պնդել հարկ կը համարեն, վեհ. սուլթանն իր վեհապետական իրաւամբ՝ նախարարաց փոփոխութիւնը կամ խորհրդարանին լուծումը կը հրամայէ օրինաց որոշած պայմանաժամին մէջ՝ երեսփոխանները վերընտրելու պայմանաւ։

36. Ստիպողական պարագայից մէջ, եթէ ընդհանուր ժողովը գումարուած չէ, նախարարութիւնը կրնայ տրամադրութիւններ ձեռք առնուլ՝ տէրութիւնը վտանգէ մը պահպանելու կամ հասարակաց անդորրութիւնն ապահովելու համար։ Այն տրամադրութիւնները կայսերական իրատէով վաւերացուելէ ետև՝ առժամանակեայ կերպիւ օրինաց զօրութիւն ունին, եթէ սահմանադրութեան հակառակ չեն։ Յիշեալ տրամադրութիւններն ընդհանուր ժողովոյ պիտի ներկայացուին անմիջապէս՝ երբ որ գումարուի։

37. Ամէն նախարար իրաւունք ունի ծերակուտին և երեսփոխանաց ժողովին ներկայ գտնուելու, կամ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնեաներէն մին իր կողմէն փոխանորդաբար ժողովը ղրկելու։ Իրաւունք

ունի նաև ժողովին խօսք ուղղող որև է անդամէն առաջ լսուելու։

38. Երբ քուէից առաւելութեամբ տրուած որոշման մը համեմատ նախարար մը հրաւիրուի Երեսփոխանաց խորհրդարանն երթալու, որպէսզի բացատրութիւններ տայ, նախարարը պարտաւոր է իրեն ուղղեալ հարցմանց պատասխանելու, թէ անձամբ ներկայանալով, թէ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնատարներէն մին իրեն փոխանորդ կարգելով։ Սակայն իրաւունք ունի իր պատասխանն յապաղելու, եթէ հարկ համարի, պատասխանատուութիւնը իր վրայ առնելով։

39. *Պաշտօնատարք.*—Տէրութեան այլ և այլ պաշտամանց անուանումը՝ պէտք եղած արժանեաց և կարողութեան պայմաններն որոշող կանոնադրութեանց համեմատ պիտի կատարուի։ Այս պայմաններով անուանեալ պաշտօնատար մը չը պիտի կրնայ պաշտօնանկ ըլլալ կամ փոխուիլ, եթէ չապացուցուի թէ ընթացքն օրինաւորապէս կարդարացնէ իր պաշտօնանկութիւնը, եթէ հրաժարական չը տայ կամ մանաւանդ եթէ իր պաշտօնանկութիւնն անհրաժեշտ չը դատուի կառավարութենէն։ Այն պաշտօնատարք՝ որք բարւոք ընթացքի և պարկեշտութեան փորձեր տան, ինչպէս նաև անոնք, որոց պաշտօնանկութիւնն անհրաժեշտ դատուի կառավարութենէն, յատուկ կանոնադրութեամբ որոշելի տրամադրութեանց համեմատ իրաւունք պիտի ունենան յառաջացման կամ հանգստեան ռոճիկ և կամ ուրիշ պաշտօնի համար պատրաստականութեան թոշակի։

40. Բոլոր պաշտօնատարաց պարտականութիւններն յատուկ կանոնադրութեամբ պիտի սահմանուին։ Ամեն պաշտօնատար իր պարտականութեանց սահմանին մէջ պատասխանատու է։

41. Ամեն պաշտօնատար պարտական է իր մեծն

յարգելու. բայց օրինաց գծած սահմաններէն դուրս հրամաններու պարտական չէ հնազանդել։ Մեծի մը հնազանդելով օրինաց հակառակ գործեր կատարող պաշտօնատար մը չը կրնար պատասխանատուութենէ ազատ մնալ։

42. *Ընդհանուր ժողով.*—Ընդհանուր ժողովը երկու ժողովներէն կը բաղկանայ։ Աւագաց ժողովէն կամ ծերակուտէն և Երեսփոխանաց ժողովէն։

43. Այս երկու ժողովները ամեն տարի նոյեմբերի սկիզբը կը գումարին, և յաջորդ մարտ 1-ին կը ցրուին։ Թէ բացումը և թէ փակումը կայսերական իրատէով կը լինի։ Երկու ժողովներէն մին՝ միւսոյն գումարմանց շրջանէն դուրս ժամանակի մէջ չի կրնար գումարուիլ։

44. Վեհ. սուլթանը կրնայ՝ ըստ պահանջման պարագայից յառաջացնել ժողովոց բացման ժամանակն, և համառօտել կամ երկարել գումարմանց շրջանը։

45. Վեհ. սուլթանը անձամբ կամ Մեծ Եպարքոսէն փոխանորդեալ ներկայ կը գտնուի բացման հանդիսին։ Տէրութեան նախարարք և երկու ժողովոց անդամք ալ ներկայ կը գտնուին։ Կայսերական ճառ մը կը կարդացուի, որ անցեալ տարւոյն մէջ կայսրութեան ներքին կացութիւնն և արտաքին յարաբերութեանց վիճակը կը ծանուցանէ, և յաջորդ տարւոյն համար հարկաւոր դատուած տնօրէնութիւնները կը ցուցնէ։

46. Ընդհանուր ժողովոյ բոլոր անդամք երդում կընեն հաւատարիմ կենալու վեհ. սուլթանին և հայրենեաց, սահմանադրութիւնն յարգելու, իրենց յանձնուած պաշտօնն ուղղութեամբ կատարելու և այս պարտականութեանց հակառակ եղող որև է գործերէ զգուշանալու։ Նորընտիր անդամոց երդումը ժողովին բացման ժամանակ կըլլայ Մեծ Եպարքոսին առաջև. իսկ այն

օրը ներկայ չը գտնուողները՝ բացումէն եւս իրենց նախագահին առջեւ յատենի այն ժողովոյն, որուն անդամ են։

47. Ընդհանուր ժողովոյ անդամք իրենց կարծիքն յայտնելու կամ քուէն տալու ազատութիւն ունենալով, մէջերնէն ոչ մին չը կրնար հրահանգներով կամ խոստումներով կապուիլ, ոչ ալ սպառնալեաց ազդեցութեան ներքեւ գործել։ Նմանապէս ժողովին մէջ յայտնած կարծեաց կամ տուած քուէից համար չը կրնար դատի ենթարկուիլ կամ հալածուիլ. ուրիշ բան է եթէ ժողովին ներքին կանոնագրութեան դէմ վարուի։ Այն ժամանակ կանոնագրութեան տրամադրութիւններն ի գործ կը դրուին իր վրայ։

48. Ընդհանուր ժողովոյ անդամ մը, երբ որ իր անդամ եղած ժողովին երկու երրորդ մասին բացարձակ առաւելութեամբ ամբաստանուի իբր դաւաճան, երբ սահմանադրութիւնն եղծանելու ջանադիր կամ իբր կաշառառու, կամ ըստ օրինի բանտարկութեան կամ աքսորանաց դատապարտեալ ըլլայ, ծերակուտի անդամակցութենէ կամ երեսփոխանութենէ կիյնայ։ Դատաստանն ու պատժոյ գործադրութիւնը ձեռնհաս ատենին կը վերաբերի։

49. Ընդհանուր ժողովոյ ամէն մի անդամ իր քուէն անձամբ կուտայ. քուէարկութեան ժամանակ ձեռնապահ ըլլալու իրաւունք ունի։

50. Ոչ ոք կրնայ միանգամայն երկու ժողովոց անդամ լինել։

51. Երկու ժողովոց մին կամ միւսը չեն կրնար խորհուրդ ընել մինչեւ որ ժողովին անդամոց կիսէն մէկ աւելին ներկայ չը գտնուի։ Այն պարագաներէն դուրս, ուր քուէից երկու երրորդ մեծամասնութիւնը կը պահանջուի, ուրիշ ամէն որոշում ներկայ անդամոց

բացարձակ մեծամասնութեան կը տրուի։ Երբ որ քուէներն հաւասար են, նախագահին քուէն կրկին զօրութիւն կունենայ։

52. Անձնական շահու վերաբերեալ խնդրոյ մը համար մէկ կամ միւս ժողովին տրուած խնդրագիրը կը մերժուի, երբ ստուգուի, որ խնդրամատոյցը նախ չէ դիմած այն պաշտօնատարաց՝ որոց կը պատկանի խնդիրը, կամ այն իշխանութեան, յորմէ կախումն ունին այդ պաշտօնատարք։

53. Օրէնքի մը հաստատութեան կամ արդէն կեցած օրէնքի մը փոփոխութեան առաջարկութիւնը նախարարութեան կը վերաբերի։ Ծերակոյտն եւ երեսփոխանական ժողովն ալ կրնան իրենց իրաւասութեան վերաբերեալ նիւթոց վրայ նոր օրէնք առաջարկել կամ արդէն կեցած օրէնքի մը փոփոխութիւնը խնդրել։ Այս վերջին պարագայիս մէջ խնդիրը մեծ-եպարքոսի ձեռօք վեհ. սուլթանին կը ներկայանայ, եւ նորին վեհափառութիւնն ալ, եթէ տեղի դայ, իրատէով պետական խորհրդոյ կը յանձնէ առաջարկեալ օրինաց ծրագիրը պատրաստել՝ ձեռնհաս պաշտօնատարներէ ստացած բացատրութեանց եւ տեղեկութեանց համեմատ։

54. Պետական խորհրդոյ պատրաստած օրինաց ծրագիրը նախ երեսփոխանական ժողովոյ եւ ապա ծերակուտին քննութեան եւ որոշման կը ներկայանայ։ Այս ծրագիրն օրինաց զօրութիւն կը ստանան, երբ որ երկու ժողովներէն ընդունուելէ եւս կայսերական իրատէով վաւերանան։ Երկու ժողովոց մէկէն վերջապէս մերժուած օրինաց ծրագիր մը չը կրնար նոյն տարուոյն գումարման շրջանին մէջ նորէն ժողովին քննութեանն ու որոշման ներկայանալ։

55. Օրինաց ծրագիր մ՚ընդունուած չը կրնար համարուիլ եթէ երեսփոխանաց ժողովէն ու ծերակուտէն

հետզհետէ չը քուէարկի ձայնից առաւելութեամբ, յօդուած առ յօդուած և եթէ ծրագրին ամբողջութիւնն ալ երկու ժողովոց իւրաքանչիւրին մէջ քուէից մեծամասնութիւն չը ստանայ։

56. Տէրութեան նախարարներէն և անոնց փոխանորդներէն, ինչպէս նաև պաշտօնապէս հրաւիրեալ պաշտօնատարներէ զատ ոչ ոք կրնայ մտնել մէկ կամ միւս ժողովը, ոչ ալ իր կողմէ կամ փոխանորդաբար խումբ մը մարդոց կողմէ խնդիր մատուցանելու կամ զեկուցում մ՚ընելու ընդունել։

57. Ժողովոց խորհրդակցութիւններն ու վիճաբանութիւնները Թուրքերէն լեզուով կը լինեն։ Օրինաց ծրագիրն ու առաջարկութիւնները վիճաբանութեան օրէն առաջ կը տպեն ու ժողովականաց կը բաշխեն։

Քուէները կը տրուին յանուանէ կոչմամբ կամ արտաքին նշանաց ցոյցերով, և կամ գաղտնի քուէնշանով։ Գաղտնի քուէարկութիւնը ժողովին ներկայ անդամոց մեծամասնութեամբ կորոշուի։

59. Իւրաքանչիւր ժողովոյ ներքին կառավարութիւնն իր նախագահին ձեռօք կը կատարուի։

60. Ծերակոյտ.—Ծերակուտին նախագահն ու անդամներն ուղղակի վեհ. սուլթանէն կանուանուին։ Ծերակուտի անդամոց թիւը երեսփոխանական ժողովոյ անդամոց երրորդ մասէն աւելի չը կրնար լինել։

61. Ծերակուտի անդամ ընտրուելու կարող ըլլալու համար պէտք է, իր գործերով հասարակաց վստահութեան արժանացած, կամ տէրութեան նշանաւոր ծառայութիւններ մատուցած լինել։ Գոնէ քառասուն տարու լինել։

62. Ծերակուտին անդամներն ցկեանս կանուանուին։ Ծերակուտի անդամութիւն կրնայ շնորհուիլ այն անպաշտօն անձանց, որք նախարարութեան պաշտօն

վարած, կուսակալութիւն ըրած, զօրաբանակաց հրամանատար եղած, դատաւորութիւն, դեսպանութիւն, պատրիարքութիւն, խախամագլխութիւն ըրած են։ Նոյնպէս կրնայ շնորհուիլ ծովային և ցամաքային զօրաց ֆէրիգներու և առհասարակ այն անձանց, որք պէտք եղած պայմաններ ամբողջապէս ունին։ Ծերակուտի անդամք երբոր իրենց խնդրանօք ուրիշ պաշտօնի կոչուին, ծերակուտի անդամութենէ իսպառ կը դադրին։

63. Ծերակուտի անդամոց թոշակն է՝ տասն հազար ղուրուշ ամսական։ Երբ որ ծերակուտի անդամ մ՚ուրիշ պատճառաւ թոշակը կստանայ գանձարանէն, այն թոշակը տասն հազարի կը լցուի եթէ տասն հազարէն պակաս է։ Իսկ եթէ հաւասար կամ աւելի է, կը շարունակէ ստանալ առանց նոր յաւելուածի։

64. Ծերակուտն կը քննէ օրինաց կամ պիւճէին ծրագիրն, որ երեսփոխանաց ժողովէն առ ինքն կը յղուին։ Եթէ ծերակուտն օրինաց ծրագիր մը քննած ժամանակ, անոր մէջ վեհ. սուլթանին վեհապետական իրաւանց, ազատութեան, սահմանադրութեան, երկրին հողային ամբողջութեան, ներքին ապահովութեան, հայրենեաց շահուն ու պաշտպանութեան և բարոյականի հակառակ տրամադրութիւն մը տեսնէ, վերջնական կերպիւ կը մերժէ, պատճառաբանեալ քուէով մը, կամ իր դիտողութեամբ հանդերձ երեսփոխանական ժողովոյ կը վերադարձնէ խնդրելով, որ իր դիտողութեան համեմատ բարեփոխուի կամ չափաւորուի։ Ծերակուտէն ընդունուած օրինաց ծրագրերն իր հաւանութեամբ վաւերանալէ ետև մեծ-եպարքոսին կը ղրկուին։ Ծերակոյտն՝ իրեն ներկայացեալ աղերսագրերը քննելէ ետև՝ արժանի դատածները մեծ-եպարքոսին կը ղրկէ իր դիտողութեամբ հանդերձ։

65. *Երեսփոխանաց ժողով.*—Երեսփոխանաց թիւն՝ օսմանեան հպատակ յիսուն հազար արու բնակչաց մէկ երեսփոխան իյնալու պայմանաւ որոշուած է։

66. Ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ կը լինի։ Ընտրութեան եղանակը մասնաւոր օրէնքով մը պիտի որոշուի։

67. Տէրութեան պաշտօնատարք երեսփոխան չեն կրնար լինիլ, բացի նախարարներէն։ Որև է ուրիշ պաշտօնատար մը երեսփոխանութեան ընտրուած ժամանակ ազատ է զայն ընդունելու կամ մերժելու, բայց եթէ ընդունի, պէտք է իր պաշտօնէն հրաժարի։

68. Չեն կրնար երեսփոխան ընտրուել. ա. օսմանեան հպատակ չեղող անձինք. բ. Անոնք որ գործադրութեան մէջ գտնուած մասնաւոր կանոնի մը համեմատ օտար ծառայութեան մտած ըլլալով՝ մասնաւոր արտօնութիւններ կը վայելեն. գ. Անոնք որ թուրքերէն չեն գիտեր. դ. Անոնք որ տակաւին երեսուն տարին լրացուցած չեն. ե. Մասնաւորի մը ծառայութեան մէջ գտնուող անձինք. զ. Սնանկացեալ անձինք, որ իրենց վարկը չեն վերահաստատած. է. Այն անձինք որ իրենց ընթացքով ամենուն առջև իրենց յարգն ու համարումը կորուսած են. ը. Դատաստանական արգելքի տակ գտնուող անձինք, քանի որ այն արգելքը վերցած չէ. թ. Անոնք որ իրենց քաղաքային իրաւունքէն զրկուած են. ժ. Անոնք որ օտար հպատակութեան պահանջում կը նեն։ Առաջին չորս տարւան շրջանին լրումէն ետև, երեսփոխանութեան ընտրելու պայմանից մին պիտի ըլլայ թուրքերէն կարդալ, և որչափ կարելի է՝ գրել գիտնալ։

69. Երեսփոխանաց ընդհանուր ընտրութիւնները չորս տարին անգամ մը կըկատարեն։ Իւրաքանչիւր երեսփոխանի պաշտօնը չորս տարի միայն կը տևէ. բայց վերընտրելի է։

70. Ընդհանուր ընտրութիւնք նոյեմբեր 1-էն գոնէ չորս ամիս յառաջ պիտի սկսին, որ ժողովին գումարման համար հաստատեալ թուականն է։

71. Երեսփոխանաց ժողովոյն ամեն մի անդամն օսմանցւոց ընդհանրութիւնը կը ներկայացնէ, և ոչ բացառիկ կերպիւ զինքն ընտրող շրջանակը։

72. Ընտրողք պարտաւոր են իրենց երեսփոխաններն իրենց վերաբերեալ գաւառին բնակիչներէն ընտրելու։

73. Երբ ժողովը կայսերական իրատէով լուծուի, ընդհանուր ընտրութիւնք պէտք եղած ժամանակ պիտի սկսին, որպէսզի ժողովը կարենայ նորէն գումարել լուծման թուականէն գոնէ մինչև վեց ամիս։

74. Երբ երեսփոխան մը մահուան, դատաստանական արգելման, երկար բացակայութեան, դատապարտութեան, կամ տէրութեան պաշտօն ընդունելու պատճառաւ երեսփոխանական հանգամանքը կը կորսնցնէ կամ կը պակսի, նոր ընտրութեան կը ձեռնարկուի ըստ ընտրական օրինաց տրամադրութեան և այնպիսի պայմանաժամու մը մէջ, որ նոր երեսփոխանը կարենայ իր պաշտօնը կատարել, գոնէ ժողովոյն հետևեալ գումարման շրջանին մէջ։

75. Պարապ տեղ մը լցնելու համար ընտրեալ երեսփոխանաց պաշտօնը մինչև յառաջիկայ ընդհանուր ընտրութիւնները կը տևէ։

76. Տէրութեան գանձէն իւրաքանչիւր երեսփոխանի պիտի յատկանայ քսան հազար ղուրուշ ժողովին գումարման միջոցին համար [1]։ Երեսփոխանաց Կ. Պոլիս գալու և երթալու համար ճանապարհի ծախք ալ նմանապէս գանձարանէն պիտի վճարուի։

---

[1]) Սահմանադրութեան վերահաստատումից յետոյ որոշուած է իւրաքանչիւր երեսփոխանի վճարել գումարման իւրաքանչիւր ամսին 50 օսմ. ոսկի (450 ռ.).

77. Երեսփոխանաց ժողովին նախագահն և երկու փոխ նախագահք վեհ. սուլթանէն կընտրուին ինն ընտրելեաց ցանկի մը մէջէ, զոր ժողովը կը նշանակէ քուէից մեծամասնութեամբ։ Այս ինն ընտրելեաց երեքն առաջին նախագահութեան, երեքն երկրորդ նախագահութեան, և երեքն երրորդ նախագահութեան համար են։ Նախագահն և փոխ նախագահք իրատէով կանուանուին։

78. Երեսփոխանաց ժողովին նիստերն հրապարակային են։ Սակայն ժողովը կըրնայ գաղտնի նիստ ընել, եթէ նախարարը կամ նախագահը, կամ հնգետասան անդամք առաջարկեն զայն, և եթէ այս առաջարկութիւնը դռնփակ նիստի մէջ քուէի դրուելով ընդունուի։

79. Երեսփոխան մը, մինչև որ ժողովը մեծամասնութեամբ զայն դատաստանի ենթարկելու արտօնութիւն տուող որոշում չընէ, չը կրնար խորհրդարանին գումարմանց շրջանին մէջ ձերբակալել կամ դատաստանի ենթարկել, ի բաց առեալ երբ որ յանցանք մը գործած ատեն բռնուի։

80. Երեսփոխանաց ժողովն իրեն ներկայացեալ օրինաց ծրագիրներուն վրայ կը վճռէ, ելումտից կամ սահմանադրութեան վերաբերեալ տրամադրութիւններ կընդունի, կը բարեփոխէ կամ կը մերժէ, պետութեան ընդհանուր ծախքերն, որք պիւտճէին օրինաց մէջ կը պարունակեն, մանրամասնաբար կը քննէ և անոնց գումարը կորոշէ նախարարց հետ ի միասին։ Նմանապէս նախարարց հետ ի միասին։ Նմանապէս նախարարց հետ համաձայնութեամբ կորոշէ պետութեան ծախքը գոցելու յատկացած եկամտից տեսակը, գումարն և բաշխման ու հաւաքման եղանակը։

81. Դատական իշխանութիւն.—Յատուկ օրինաց

համեմատ անուանեալ և պէրաթով հաստատեալ դատաւորք չեն կրնար պաշտօնանկ ըլլալ, բայց իրենք կըրնան հրաժարական տալ։ Դատաւորաց իրենց պաշտօնական դասակարգութեան մէջ յառաջացումը, տեղափոխութիւնը, պաշտօնէն թոշակաւ դադարումը, դատավճիռ մը ընդունելու առթիւ հրաժարումը, վերոյիշեալ յատուկ օրինաց տրամադրութեանց նիւթ պիտի ըլլան։ Նոյն օրէնքը կը սահմանէ դատաւորի կամ դատական կարգին ուրիշ պաշտօնները կատարելու համար պէտք եղած պայմաններն ու հանգամանքները։

82. Ամեն ատեաններու նիստերն հրապարակային են։ Դատավճիռներու հրատարակութեան արտօնութիւն տրուած է։ Սակայն օրինաց նշանակած մասնաւոր պարագայից մէջ նիստը դռնփակ կըլլայ։

83. Ամեն մի անհատ կրնայ իր պաշտպանութեան շահուն համար դատարանին առջև օրինաց ներուած միջոցները գործածել։

84. Դատարան մը չը կրնար որևէ պատճառանօք իր ձեռնհասութեան վերաբերեալ դատ մը մերժել, ոչ ալ քննութեան սկսելէ ետև դատաստանը դադրեցնել կամ ետ ձգել, քանի որ դատախազը չուզէ ետ կենալ։ Այսուամենայնիւ պատժական գործոց մէջ կառավարութիւնն օրինաց համեմատ իր գործողութիւնը կը շարունակէ, թէև դատախազը ետ կենայ։

85. Ամեն գործ կը դատուի այն դատարանէն առ որ կը վերաբերի։ Անհատից և պետութեան մէջ եղած դատերն հասարակ դատարաններու ձեռնհասութեան ներքև են։

86. Դատարանաց մէջ բնաւ միջամտութիւն ի գործ չը կրնար դրուիլ։

87. Շէրիի վերաբերեալ գործերը Շէրիի դատա-

րաններէն կը դատուին։ Քաղաքային գործոց դատերը քաղաքային ատենից կը վերաբերին։

88. Զանազան տեսակ դատարաններէն իւրաքանչիւր պաշտօնն ու ձեռնհասութիւնը և դատաւորաց թոշակներն օրէնքով կը կարգադրեն։

89. Հասարակ դատարաններէն դուրս որ և է անունով արտաքոյ կարգի դատարաններ և յանձնախումբեր չեն կրնար հաստատուիլ մասնաւոր գործեր դատելու համար։ Սակայն իրաւարարութեան (թահքիմ) և պատուիրակ դատաւորութիւն (միւվէլլա) կարգել ներելի է օրինաց սահմանած ձևերով։

90. Դատաւոր մը չը կրնար բնաւ իր պաշտօնին հետ ի միասին թոշակաւոր հասարակային պաշտօն մը ալ վարել։

91. Պատժական դատերու մէջ հանրութեան իրաւունքը պաշտպանելու պաշտօնով ընդհանուր դատախազներ (Միւտտայի Ումումը) պիտի կարգուին։ Ասոնց պաշտօնին սահմաններ և իրենց պաշտօնական դասակարգութիւնն օրէնքով պիտի հաստատուին։

92. *Բարձրագոյն ատեան.*—Բարձրագոյն ատեանը կը բաղկանայ երեսուն անդամներէ, որոց տասը ծերակոյտին անդամներէն, տասը պետական խորհրդւոյ և տասը վճռաբեկ ու վերաքննիչ ատենից ատենապետներէն ու անդամներ են ընտրեալքն։ Բոլոր անդամք վիճակաւ կընտրուին։

Բարձրագոյն ատեանը պէտք եղած ատեն կայսերական հրամանով կը գումարի ծերակուտին խորհրդարանը և նիստ կընէ։ Իր իրաւասութիւնքն են դատել նախարարները, վճռաբեկ ատենին ատենապետն ու անդամները, և ծանր դաւաճանութեամբ կամ պետութեան ապահովութեան դէմ յանցանքով ամբաստանեալ բոլոր անձինք։

93. Բարձրագոյն ատեանը երկու դատարաններէ կը բաղկանայ։ Ամբաստանական և դատողական։ Ամբաստանական դատարանը կը բաղկանայ 9 անդամէ, վիճակաւ ընտրեալ բարձրագոյն ատենին անդամներէն, որոնց երեքը ծերակուտի, երեքը պետական խորհրդոյ և երեքը վճռաբեկ կամ վերաքննիչ ատեաններու անդամներէն։ Ամբաստանական ատեանն անդամոց $^{2}/_{3}$-ին մեծամասնութեամբ կորոշէ դատողական ատեանին յղելի գործերը։

94. Ամբաստանական ատենին անդամները դատական ատենին խորհրդակցութեանց չեն կրնար մասնակցիլ։

95. Դատողական ատեանը 21 անդամէ կը բաղկանայ, որոց եօթը ծերակուտի, եօթը պետական խորհրդոյ և միւս եօթը վճռաբեկ կամ վերաքննիչ ատեաններու անդամներէն պիտի ըլլան։ Դատողական ատեանն, իր անդամոց երկու երրորդին մեծամասնութեամբ և հաստատեալ օրինաց համեմատ, կը դատէ ամբաստանութեան ատեանէն առ ինքն յղեալ դատերը։ Իր վճիռները ոչ վճռաբեկ և ոչ վերաքննիչ (Իսթինաֆ վէ թէմէիզ) ատեաններէն կրնան վերաքննուիլ։

96. *Ելևմուտք.*—Ոչ մի հարկ յօգուտ պետութեան չը կրնար սահմանուիլ, բաշխուիլ կամ պահանջուիլ ուրիշ կերպով՝ բայց եթէ օրինաց զօրութեամբ։

97. Պիւտճէն օրէնք է, որ կը պարունակէ առաջարկութիւններ պետութեան մտից և ծախուց վրայ։ Այս օրէնքով կը որոշուին հարկերը յօգուտ պետութեան, այսինքն անոնց որքանութիւնը, բաշխումը և պահանջումը։

98. Պիւտճէի օրէնքը կը քննէ և կը հաստատէ ընդհանուր ժողովը առանձին յօդուածներով։ Օրինաց կից աղիւսակները, որոնք կը պարունակեն ելմտից ման-

բաժասն հաշիւը, բաժանուած են առանձին հատուածներու, գլուխներու և յօդուածներու: Այս աղիւսակները առանձին-առանձին գլուխներով կը հաստատուին:

99. Պիւճէի օրինաց ծրագիրը կը ներկայացուի երեսփոխանական ժողովին՝ նիստերուն անմիջապէս բացուելէն յետոյ, այն պայմանաւ որ անոր գործադրութիւնը հնարաւոր ըլլայ որոշեալ ժամանակամիջոցին:

100. Ամենայն արտաքոյ կարգի ծախք պետութեան գանձարանէն միայն օրինաց զօրութեամբ կրնայ ըլլալ:

101. Արտաքոյ կարգի յառաջ եկած անհրաժեշտ ստիպողական պարագաներու մէջ, նախարարները կայսերական իրադէի զօրութեամբ կրնան հարկաւոր միջոցներ ստեղծել և պիւճէին մէջ որոշուած ծախքերը ընել այն պայմանաւ, որ ընդհանուր ժողովոյ մերձակայ առաջին նիստին այդ մասին յատուկ օրինաց ծրագիր ներկայացուի:

102. Պիւճէն կը հաստատուի մէկ տարուան համար. նա օրինաց զօրութիւն ունի միայն այն տարուան համար, որոյ համար սահմանուած է: Սակայն եթէ պիւճէի հաստատութենէն առաջ՝ երեսփոխանական ժողովը արտաքոյ կարգի դէպքերէ ստիպեալ արձակուի, նախարարները կրնան կայսերական իրատէի համեմատ՝ գործածել նախնթաց տարուան պիւճէն մինչև ժողովոյ մերձակայ նիստը, այն պայմանաւ միայն որ անոր առժամանակեայ գործադրութիւնը մի տարիէն աւել չը տևէ:

103. Ամբողջապէս գործադրուած պիւճէի օրէնքը կը ցուցընէ արդեանց և ծախուց հաշիւը, որ եղած են նոյն տարւայ օրինաց ձևն ու բաժանումները, պիւճէի օրինաց համեմատ պիտի ըլլան:

104. Ամբողջապէս գործադրուած պիւճէի օրինաց

նախագիծը կրնայ երեսփոխանական ժողովին ներկայացուիլ մինչև չորս տարիէն յետոյ ալ, սկսեալ պիւճէի վերաբերեալ տարւայ վերջէն:

105. Վերադիտող ատեան մը պիտի հաստատուի գանձարանի պաշտօնատարաց տարեկան հաշուէցոյցերը քննելու համար: Վերադիտող ատեանը ամէն տարի իր մասնաւոր տեղեկագիրը պիտի ներկայացնէ երեսփոխանական ժողովոյ, յայտնելով իր գործառնութեանց արդիւնքը և իր դիտողութիւնները: Իւրաքանչիւր երեք ամիսը մի անգամ վերադիտող ատեանը առաջին նախարարի միջնորդութեամբ կը ներկայացնէ նորին վեհափառութեան զեկուցում մը երկրի ելևմտից կացութեան համար:

106. Վերադիտող ատեանը տասներկու անփոփոխ անդամներէ կը բաղկանայ, որք կայսերական իրատէով կը հաստատուին: Ասոնցմէ և ոչ մէկը կրնայ իր պաշտօնէն արձակուիլ առանց անոր արձակման ամբաստանագիրը երեսփոխանական ժողովոյ ներկայացուելու և ձայնից առաւելութեամբ ժողովէն ընդունուելու:

107. Վերադիտող ատենի անդամներէն պահանջուած պայմաններն ու յատկութիւնները, անոնց պաշտօնավարութեան շրջանը, անոնց հրաժարման, փոխանորդ կարգուելու, բարձր պաշտօն ստանալու և պաշտօնէ արձակուելու մասին գործ դրուելիք կանոնները, ինչպէս նաև ատենի ճիւղերու կազմակերպութիւնը մասնաւոր օրէնքներով կորոշուին:

108. Գաւառային վարչութիւն.—Գաւառաց վարչութիւնը կը հիմնուի ապակենտրօնացման համեմատ: Այս կազմակերպութեան մանրամասնութիւնները կը սահմանուին օրէնքով:

109. Առանձին օրէնք աւելի ընդարձակ հիման վրայ կը սահմանէ գաւառաց (վիլայէթ) սահմանները,

կազաներու (գայմագամութիւն) խորհրդոց ընտրութիւնը, որ ամեն տարի կը ժողովուի գաւառի գլխաւոր քաղաքին մէջ։

110 Գաւառական ընդհանուր խորհրդոյ գործառնութեան շրջանը կորոշուի միևնոյն յատուկ օրէնքով և կը բովանդակէ իր մէջ հետևեալները. Իրաւունք հասարակաց օգտին վերաբերեալ խնդիրները քննելու, որք են հաղորդակցութեան ճանապարհներու շինութիւնը, երկրագործական վարկի գանձարանաց հաստատութիւնը արդիւնագործութեան, վաճառականութեան և երկրագործութեան զարգացումը և ժողովրդական կըրթութեան տարածումը. իրաւունք բողոքելու անմիջական իշխանութեան օրինաց և կարգադրութեանց դէմ կատարուած գործողութեանց և վարմանց վրայ, ինչպէս հարկերը դասաւորելու և ժողովելու, այնպէս և ուրիշ դէպքերու մէջ։

111. Իւրաքանչիւր կազային մէջ պիտի գտնուի խորհուրդ մը զանազան համայնքներէ բաղկացեալ։ Այդ խորհուրդին գործ պիտի լինի հսկել. 1) անշարժ կալքերու կամ վագուֆներու (բարեգործական նպատակաւ ժառանգութիւն թողած գումարաց և կալւածոց) եկամուտներու կառավարութեան վրայ, որոնց յատուկ գործադրութիւնը որոշուած է նուիրատուների կարգադրութեամբ կամ սովորութեամբ. 2) ողորմածութեան կամ բարերարութեան գործոց համար կտակաւ ժառանգուած գումարաց կամ կալւածոց գործադրութեան վրայ. 3) որբոց գումարներու կառավարութեան վրայ՝ այս մասին եղած առանձին կարգադրութեան համաձայն։ Իւրաքանչիւր խորհրդոյ անդամները պիտի ներկայացնեն այն համայք, որմէ ընտրուած են՝ համաձայն հրատարակուելիք յատուկ կարգադրութեանց։ Այդ խորհուրդները պիտի ենթարկուին տեղական իշխանութեանց և գաւառային ընդհանուր խորհրդոց։

112. Կոստանդուպօլսոյ և գաւառաց մէջ քաղաքային գործերը պիտի կառավարուին քաղաքային ընտրեալ խորհուրդներով։ Քաղաքային խորհուրդներու կազմակերպութիւնը, անոնց գործառնութեան շրջանը և անոնց անդամների ընտրութեան եղանակը առանձին օրէնքով կորոշուին։

113. Զանազան կարգադրութիւններ.—Եթէ կայսրութեան երկիրներու որև է կէտին վրայ ապստամբութեան նշաններ երևնան, կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի նոյն տեղ պաշարման վիճակի մէջ դնել։ Պաշարման վիճակի հետևանքն է քաղաքական օրինաց գործադրութեան ժամանակաւոր ընդհատումը։ Պաշարման վիճակի ենթարկւող տեղերու կառավարութեան եղանակը յատուկ օրէնքով պիտի սահմանուի։ Վեհ. սուլթանին բացարձակ իրաւունքն է կայսրութեան երկիրներէն արտաքսել այն անձինքը, որոնք բարեկարգարանի ժողոված արժանահաւատ տեղեկութեանց համեմատ՝ վնասակար կը համարուին պետութեան ապահովութեան համար։

114. Սկզբնական կրթութիւնը պարտաւորիչ է բոլոր օսմանցւոց համար։ Այս յօդւածի գործադրութեան մանրամասնութիւնները կորոշուին յատուկ օրէնքով։

115. Սահմանադրութեան ոչ մի կանոնի գործադրութիւնը չի կրնար որևիցէ պատրւակաւ ընդհատուել կամ զանցառութեան տրւել։

116. Սահմանադրութեան մի քանի յօդւածները կրնան փոփոխւիլ, եթէ այդ փոփոխութեանց կարևորութիւնը հիմնաւորապէս կապացուցւի։ Այդ տեսակ փոփոխութիւնները հետևեալ ձևով պիտի լինին. ամենայն առաջարկութիւն որև է փոփոխութեան մասին, որ կ'առաջարկէ կամ նախարարութիւնը և կամ այս

կամ այն ժողովը, նախ և առաջ երեսփոխանական ժողովի քննութեանը պիտի ենթարկւի։ Եթէ առաջարկութիւնը ընդունւի այն ժողովոյ անդամոց երկու երրորդ մասի առաւելութեամբ, առաջարկութիւնը կը ներկայացւի ծերակոյտին։ Եթէ ծերակուտի անդամոց երկու երրորդ մասն ալ ընդունի նախարարութեան և կամ այս կամ այն ժողովին փոփոխութեան մասին եղած առաջարկութիւնը, այն ժամանակ կը ներկայացւի վեհափառ սուլթանի հաստատութեանը։ Եթէ առաջարկւած փոփոխութիւնը կայսերական իրատէով հաստատւի, օրէնքի զօրութիւն կըստանայ։ Սահմանադրութեան իւրաքանչիւր յօդւածը, որ առաջարկւած է փոփոխելու, իր զօրութիւնը կը պահէ մինչև որ ժողովոց քննութեանը ենթարկւելէ ետքը՝ կայսերական իրատէով չը հաստատւի։

117. Օրինաց բացայայտութիւնն ու մեկնութիւնը կը պատկանի վճռաբեկ ատենին՝ քաղաքային և քրէական օրինաց վերաբերութեամբ, պետական խորհուրդին՝ վարչական օրինաց նկատմամբ և ծերակոյտին՝ սահմանադրութեան յօդւածների վերաբերութեամբ։

118. Բոլոր օրէնքները, կարգադրութիւնները, կարգերը և սովորութիւնները՝ որոնք ներկայիս օրինաց զօրութիւն ունին՝ կը գործադրւին մինչև որ նոր օրէնքներով և կարգադրութիւններով չը փոփոխւին։

19. Ջեմալի 10-ի 1193 ի (28 հոկտեմբերի 1876) ընդհանուր ժողովոյ վերաբերութեամբ տւած հրահանգը իր զօրութիւնը կը կորցնէ նոյն ժողովոյ առաջին շրջանի նիստերը փակւելէ ետքը»։

Ժ: ՄԻԴՀԱՏ ՓԱՇԱՆ ՀԱԼԱԾԱԿԱՆ

Սուլթանը Միդհատ փաշայի դէմ.—Միդհատի թագրիրը.—Սուլթանի երկիւղը.—Միդհատ փաշան բանտարկւած.—Աքսոր.—Միդհատը նորից պաշտօնի է կանչւում.—Ձերբակալութիւն։

—

Որքան էլ որ կրճատած ու թերատ էր միդհատեան սահմանադրութիւնը, բայց և այնպէս նա իրողութիւն էր դարձնում հին կարգերի տապալումը և նոր օրերի սկիզբը։

Սակայն դա միայն թղթի վրայ էր։ Թէ ներքին և թէ արտաքին վստահութիւն ձեռք բերելու համար անհրաժեշտ էր և գործ ցոյց տալ։

Հեռատես Աբդիւլ Համիդը այդ ուղղութեամբ էլ ցոյց է տալիս ամենայն պատրաստակամութիւն։

Այո, բոլոր արտաքին նշանները այնպէս էին, որ կարծես սուլթանը իսկապէս ուզում էր իրականացնել իր «խատտին», հաստատել սահմանադրական կարգեր, բայց բոլորովին հակառակն էին նրա ներքին ձգտումները։

Արիւնոտ ուղիով, դաւադրական միջոցներով գահը բարձրանալով, նա սկզբում շատ սիրալիր յարաբերութիւն է հաստատում երիտասարդ թիւրքերի պարագլուխ Միդհատ փաշայի հետ, հետեւում է նրա խորհրդներին, հարցնում է նրա կարծիքները իւրաքանչիւր հարցի մասին։

Սակայն երկար չէ շարունակւում այդ դրութիւնը։ Աբդիւլ Համիդը հէնց որ համոզւում է, թէ արդէն ամրացած է իր գահը, թէ Միդհատեան կուսակցութիւնը

շատ չնչին իրական ույժ ունի իր տրամադրութեան տակ —իսկոյն փոխում է քաղաքականութիւնը և կամաց-կամաց հարթում ճանապարհը իր միահեծանութեան առաջ։

Ամենամեծ պատնէշը այդ տեսակէտից Միդհատ փաշան էր, ուստի և ամենից առաջ նրա դէմ է ուղղում իր ջանքերը։ Օրերի հետ միասին փոխւում է սուլթանի վերաբերմունքը դէպի այդ մեծ մարդը, մեծ հայրենասէրը։ Նախկին յարգանքին ու խոր ակնածութեանը յաջորդում է սառնութիւնը, արհամարհանքը։

Շատ անգամ Միդհատի դիմումները մնում են անպատասխան, անհետևանք։ Շատ անգամ սուլթանը միանգամայն ինքնուրոյն կերպով այս կամ այն կարգադրութիւնն է անում, հրամանն է արձակում,—մի խօսքով ամեն կերպ ցոյց է տալիս, որ ինքն է Թիւրքիայի տէրն ու տնօրէնը, որ սահմանադրութիւնը միայն ձևականօրէն, թղթի վրայ կարող է գոյութիւն ունենալ։

Այդ փոփոխութիւնը նշմարել չէին կարող կողմնակի, գործից հեռու մարդիկ, իսկ Միդհատ փաշան դրանցից չէր։ Նրա խորաթափանց միտքը տեսնում էր, որ Բօսֆորի շուրջը նորից կուտակւում են միահեծան բռնակալութեան ամպերը, որ նախկին պատրաստակամ «ազատասէր» Համիդը գահի վրայ հաստատուելուց յետոյ բոլորովին այլ ուղիով է ուզում կառավարել Թիւրքիան։

Եւ Միդհատ փաշան մի անգամ էլ փորձում է այդ ընթացքի առաջն առնել։ Նա գրում է սուլթանին հետևեալ ուշագրաւ թագրիրը [1]) (ծանուցագիրը)․

—«Փադիշահ! Սահմանադրութիւն հրատարակելու

[1]) Տես Ալի Հայդար Միդհատի «Միդհատ փաշայի քաղաքական կեանքը» Թիւրքերէն գիրքը։

նպատակն էր՝ վերացնել բռնակալութիւնը, ձեր կայսերական անձնաւորութիւնը իր պարտականութեան մէջ զգոյշ պահել, որոշել պետական նախարարների պարտականութիւնները, ժողովրդի մէջ կատարեալ հաւասարութիւնը ապահովել և աշխատել ձեռք ձեռքի տալով իրականապէս բարեկարգել երկիրը։

Երեսուն տարիներ առաջ հրատարակուած «խատտիների» նման Ձեր այժմեան «խատին» էլ մնալու չէ անգործադրելի, նոյն իսկ ներկայ ճգնաժամը հեռանալուց յետոյ, որովհետև մեր նպատակը չէ եղել սահմանադրութիւն հրատարակելով, մի գեղեցիկ միջոց ստեղծել արևելեան հարցը կարգադրելու կամ մի ցոյց կազմել մեր վրայ բացուած եւրոպացիների բերանը ժամանակաւորապէս փակելու համար։

Այս մասին թոյլ եմ տալիս Ձեր կայսերական անձնաւորութեանը մի քանի բացատրութիւններ ներկայացնել։

Դուք անպատճառ պէտք է իմանաք Ձեր վեհապետական պարտականութիւնները, որովհետև Ձեր բոլոր գործողութիւնների համար պատասխանատու էք ժողովրդի առաջ։ Որպէսզի նախարարներն ու պետական այլ պաշտօնեաները իրենց պարտականութիւնները գործադրելու մէջ ապահով լինին—ազատենք մեր օճիքը չորս հարիւր տարիներից ի վեր ազգին կրօնաբանութեան վարժեցնող և պետութիւնը յետադիմութեան վարժեցնող շողոքորթութիւնից։

Ծառայ դէպի կայսերական անձաւորութիւնը մեծ յարգանք ունի։ Բայց եթէ այդ անձնաւորութիւնը մեր ազգի շահին վնասակար քայլ անէ, այդ դէպքում ես շէրիի օրէնքների համեմատ կը հրաժարուիմ հնազանդուելուց, որովհետև իմ պատասխանատուութիւնը ծանր է։

Ես վախենում եմ իմ խղճից, քանի որ հայրե-

նիքս փրկելու և բաղդաւորեցնելու նպատակով միայն խղճիս հետ եմ դաշնակցել: Գուցէ իմ այս վարմունքի համար պետութիւնը առաջիկայում ինձ յանցաւոր և պատասխանատու ճանաչէ: Բայց ինչ արած: Իմ ներկայացրած այս ուղիղ խօսքերը թող Ձեր սիրտը կասկածի չենթարկէ:

Իմ ամենամեծ երկիւղն այն է, որ ապագայում խղճիս առաջ ամաչելով ազգի պարսաւանքին ու կշտամբանքին չարժանանամ: Հէնց այդ երկիւղն է, որ ինձ համարձակութիւն է տալիս Ձերդ կայսերական մեծութեանը ձանձրացնելու:

Իմ թագաւոր! Օսմանցիները իրենց կառավարելու, իրենց գործերը կարգադրելու ազատութիւն պէտք է ունենան: Ժողհրդակցութեան սիստեմով կառավարուած մի երկրում գիտէ՞ք թէ ինչ է օրէնքը: Կարծում եմ բացատրելու կարիք չկայ: Վստահութիւն ունեցէք դէպի ինձ, փադիշահ, դրանով ազգի ուագանիներից էլ ապահով եղէք:

Փադիշա՛հ! Ինձ վրայ մի ծանր բեռ է դրուած: Իբրև օսմանցի պէտք է կատարեմ պարտականութիւնս: Բացի դրանից իբրև պաշտօնեայ էլ պատասխանատու եմ խղճիս և ազգիս առաջ:

Պարծանքով կարող եմ ասել, որ չեմ կատարել մի այնպիսի գործ, որի համար խիղճս ինձ դատապարտել կարողանար. բայց ցանկանում եմ, որ ազգս էլ ինձ պատասխանատու չը համարէ:

Փադիշահ! Արդէն ինն օր է, որ շարունակում էք մատուցած խնդիրները չընդունել: Մերժում էք այնպիսի օրէնքներ, որոնք նոյնքան անհրաժեշտ են, որքան գործաւորին՝ գործիքը: Պարզ է, ի հարկէ, որ առանց գործիքի գործ կատարել չէ կարելի: Եւ այդպիսի դրութիւն ստեղծել էք այն ժամանակ, երբ աշխա-

տում ենք պետութեան հիմքը նորոգել, երբ ջանք ենք գործ դնում երկրաշարժների նման սարսուռ ազդող և դէպի կործանումն տանող պարագաները վերացնել: Կարող եմ ասել, որ դուք դրանով քանդում էք պետութիւնը:

Եթէ այս վարմունքի պատճառով դուք ինձ մեծ վեզիրութիւնից—(գործերի գլխաւոր)—հեռացնելու էք, խնդրում եմ վարչական դեկը յանձնէք մի կարող անձի, ինչպէս որ պահանջում է պետութեան ներկայ դրութիւնը:

Ամեն պարագայում

Ձեր խոնարհ ծառայ

Մ Ի Դ Հ Ա Տ

1877 թ. Յունուարի 18.

Այդ թագրիրը սուլթանին ուղարկելուց յետոյ Միդհատը երեք օր շարունակ չէ այցելում պալատը:

Շփոթւում է սուլթանը: Միդհատի վարմունքը ահ ու սարսափ է ազդում նրա վրա: Պալատական յեղափոխութեան թարմ տպաւորութիւնը սուլթան Աբդիւլ Ազիզի ու Մուրադի գահընկեցութեան յուշերը մռայլ հեռանկարներ են պատկերացնում նրա երևակայութեան մէջ, բայց նա ոչ ընկճւում է, ոչ էլ գլուխը կորցնում, այլ անյողդողդ վճռականութեամբ փորձում է տապալել երկիւղ ազդող, իր միահեծանութեանը խանգարող ոյժը՝ Միդհատ փաշային:

Նա արտաքին գործերի նախարար Սաֆվէթ փաշայի միջոցով սիրալիր հրաւէր է ուղարկում Միդհատին՝ պալատ գալու, խոստանալով նրա յարուցած խնդիրներին բաւարար լուծումն տալ:

Միդհատը տատանւում է, դանդաղում է: Սուլթանը նրա յետևից է ուղարկում Սայիդ փաշային, լիուլի ապահովութիւն խոստանալով:

Այս անգամ խաբւում է Միդհատը և գնում պա-

լատ, որտեղ նրան իսկոյն բանտարկում են մի սենեակում։ Կարճ միջոցից յետոյ գալիս է Սայիդ փաշան և սուլթանի անունից հրամայում անմիջապէս յանձնել մեծ վեզիրութեան կնիքը և հրաժարական ներկայացնել։ Հրամանը կատարւում է։ Դրանից յետոյ Միդհատին նստեցնում են Դոլմա Բախչէի առաջ նախապէս պատրաստի կանգնած «Իզեդդին» նաւը և դէպի արտասահման արտաքսում։

—Այսօր աքսորում էք դուք ինձ, ասում է Միդհատը սուլթանական պալատից վերջին անգամ հեռանալիս, բայց իմացած եղէք, որ սուլթան Աբդուլ Համիդը այստեղ հանգիստ վայելելու չէ…

Արդեօք այդ սպառնալիքն էր պատճառը, թէ մի այլ հանգամանք—բայց իրողութիւնն այն է, որ սուլթանի կարգադրութեամբ հրահանգում են «Իզեդդին» նաւին գնալ մինչև Մարմարեայ ծովի Չեքմեճէ կոչւող տեղը և այնտեղ 24 ժամ սպասել։ Եթէ այդ ժամանակամիջոցում սուլթանից հեռագիր չը ստացւէր—այդ դէպքում նաւը պէտք է շարունակէր իր ուղին և Միդհատ փաշային ափ իջեցնէր եւրոպական մօտակայ նաւահանգիստներից մէկում։

Դա զգուշաւորութեան մի քայլ էր հետևեալ նըպատակով կազմակերպած։ Սուլթանը ենթադրում էր, թէ Կ. Պօլսի երիտասարդ թիւրքերը, տեղեկանալով որ իրենց պարագլուխը՝ Միդհատ փաշան մեծ վեզիրութիւնից հրաժարեցրած է, կարող են բողոքի ցոյցեր անել, խառնակութիւններ առաջ բերել։ Այդ դէպքում իսկոյն հեռագիրը կը հասնէր «Իզզէդին» նաւին, Միդհատին յետ կը բերէին և նորից վեզիր կը դարձնէին՝ խռովութիւնները ճնշելու համար։ Իսկ եթէ կատարւած փոփոխութիւնը անտարբերութեամբ ընդունւէր—այդ դէպքում նաւը կը շարունակէր իր ուղին և Համիդը հասած կը լինէր իր փայփայած նպատակին։

Իրականանում է երկրորդ ենթադրութիւնը. Կ. Պօլիսը կատարեալ անուշադրութեան է մատնում Միդհատ փաշայի պաշտօնանկութիւնը։ Եւ այդպիսով տարագիր է դառնում այն մարդը, որ իր կեանքի նպատակն էր դարձրել Թիւրքիան վերանորոգելը։

Բայց Եւրոպայում նստած էլ նա մտածում էր հայրենիքի ցաւերի մասին։ Հեռուից էլ նրա անունը հետաքրքրութեան առարկայ էր դարձել ոչ միայն երիտասարդ թիւրքերի, այլ և քաղաքակիրթ աշխարհի համար։ Եւրոպական մամուլը խօսում է նրա մասին, օրէցօր հետաքրքրութիւնը աւելանում է։

Հեռատես Աբդուլ Համիդը դա վտանգաւոր է համարում, ուստի և նորից Թիւրքիա է հրաւիրում Միդհատին և նրան կարգում նախ Սիրիայի և ապա Իզմիրի վալի։ Սակայն դա նախերգանքն էր դաւադրական մի ծրագրի։

Համիդին հանգիստ չէր տալիս Միդհատի փայփայած ազատամիտ գաղափարները և ահա նա ծրագրում է մահւան գիրկը նետել նրան, յոյս ունենալով դրանով ընդմիշտ ազատւել նաև սահմանադրութեան ուրւականից։

Երբ արդէն վերջացած էր ռուս-թիւրքական պատերազմը և տնտեսական ծանր տագնապը խեղդել էր ժողովրդի ազատ շունչը, երբ ահ ու սարսափի քօղը ծածկել էր արդէն օսմանեան բոլոր հորիզոնները—ահա այդ ժամանակ Աբդուլ Համիդը վերյիշում է իր նախորդի՝ Աբդուլ Ազիզի եղերական մահը և իբրև այդ գործում յանցաւորի պատասխանատւութեան ենթարկում Միդհատ փաշային, ինչպէս նաև նրա գլխաւոր գործակիցներին ու գաղափարակիցներին։

Միդհատ փաշային յանկարծակի ձերբակալում են Իզմիրում և այդպէս Կ. Պօլիս բերում։

Սկսւում է դատավարութիւնը։

ԺԱ. ԴԱՏ ԵՒ ՄԱՀ

Դատավարութիւն վրանում.—Ո՞վքեր են մեղադրւում.—Հարցաքննութիւն.—Սուլթանի գաղտնի հրահանգները.—Դատավճիռ.—Վրդովմունք Եւրոպայում.—Անգլիայի միջամտութիւնը.—Գլադստոնի ճառը պարլամենտում. Գործի վերաքննութիւն.—Միդհատ փաշայի ճառը.—Մահւան դատավճիռը փոխւած.—Փաշաները Ալիֆ աքսորավայրում. Ի՞նչպէս մահացրին նրանց.—Միդհատ փաշայի գլուխը Եյլդըզում։

—

Անգլիական «Թայմս» լրագիրը հետևեալ ձևով է պատկերացնում միդհատեան դատավարութեան մանրամասները [1]), որ քաղւածօրէն և ամփոփելով առաջ ենք բերում։

Կ. Պօլիս, 28 Յունիսի 1881 թ.

Երէկ պաշտօնապէս սկսւեց դատավարութիւնն Եըլդըզի պարտէզում։ Մալթա քեօշկը շրջապատւած էր զինւորական խիտ շղթայով։ Քեօշկի դիմաց գտնւող հրապարակում խփւած էր մի մեծ ու կանաչ վրան։ Ահա հէնց այդ վրանում տեղի ունեցաւ դատավարութիւնը Սուրուրի էֆենդիի նախագահութեամբ։

Առանձին աթոռակներով հրաւիրւած էին ներկայ լինելու դեսպանական մարմինները, նախարարները, բարձր զինւորականներ, փաշաներ, ուլեմներ և այլ հանդիսականներ։

Կարդացւում է ամբաստանագիրը, որից պարզւում է հետևեալը.

---

1) Ալի Հայդար Միդհատը «Միդհատ փաշայի քաղաքական կեանքը» վերնագրով գրքում առաջ բերելով այդ նկարագրութիւնը, վկայում է, որ դա միակ անկաշառ թերթն է, որ ճշտութեամբ արձանագրել է եղելութիւնը։

Նախկին սուլթան Աբդիւլ Ազիզի գահընկեցութիւնից մի քանի օր յետոյ նրան սպանել են տալիս Դամադ Մահմուդ, Ջէլալէդդին և Նուրի փաշաները։ Նրանք այդ նպատակով վարձում են երկու յատուկ մարդիկ, որոնց բացի խոշոր ռոճիկներից տրւած է իւրաքանչիւրին նաև 100-ական օսմանեան ոսկի իբրև նւէր։ Այդ փաստը երևում է պետական ծախքերի մատեաններից։

Այդ ժամանակներում Միդհատ, Մեհմեդ Ռուշտի, Հիւսէյն Աւնի փաշաները և շէյխ իւլ իսլամ Խայրուլլահ էֆէնդին կազմած են եղել մի յատուկ յանձնաժողով, որ անշուշտ տեղեկութիւն ունեցել է կատարւող եղեռնագործութեան մասին, հետևապէս և մասնակից է եղել։

Հէնց այդ պատճառով յիշեալ բոլոր անձնաւորութիւնները դատապարտւում են իբրև դաւադիրներ ու մարդասպաններ։

Դատապարտեալները իրենց մեղաւոր չեն ճանաչում։ Միդհատ փաշան մի երկար ճառով փորձում է համոզել դատաւորներին, թէ ամբողջ ամբաստանագիրը մի զրպարտութիւն է։ Բայց ճառը ոչ մի հետևանք չէ ունենում։ Դատաւորները շարունակում են իրենց խիստ վերաբերմունքը։

Նրանցից կանխապէս պահանջւած էր, որ ինչ ձևով էլ լինի դատապարտութեան խիստ վճիռ կայացնեն։

Երկօրեայ ձևական հարց ու փորձից յետոյ դատաւորները դուրս են բերում այն եզրակացութիւնը, թէ մեղադրեալներից չորսը անձամբ կատարել են Աբդիւլ Ազիզի սպանութիւնը, հինգը օգնել են նրանց, իսկ մնացածները գրգռել կամ հովանաւորել են եղեռնագործներին։

Կ. Պոլիս, 1—4 Յուլիսի 1881 թ.

Սուլթանը բաւական չը համարելով այդ արտակարգ դատարանին տուած հրահանգները, իր անձնական երկու քարտուղարներին և արդարադատութեան նախարար Ճեվդէթ փաշային նշանակում է իբրև վերահսկիչներ:

Սրանք գաղտնի կերպով ուղղութիւն էին տալիս դատավարութեանը:

Եւ այդպիսի պայմաններում վերջապէս դուրս է բերւում մահւան դատավճիռ ինն մեղադրեալի վերաբերմամբ, իսկ միւսները տաժանակիր աշխատանքների են դատապարտւում...

Կ. Պոլիս 5—11 Յուլիսի 1881 թ.

Դատավարութիւնից անմիջապէս յետոյ սուլթանը իր մօտ է հրաւիրում դատաւորներին և նորից խստիւ հրահանգում նրանց, որ ոչ մի փոփոխութիւն, ոչ մի մեղմացում չը մտցնեն դատավճռի մէջ:

Այդպիսով վերաքննիչ ատեանն էլ հաստատում է մահւան դատավճիռը:

Այդտեղ Միդհատ փաշայի անունից Քեմալ բէյը դատաւորների առաջ արտասանում է Միդհատ փաշայի գրած հետևեալ պաշտպանողական ճառը [1]:

—«Դատաւորնե՛ր, ստոր դատաւորներ, ձեզանից մի բան պէտք է հարցնեմ: Աստուածութեան և իրաւունքի անունով ձեզ պիտի երդւեցնեմ:

Լաւ մտածեցէք: Աստուծոյ շնորհած մեր կեանքին երբ դուք վերջ տալ կամեցաք, երբ մեր դատապարտութեան վճիռն ստորագրեցիք—մի՞թէ ձեր խիղճը մի երկնային բողոք չը բարձրացրեց ձեր դէմ: Երբ ձեր գրգռիչ գրիչները, անիրաւօրէն շաղախելով ան-

[1]) Տես Ալի Հայդար Միդհատի «Միդհատ փաշայի քաղաքական կեանքը» թիւրքերէն գրքի եր. 313—416. Ճառը թիւրքերէն բնագրից քաղւածօրէն թարգմանել է պ. Յ. Շահպազեան:

մեղների արեան մէջ, գրում էին—մի՞թէ ձեր ձեռքերը Բարձրագոյնի կարող ոյժից չը դողդողացին:

Այդ սոսկալի րոպէում, երբ դուք փադիշահի փոխանորդութիւնն էիք կատարում—ձեր սրտում մի թնդիւն, ձեր կրծքում մի յուզում առաջ չեկա՞ւ արդեօք:

Այո՛. այդ ժամանակ ձեր ընտանիքի, ձեր զաւակների առողջական քաղցր վիճակը մարմնացած և մի անհարկու լեզու առած ձեր դէմ կը բարձրանար դառն խօսքեր ասելու:

Այո՛. երբ դատարանում ոսկեզօծ բազկաթոռների վրա նստած ամեն ջանք գործ էիք դնում մահապատիժն արձակելու—այդ ժամանակ ձեր նախահայրերի հոգիները համախմբւած դառնագին ձեզ էին նայում, կսկծալի բառեր էին ձեզ ուղղում...

Ասացէք, պատասխանեցէք, ո՛վ դատաւորներ, այդ երկնային ձայները չը լսեցի՞ք, այդ երկիւղալի տեսիլքը չը տեսա՞ք արդեօք:

Հաւատացած եղէք, ո՛վ աշխարհի անցորդներ. մենք՝ զուլումի ենթարկւածներս մատաղացու ոչխարի նման վիզներս ծռած լսում էինք ձեր դատավճիռը, բայց այդ միևնոյն ժամանակ տեսնում էինք աստուածային արդար դատի դրօշակը, որի տակ հնչում էր ձեր խղճի ձայնը, ձեր սրտի աղաղակը, ձեր նախնիքների դառն խօսքերը...

Դուք դատաւորներ էք: Բայց ի՞նչ է դատաւորը: Նա աստուածային կարող ձեռքն է, որ չը պէտք է դահիճ դառնայ: Նա իրաւունքի պաշտպանն է, որ չըպէտք է դահիճ դառնայ: Նա իրաւունքի պաշտպանն է, որ չը պէտք է թոյլ տայ իրաւունքի դէմ զէնք բարձրացնել: Նա արդարութեան աղբերակն է, որ չը պէտք է զուլումը պաշտամունք դարձնէ: Նա հաստատուն մի

բերդ է, որ հպումով ու բաղխումով չը պէտք է վընասուի։ Նա քարոզչական բեմի պահապանն է, որ չը պէտք է գիտութիւն հրապարակող մունետիկ դառնայ։ Վերջապէս դատաւորը աւերակ հայրենիքի ճարտարապետն է, որ չը պէտք է իր ձեռքը գործադրէ տներ կործանելու, մարդկանց կեանքը խորտակելու համար։ Ո՛չ. նա իր ոյժերը պէտք է ծառայեցնէ զուլումի ու բռնակալութեան գլուխը ջախջախելու համար։

Լսո՞ւմ էք, դատաւորներ, այդ անհարկու խօսքերն էր արտասանում ձեր խիղճը ձեր դէմ, երբ դուք մեր մահուան դատավճիռն էիք ստորագրում...

Իսկ ձեր նախնիքնե՞րը։ Ահա թէ ինչ էին ասում նրանք։

—Դատաւո՛ր, ո՛վ դատաւոր. այդ ի՞նչ իւղոտ փալաս է ձեռքումդ բռնած։ Մահապատժի դատավճի՞ռը։ Ձեռքիդ սրասայր խենչարը ո՞ր զրկւածի կուրծքն ես խրելու։ Կանաչ փսիաթի վրայ կուպրով շաղախւած փոկեր են դրւած. դրանք ո՞ր անմեղի պարանոցն ես գցելու։

Ոտքի ել, դատաւորի կերպարանք ստացած ո՛վ դու չէյթան. սրիր խենչարդ ու ճիրաններդ. թաթախիր փոկերը ոչ թէ կուպրի, այլ թոյնի մէջ։ Ահա ազատութեան նահատակները թև ու կուրծք բացած քո դէմն են կանգնած։ Խրի՛ր խենչարդ նրանց կրծքի մէջ, ճիրաններդ աչքերի մէջ։

Ա՜հ, ինչու դողդողում են ձեռքերդ։ Մի՞թէ վայել է մարդկանց ոչնչացնող գազանին այդ դողդողոցը։

Առա՛ջ անցիր սպանդանոցի մսագործների ժողով. թափիր ազատութեան պաշտպանների արիւնը։ Դրա փոխարէն քեզ սպասում են բարձր աստիճաններ, մեծ ռոճիկներ, պարգևներ։ Մոռացի՛ր, ուրեմն, Աստւածդ. մի՛ հրաժարւիր դահճութիւնից, որպէսզի կարողանաս շքանշաններ, առանձնաշնորհումներ ստանալ»...

Դրանից յետոյ ճառախօսը յիշում է աշխարհի ունայնութեան, հանդերձեալ ահեղ դատաստանի մասին և եզրակացնում.

—«Դատաւորնե՛ր. այս սուտ աշխարհում Դուք խաբւեցիք ստոր շահից, ստորագոյն յոյսերից... դուք մոռացաք մարդկային և դատաւորական առաքինութիւնները, դուք ծունկ չոքեցիք, Աբդիւլ Համիդի նման փադիշահի առաջ, որը այնքա՛ն վնասներ է հասցրել մեր հայրենիքին... Գրաււեցիք նրա խօսքերից, շնորհներից։

Դատաւորնե՛ր, մի կարծէք, թէ մահուան սարսուռի ազդեցութեան տակ ենք արտասանում այս խօսքերը։ Ոչ։ Մենք մեր նահատակութեանը սպասում ենք իբրև գթութեան մի բարիքի։ Մենք՝ հաւատացեալներս նշանակութիւն չենք տալիս, թէ արդեօք շուտ կամ ուշ ենք հեռանալու այս պանդոկ աշխարհից։

Մենք՝ հայրենիքի ֆիդայիներս պարզ տեսնում ենք, թէ ինչպէս մեր երկիրը ամեն կողմից թշնամիների ոտքի տակ է առնւած, թէ ինչպէս նա քար ու քանդ է լինում։

Այդ տեսնելու պատճառով դուք մեզ պատժում էք։ Պատժեցէ՛ք, դատաւորներ, բայց լաւ իմացէք, որ աստւածային արդարութեան հակառակ զէնքի դիմեցիք. չամաչեցիք ձեր խիղճը վաճառելուց։ Եւ այդ ամենը արիք մի բռնակալի ցանկութեանը ծառայելու նպատակով...

Մենք ծառայել ենք մեր հայրենիքին այնպէս, ինչպէս պահանջում է իրաւունքը։ Բայց Եըլըզի կախարդները մեր դէմ սարքեցին այս դատաստանը և այս գռեհիկ ժողովը, որ դատարանի կոչումն ունի, մերժեց մեր բոլոր օրինական իրաւունքների պաշտպանութիւնը, զրկեց մեզ Շէրիի օրէնքներից օգտւելը։

Բայց մեր անմեղութիւնը հաստատուած է աշխարհի առաջ։

Բարձրեալն Աստուած թող խղճայ այն ազգին, որ ձեզ նման դատաւորների ձեռքում է մնացել։ Մենք մեր իրաւունքի պաշտպանութիւնը Աստծուն ենք թողնում։ Եւ ժողովուրդը ապագայում կը վերաքննէ ու կիմանայ մեր արդարութիւնը։

Դահիճնե՛ր, այժմ իրականացրէք նահատակութեան գործը։ Անմեղները ահա զոհւում են հայրենիքի համար»։

Ցնցող տպաւորութիւն է թողնում այդ ճառը, սակայն դատավճիռը մնում է անփոփոխ։

Օրէցօր սպասում են նրա իրականացման։

Բայց դրա հանդէպ կանգնում է եւրօպական կարծիքը և ազդեցիկ դիպլօմատների հակախորհուրդը։

Բոլոր թերթերը, նկարագրելով դատավարութեան արտաքին պայմանները, մեղադրում են սուլթանին, որ նա իր իսկ երկրի օրէնքին հակառակ, կանխակալ ձեւով մահուան դատավճիռ է կայացնել տուել։

Բոլոր դեսպանները, իրենց պետութիւններին հաղորդելով եղելութիւնը, պաշտպանութիւն են խնդրում մահուան դատապարտուածների համար։

Այդ տեսակէտից մեծ եռանդ է ցոյց տալիս մանաւանդ Անգլիան։

Անգլիական դեսպան լօրդ Դըֆէրին նախ իր կողմից և ապա արտաքին գործերի նախարար լօրդ Գրէնվիլի կողմից ներկայանալով սուլթան Աբդիւլ Համիդին խիստ նկատողութիւն է անում կատարուած անարդար դատավարութեան առիթով։

Լօրդ Գրէնվիլի հաղորդագրութեան մէջ ասուած է եղել ի միջի այլոց.

—Եթէ սուլթանը իր անձի ապահովութեան մա-

սին մտածում է, պէտք է յետ կանգնի ապօրինի դատավճիռը գործադրել տալուց...

Այդ միեւնոյն ժամանակ Լօնդօնից օսմանեան դեսպան Մուզուրուս փաշան հեռագրով հաղորդում է Անգլիայում բարձրացած վրդովմունքի մասին և յանուն պետութեան ու ազգի շահերի խնդրում ձեռք քաշել մահապատժի վճռից...

Հասկանալի է, ի հարկէ, որ այդ ամբողջ իրարանցումը առանց պատճառի չէր։

Լօնդօնում բողոքի ձայներ էին հնչեցնում ոչ միայն մասնաւոր անձինք, այլ և պետական գործիչները, պարլամենտի անդամները։

Միդհատեան դատավարութեան մասին բուռն վիճաբանութիւններ են բարձրանում անգլիական պարլամենտում։

Միստըր Մակօնը հարցապնդում է անում և վիճաբանութեան ընթացքում արծարծում է այն միտքը, թէ Միդհատին ու ընկերներին մահուան վճիռ արձակող դատաւորները այնպիսի մարդիկ են, որոնց դատավճռով Եւրոպայում մի շուն անգամ չեն պատժէ։ Դատարանի նախագահը մի լրտեսապետ է, անդամները—նոյնը։ Ամբողջ դատը կազմակերպուած է մի օտար պետութեան դրդմամբ և քաղաքական աստառ ունի։ Հէնց այդ պատճառով էլ Անգլիան պարտաւոր է միջամտել։

Պատգամաւորներից ոմանք պնդում են, թէ դա Թիւրքիայի ներքին գործն է, ուստի արտաքին ոչ մի միջամտութեան տեղիք չը կայ։

Բայց այդ ժամանակ Գլադստօնը արտասանում է իր կրակոտ ճառը և հարցին բոլորովին այլ ուղղութիւն տալիս։

Նա պարզում է, որ Անգլիան թէև ձևականօրէն

իրաւունք չունի Թիւրքիայի ներքին գործերին միջամտելու, սակայն իրականապէս նա պարտաւոր է այդ անել յանուն արդարութեան ու մարդասիրութեան։

—«Որպէսզի հանգստանայ յուզմունքը թէ Եւրոպայում և թէ Կ. Պօլսում, ասում է նա [1]), որպէս զի խաղաղուի հասարակական կարծիքը—մենք պէտք է յանձն առնենք Օսմանեան երկրի թագաւորին արդարութեան ճանապարհը ցոյց տալ և հարթել այդ ճանապարհը։

Յուլիսի 4-ին (1881 թ.) լօրդ Դըֆերինին հեռագրով գաղտնի հրահանգ է ուղարկւած, որպէսզի նա Կ. Պօլսում ազդեցութիւն գործ դնելով միջամտէ և, կարծում եմ, նա իր պարտականութիւնը ամենայն ճարտարութեամբ ու նրբութեամբ կատարել է...

Ամենևին կասկած չը կայ, որ մեր գործունէութեան այս եղանակը ոչ միայն եւրոպական լուսաւոր մտքերը պէտք է գոհացնէ, այլ և օսմանեան երկրի փրկութիւնն ու շահը պէտք է ապահովցնէ»...

Այդպիսով պարլամենտը ընդունում է Անգլիայի միջամտութեան անհրաժեշտութիւնը։

Թէ այդ և թէ արտաքին գործերի նախարարի ու Կ. Պօլսի դեսպանի դիմումները հարկաւոր ազդեցութիւնն անում են սուլթանի վրա։

Բացի դրանից կար նաև մի ուրիշ կարևոր հանգամանք, որ նոյնպէս որոշ դեր խաղալու էր։ Վերաքննիչ ատեանը թէև հաստատում է դատարանի վճիռը փաշաների մահապատժի նկատմամբ, սակայն շերիական օրէնքների վճիռը գործադրելու պաշտօն ունեցող իւլեմաները չեն ընդունում [2]), թէ դատավճիռը շէրիի համաձայն է կատարւած։ Հրաժարւում է արտաքոյ կարգի

[1]) Ibid եր. 403—410.

[2]) Ibid, եր. 397.

մի ժողով, որտեղ շատ ազդեցիկ անձեր բացարձակօրէն դէմ են կանգնում մահապատժի գործադրութեան։

Ահա այդ ամենի ազդեցութեան տակ սուլթանը փոխել է տալիս դատավճիռը և մահւան փոխարէն աքսոր ուղարկում մեղադրեալներին։

Արաբիայի հեռաւոր Թայիֆ քաղաքն են ընտրում իբրև աքսորավայր։

Միդհատ, Դամատ-Մահմուդ փաշաները և շէյխ ուլ իսլամ Խայրուլլահ էֆենդին բանտարկւում են այդտեղի զօրանոցում ամենախիստ հսկողութեան տակ։

Սակայն Եըլդըզը միայն դրանով չէ բաւականանում։ Միդհատ փաշայի անունը նրա համար դարձել էր ազատութեան ու սահմանադրութեան հոմանիշ և քանի որ այս վերջինները թաղել էր արդէն, ուստի չէր ուզում կենդանի տեսնել և Միդհատին։

Մեծ հայրենասէրի անունը հեռու աքսորավայրից էլ սարսափ է ազդում Աբդուլ Համիդի վրա, ուստի և արտակարգ միջոցներ են ձեռնարկւում անակնկալների առաջին առնելու համար։

Ահա թէ այդ մասին ինչ է պատմում Բեդաֆ Սիւրէյյա էֆենդին Կ. Պօլսում թիւրքերէն լեզուով հրատարակած իր գրքում [1]).

—«Մինչև այն ատեն Մէքքէն Պօլիս հեռագիր չկար, բայց Միտհաթ փաշա և իր ընկերները Տաիֆ աքսորւելուն վրայ, շուտով հեռագիր հաստատւեցաւ, որպէս զի կարելի ըլլար օրն օրին տեղեկութիւն ստանալ իրենց վրայ, և սարին մարդիկ, գռեհիկ ոճրագործներ պահապան կարգւեցան Միտհաթ փաշայի և իր ընկերներուն վրայ։ Բայց անելի մտածում մը սկսաւ խոռ-

[1]) «Բիւզանդիոն» 1908 թ. № 3684-3685։ Այդ մասին տես նաև «Արևելք» 1908 թ. № 6878 և «Neue Freie Presse» Օգոստոս։

վել Պոլսոյ մէջ բռնապետական վարչութեան պարագլուխներուն միտքերը։

—Հիմա եթէ Միդհատ փաշա յաջողէր Եւրոպա փախչի՜լ։

Այս մտածումը կ՚խենդեցնէր զիրենք, ու արգելք կ՚հանդիսանար իրենց՝ բացէ իբաց գործադրելու իրենց բռնակալութեան գաղափարները։

Քանի՛ ի կենդանութեան էր Օսմանեան Սահմանադրութեան հայրը իր մեծ ժողովրդականութեամբ, միշտ վտանգ մը գոյութիւն ունէր բռնակալական վարչութեան գերակատարներուն համար։ Հետեւաբար, միջոց մը միայն գոյութիւն ունէր ամէն մղձաւանջէ ազատելու համար – մէջտեղէն վերցնել Միտհաթ փաշան, և անոր աքսորական ընկերը, Տամատ Մահմուտ փաշան։

Բայց մեծ խնդիր էր Միտհաթ փաշան մէջտեղէն վերցնելը, որովհետև անոր ետևը կային բոլոր Օսմանցի Ազատականներն և խոշոր Անգլիան։ Երկու տարի շարունակ ծրագիրներ կազմեցան Միտհաթ փաշան սպաննելու եղանակ մը գտնելու համար։

Փէտայի մը ղրկեցին Թաիֆ, որպէսզի սպաննէ Միտհաթ փաշան, բայց վախցան այս մտադրութիւնը գործադրել։

Յետոյ մտածեցին թունաւորել Միտհաթ փաշան և ընկերը, բայց չյաջողեցան, և այսպէս երկու տարի անցաւ վարանքի մէջ։

Նոյն միջոցներուն ծանր հիւանդութիւն մ՚ունեցաւ Միտհաթ փաշա, քաղցկեղ հանեց։ Պոլսոյ մէջ չափ ու սահման չունէր բռնապետական վարչութեան բոլոր գերակատարներուն ցնծութիւնը։ Անտարակոյս, չպիտի ազատէր Միտհաթ փաշա այս ծանր հիւանդութենէն, և խնդիրն ինքնին պիտի լուծէր։ Բժիշկ ուղե-

ցաւ փաշան դարմանելու համար։ Դիտմամբ ամենէն անճարակ բժիշկը ղրկեցաւ, որպէսզի Սահմանադրութեան հեղինակն անպատճառ զոհ երթար անբուժելի հիւանդութեան։ Տեսնելով ղրկուած բժիշկին անճարակութիւնը, կարող բժիշկ մը ուզեցաւ, բայց պատասխան իսկ չտրուեցաւ այս խնդրանքին։ Սակայն Աստուած այլապէս տնօրինեց ամեն ինչ, և այնպէս եղաւ որ Միտհատ փաշա կատարելապէս ապաքինեցաւ իր հիւանդութենէն, որով բռնակալութեան ջատագովները դարձեալ մեծ տրտմութեան մատնեցան, իրենց ակնկալութեան ի դերև ելլելը տեսնելով։ Ուստի վճռաբար որոշեցին մէջտեղէն վերցնել Սահմանադրութեան հեղինակին գոյութիւնը, ինչ որ ալ ըլլար։

Սպաննման գործն ի գլուխ հանելու համար Թաիֆ ղրկեցան գնդ. Լութֆի և հազարապետ Պէքիր։ Այս վերջինը նախ փորձեց թունաւորել աքսորականները, անոնց կաթին թոյն խառնելով, բայց չյաջողեցաւ։ Կերակուրներուն մէջ թոյն դրուեցաւ, բայց դարձեալ չյաջողեցան իրենց այս դժոխային մտածման մէջ։ Ուզեցին փաշաներուն անձնական ծառաները ձեռք առնել, բայց անոնք մերժեցին գործակցիլ մտադրուած ահաւոր ոճիրին. յայտարարելով թէ Աստուծմէ կ՚վախենան։

Միտհաթ փաշա և Տամատ Մահմուտ փաշա հասկընալով, որ զիրենք թունաւորելու դիտում կայ, սըկսան կաթ և խահուէ չգործածել։ Ըստ կարելւոյն շատկեկ մարդոցմով կ՚պառկէին գիշերները մէկ սենեակի մէջ, և մէյ մէկ հոգի կարգաւ, գիշերները, հսկողութիւն կ՚կատարէր. բայց շարունակ ծածկագիր հեռագիր կ՚տեղար Պոլսէն և այս հեռագիրները փութոյ պնդութեամբ։ Հիճազի կուսակալին կողմէ կ՚հաղորդուէին աքսորականներն սպաննելու յատկացեալ մարդոց»։

Վերջապէս վրայ է հասնում մահաբեր օրը (1883 թւականի ապրիլի 2-ը), ծպտեալ դահիճները նախ և առաջ խիստ հրամանով զատում են Միդհատ և Տամատ Մահմուտ փաշաներին միմեանցից, որպէս զի աւելի հեշտ լինի ոճիրի գործադրութիւնը։

«Նոյն օրը զօրանոցին մէջ, շարունակում է Սիւբէյլա էֆէնդին, կարգ մը պատրաստութիւններ տեղի կ'ունենային։ Գիշերուան ժամը 4-ին՝ գւմարտակ մը, հարիւրապետի մը և երեք տեղակալի հրամանատարութեամբ յարկաբաժնին մէջ զետեղւեցաւ։ Բանտարկեալներուն յատուկ յարկաբաժնին արտաքին մասն ալ յիսունէ աւելի զինւորներով պաշարեցին։ Այն պահուն մարդասպան գնդապետ Լութֆի և հազարապետ Պէքիր զօրանոցին դրան առջև ցած ձայնով կ'խօսակցէին։ Ժամը 5-ին մօտ հազարապետ Պէքիրի հրամանով Մահմուտ փաշայի սպասաւորն արթնցուցին և ուրիշ սենեակ մը փոխադրեցին։ Միտհատ փաշայի և Տամատ Մահմուտ փաշայի սենեակներուն դուռներուն առջև զոյգ զոյգ զինւոր պահակներ դրւեցան։ Դրան առջև որոշւեցան նաև այն զինւորներն, որ Ազատութեան նահատակ այդ փաշաները պիտի խեղդէին։ Գիշերւան ժամը 6-ն էր, լուսինը Թաիֆի հորիզոնին մօտեցած էր, գոգցես կ'փախչէր և չէր ուզեր տեսնել այն քըստմնելի ոճիրն որ քիչ մը վերջ տեղի պիտի ունենար։ Միտհաթ փաշա և Տամատ Մահմուտ փաշա անհոգ կը քնանային, որովհետև պառկելու առեն ամէն ինչ Աստուծոյ արդարութեան յանձնած էին։Հրամանը տրւեցաւ, ոճրագործ երկու խումբերն յարձակելով սենեակներուն վրայ, դուռները խորտակեցին։ Միտհաթ փաշայի քով պառկող Ալի պէյը դուրս հանեցին. Միտհաթ փաշա աղմուկէն արթնցաւ և անմիջապէս խնդրոյն վերահասու եղաւ, բայց և այնպէս նմանը դուն ուրեք տես-

նւած մեծ համբերատարութեամբ և պաղարիւնութեամբ անկողնէն ելաւ, ազդեցիկ ձայնով մը քանի մը նւիրական պարբերութիւններ կարդալով, ըսաւ որ Աստուծմէ վախենան։

Տեսնելով որ Հայրենիքի պաշտպան անմեղ զինւորներն այսպէս բռնակալներու ոճիրներուն գործիք կը դառնային, այս աստիճան ցածոգի բռնապետութեան մը ձեռքը խաղալիք դարձող իր Ազգին այս վիճակին վրայ սկսաւ խօսիլ։

Ոճրագործներն ամենևին կարևորութիւն չը տւին ոչ վախճանելոյն սպիտակ մօրուքին, ոչ անոր յարգելի դէմքին, ոչ անոր ազդու խօսքերուն և ոչ այն նւիրական պարբերութիւններուն, զորս վախճանեալ փաշան իրենց կրկնեց և անմիջապէս յարձակելով վզին փաթթւեցան ու... խեղդեցին։

Խեղդելով զինքը մարտիրոսացուցին և վախճանեալ փաշան փոքր ինքնապաշտպանութիւն մը իսկ չըրաւ։

Իսկ Տամատ Մահմուդ փաշան դրան խորտակելու ձայնէն արթննալով, անմիջապէս անկողնէն ցատկեց և ինքզինքը պաշտպանել սկսաւ։ Երեք չորս վայրկեան ոճրագործներուն հետ պայքարեցաւ. բայց տեսնելով որ պիտի ընկճի, ձայնին ամբողջ ուժովը սկսաւ պոռալ. «Ո՜վ Աստուած (Աման Ալլահ)»։ Այս կոչը քանի մը անգամ կրկնւեցաւ։ Վերջապէս օճառոտ չւանն անոր ալ վիզը փաթթեցին և մարտիրոսացուցին։

Ազատութեան այդ նահատակներուն փա՜ռք, և սպաննիչներուն անէ՜ծք, հազար անէծք։

Երկու նահատակ փաշաներուն մարմիններն անմիջապէս նոյն զօրանոցն հիւանդանոցին լւացարանը տարին և կէս գիշերին գերեզմանները փորելով պա-

ըխպէն դուրս զինուորական գերեզմաննոցի մէջ թաղեցին։

Այդ նուիրական մարմինները Շէրիի տրամադրութեան համեմատ չլուացուեցան անգամ, որովհետև երբ իրենց մարմիններն հիւանդանոցի լուացարանը զետեղուեցան, վեց զինւոր ալ պահակ սպասեցին։ Ժամուկէս՝ վերջը դիակներու լուացումին յատուկ տախտակներէն մին շարժիլ սկսաւ. պահակները դողացին և ահա յանկարծ մեռեալներէն մին ոտքի ելաւ. պահակները պոռալով փախան։ Այդ ողջնցող մարմինը Տամատ Մահմուտ փաշան էր, որ կատարելապէս խեղդուած չէր և արեան շրջանը վերսկսելով ողջնցեր էր։ Տամատ Մահմուտ փաշա իր վերակենդանութենէն վերջ քանի մը քայլ առաւ և մարեցաւ ինկաւ։ Անմիջապէս, գնդապետը, հազարապետն և քսան զինւոր վազեցին և անկենդան մարմինին վրայ յարձակելով դարձեալ խեղդեցին։

Առաւօտուն կանուխ Մէքքէէն Կ. Պոլիս քաշուող ծածկագիր հեռագիր մը ոճիրները կը տեղեկագրէր, բայց կասկածն ու վախն ամբողջովին չը փարատեցան։

Լուր ելաւ թէ Միդհատ փաշա Եւրոպա փախեր է. բռնակալներն ահաբեկեցան... և վերջապէս... որոշեցին որ Միդհատ փաշայի գլուխը բերել տան»։

Ոճրագործութիւնից հազիւ մի քանի շաբաթ անցած՝ Թայիֆ է գալիս սուլթանի թիկնապահ սպաներից մէկը։ Նա քանդել է տալիս Միդհատի գերեզմանը և հրամայում դիակը գլխատել։

Հրամանը կատարւում է։ 1883 թ. Յունիս ամսին Հէջազի վալի Օսման Նուրի փաշայի քարտուղարը գալիս է Կ. Պոլիս և Ըլդըզ տանում իր հետ բերած մի արկղ՝ այսպիսի մակագրութեամբ.

—«Ճապոնական զարդարանքներ փղոսկրից։ Ն. Կ. Մ. Սուլթանի համար»։

Արկղի մէջ Միդհատ փաշայի գլուխն էր [1]։

Ահա այդպիսի վախճանի արժանացաւ Օսմանեան սահմանադրութեան նախահայրը, երիտասարդ թիւրքերի ամենաշնորհալի պարագլուխը՝ Միդհատ փաշան։

---

1) «Bevue des Deus Mondes» 1908 թ.

ԺԲ. ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Պարլամենտի բացումը.—Սուլթանի պատգամագիրը.—Առաջին նըստաշրջանի զբաղմունքները՝ ազգային իրաւահաւասարութեան, փոքրամասնութեան իրաւունքի, լեզուների, պատերազմական ծախքի ու պաշտօնեաների ռոճիկի հարցերը.—Հայկական հարցը.—Օրինագծեր. Երկրորդ նստաշրջան.—Սուլթանի ճառը.—Բողոքներ.—Հարցապնդում պատերազմի մասին.—Պարլամենտը փակւած:

—

Ի՞նչ եղաւ սահմանադրութեան բաղդը: Սուլթանը գործի ասպարէզից հեռացնելով Միդհատին ու նրա գաղափարակիցներին, այնուամենայնիւ հարկաւոր է համարում պարլամենտը գումարել:

Ամենակարճ ժամանակամիջոցում կատարւում են ընտրութիւնները և 1877 թ. սկզբին գումարւում է Օսմանեան պարլամենտը 237 պատգամաւորների մասնակցութեամբ, որոնցից 13-ը հայեր էին, այն է [1]:

Վիչէն էֆ. Հօլաս (Ղալաթիոյ և Թոփանէի շըրջանակէն ընտրւած) Ստեփան փաշա Ասլանեան (Սկիւտար՝ Իճատիյէ, Սէլամսըզ և Եէնիմահալլէէն): Սէրվիչէն էֆ. որ յետոյ Ծերակուտական եղաւ: Յովհաննէս էֆ. Ալլահվէրտի, Սեպուհ պէյ Մաքսուտ, Սիմոն պէյ Մաքսուտ, Ալեքսան էֆ. Սաքայեան, Յակոբ էֆ. Գազազեան (յետոյ փաշա), Ռուբէն էֆ., Մանուկ էֆ. Խարաճեան (Կարնոյ երեսփոխան). Համազասպ էֆ. Պալյարեան (Կարնոյ երեսփոխան), Յակոբ էֆ. Շահինեան (Սեբաստիոյ երեսփ.) Յակոբ էֆ. Թիւֆենկճեան (Ատանայի երեսփոխան):

Առհասարակ սուլթան Համիդը զարմանալի հե-

[1]) «Սուրհանդակ» 1908 թ. № 38.

ռատեսութիւն ու ճարպիկութիւն է արտայայտել իր իշխանութեան ամբողջ ընթացքում: Րոպէի պահանջը ըմբռնել և օգտւել սեփական ձգտումներն առաջ մղելու համար—ահա նրա նշանաբանը:

Դրանով է ղեկավարւում նա, ստորագրելով սահմանադրութեան Խատտին:

Դրանով էր ղեկավարւում նաև պարլամենտի գումարումը շտապեցնելով:

Այն ժամանակ, երբ բուլղարական ապստամբութիւնն իր լարման գագաթնակէտին էր հասել, երբ արեան մթնոլորտում ահեղ պատերազմի ուրւականն էր երևում, երբ վերջապէս եւրոպական դիպլոմատիան անվերջ պահանջների ու առաջարկների ճանապարհի վրայ էր կանգնած յանուն քրիստոնեաների պաշտպանութեան—ահա այդ ժամանակ կրկնակի նշանակութիւն կարող էր ունենալ ժողովրդական ոգևորութիւնը Թիւրքիայում և հայրենասիրական զգացմունքների բորբոքումը: Իսկ դրա ամենալաւ միջոցն էր պարլամենտը, որտեղ տարբեր վայրերից ու խաւերից ընտրւած ներկայացուցիչները հնարաւորութիւն կունենային հրապարակային ճառեր արտասանել, զոհաբերութեան կոչեր անել: Մի խօսքով արտաքին թշնամիների դէմ ժողովրդին ոտքի հանելու լաւագոյն գործօնն էր դա:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Պարլամենտը անհրաժեշտ էր նաև իբրև մի կենդանի ապացոյց, թէ Թիւրքիան արդէն սահմանադրական երկիր է, թէ աւելի քան անտեղի է որև է պետութեան միջամտութիւնը այդպիսի մի երկրի ներքին գործերին:

Ահա հէնց այդ հանգամանքներն աչքի առաջ ունենալով, սուլթան Աբդիւլ Համիդը Միդհատ փաշային պաշտօնանկ անելուց յետոյ էլ առանց տատանւելու բաց է անում պարլամենտը, նախապէս հաւատացած

լինելով, որ նա իր կամակատար գործիքն է լինելու։

Բազմաթ օրը Կ. Պոլսում նորից ժողովրդական հանդէսներ են տեղի ունենում թնդանօթաձգութեամբ հանդերձ։

Կարդացւում է սուլթանի հետեւեալ մեծադղորդ պատգամագիրը [1])։

«Տէարք ծերակուտանք.

Տէարք երեսփոխանք

Ամենամեծ գոհունակութեամբ կը բանամ կայսրութեան խորհրդարանն՝ որ այսօր առաջին անգամ կը գումարի...

Այս սահմանադրութեամբ իմ դիտաւորութիւնս ոչ այնչափ ժողովուրդները վարչական գործողութեանց ներկայ գտնւելու հրաւիրելն էր, որչափ զօրաւոր գործիք մը հայթայթել վարչական բարենորոգման և զեղծմանց ու քմահաճ գործոց բարձման։

Սահմանադրութիւնը, իրեն յարակից օգուտներէն զատ՝ ժողովրդոցս մէջ եղբայրութեան ու միութեան հիմքերը ձգելու և այնպէս ամենուն հաւասարապէս զարգացման ճամբայ բանալու սահմանուած է։

Իմ հօյակապ նախնիք-մեծամեծ յաղթութիւններ տարին և այս ընդարձակ կայսրութեան մէջ բնակիչ բազմազան ժողովուրդներ իրենց գաւազանին տակ գումարեցին։

Եւ սակայն կը մնար այդ կրօնքով ու ազգութեամբ իրարմէ տարբեր ժողովուրդները միեւնոյն օրինաց ներքև և միեւնոյն կենսավառութեան զգացմամբ միաբանել։

Աստուածային նախախնամութիւնը իր անհուն ողորմութեամբ կամեցաւ որ այս գործն ալ կատարուած գտնէ։

Այսուհետեւ իմ ամեն հպատակներս միեւնոյն հայ-

[1]) Տես «Մասիս» 1877 թ. № 1951—52.

րենեաց որդիք ըլլալով և միեւնոյն օրինաց ներքև ապրելով՝ միեւնոյն անունը պիտի կրեն – այն բարձր անունը, զոր իմ նախնիքս կրած են 600 տարիէ ի վեր և որ փառաց և մեծութեան այնչափ յիշատակներ թողած է պատմութեան մէջ։ Օսմանեան անունն, որ մինչև հիմա զօրութեան և տիրապետութեան գաղափարը կանձնաւորէր, հաւատացած եմ, որ ապագային մէջ իմ ամեն հպատակացս միացած շահերն անբաժանելի պահելու խորհրդանիշ մը պիտի ըլլայ։

Ահա այս սկզբունքներէն և այս դիտաւորութիւններէն ներշնչւելով գծեցի այս ճամբան, որոյ մէջ մտադիր եմ յարատևել և հիմա կը սպասեմ, որ ձեր ազգու և հանճարեղ գործակցութեամբը կարող ըլլամ քաղել այն արդիւնքները, զորս իրաւունք ունինք յուսալ արդարութեան վրայ հիմնեալ սահմանադրութենէ մը։

Հարկաւոր և անհրաժեշտ դատեցի իմ հպատակաց ազատութիւն ու հաւասարութիւնն ապահովել, քմահաճ գրութեանը վերջ տալ, օրինաց պատասխանատւութիւն և գործադրութիւն և գործոց վարչութիւն երկրին կամացն և հսկողութեան ներքև դնել։ Միով բանիւ մեր վարչական դրութեան կանոնները սահմանադրական և որոշողական սկզբան հետ կապել։

Այս մասին ունեցած ամենասիրելի բաղձանքս իրացնելու համար՝ խորհրդարան մը գումարել որոշեցի ծերակոյտի և երեսփոխանաց ժողովներէ բաղկացեալ։

Ձեզ կը վերաբերի հիմա ձեր հայրենասիրութեան յանձնուած օրէնսդրական պարտականութիւններն ուղղութեամբ և հաւատարմութեամբ կատարել։ Այդ պաշտօնին մէջ բնաւ որև է անձնական նկատմունք պէտք չէ ազդեցութիւն ընեն ձեր վրայ, այլ միայն պետութեան և երկրին փրկութիւն և բարեկեցութիւնը նպա-

տակ պիտի ունենանք ձեր աշխատութեանց հաւատարիմ գործադրութեան մէջ։ Մեզ այսօր պէտք եղած բարւոքումներին և ամէն կողմէ սպասեալ վարչական բարենորոգմունք ամենամեծ կարևորութիւն ունին։ Ասոնց աստիճանաբար գործադրութիւնը ձեր մէջ տիրելիք համաձայնութիւնէն կախում ունի։ Պետական խորհուրդը միւս կողմէ ձեզ ներկայացնելիք օրինաց ծրագրեր պատրաստելու կը զբաղի։

Ներկայ շրջաններու մէջ ձեզ պիտի ներկայանան ձեր ժողովին ներքին կանոնադրութեան, ընտրական օրինաց, վիլայէթներու և աւաններու վարչութեան, թաղապետական օրինաց, քաղաքային դատավարութեան, դատական ատենից վերակազմութեան, դատաւորաց առաջացման կամ հրաժարման, ընդհանրապէս ամէն պաշտօնատարաց իրաւասութեան և հրաժարեցուցման, լրագրութեան, համարակալութեան դիւանի և վերջապէս բիւջէի վերաբերեալ օրինաց ծրագրերը։

Կը փափագիմ, որ այս ամէն օրէնքներն հեզահետէ քննուին, վճռուին և որոշուին»...

Ի՞նչ էր ներկայացնում այդ ծրագրով աշխատելու կոչուած օսմանեան պարլամենտը իր կազմով։—Բաւական անգոյն մի զանգուած։ Քանի որ այդ ժամանակ դասակարգային շերտաւորում Թիւրքիայում դեռ բոլորովին ձևաւորուած չէր, քանի որ անսահման բռնակալութեան շնորհիւ որոշ ուղղութիւններ ու կազմակերպուած կուսակցութիւններ չը կային հրապարակի վրայ և երեսփոխանական ընտրութիւններն էլ կատարուել էին շատ հապճեպ կերպով, ուստի ընտրող ժողովուրդը հնարաւորութիւն չէր ունեցել հրահանգներ տալու իր ներկայացուցիչներին կամ գոնէ ուշադրութեան առնելու նրանց աշխարհայեցողութիւնը։

Ընտրուել էին գիրք ու անուն ունեցող անձեր,

կառավարական պաշտօնեաներ կամ մասամբ նրանց հետ սերտ բարեկամութիւն ունեցող հարուստներ։

Շատ բնական է, որ այդպիսի կազմ ունեցող պարլամենտում չէին կարող իսկոյն առաջ գալ պատգամաւորների համախմբումներ՝ այս կամ այն ուղղութեան շուրջը։ Հարցերի քննութեան ժամանակ նկատելի էր մի բաժանում՝ մահմեդականներ և ոչ մահմեդականներ՝ քրիստոնեաներ։ Երբեմն միայն նշմարւում էր նաև մի այլ բաժանում՝ առաջադիմականներ և պահպանողականներ։ Պարզ է, ի հարկէ, որ ժամանակի ընթացքում կը կազմակերպուէին որոշ հոսանքներ որոշ ծրագիրներով ու գործելակերպով, սակայն պարլամենտը դեռ չը ծաղկած՝ թառամեց-ոչնչացաւ և դրանով անհնարին դարձրեց և հոսանքների առաջանալը.

Պարլամենտի առաջին նստաշրջանում (1877 թ.) քննուած հարցերից կարևորներն էին հետևեալները.

1) Վերաբերմունք դէպի օտար պետութիւնները[1].

Թէ սուլթանի պատգամագրին ի պատասխան պատրաստուած ուղերձի քննութեան ժամանակ և թէ այլ առիթով շօշափելով այդ հարցը պատգամաւորական ժողովը միաձայնութեամբ յայտնում է, թէ «կը մերժէ և չի ընդունէր օտարաց միջամտութիւնը այն պարզ պատճառաւ, որ մէկն իրաւունք չունի ուրիշին տունը մտնելու»։

Երեսփոխանների վերաբերմունքը դէպի օտար պետութիւնները աւելի որոշւում է այն ժամանակ, երբ քննութեան է դրւում նոր բռնկած ռուս-թիւրքական պատերազմի հարցը։

Կ. Պօլսի երեսփոխան Հասան Ֆեհմի էֆէնդին «երկար ատենաբանութիւն մ' ընելով պատմական յիշատակութեամբ հաստատել ջանաց, թէ Ռուսիոյ պա-

[1]) Տես «Մասիս» 1877 թ. № 1954 և 1964.

տերազմ բանալու նպատակն ոչ արեւելեան քրիստոնեաները պաշտպանելն է, ոչ ալ անոնց վիճակը բարուքելը, այլ Թիւրքիոյ երկրին տիրելը…

Հալէպի երեսփոխան Խարաճեան Մանուկ էֆէնդին բեմ ելաւ եւ քրիստոնէից պաշտպանութիւն ընելու ռուսական պատրուակն հերքեց, յայտարարելով, որ իր ազգակցաց եւ մասնաւորապէս զինքն ընտրող գաւառին հայ ժողովրդեան կողմէ թէ օտարի պաշտպանութեան բնաւ պէտք չունին, այլ գոհ են իրենց ճակատագրէն եւ թէ պատրաստ են ամէն զոհողութիւնը ընել՝ իրենց երկիրն ու վեհապետը Ռուսիոյ յարձակման դէմ պաշտպանելու համար։

Մաքսուտեան Սեպուհ էֆէնդին հաստատեց Մանուկ էֆէնդիի ըսածն եւ առաջարկեց, որ կառավարութեան օրինաց ծրագիր մը շինէ, որպէս զի քրիստոնեայք կարենան աւելի ազդուապէս ծառայել տէրութեան։

Սիւրիոյ յոյն եւ մարօնի երեսփոխանք Նօֆէլ եւ Նաքաշ էֆէնդիները աւելի եւս ազդուութեամբ հաստատեցին Մանուկ եւ Սեպուհ էֆէնդիներուն յայտարարութիւնը ի մեծ գոհունակութիւն իսլամ երեսփոխանաց, որոնցմէ Մուստաֆա էֆէնդին բեմ ելնելով շնորհակալութիւն յայտնեց քրիստոնեայ երեսփոխանաց։

Կարնոյ երեսփոխան Համազասպ էֆ. Պալլարեան յայտնեց, թէ ինքը այնքան կրնայ ըսել, թէ հայերն իրենց իշխանութիւնը կորսնցնելէ ետեւ, 500 տարիէ ի վեր իրենց կրօնքը, լեզուն եւ ազգութիւնը պահած են օսմանեան իշխանութեան ներքեւ եւ ասոնց ապացոյց բերաւ ասկից 48 տարի առաջ 100,000 կարնեցւոց ի Ռուսիա գաղթական երթալն եւ մեծ մասամբ վերստին ի Կարին դառնալը, որոնց մէջ կը գտնուէին իր ծնողք։ Ասպա կաւելէ երեսփոխանական ժողովին

թէ Կարնոյ հայերն երկրին պաշտպանութեան համար զէնք առած եւ իրենց իսլամ եղբարց հետ ազգային զինուորաց վաշտեր կազմած են, միանգամայն նիւթական օգնութիւն տուած են։

Այս խօսքերն հաստատեց նոյնպէս Կարնոյ երեսփոխան Մանուկ էֆ. Խարաճեան աւելցնելով, թէ մինչդեռ երեսփոխանաց շատերը նոր կը զգան երկրին պաշտպանութեան հարկը, կարնեցիք արդէն տարիէ մը ի վեր զգալով, հայ իսլամ եղբայրք ի միասին զինուորած են։ Ինք ալ, որ տէրութեան պաշտօնեայ մը է, իր ազգակցաց օրինակ եւ քաջալերութիւն տալու համար առհասարակ զինուորաց կարգը մտեր է։

Գօնիայի, Ռոդոսի յոյն երեսփոխանք եւ Ադրիանուպօլսի հայ երեսփոխան Ռուբէն էֆ. նմանապէս յայտարարեցին, թէ իրենց ներկայացուցած հայ եւ յոյն ժողովուրդք չեն ընդունիր երբէք օտարին պաշտպանութիւն եւ թէ ամէնքն ալ պատրաստ են յարձակումը վանելու համար ամէն զոհողութիւն ընելու։

Այս յայտարարութեանց ի պատասխան քանի մի իսլամ երեսփոխանք հետզհետէ բեմ ելնելով ջերմ շնորհակալութիւն յայտնեցին քրիստոնեայ երեսփոխանաց, մասնաւորապէս Կարնոյ երեսփոխան Մէհմէդ էֆէնդին հաստատեց թէ Կարնոյ գաւառին քրիստոնեայ ժողովուրդներն իսլամաց հետ միեւնոյն հայրենասիրական զգացմամբ վառեալ են։

Վերջում Սիրոյ երեսփոխան Նաքաշ էֆ. առաջարկեց, որ այս խնդրոյն առթիւ խօսուած ատենաբանութիւնք ամէն լեզուով թարգմանուին եւ հրատարակուին, որպէսզի աշխարհ ամենայն իմանայ քրիստոնէից կարծիքն եւ Ռուսիոյ պատրուակին արժէքը»…

Հասկանալի է, ի հարկէ, որ կառավարութիւնը օգտուեց դրանից եւ ճառերը հրատարակեց, դրանով դիպլօմատիական մի նոր զէնք աւելացնելով իր ձեռքում։

2) Ազգային իրաւահաւասարութեան հարցերը յատուկ քննութեան առարկայ չեն դառնում, թէև շօշափւում են թեթևակի կերպով [1]: Այսպէս օրինակ, ժողովը ընդունում է, որ քրիստոնեայ ազգութիւններն էլ մահմեդականների հետ համահաւասար ազատ պէտք է լինեն Բէդէլ Էսկէրիէ տուրքից և զինուորական ծառայութեան իրաւունք ունենան, բայց քանի որ այդ տարւայ տուրքն արդէն վճարուած էր, ուստի որոշւում է հետևեալ տարուանից իրականացնել այդ բարեփոխութիւնը:

Գաւառական վարչութեան վերաբերեալ կանոնադրութեան քննութեան ժամանակ թիւրք երեսփոխանները հայերի հետ միացած պաշտպան են հանդիսանում ազգային փոքրամասնութեան իրաւունքներին հետևեալ ձևով:

Յիշեալ կանոնադրութեան 9-րորդ յօդուածը թելադրում է, որ գաւառական վարչական ժողովների անդամներից կէսը մահմեդականներ լինեն, իսկ միւս կէսը՝ ոչ մահմեդական:

Այդ առիթով բողոքում են յոյն երեսփոխանները, պնդելով թէ «իսլամ» և «ոչ իսլամ» բառերի գործածութիւնը դէմ է սահմանադրութեան, որը այդ խտրութիւնը վերացնելով տէրութեան բոլոր հպատակներին հաւասարապէս օսմանցի կանուանէ:

Սակայն հայ և թիւրք երեսփոխանները բացատրում են, որ բառեր ջնջելով չէ կարելի ջնջել ազգերի ու կրօնների տարբերութիւնը: Այո, բոլորը պէտք է հաւասար լինեն օրէնքի առաջ անխտիր կերպով, բայց այդ հաւասարութիւնը չը պէտք է ջնջէ ինքնուրոյնութիւնը: Եթէ վերացւի կանոնադրութեան 9-րորդ յօդուածը, այդ դէպքում շատ գաւառներում և մանաւանդ

[1]) Տես «Մասիս» 1877 թ. № 1956, 1958 և 1986

Անատօլիայում վարչական ժողովների մեծ մասը բաղկացած կը լինի միայն մահմեդականներից, որովհետև դրանք մեծամասնութիւն են կազմում: Այդպիսով կը տուժեն գլխաւորապէս հայերը: Բայց որպէսզի մեծամասնութեան առաջ չը ոչնչանայ փոքրամասնութեան իրաւունքը, անհրաժեշտ է օրէնքի մէջ պարզ, որոշ կէտեր դնել՝ փոքրամասնութեան իրաւունքները ապահովելու համար: Երեսփոխանական ժողովը համաձայնում է այդ եզրակացութեան հետ և 9-րորդ յօդուածը անփոփոխ թողնում:

Լեզուների իրաւահաւասարութեան վերաբերմամբ էլ մի փոքրիկ միջադէպ է տեղի ունենում, որ արժէ յիշատակել հէնց այնպէս, ինչպէս արձանագրուած էր իր ժամանակին («Մասիս» 1877 թ., № 1955):

—«Սուլթանական պատգամագրին ի պատասխան պատրաստուած ուղերձին ընթերցման ժամանակ, երբոր հետևեալ պարբերութիւնը կարդացւեցաւ «Ձեր օգոստափառ նախնեաց պաշտպանութեան շնորհիւ իրենց փառաւոր գաւազանին հնազանդող ազգերը կրկին իրենց ազգութիւն և կրօնքը պահել» և այլն, Կ. Պօլսոյ յոյն երեսփոխան Սարաքիօթթի Վասիլաքի էֆէնդին հետևեալ դիտողութիւնը ըրաւ.

—Մեր վեհ. սուլթաններն ոչ միայն իրենց հպատակ ժողովրդոց ազգութիւն և կրօնքը պաշտպանեցին, այլ և լեզուն, ուստի կառաջարկեմ, որ լեզու բառն ալ աւելնայ այդ պարբերութեան մէջ:

Նախագահ.—Մարմին մը մէկ լեզու մը միայն կրնայ ունենալ և այս ալ՝ ըստ իմ կարծեաց՝ սահմանադրութեան համաձայն է: Հակառակը ներելի չէ:

Վասիլաքի էֆ.—Էֆէնդիմ, իմ ըսածս չը հասկըցաք:

Նախագահ.—Կարգելում ձեզ խօսել. լռեցէք, չէք կրնար առանց խօսք առնելու խօսել:

Վասիլաքի էֆ.—Էֆէնդիմ...

Նախագահ.—Դարձեալ կարգելում ձեզ խօսիլ: Խօսք ուզող կա՞յ:

Վասիլաքի էֆ.—Անշուշտ կը խնդրեմ, որ իմ խօսքերս արձանագրին ատենագրութեան մէջ»:

Այդ միջադէպը բնականաբար ճնշող տպաւորութիւն պէտք է թողնէր քրիստոնեայ երեսփոխանների վրայ: Նկատելի էր, որ նախագահը Թիւրքերէն լեզւի գերիշխանութիւնն ընդունելով, անթոյլատրելի էր համարում միւս լեզուների մասին յիշատակել ուղերձի մէջ:

Յոյն երեսփոխանից յետոյ ամբիոն է բարձրանում նոյն հարցի մասին խօսելու հայ երեսփոխան Մաքսուտեան Սեպուհ էֆ., բայց դարձեալ ապարդիւն: Առաջարկը մերժւում է հետեւեալ պատճառաբանութեամբ.

—Մաքսուտեան Սեպուհ էֆ.—Ինչպէս որ կրցի հասկնալ Վասիլաքի էֆէնդիի խօսքէն, պետութիւնք կան, ուր ոչ միայն տարբեր կրօնքներն, այլ և ուրիշ լեզւաց գործածութիւնը արգելեալ է: Կը տեսնուին պետութիւնք, որոնք կը ջանան իրենց այլ և այլ ազգէ ժողովրդոց լեզուն ջնջել: Այդպէս չէ Թիւրքիայում: Վասիլաքի էֆ. ուզեց իր երախտագիտութիւնը յայտնել այս ազատութեան համար: Ուստի ես ալ կը կարծեմ, որ կը վայելէ յիշել ուղերձին մէջ:

Ռասիմ բէյ.—Ըստ սահմանադրութեան հարկ է Թիւրքերէն լեզուն գիտնալ, հետեւաբար խնդիր ընելու հարկ չեմ տեսնար:

Նախագահ.—Ռասիմ բէյը շատ լաւ պատասխանեց: Մանաւանդ որ լեզւաց պաշտպանութիւնը մինչև այսօր զլացւած չէ: Լեզւաց խնդիրն հասարակաց կրթութեան վերաբերեալ օրինաց գործն է, հետեւաբար այդ տեսակ

խնդիրներն այն օրինաց համեմատ պիտի կարգադրուեն»:

Որքան էլ դժգոհ լինէին քրիստոնեայ երեսփոխանները դէպի մանր ազգութիւնների լեզւի հարցը ունեցած այդպիսի վերաբերմունքից, այնուամենայնիւ նրանք ստիպւած էին լռել, մեծամասնութեան կարծիքին ենթարկւելով:

Եւ լռեցին:

3) Ֆինանսական հարցերից պարլամենտի առաջին սեսսիայում գլխաւոր տեղը բռնում է պատերազմի ծախքերը հոգալու առաջարկը: Կառավարութիւնը անհրաժեշտ է համարում 5 միլլիոն լիրայի (մօտ 50 միլիոն ռուբլու) փոխառութիւն անել՝ կամ ներքին բանի կամ նորից թղթադրամ բաց թողնել:

Այդ առաջարկի առիթով մի քանի նիստերում տաք վիճաբանութիւններ են տեղի ունենում: Երեսփոխանների մի մասը հակառակւում է, պատճառ բերելով ժողովրդի տնտեսական քայքայւած վիճակը, ոմանք հայրենասիրական զոհաբերութեան կոչ են անում, ոմանք էլ միջանկեալ առաջարկ են դնում, որ բոլոր պաշտօնեաների ռոճիկներից իւրաքանչիւր ամիս որոշ գումար գեղջեն: Վերջ ի վերջոյ հարցն առանձին մասնաժողովի մշակման ենթարկելուց յետոյ ժողովը ընդունում է պահանջւած գումարը ներքին փոխառութեամբ լրացնել:

Բիւճէի քննութեան ժամանակ էլ խօսք է բացւում պաշտօնեաների մասին և այս անգամ ժողովը մօտ մէկ միլլիոն լիրա խնայողութիւն է անում, բարձր պաշտօնեաների ռոճիկները և հին պաշտօնեաների (գլխաւորապէս պալատական) թոշակները պակասեցնելով:

Այդ միևնոյն ժամանակ երեսփոխան Խարաճեան

էֆէնդիի առաջարկութեամբ ընդունում է, որ «պատերազմի ասպարէզ եղող գաւառաց ժողովուրդներն ազատ միայն որոշեալ բռնի փոխառութիւնէն կամ գոնէ որոնք որ ցորեն և այլ նպարներ տուած են կառավարութեան և ձեռքերնին մուրհակ ունին — այն մուրհակները պահանջելիք փոխառութեան փոխարէն ընդունեն»:

4) Հայկական հարցն էլ թեթև կերպով ուշադրութեան առարկայ է դառնում շնորհիւ յոյն երեսփոխան Մուլիատէս էֆէնդիի, որ «երկար ատենաբանութեամբ մը բացատրեց Ասիոյ մէջ քրդաց երեսէն հայոց կրած անթիւ աղէտներն ու չարիքը, ըսելով ինչ զեղծումներ որ գործեցան Ռումէլիի և Բուլղարիոյ մէջ, նոյնը գործելու վրայ է երկար ատենէ ի վեր քրդաց ձեռօք Հայաստանի մէջ: Սակայն յոյներն ու բուլղարք Եւրոպիոյ մէջ տետրակներ հրատարակելով և բողոքոյ ձայներ բարձրացնելով, Եւրոպիոյ ուշադրութիւնը իրենց կրած տառապանաց վրայ հրաւիրեցին, մինչդեռ հայերը զուրկ ըլլալով այդ միջոցէն, լռութեամբ տարին ու հանդուրժեցին իրենց կրած դառն տառապանաց. բայց միթէ արդարութիւն է, որ հայը՝ տէրութեան ամենէն աւելի հնազանդ և հաւատարիմ ազգն, այսպէս չարչարուի ու կեղեքուի նոյն իսկ մեր տէրութեան դէմ ապստամբող քրդաց ձեռօք: Ուստի և այս անտանելի վիճակին վախճան մը տրուիլը կառաջարկէ»:

Յոյն երեսփոխանի ճառից յետոյ խօսում են հայ երեսփոխանները — և փաստալի տեղեկութիւններով պատկերացնում հայկական տառապանքը: Յիշւում է, որ 1876 թ. Վանի սոսկալի հրդեհն ու թալանը կատարւած է եղել իշխանութեան քաջալերութեամբ ու նոյն իսկ նախաձեռնութեամբ: Երկիւղ կրելով, թէ հայերն

էլ բուլղարների օրինակին հետևելով կարող են յեղափոխութեան կարմիր դրօշակը պարզելու — կառավարութեան պաշտօնեաները դրա առաջն առնելու պատրւակով հրդեհել ու թալանել են տալիս Վանի հայկական թաղը, որպէսզի հայերը իրենց մոխրակոյտերի շուրջը նստած երևակայել անգամ չը կարողանան ապստամբութեան մասին: Եւ այդպէս վարւում են հլու, հնազանդ հայերի վերաբերմամբ [1]:

— «Բոլոր իսլամ երեսփոխանք ալ ձայնակից են լինում վերոյիշեալին, ուստի որոշւում է գրել առ. Բ. Դուռը, որպէսզի անմիջական ազդու միջոցներ ձեռք առնուեն»:

5) Օրինագծեր. Օսմանեան պարլամենտը իր առաջին սեսսիայում բացի վերոգրեալից քննութեան է ենթարկում նաև մի քանի օրինագծեր, ինչպէս օրինակ ներքին կանոնադրութիւնը, բ) թաղապետական օրէնքը, գ) վիլայէթների օրէնքը, դ) տպագրական օրէնքը, ե) ընտրողական օրէնքը, զ) պաշարման վիճակի օրէնքը և է) թղթադրամներ վերաբերեալ օրէնքը:

Ամփոփելով պարլամենտի գործունէութեան առաջին շրջանի գլխաւոր կէտերը, տեսնում ենք, որ նա ունենալով ժողովրդական ներկայացուցչութեան բոլոր արտաքին ատրիբուտները, այնուամենայնիւ դարձել էր սոսկ կառավարութեան խորհրդականը, կամակատարը: Այդ գործունէութիւնից ժողովուրդը գործնական արդիւնքներ չէր տեսնում, ուստի և նրա հետաքրքրութիւնը դէպի Բօսֆորեան պարլամենտը հանգչում էր, մանաւանդ որ հրապարակի վրայ էր ահեղ պատերազմն իր սոսկումներով:

Սակայն իրերի ընթացքը կամաց-կամաց կերպա-

[1]) «Մասիս» 1877 թ. № 1985.

բանափոխում են նրան: Երկրորդ նստաշրջանում պառլամենտն աւելի համարձակ դիրք է բռնում դէպի կառավարութիւնը: Այդ շրջանում նրա ամբողջ գործունէութիւնը յարձակողական քննադատական էր:

Բնորոշն այն է, որ սուլթանը երկրորդ նստաշրջանի նախօրեակին էլ իրեն ցոյց է տալիս ջերմ կողմնակից սահմանադրութեան: Դրա պերճախօս ապացոյցն է նրա ատենաբանութիւնը երեսփոխանական ժողովի բացման օրը [1]:

—Բարեբախտ կը համարեմ զիս, ասում է նա, խորհրդարանը բանալով և ազգային երեսփոխանները շուրջս գումարեալ տեսնելով:

Ինչպէս որ գիտէք, Ռուսիա անցեալ տարի մեր դէմ պատերազմ հրատարակեց և մեր կառավարութիւնն ալ ստիպուեցաւ ինքզինք պաշտպանել ու յարձակումը վանել»...

Ապա դառնալով երկրի ներքին կեանքին, սուլթանը ասում է.—«Կայսրութեան փրկութիւնը սահմանադրութեան անկեղծ և անթերի գործադրութեան մէջ կը կայանայ:

Մեր բաղձանաց ամենէն մեծն եղած է միշտ տեսնել մեր ամեն հպատակաց կատարեալ հաւասարութիւն վայելելը, արդի քաղաքակրթութեան առաջադիմութիւնէն մեր երկրին օգտուիլը, անձային վիճակին բարւոքումը մեր ամեն խոստմանց և պարտուց կատարումը, հարկաց և տրոց քաղաքական տնտեսութեան սկզբանց համաձայն բաշխումն՝ առանց ժողովրդին շահուց վնասելու, եկամտից հաւաքումը, դարուս պիտոյից համեմատ մեր դատական դրութեան վերաքննութիւնը, որպէսզի մեր դատարանաց մէջ արդարութեան բարւոք մատակարարութիւն ապահովւի, անշարժ ստաց-

[1] 1877 թ. դեկտեմբերի 1-ին:

ւածք դիւրացնելու համար վաքըֆներու բարենորոգումը, գաւառաց կազմութեան և անոց իրաւասութեան սահմանն իբրև հիմնական խարիսխ վարչական շէնքին, վերջապէս ոստիկանութեան վերակազմութիւն»:

Այդքան բարի ցանկութիւնների ու գեղեցիկ ծրագիրների մասին լսելուց յետոյ՝ մարդ ակամայից մտածում է.

—Հապա ինչու ոչ մի քայլ չէր արւում այդ ուղղութեամբ, ինչու այդքան փքուն խօսքերից գէթ մէկը իրականութիւն չէր դառնում:

Հեռատես սուլթանը դրա պատասխանն էլ է տալիս.

—«Դժբախտաբար պատերազմը, ասում է նա, բնաբար յետաձգեց այս բաղձանաց կատարումը, մանաւանդ պատերազմին աղէտներն ամեն սահմաններն անցաւ: Բազմաթիւ չը պատերազմող և անմեղ ժողովուրդ, կանայք և մանկունք, որոնց կեանքն ու պատիւը պատերազմի սովորութեան համեմատ պէտք էր յարգւէին, անագորոյն խժդժութիւններ կրեցին, որք զայրոյթ կազդեն մարդկութեան:

Կը սիրեմ յուսալ որ ապագային մէջ այս մասին ճշմարտութիւնը երեւան պիտի ելնէ»...

Մի կողմից սուլթանական այդպիսի մեծադղորդ ճառը, միւս կողմից ժողովրդի ծայրայեղօրէն ցաւոտ կացութիւնը աւելի ևս տրամադրում են երեսփոխաններին իրական գործի պահանջ դնել:

Եւ հէնց առաջին նիստերից բարձրանում են բողոքի շեշտերը:

Սիրիոյ երեսփոխան Պետրան էֆէնդին գանգատւում է, թէ երեսփոխանական ժողովը այնպիսի խնդիրներով ու օրինագծերով է զբաղւում, որոնցից ժողովուրդը ոչինչ չէ հասկանում:

Այտընի երեսփոխան Ահմէդ էֆէնդին ժողովրդա-

կան ցաւերի պատճառը իշխանութիւնն է համարում։

Եւ այդպիսով սկսւում է պարլամենտի յարձակողական գործունէութիւնը, որ հետեւեալ գլխաւոր կէտերի մէջ կարելի է ամփոփել։

1) Բողոք բռնութիւնների դէմ։ Մենք արդէն յիշատակել ենք, որ օսմանեան երկնքի տակ վաղուց արդէն սովորական երեւոյթ են դարձած առանձնապէս քրիստոնեաների վերաբերմամբ կատարւած բռնութիւնները մահմեդականների կողմից։ Սակայն այդ ամենը հրէշաւոր չափերի է հասնում պատերազմի ընթացքում, երբ քիւրդերը, չէրքէզներն ու բաշիբոզուկները գազանային սարսափներով դողացնում են Թիւրքահպատակ քրիստոնեաներին, թալանում են նրանց ունեցւածքը, պղծում են ընտանեկան պատիւն ու սրբութիւնը, սրախողխող են անում դեռահաս մանուկներին ու աղջիկներին։ Քաղաքակիրթ աշխարհը ցասումով էր խօսում այդ փաստերի մասին, նոյն իսկ Թիւրքիայի բարեկամները դատապարտում էին այդ ամենը։

Այդպիսի ցաւոտ պատկերի հանդէպ անտարբեր մնալ չէր կարող պարլամենտը և ահա նախ քրիստոնեայ և ապա մահմեդական երեսփոխանները մէկը միւսի յետեւից ամբիոն բարձրանալով՝ զայրոյթով պատմում են[1]), թէ ինչպէս «չերքէզները պատերազմին երեսէն փախչող ժողովուրդները կողոպտեր են և անոնց կովերն ու ձիերն ալ յափշտակելով բերեր Կ. Պօլիս անարգ գնով (մէկ ձին կամ կովը 80—100 դուրուշի) ծախեր են... Չէրքէզներն ու բաշիբոզուկները փոխանակ թշնամու դէմ երթալու խաղաղ գիւղերը կողոպտել ու այրեր են...

Այտօսի գայմագամ Հասան-բէյը վարչական ժողովի թիւրք անդամների և միւֆթիի հետ համաձայ-

[1]) Տես «Մասիս» 1878 թ. № 2078, 2080 և 2082,

նութեամբ քաղաքը բռնկեցուցին։ Իսլամները քրիստոնէից բոլոր ունեցւածքը թալանեցին։

Չէրքէզները բազմաթիւ քրիստոնեայ գիւղերում տաւարներն յափշտակել են, եկեղեցիները պղծել, տուները կողոպտել, մարդիկն սպանել և կիներն ու աղջիկները բռնաբարել...

Քիւրդերը ամեն տեսակ գեղծում, բռնութիւն ու հարստահարութիւն գործ դրեր են երկրին ժողովրդեան վրայ»...

Հասկանալի է, ի հարկէ, որ անախորժ էր այդ դառն ճշմարտութիւնները լսել Թիւրք կառավարութեանը, որ Եւրոպայի հասարակական կարծիքը հանգստացնելու նպատակով ամեն կերպ աշխատում էր հերքել, ծածկել կատարւած խժդժութիւնների վերաբերեալ տեղեկութիւնները։

Այն, ինչ որ հերքում էր կառավարութիւնը, սրտի կսկիծով խոստովանում ու դատապարտում էր պարլամենտը։

2) Բողոք պաշտօնեաների դէմ։ Սակայն պարլամենտը շօշափելով կատարւած բռնութիւնների խնդիրը, լոկ պլատոնական ցաւակցութեամբ չէ բաւականանում, այլ փորձում է որոնել չարիքի պատճառները և նրա առաջն առնելու միջոցներ յանձնարարել։

Բնականաբար ամենագլխաւոր յանցաւորը համարում է հէնց իրեն՝ կառավարութեանը յանձին իր պաշտօնեաների։

Այտընի երեսփոխան Ահմէդ էֆէնդին ասում է[1]), թէ «Թիւրքիայում դատական պաշտօնատարները մեծ մասամբ անբարոյական և կաշառառու մարդիկ են»...

Նիշի երեսփոխան Սուլէյման էֆ.—Բարւոք վարչութեան մը հիմը վարձուց և պատժոց արդար բաշ-

[1]) Ibid № 2072 և 2082.

խումն է՝ մենք գայդ չենք տեսներ: Ամեն օր լրագրաց մէջ երկայն ցուցակներ կը տեսնենք յառաջացում և պատուանշան ստացող պաշտօնատարաց, բայց պատիժ կրող պաշտօնատար մը երբէք տեսած չենք, և սակայն յանցաւոր պաշտօնատարք խիստ շատ կան, պէտք է որ պատժուեն:

Սելանիկի երեսփոխան Մուստաֆա պէյ.—«Նախ պէտք է վարձատրութիւն բաշխող և յանցաւորներ պատժելու անհօգութիւն ընողները պատժել...

Կարնոյ երեսփ. Գազանճեան Կիրակոս էֆ. մի քանի նիստերից յետոյ նորից վերադառնում է վերոյիշեալ խնդրին և մի երկար ճառով բնորոշում է[1]) պաշտօնեաների զեղծումների պատճառները, որ նրա կարծիքով հետևեալներն են.

ա) Հաւատարիմ, պատուաւոր, պարտականութիւնը ճանաչող և ժողովրդեան համակրութիւնը գրաւող պաշտօնեաներն առանց պատճառի, առանց դատի, առանց յանցանքի, ի հարկէ ստիպեալ (հասպ-էլիճապ) ընելով հրաժարեցունելն է.

բ) Անպատիւ, տգէտ, կաշառակեր և պարտականութիւնը չը գիտցող պաշտօնէի մը վրայ երբ դանդատ կըլլայ, եսկիլամի կանոնով դայն արդարացնել և վերահաստատելն: Եւ երբ ձայները տարապայման բարձրանան և դայն հոն թողուլ անհնար ըլլայ, կամ ուրիշ տեղի մը հետ փոխել—(պէճայիլ) և կամ անկից հանելով անմիջապէս ուրիշ լաւագոյն պաշտօնի մը դնելն.

գ) Տէրութեան և ազգին վնասակար պաշտօնէից անպատիժ մնալն.

դ) Կաշառառուի և կաշառատուի համար հաստա-

[1]) Ibid № 2082.

տեալ կանոնի ծուռ ըլլալը, որով պաշտօնատարք կաշառառութենէ չեն վախենար.

ե. Կողմնակալութիւն, պաշտպանութիւն (իլթիմաս) և մարդ շահեցնելու սովորութիւնք»:

Եւ այդ կէտերը հաստատելու համար ճառախօսը իբրև նմուշ առաջ է բերում պատերազմի ժամանակ պաշտօնեաների կատարած զեղծումներից թարմ օրինակներ:

—«Մինչդեռ միայն Հայաստանի կողմը պատերազմական կենտրոնները բաժանուած մեծ և փոքր 1100 հատի չափ թնդանօթ, 4 0,000-ի չափ հրացան, 25,000 տարճանակ, շտեմարաններով և մթերանոցներով լի ռազմամթերք, պարէն, հագուստ և այլն մեր վեհ. սուլթանին շնորհիւ պատրաստ կեցած ժամանակ, 60 ժամ հեռաւորութիւն է իրենց գրաստներով ու սայլերով պարէն և այլն փոխադրող, իրենց կռնակով թնդանօթ քաշող, դրամ, զգեստ, գուլպա, ձի, ջորի և այլն նպաստներ անխնայ նուիրող, պատերազմի գնացող զօրական եղբայրներին մինչև իսկ իրենց ընտանեաց սենեակներուն մէջ հիւրընկալելով ծառայող, և «մեր կեանքն ու ստացուածքը տէրութեան և հայրենեաց համար կը զոհենք» պոռացող ժողովուրդ մը ունեցած ժամանակ մեր վիճակն ինչու այսպէս եղաւ:

Ահաւասիկ մանածի կծիկին ծայրն երևցաւ:

Եթէ ըսեմ թէ ժողովրդեան կողմանէ 2 00 դուրուշի վարձուած և նպաստ տրուած և նոյն իսկ արդէն պատրաստ կեցած սայլերը մէկ կամ երկու արծաթ մէճիդ կաշառք տալով ձգեցին փախան—կը հաւատա՞ք:

Ժողովրդեան 1000, 2000, 3000 դուրուշի գնած և նպաստ տուած ձիերն ու ջորիները, մանաւանդ Սեբաստիայէն, Գաղատիայէն. Փօնիայէն, Արաբիայէն կամ այլ կողմերէ եկած և մինչև 10,000 դուրուշի արժէք

ունեցող ձիերուն և ջորիներուն մէկ մասին ալ 70-ական ղուրուշի փռանցի հրապարակովը (չիւրիւկ մէյդանի)—ծախուելուն կը հաւատա՞ք:

Ժողովրդական մինչև 5000 ղուրուշ տալով վարձած զօրականները (պետել) մէկ կամ երկու հարիւրանոց թղթադրամ կաշառքով իրենց տեղերը փախցունողներ գտնուելուն կը հաւատա՞ք:

8 ժամ հեռաւորութիւնէ պարէն բերող ժողովուրդը միայն յանձնելու համար շաբաթներով սպասեցնելէ և յետոյ ընկալագիր մը տալու համար կրկին սպասեցնելով չարչարելէ ետև 50 կամ 100 ղուրուշ կաշառք առնելով այնպէս թող տուելուն կը հաւատա՞ք:

Ասոնք և ասոնց նման հազարաւոր գեղծմունք տեսնող ժողովրդեան քով համբերութիւն կը մնա՞յ»...

Հասկանալի է, ի հարկէ, որ այդպիսի քննադատականները երբէք ցանկալի չէին կարող համարուել կառավարութեան համար:

Հարկահանութեան փոփոխութիւնը առաջարկւում է մի քանի երեսփոխանների կողմից, բայց առանց դրական հետևանքի: Ուշադրութիւն դարձնում է միայն աշար կամ տասանորդ կոչւող տուրքի վրայ և թեթևացման երկու առաջարկ է արւում, այն է ա) տասանորդի տուրք սահմանել. բ) իւրաքանչիւր գիւղի վճարելիք տասանորդի տուրքը 5 տարուայ արդիւնքի միջին հաշւով որոշելով, տարեցտարի պահանջել անմիջապէս գիւղացիներից և ոչ թէ կապալով տալ:

Ժողովը այդ առաջարկները, ինչպէս նաև ամբողջ հարցի նախնական քննութիւնը, յանձնում է առանձին մասնաժողովի:

Հարցապնդում պատերազմի մասին: Օսմանեան բանակի անվերջ պարտութիւնները և ռուսական զօրքի յառաջացումը դէպի Կ. Պոլիս՝ չէր կարող, ինարկէ,

երեսփոխանական ժողովի ուշադրութիւնից վրիպել: Եւ ահա երեսփոխանների կողմից հետևեալ գրաւոր հարցապնդումն են ուղղում պետութեանը.—«Նկատելով, որ իրերի վիճակը վերջին աստիճան ծանրացած է, հաշտութեան ու զինադադարի բանակցութիւնք դեռ աջող ելք մը չունեցած թշնամութիւնք կը շարունակին, թշնամին դէպի Կ. Պոլիս կը յառաջանայ և ամեն նշաններէ կը հասկցուի, որ մայրաքաղաքս կէտ նպատակի բռնած է, նկատելով նաև որ մայրաքաղաքս իր պաշտպանութեան համար կրնայ 200,000 մարդ հանել, ժողովս կորոշէ հրաւիրել բոլոր նախարարները, որ անմիջապէս ժողովիս ներկայանալով իրենց վիճակին վրայ բացատրութիւններ տան, և թշնամւոյն մայրաքաղաքս գրաւելու պատահականութեան առաջն առնելու միջոցներուն վրայ ժողովոյն հետ խորհրդակցին»:

Հարցապնդումը իր դերը խաղում է: Մի քանի օրից յետոյ երեսփոխանական դռնփակ նիստում ներկայանում է մեծ վէզիրը նախարարների հետ միասին և խնդրում յատուկ մասնաժողով ընտրել, որին կառավարութիւնը կը տեղեկացնէ իրերի դրութիւնը ամենայն մանրամասնութեամբ:

Պարլամենտը փակւած: Սակայն երեսփոխանական ժողովը չի արժանանում իր ցանկացած տեղեկութիւններին: Բոլորովին անսպասելի կերպով փետրուարի 2-ին (1878 թ.) պարլամենտը փակւում է [1]: Մեծ վէզիրը այդ առիթով կարդում է սուլթանի հետևեալ

[1]) Աւելորդ չի լինի յիշել, որ պարլամենտի գոյութեան ընթացքում երեք անգամ նախարարական կաբինէտի փոփոխութիւն է լինում Համիդի և ապա Ահմէդ Վէֆիկ փաշաների մեծ վէզիրութեամբ: Եւ սահմանադրական մինիստրութեան մէջ մի հայ էլ՝ Զամիչ Յովհաննէս էֆ. պաշտօն է տրւում (հանրային գործոց և առևտրական նախարար):

հրամանը.—«Ըստ որում ներկայ պարագաները չեն ներեր, որ խորհրդարանն իր նիստերուն շրջանը լրացնէ, և ըստ որում սահմանադրութեան համեմատ սուլթանն իրաւունք ունի խորհրդարանին նիստերուն շրջանն երկարել և դադրեցնել՝ եթէ պարագաները պահանջեն, հետևաբար Ն. վեհափառութիւնը կը հրամայէ, որ երեսփոխանաց և աւագաց ժողովները փոխանակ 1/13-ին փակելու ըստ սահմանադրութեան, այսօր փակուեն, և պարտք կը դնէ նախարարութեան վրայ, որ իր բարձր գոհունակութիւնն յայտնէ երկու ժողովոց նախագահներուն և անդամոց՝ ներկայ շրջանին մէջ ցոյց տուած եռանդին և հայրենասիրութեան համար»:

Զարմանալի քնքոյշ վերաբերմունք էր: Սուլթանը շնորհակալութեամբ ճանապարհ էր դնում ժողովրդական ներկայացուցիչներին, միևնոյն ժամանակ չը մոռանալով այդ վարմունքը հիմնաւորել սահմանադրութեան կէտի վրայ:

Կատարուած դէպքը գրեթէ աննկատելի է մնում լայն մասսաների համար և դա հասկանալի էր:

Օսմանեան պարլամենտը սերտ կապերով կապուած չէր ժողովրդի հետ, դարման չէր տալիս նրա անհուն ցաւերին, երկու նստաշրջան խօսելով հանդերձ մի դրական շօշափելի քայլ չէր արել—բացի պլատօնական ցանկութիւններ ու բողոքներ յայտնելուց, ուստի և նրա լինել—չը լինելը մասսայական հետաքրքրութիւն չէր ներկայացնում:

Բայց այդ դեռ բոլորը չէր: Սուլթանի հրամանը այնպէս ճարպիկ կերպով էր խմբագրած, որ ոչ ոք չէր կարող գուշակել, թէ պարլամենտը ընդ միշտ փակւում է: Իսկ ժամանակից մի քանի շաբաթ առաջ փակելը մի խոշոր երևոյթ չէր կարող համարուել, մանաւանդ որ

սահմանադրութեամբ էլ այդպիսի իրաւունք տրուած էր սուլթանին:

Այսպէս թէ այնպէս պարլամենտը փակուած էր և դարձեալ հին-աւանդական կարգը վերահաստատուած, երբ սուլթանական կառավարութիւնը ժողովրդի միակ տէրն ու տնօրէնն էր համարւում, երբ նրա քայլերին ոչ քննադատ կար և ոչ էլ խոչընդոտ:

—Պարլամենտը նորից կը կանչւի, երբ հարկաւոր լինի—այդ կարծիքն էին տարածում սուլթանական գործակալները ժողովրդի մէջ:

Սակայն այդ «հարկաւոր լինելը» շատ թանգ նստեց ազգաբնակութեանը:

ԺԳ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԸ ՄԻԴՀԱՏ ՓԱՇԱՅԻՑ ՅԵՏՈՅ

Միահեծանութիւն և կեղծ սահմանադրականութիւն: Սուլթան Համիդի գործելակերպը.—Սահմանադրութիւնը թաղուած.—Բռնակալութիւնը ուժեղանում է.—Ի՞նչ են անում երիտասարդ թիւրքերը. Արտագաղթ և կերպարանափոխութեան շրջան.—Էվոլիւցիայից դէպի ռեվոլիւցիա.—Ի՞նչ գնով:

—

Օսմանեան պարլամենտի փակումը վերջին քայլն էր սահմանադրութեան թաղման համար:

Սակայն անսպասելի չէր այդ քայլը, քանի որ սահմանադրութիւնը ինքն ըստ ինքեան հիմնուած չէր իրական ուժի վրա: Նա մի տուրք էր բարձր իշխանութեան կողմից, մի արդիւնք էր սակաւաթիւ մարդկանց ջանքերի, որ նոյնքան հեշտութեամբ ու արագութեամբ կարող էր ոչնչանալ, ինչպէս որ ծնունդ էր առել:

Ճիշտ է գրեթէ երկու ամբողջ տարի 1876—1878 թ. Թիւրքիան վայելեց սահմանադրութիւն, բայց միայն ձևական կերպով և ոչ իրականապէս:

Դա այսպէս ասած՝ կեղծ սահմանադրականութիւն էր, որ անհրաժեշտ էր Օսմանեան օբսօլիւտիզմին իբրև մի ժամանակաւոր զէնք:

—«Օբսօլիւտիզմը—միահեծանութիւնը, ասում է Լասսալ [1]) երբ զգում է իր ոտքերի տակ հողը խախտուած, դիմում է փրկութեան միակ միջոցին—կեղծ սահմանադրականութեան: Դրա էութիւնը հետևեալն է.

Օբսօլիւտիզմը տալիս է այնպիսի սահմանադրու-

[1]) «Սահմանադրութեան էութիւնը».

թիւն, որի մէջ ոչ մի իրական ապահովութիւն չը կայ ժողովրդի և նրա ներկայացուցիչների իրաւունքների: Այդպիսի սահմանադրութեամբ օբսօլիւտիզմը կանխապէս ոչնչացնում է ժողովրդական ներկայացուցչութեան անկախութեան մասամբ հնարաւորութիւնը, մասամբ էլ ցանկութիւնը: Իսկ վերջ ի վերջոյ իրեն թոյլ է տալիս չեղած համարելու ժողովրդական ներկայացուցիչների այն բոլոր որոշումները, որոնք չեն համապատասխանում իր ցանկութեանը:

Կեղծ սահմանադրականութիւնը ժողովրդի ստեղծագործութիւնը չէ, այլ օբսօլիւտիզմի: Կառավարութիւնը հաստատում է այն, ինչ որ գոյութիւն չունի: Նա յայտարարում է պետութիւնը սահմանադրական այն ժամանակ, երբ իշխում է կատարեալ միահեծանութիւնը՝ օբսիւլիւտիզմը: Նա կեղծիք է կատարում...»

Ահա հէնց այդպիսի կեղծ սահմանադրութիւն էր Թիւրքիայինը, ուստի և սուլթանը առանց որև է դժւարութեան կարողացաւ թաղել նրան, ոչնչացնել:

Բօլգարական ապստամբութեան հետ էր ծնունդ առել նա, բօլգարական հարցի հետ էլ վերջացաւ:

Ռուս-թիւրքական պատերազմում Թիւրքիայի կրած ծանր պարտութիւնը, ըմբոստ վայրերի անջատումը մեծ չափով նպաստեցին սահմանադրութեան ոչնչացման [1]):

Աբդիւլ Համիդը ինչպէս որ նուրբ հեռատեսութեամբ օգտւեց արիւնոտ անցքերից և կեղծ-սահմանադրականութիւն ստեղծեց հէնց իր միահեծանութիւնը փրկելու համար, ճիշտ այդպէս էլ նա օգտւեց պատերազմի առաջացրած ռէակցիայից ժողովրդական ներկայացուցչութեան հետքն անգամ ոչնչացնելու համար:

[1]) Այդ մասին տես Н. Рубакинъ: «Двѣ конституціи».

Փակելով պարլամենտը, նա աւելի կտրուկ քայլերով հաստատում է իր միահեծանութիւնը։

Նա աշխատում է իր ձեռքը կենտրոնացնել պետական բոլոր գլխաւոր գործերը, շրջապատւում է այնպիսի մարդկանցով, որոնք միշտ էլ հլու հնազանդութեամբ ենթարկւում են նրա քմահաճոյքներին, գործում են նրա թելադրութեամբ։ Ըլդըզը դառնում է միայն Համիդի տրամադրութիւնների արտայայտիչ։

Բարենորոգչական ծրագիրները, սահմանադրական երազանքները—բոլորը թաղւում են մոռացութեան թանձր քօղի տակ և կամայականութեան խեղդուկ հովերը անցնում են գաւառից-գաւառ։ Թշւառ երկիրը տնքալով տանում է իր վզին օրէցօր ծանրացող լուծը։

—«Այդ միենոյն ժամանակ, ասում են Միտէն և Մինեօրս [1]), սուլթանը փակւում է իր արքունիքում, ալբանացիների ու քիւրդերի յատուկ զօրագնդով շըրջապատւած։ Վերջինիս պարտականութիւնն է պաշտպանել փադիշահի անձը իր հպատակներից։ Վախենալով դաւադրութիւնից, սուլթանը խիստ հսկողութիւն է նշանակում բոլոր այն մարդկանց վրա, որոնք ձըգտումն են ցոյց տալիս դէպի բարենորոգումները»…

Այդպիսով տարէցտարի ուժեղանում է գաղտնի ոստիկանութիւնն ու լրտեսութիւնը. բանտերն ու աքսորավայրերը լցւում են անմեղ զոհերով. բռնակալութեան մղձաւանջը թեւատարած ծածկում է ամբողջ երկիրը։

Եւ Թիւրքիայի ներքին ու արտաքին քայքայումը արագ քայլերով առաջ է ընթանում արեան ու աւերածութեան, բանտերի ու կախաղանների, անվերջ կոնցեսսիաների ու եւրոպական պահանջների միջով։

Ի՞նչ էին անում այդ բոլորի հանդէպ երիտասարդ

[1]) „Новая исторія“ մասն II, եր. 168.

թիւրքերը—նրանք, որ իրենց վրա էին վերցրել հայրենիքի փրկութեան գործը, որ յոյս ունէին Օսմանեան վաղեմի հզօրութիւնը վերականգնեցնելու, օտար պետութիւնների միջամտութիւնները յետ վանելու։

—Գրեթէ ոչինչ։ Չունենալով կազմակերպութիւն ու մասսայական իրական ոյժ, նրանք ստիպւած էին սըրտի խորքերում թաղցնել բողոքն ու զայրոյթը։

Ճիշտ է դեռ նախնական թւականներից երիտասարդ Եւրոպայում գոյութիւն էր ստացել և Երիտասարդ Թիւրքիան, պատմական փաստեր էին դարձել Րեշիդ, Ֆուադ, Ալի և Միդհատ փաշաների լիբերալ գործունէութիւնը բարենորոգչական փորձերով զուգորդւած, բայց այդ հոսանքը մնացել էր առանձին անհատների սեփականութիւն։ Մամուլի խեղճուկ կացութիւնը, ազգաբնակութեան ծայրայեղ յետամնացութիւնը անհնարին էին դարձրել թարմ գաղափարների ժողովրդականացումը։

Հէնց այդ է պատճառը, որ համիդեան քաղաքականութիւնը այնքան երկար տարիներ կարողանում է յարաճուն զարգացմամբ առաջ ընթանալ։

Դաւերի մթնոլորտում գահ բարձրացած սուլթանը իր շուրջը միայն դաւեր է տեսնում։

Ազատասիրական իւրաքանչիւր արտայայտութիւն, թէկուզ փոքր չափերով, ամենախիստ հալածանքի է ենթարկւում։

Առաջադիմական գործիչներից, երիտասարդ թիւրքերից շատ շատերը բանտից ու աքսորից խուսափելու համար ստիպւած են լինում արտասահմանում ապաստան որոնել։

Այդպիսով սկսւում է մի արտագաղթ՝ գլխաւորապէս Կ. Պոլսից դէպի եւրոպական երկիրները։

Եւ այդ գաղթական թիւրքերը սկսում են ռմբակոծել Ըլդըզը իրենց յօդւածներով, բրօշիւրներով ու

թերթերով։ Նրանք խիստ քննադատութեան շանթերն են արձակում դէպի Աբդիւլ Համիդը, յոյս ունենալով այդ ճանապարհով ընկճել նրան, փոխել տալ ուերին քաղաքականութիւնը։ Բայց ապարդիւն։

Համիդը մնում է անդրդուելի։ Ընդհակառակը այդ նոր հոսանքի դէմ նա մշակում է նոր գործելակերպ։ Նա աշխատում է բողոքողների ձայնը լռեցնել դրամական բաշխիշներով ու բարձր պաշտօնների առաջարկով։

Այդպիսով առաջ է գալիս մի բնորոշ կերպարանափոխութեան շրջան։ Սուլթանի եկեղեայ ոխերիմ թշնամին այսօր դառնում է նրա հլու հպատակը, նրա պնակալէզը։ Բանտից ու աքսորից եւրոպական մայրաքաղաքներն ապաստանած «յեղափոխականը» դառնում է սուլթանական կառավարութեան մոլեռանդ գործակալ։

Շնորհիւ այդպիսի հանգամանքների «երիտասարդ թիւրք» լինելը դառնում է մասամբ շահաւէտական արհեստների մի միջոց, անձնական հաշիւներ մաքրելու մի ճանապարհ։

Նոյն իսկ այնպիսի ականաւոր գործիչ, որպիսին դոկտ. Աբդուլլահ Ջեվդէթն է—(«Օսմանեան սահմանադրական միութեան» հիմնադիր, «Օսմանլը», «Իջթիհադ» և «Տուրայի Օսմանի» թերթերի խմբագիր)—խաբւում է սուլթանական խոստումներից և յեղափոխական ասպարէզից անցնում է Վիէննայի թիւրքական դեսպանատունը՝ իբրև սուլթանի պաշտօնեայ, այդտեղից նա հեռանում է նորից ըմբոստացման ճանապարհի վրայ կանգնելու միայն այն ժամանակ, երբ կռւում է դեսպանի հետ։

Երիտասարդ Թիւրքիայի մի ուրիշ յատկանիշն էլ այն է, որ նրանք շատ երկար ժամանակ մնում են միայն խօսքի յեղափոխականներ։

Նրանք խօսում են, գրում են, քննադատում են, բայց ակտիւ քայլեր չեն անում երբէք։

Այդ է պատճառը, որ երիտասարդ Թիւրքիայի անցեալին նայելիս տեսնում ենք նրանց այնքան բազմաթիւ օրգանները—«Միզան», «Մեշվերէթ», «Օսմանլը», «Իջթիհադ», «Տուրայի Ումմէթ», «Տուրայի Օսմանի», «Թիւրք», «Թերաքքը», «Սապահ-Իւլ-Խէյր» և այլն—այնքան բազմազան քննադատականները սուլթանական կառավարութեան վերաբերմամբ և դրա հանդէպ գործնական քայլերի կատարեալ ամայութիւն։

Թերևս նոյն այդ պատճառով է, որ նրանք մինչև վերջին ժամանակներս մնացել էին զօրապետներ առանց զօրքի, իդէօլօգներ առանց մասսայի։

Նրանց գլխաւոր կազմակերպութիւնը, որի պարագլուխն էր Ահմէդ Րիզա, իսկ օրգանը «Մեշվերէթ», այն համոզմունքին էր, թէ Թիւրքիայի վերածնութիւնը կատարւելու է բնաշրջական ճանապարհով և ոչ թէ յեղափոխութեամբ՝ էվօլիւցիայով և ոչ ռեվօլիւցիայով։ Դրա համեմատ էլ նա մշակել էր իր գործելակերպը՝ խաղաղ, քննադատական, բայց ոչ յախուռն և յարձակողական։

Եւ նրա շուրջը համախմբւած էին հասարակութեան այսպէս ասած վերին շերտերի ներկայացուցիչները, գլխաւորապէս նախկին պաշտօնեաներ ու ինտելիգենտ երիտասարդներ։

Սակայն այդ խաղաղ բարենորոգչական գործելակերպը չէր համապատասխանում կեանքի պահանջին, բաւականութիւն չէր տալիս աւելի արմատական մտածողութիւն ունեցողներին, ուստի և երիտասարդ թիւրքերի մէջ առաջանում են նոր հոսանքներ աւելի ձախակողմեան ուղղութեամբ։

Այդպիսով երիտասարդ թիւրքերի շարժումը, որ

80-ական թուականներից սկսած միմիայն մի նշանաբան ունէր՝ միդհատեան սահմանադրութեան վերահաստատումը, 90-ական թուականների վերջերից հետըզհետէ ճիւղաւորւում է, առաջ բերելով տարբեր կազմակերպութիւններ, տարբեր ծրագրներով։

Կեանքի դառն փորձերը և ժողովրդական շահերի հրամայական պահանջները կամաց-կամաց մղում են դրանց՝ էվօլիւցիայից դէպի ռեվօլիւցիա, խօսքի շրջանից դէպի գործի շրջանը։

Բողոքը լայնանում է, ժողովրդական շարժումը միջազգային բնոյթ ստանում, քրիստոնեաների՝ հայերի, յոյների ու մակեդոնացիների կշտին կանգնեցնելով նաև ուղղափառ մուսլէմներին։

Եւ թաղուած սահմանադրութեան գերեզմանի վրայ աճում-զարգանում է Թիւրքիայի վերածնութեան կենսատու ծաղիկը։

Տիրող կարգերը, ժողովրդի արթնացումն ու ըմբոստացումն էր այդ ծաղկի հողը. հարիւր հազարաւոր զոհերի անմեղ արիւնը՝ նրան ցօղողը, յարաճուն դարձնողը։

Եւ Օսմանեան հօրեզոնների տակ ապրող ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ այնքան մեծ չափերով չէ մասնակցել այդ արեան զոհաբերութեանը, որքան հայ ժողովուրդը։

Մտենանք ուրեմն նրան, տեսնենք, թէ ինչ թիւ է ներկայացնում և ինչպիսի անցեալ է ունեցել նա Թիւրքիայում։

Այդ ծանօթութիւնից յետոյ աւելի դիւրին կըլինի պարզել հայ-թիւրքական յետագայ գործակցութիւնը յանուն ընդհանուր հայրենիքի ազատագրութեան։

ԺԴ. ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Վիճակագրութեան բացակայութիւն.—Կառավարութեան ձգտումը.—Ի՞նչ են ասում հին ու նոր աղբիւրները.—Ամփոփումն։

—

Քանի՞ հայ կայ Թիւրքիայում—ահա այն կնճռոտ հարցը[1], որի շուրջը մի քանի տասնեակ տարիներ է, որ խօսւում ու գրւում է, բայց դեռ ճիշտ ու վերջնական մի լուծումն չէ ստացել։

Պատճառը այն ընդհանուր պայմաններն են, որոնցմով շրջապատուած է Թիւրքիան։

Այդտեղ ամեն ինչ հիմնուած է պատահականութեան ու իշխանաւոր անձերի քմահաճոյքի վրայ. չկայ անկեղծութիւն, չկայ ճշմարտութիւն ու արդարութիւն։ Երկիւղը, կասկածամտութիւնը սպառնալի ուրւականների նման կարծես միշտ կանգնած են Ելդըզի գլխին և շարունակ ստիպում են նոյն իսկ ամենապարզ, ամենահասարակ փաստերն աղաւաղել։ Եւ հէնց դրանից էլ առաջ են եկել այն հակասական թւերն ու տեղեկութիւնները, որ գոյութիւն ունեն թիւրքահպատակ հայերի քանակի մասին։

Մի այլ քաղաքակիրթ պետութիւն ուրախութեամբ կաշխատէր պարզել, թէ իր հպատակներից քանի՞սն են պատկանում այս կամ այն ազգութեան։ Բայց այդպէս չէ Թիւրքիան։ Նա իւրաքանչիւր ազգութեան համար

[1]) Այս յօդուածը 1905 թ. տպուած է «Լոյսի» մէջ։ Այժմ միացնելով ներկայ աշխատութեան հետ, մտցրել ենք նրա մէջ մի քանի լրացումներ նոր աղբիւրներից օգտւելով։

իր առանձին քաղաքականութիւնն ունի և հէնց այդ քաղաքականութեան համեմատ էլ փոխւում են թւերն ու փաստերը։ Այն օրից, երբ Բերլինի դաշնագրով (1878) Թիւրքահայկական ցաւերը Եւրոպայի ուշադրութեան առարկայ դարձան հայկական հարց անունով, Թիւրքիան ամենամեծ եռանդով աշխատեց նւազեցնել հայերի թիւը, որպէսզի դրանով ցոյց տայ, թէ հայ ազգաբնակութիւնը Թիւրքիայում չափազանց չնչին տոկոս է կազմում, ուստի և խօսք անգամ չպէտք է լինի ներքին ինքնավարութեան կամ առանձին արտօնութիւնների ու բարենորոգումների մասին։ Եւ դեռ մինչև այժմ էլ նա շարունակում է այդպիսի ձգտումը։ Սակայն արտաքին քաղաքական տեսակէտից ցանկալի համարւած այդ միջոցը բոլորովին ձեռնտու չէ ներքին-տնտեսական տեսակէտից։ Հայերը, իբրև հպատակներ, զանազան հարկեր են վճարում, որոնց երկար շարքում բաւական խոշոր տեղ է բռնում բեդելյաթ ասկերիէն— (զինւորական տուրքը), որ հաւաքւում է քրիստոնեաներից նրանց թւի համեմատ։ Պակասեցնել հայերի թիւը—կընշանակէ նրանցից ստանալիք հարկի քանակն էլ նւազեցնել, իսկ դա բոլորովին ցանկալի չէ Ելդըզի համար. չէ՞ որ նա ամենից շատ փող է սիրում։ Եւ ահա նորից օգնութեան է հասնում Թիւրքական հնարագիտութիւնը։ Մի ակնթարթում, կարծես մոգական գաւազանի հարւածով, իրականութիւնը փոխւում է. հայաբնակ վայրերը լայնանում են, հայ ազգաբնակութիւնը աճում-մեծանում, մեռածները կենդանանում, չծնւածները ծնւած համարւում։ Բայց եթէ հէնց այդ նոյն րոպէին դիպլոմատիական մի հարց ծագէ հայերի քանակի մասին, մի որև է ակնարկ լինի բարենորոգումներ մտցնելու առիթով—Ելդըզը իսկոյն սև քօղի տակ կծածկէ վերոյիշեալ փաստը և նորից հրապարակ

կհանէ նախորդ փոքրիկ ու ողորմելի թւերը։ Եւ այդ կատակերգութիւնը կրկնւում է տարիներ, տասնեակ տարիներ շարունակ։

Այսպէս օրինակ դեռ 1844 թ. Ռիզա փաշայի հրամանով հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ հայերի թիւը Թիւրքիայում 2,400,000 է[1]), որից երկու միլլիոնը Ասիայում, իսկ 400,009 եւրոպական Թիւրքիայում։

Ուբիչինի տեղեկութիւններով էլ 1845 թ. հայերի թիւը Թիւրքահայաստանում եղել է 2,5՛0,000[2]).

Իսկ տասնեակ տարիներ յետոյ այդ թիւը երբեմն այնքան նւազում է, որ իջնում է մինչև 6—7 հարիւր հազարի։

Կառավարութիւնը միշտ մի առանձին ձգտում է ցոյց տալիս մահմեդական ազգաբնակութիւնը զարմանալի արագութեամբ աճած տեսնել, իսկ օտարազգաւններին՝ ընդհակառակը։ Այսպէս օրինակ պաշտօնական «Սալնամէյի» տեղեկութիւնների համեմատ Էրզերումի վիլայեթում ազգաբնակութեան աճումը ըստ դաւանութեան հետևեալ պատկերն է ներկայացնում[3]).

1870 թ.	86,901	մահմեդ.	29,687	քրիստ.
1871	91,061	»	25,961	»
1872—	93,459	»	28,552	»
1873—	99,691	»	29,916	»

Բայազէտի մութասարիֆութեան մէջ

1274 թ.	22,175	մահմեդ.	11,319	քրիստ.
1875 թ.	25,028	»	11,980	»

Ուրեմն մահմեդականները Էրզերումի վիլայէթում 4 տարւայ ընթացքում աճել են մօտ 13,000-ով, այ-

[1]) Տես «Եւրոպա» շաբաթաթերթը 1850 թ. № 16.

[2]) «L' Arménie» 1892 թ. № 42.

[3]) «L' Armenie» 1891 № 26.

սինքն գրեթէ $15^0/_0$-ով, այնինչ քրիստոնեաների թիւը նոյն ժամանակաշրջանում համարեա անփոփոխ է մնացել։ Ա՜յդքան խոշոր տարբերութիւն միևնոյն պայմաններում ապրող ազգութիւնների աճման մէջ երբէք հնարաւոր չէ։

Սակայն թիւրքական հին ռեժիմի համար ամեն մի անհեթեթութիւն ու տարօնակութիւն հաւանական ու սովորական երևոյթ էր։

Հէնց այդ պատճառով այժմ այլ ևս ոչ ոք հաւատ չէ ընծայում թիւրքական տեղեկութիւններին, և հետաքրքրւողներն աշխատում են անձամբ հաւաքել ցանկալի փաստեր։ Թիւրքահպատակ հայերի թիւը պարզելու առաջին լուրջ փորձը արել է Էրզրումի անգլիական հիւպատոս մայոր Տրօտտերը—1880 թ.։ Այդ թւականին թիւրք կառավարութիւնը հրատարակեց պաշտօնական տեղեկութիւններ, որոնցից երևում է որ, Փոքր-Ասիայի 9 վիլայէթներում—(Էրզրում, Դիարբեկիր, Բիթլիս, Վան, Մամուրեդ-Իւլ-Ազիզ, Սըվազ, Տըրապիզօն, Հալեպ և Ադանա)—ազգաբնակութեան քանակը հետևեալ պատկերն է ներկայացնում։

Ընդամենը 4,629,375 բնակիչ—($100^0/_0$), որից 3,619,625 մահմեդականներ ($78^0/_0$), 726,750 հայեր ($16^0/_0$) և 283,000—ուրիշ քրիստոնեաներ—($6^0/_0$)։ Տրօտտերը քննում է այդ թւերը, հաւաքում է նորանոր տեղեկութիւններ և գալիս է այն եզրակացութեան, որ ճիշտ չեն դրանք, որ բոլորի վրա էլ պէտք է աւելացնել $25^0/_0$. այդպիսով դուրս է գալիս՝

Ընդամենը 5,924,125 բնակիչ, որոնցից 4,453,250 մահմեդական, 838,125 հայ և 632,750 ուրիշ քրիստոնեաներ։

Բայց եթէ վերցնելու լինենք նոյն 1880 թ. հրատարակած Հայոց պատրիարքարանի տեղեկութիւնները, այն ժամանակ պատկերը բոլորովին կը փոխւի։ Այդ

տեղեկութիւնների մէջ բաց են թողնւած 9 վիլայէթներից 2-ը—(Ադանա և Տրապիզօն), իսկ մնացած 7 վիլայէթների—(Էրզրում, Դիարբեկիր, Բիթլիս, Վան, Մամուրեդ-Իւլ-Ազիզ, Սըվազ և Հալեպ)—ազգաբնակութիւնն է՝ ընդամենը 1,831,250, որից 776,500 մահմեդական, 780,570 հայ և 274,000 ուրիշ քրիստոնեաներ։ Բաւական է այդ թւերը համեմատել նախորդների հետ, որպէսզի տեսնենք նրանց խոշոր տարբերութիւնը։

Մայոր Տրօտտերի փորձից յետոյ ուշադրութեան արժանի է ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինէի հետաքրքրաշարժ աշխատութիւնը—չորս մեծադիր հատորներից բաղկացած «La Turquie d'Asie. Géographie, administrative, statistique, descriptive et raisonnére de chaque province de Asie Mineure— 1891—94 »—խորագրով։ Այդտեղ ի միջի այլոց բաւական մանրամասն տեղեկութիւններ կան հայերի քանակի մասին։ Եթէ ամփոփելու լինենք այդ թւերը, կը ստանանք հետևեալը.

Վերոյիշեալ 9 վիլայէթներում կայ 5,924,125 հոգի ազգաբնակութիւն, որից 4,453,250 մահմեդական. 838,125 հայ և 632,750 ուրիշ քրիստոնեաներ։

Հայերը միւս ազգութիւնների համեմատութեամբ մեծամասնութիւն են կազմում հետևեալ կազաներում.

Սանջակ	Կազա	Տարած. քառակ. կիլոմ.	Ամբողջ ազգաբնակութ.	Մահմեդականներ	Հայեր	Հայերի [illegible]
Վան	Վան	8,463	91,125	24,125	67,750	$74^0/_0$
	Արճէշ		22,000	8,000	14,000	64—
	Մոքս	769	8,750	3,250	5,500	63—
	Ադելջիւազ	769	6,875	2,750	4,125	60—
	Կարճկան	1,429	9,500	4,250	5,250	55—
	Գեւաշ		7,000	3,125	3,875	55—
	Շատախ	1,704	18,000	8,000	9,000	50—
Մուշ	Բուլանըխ	2,253	33,375	11,000	22,375	67—
	Մուշ	2,803	84,875	32,000	52,875	62—
	Ընդամենը	18,190	282,625	96,500	185,125	$65^0/_0$

Ուրեմն ըստ Քինէի հայերը մեծամասնութիւն են կազմում միայն 2 սանջակի մի քանի կազաներում։

Այդ տեղեկութիւնները առանձին յօդւածով քննութեան է ենթարկում ռուս գեներալ Զելենով, որ եղել է՝ 1) 1865—67 թ. Էրզրումում ռուսաց կոմիսար չերքեզներին գաղթեցնելու ժամանակ, 2) 1870—1877 թ. գլխաւորական գործակալ Կ. Պօլսում և 3) անդամ մի քանի կոմիսիաների—ռուս-թիւրքական-պարսկական վէճերը քննելիս։ Նրա կարծիքով Քինէի տեղեկութիւնները ճիշտ չեն, որովհետև հիմնւած են թիւրքական աղբիւրների վրա (1886 թ.), աւելացնելով միայն 10%։ Զելենով իր ունեցած փաստերի հիման վրա գալիս է այն եզրակացութեան, որ հայերի թիւը $75^3/_4$ հազարով աւելի է, քան թէ Քինէի հաղորդածը, ուրիշ խօսքով ասած՝ 9 վիլայէթների ազգաբնակութիւնը ներկայացնում է հետևեալ պատկերը. ընդամենը 5,999,875 հոգի, որից 4,453,250 մահմեդական, 913,875 հայ և 632.750 ուրիշ քրիստոնեաներ։

Սակայն գերմանացի յայտնի պրոֆ. Զուպանի կարծիքով այդ էլ քիչ է։ «Die Verbreitung der Armenier in der asiatischen Turkei und Transkaukasien» խորագրով մի ընդարձակ յօդւածում [2]) նա քննում է վերոյիշեալ թւերը և գալիս այն եզրակացութեան, որ գեներալ Զելենով մի քանի սխալներ է գործել Դիարբեկիրի և Տրապիզոնի վիլայէթների վերաբերմամբ, քիչ նւազեցնելով հայերի թիւը և հաշւելով եզիդի քիւրդերին—մահմեդական, իսկ հրէաներին—քրիստոնեաներ։ Ըստ պրոֆ. Զուպանի՝ 9 վիլայէթներում 6,082,000 բնակիչ կայ—այն է՝ 4,397,000 մահմեդական, 921,060

[1]) „Записки Кавказ. Отд. Импер. Рус. Геогр. Общества“, 1895 թ. XVIII հ.

[2]) «Petermanns Mitteilungen» 1896, 42 Band.

հայ, 640,000 ուրիշ քրիստոնեաներ և 124,000 եզիդներ ու հրէաներ։

Իսկ յայտնի թիւրքասէր պրոֆ. Վամբերին իր «Armenier und Kurden» [1]) յօդւածում յիշում է, որ այդ վիլայէթներում կայ 5,999,125 ազգաբնակութիւն որից 4,453,250 մահմեդական և 1,131,125 հայ։

Եւրոպական միւս գրւածքներից հայերի թւի մասին առանձին ուշադրութեան արժանի է անգլիացի ճանապարհորդ Լինչի աշխատութիւնը—«Armeuia Travels and Studies», որ լոյս է տեսել 1901 թ., ուրեմն նորագոյն աղբիւրը կարող է համարւել։

Այդտեղ հեղինակը յիշում է, որ բոլոր հայերի թիւը հասնում է 2,427,394-ի, այն է՝

1)	Թիւրքական և Ռուսական Հայաստան	906,984
2)	Կովկ. և Անդրկովկաս	450,000
3)	Աստրախան և Բեսարաբիա	75,000
4)	Ասիական Թիւրքիա	751,500
5)	Եւրոպական Թիւրքիա	186,000
6)	Ատրպատական	28,900
7)	Նոր-Ջուղա և շրջակայք	14,110
8)	Բօլգարիա	5,010
9)	Ռումինիա	8,070
10)	Աւստրիա	1,230
	Ընդամենը	2,427,394

Ամբողջացնելով Փոքր-Ասիայի հայերի թիւը—կըստանանք 906,984+751,500=1,658,484, բայց դրա մէջ մտել է ռուսական հայերի (ռուսական Հայաստան) թւի մի մասը, մօտ 600,000 որը և դուրս գալով կըստանանք ընդամենը 1,058,484,

Այդպէս ուրեմն, ամփոփելով անգլիական, ֆրանսիական, ռուսական և գերմանական աղբիւրներից բըղ-

[1]) «Deutsche Rundschau» 1896, Februar.

խող տեղեկութիւնները, կը ստանանք հետևեալ պատկերը. Փոքր-Ասիայի 9 վիլայէթներում հայերի թիւն է.

Ըստ Տրօտտերի	780,750
» Ռօլէն Ժեկմենի[1]	1,330,000
» Քինէի	838,125
» Զելենոյի	913,375
» Զուպանի	921,000
» Վամբերիի	1,131,125
» Լինչի	1,058,484

Ուրեմն ամենաշատը—1,330,000։

Պարզ է, ի հարկէ, որ այդ թւերը վերցրած են մօտաւոր չափով, քանի որ, ինչպէս ասացինք, Թիւրքիայում չկայ կանոնաւոր վիճակագրութիւն, եղած տեղեկութիւններն էլ աղաւաղւած ու ստած են։

Իսկ ինչ են ասում միևնոյն խնդրի մասին հայկական աղբիւրները.—գրեթէ ոչինչ։ Դժբաղդաբար մինչև օրս մենք չունինք մի կարգին ուսումնասիրութիւն թիւրքահպատակ հայերի քանակի մասին։ Ներսէս պատրիարք Վարժապետեանի օրով կազմած վիճակագրութիւնը վերաբերում է միայն 7 վիլայէթներին՝ Կարին, Բայբուրդ, Երզնկայ, Մանազկերտ, Մուշ, Բաղէշ (Բիթլիս) և Վան—որոնց համար ինքնավարութիւն էր պահանջում։

Այդ վիճակագրութեամբ յիշեալ շրջաններում ազգաբնակութիւնը հետևեալ պատկերն է ներկայացնում[2].

Հայեր	—	1,150,000
Թիւրքեր	—	400,000
Քիւրդեր	—	80,000
Զազաներ	—	35,000

[1]) „Братская помощь"—Арменія, Армяне и трактаты.

[2]) «L' Armenie» 1892 թ. № 42.

Եզիդիներ		13,000
Յոյներ	—	5,000
Ասորիներ	—	14,000
Ընդամենը		1,700,000

Դրանից յետոյ հայերի թիւը ճշտօրէն որոշելու նկատմամբ գրեթէ ոչինչ չէ արւած կամ եթէ արւած է, գոնէ հրապարակ չէ հանւած։

1880 թւականին հանգուցեալ Ալէքսանդր Երիցեանը «Փորձ» հանդէսի մէջ մի թռուցիկ յօդւածով խօսում է Թիւրքիայի հայաշատ սանջակների մասին և գալիս է այն եզրակացութեան, որ Էրզրումի առաջւայ վիլայէթում 1872—78 թ. կային՝ բացի Էրզրում, Բայբուրդ, Խնուս, Հասան-Ղալայ, Բայազէդ, Վան, Մուշ և Երզնկայ քաղաքներից, 6119 գիւղ—144,161 տուն—1,162,900 բնակիչներով։ Դրանցից 498,007 կամ 42,5%-ը հայեր են։ Այդ թւերը բաւական մօտ են Քինէի հաղորդած թւերին, եթէ ընդունելու լինենք, որ «առաջւայ Էրզրումի վիլայէթը» իր մէջ պարունակել է այժմեան Էրզրում, Վան և Բիթլիս վիլայէթները։

Հայերէն ուրիշ աղբիւրներից առանձին ուշադրութեան արժանի է Կ. Պօլսի ազգային հիւանդանոցի օրացոյցը, որ հրատարակւում է ս. պատրիարքի հսկողութեամբ։ Այդտեղ յիշւած է, որ Թիւրքիայում 2,500,000 հայեր են ապրում, բայց ինչպէս երևում է այդ թիւը վերցրած է մօտաւորապէս, գուցէ և քիչ չափազանցացրած, ուստի և դժւար է հաւատ ընծայել նրա ճշմարտութեանը։

Իրականութեան աւելի մօտ է երևում պ. Մ. Ա. Թ.-ի հաղորդած վիճակագրական ցուցակը[1], որի համեմատ Թիւրքահայաստանի գաւառներում հայերի թիւն

[1]) Տես «Հայերն ու նրանց դրացիները» գրքոյկը, որ լոյս է տեսել Մարսէլում, պ. Մ. Փորթուգալեանի հրատարակութեամբ։

է 1,150,000, այսինքն պրոֆ. Վամբերիի հաղորդածից քիչ աւելի։

Այդպիսով հայկական ու եւրօպական տեղեկութիւնների համեմատութիւնից կարելի է դուրս բերել այն եզրակացութիւնը, որ յիշեալ ինը վիլայէթներում հայերի թիւը կարող է լինել ամենաշատը՝ մէկ միլլիօն երեք հարիւր հազար, չը հաշւելով Կ. Պօլիսն ու Բալկանեան սահմանները։

Այժմ տեսնենք, թէ օսմանեան պզգաբնակութեան խոշոր հատւածներից մէկը կազմող այդ ժողովուրդը ինչպիսի անցեալ է ունեցել, ինչ հոսանքներ է առաջացրել և առհասարակ ինչ չափով ազդել է տիրող կարգերից։

ԺԵ. ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Հայերը և թիւրքական արշաւանքները.—Սուլթանների հովանաւորութիւն.—Գաղթ դէպի Կ. Պօլիս.—Հայ կաթոլիկների և լուսաւորչականների պայքարը.—Հալածանք կաթոլիկների դէմ.—Նոր հոսանքներ. Արհեստաւորների և ամիրաների պայքարը դպրոցական հարցի շուրջը.—Խրիմեանի և գաւառացի երիտասարդութեան ազդեցութիւնը.—Հայոց ազգային սահմանադրութեան նախօրեակին։

—

Հայ ժողովուրդը դեռ երկար դարեր առաջ իր պատմական-աշխարհագրական վիճակի շնորհիւ ամենից աւելի էր տուժում թիւրքական արշաւանքներից, ամենից աւելի էր ենթարկւում պատերազմական արհաւիրքներին։

Նրա հայրենիքը մերթ իբրև թատերաբեմ էր ծառայում այդ արիւնոտ պատերազմների համար, մերթ իբրև ճանապարհ։

Եւ որ կողմն էլ լինէր յաղթանակողը, այնուամենայնիւ մխիթարական ոչինչ չը կար հայի համար։ Նրա բաժինը միայն գրկանքն էր՝ թալանի, ջարդի ու աւերածութեան ենթարկւելը։

Սակայն Օսմանեան կայսրութիւնը հիմնւելուց յետոյ, երբ մահմեդական տիրապետութիւնը աւելի ու աւելի մօտենում էր քրիստոնեայ Եւրօպային, երբ բազմանում էր քրիստոնեայ հպատակ ազգերի քանակը, սուլթանները կամաց-կամաց սկսում են որոշ հովանաւորութիւն ցոյց տալ դէպի հայերը։

Դրա պատճառը այն էր, որ նախ՝ հայերը իբրև աւելի հին հպատակներ արդէն փորձւած էին իրենց

հաւատարմութեամբ և երկրորդ՝ նրանք թէև քրիստոնեայ էին, բայց դաւանակից չէին եւրոպական մեծ պետութիւններին, ուստի և արտաքին ուժի դրդումներից ու ազդեցութիւնից հեռու էին, գոնէ կրօնական տեսակէտից:

Հայերին հովանաւորող սուլթանական քաղաքականութիւնը առանձնապէս աչքի է ընկնում XV-րորդ դարի երկրորդ կիսում:

Սուլթան Մահմեդ II-ը Յունաստանի մայրաքաղաքը՝ Կ. Պոլիսը գրաւելուց յետոյ հրաւիրում է իր նախկին մայրաքաղաքից՝ Պրուսայից «հայոց առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին և պատրիարք կարգում, ստորադրելով նրան Յունաստանի և Անատոլիայի հայքը, որոնք կամ արդէն սուլթանի հպատակն էին և կամ յետոյ հպատակեցան» [1]:

Նոյն սուլթանի հրաւէրով Պրուսայից Կ. Պոլիս են տեղափոխւում նաև մի քանի հայ ընտանիքներ՝ յատկապէս հմուտ վաճառականներ ու արհեստաւորներ:

Սակայն հայ արհեստաւորների թիւը առանձնապէս մեծանում է սուլթան Սելիմ Ա-ի օրով, որովհետև «այս ինքնակալը 1513 թ. հասնելով մինչև Պարսկաստան առաւ Թաւրիզը և ի թիւս այլոց գաղթեցրեց Կ. Պոլիս և այնտեղի բոլոր հայ արհեստաւորներին [2]:

Պոլսաբնակ հայերի կենցաղի ու վայելքների մասին չափազանցրած լուրերը, առասպելները հասնում են գաւառից-գաւառ և մի ազդու շարժառիթ դառնում գաղթականութեան հոսանք ստեղծելու դէպի Բոսֆորի ափերը, դէպի Կ. Պոլիս:

Գաւառացի ծաղիկ ուժեր թափւում էին մայրաքաղաք՝ նոր արհեստներ ու գիտութիւն սովորելու,

[1]) Տես «Փորձ» 1876–7, № 1, եր. 370.

[2]) Ibid.

գործ ու ապրուստի դիւրին միջոցներ գտնելու համար:

Տարիների ընթացքում այդ հոսանքը արդէն այնքան մեծանում է, որ գաւառում մնացած հայ ազգաբնակութիւնը տրտունջ է բարձրացնում դրա դէմ, առարկելով, թէ հեռացողների փոխարէն ինքը ստիպուած է հարկ վճարել:

Կառավարութիւնը 1660 թւականից յետոյ մի քանի անգամ կարգադրութիւններ է անում պատրիարքարանի միջոցով, որպէսզի Կ. Պոլսում գտնւող գաւառացի հայերին դուրս քշեն դէպի հայրենիք [1]:

Նշմարելու արժանի է այն հանգամանքը, որ սուլթանները թէև բարեհաճ տրամադրութիւն էին ցոյց տալիս դէպի հայերը կամ աւելի ճիշտ կը լինի ասել՝ դէպի հայ հոգևորականութիւնը, թէև նրանք բոլորովին չէին խառնւում հայ եկեղեցու ներքին գործերին, միանգամայն լիազօրութիւն տալով այդ ասպարիզում պատրիարքին, բայց և այնպէս այդ չէր խանգարում, որ այս կամ այն պաշտօնեան կրօնական մոլեռանդութիւնից ու ատելութիւնից դրդւած ամենադաժան քայլերն անէր հայերի վերաբերմամբ: Այսպէս օրինակ. 1641 թ. Բարայ Մուստաֆայ մեծ վեզիրի հրամանով հալածանք սկսւեց Պրուսայի հայերի դէմ և նոյն իսկ այդ քաղաքի հայկական եկեղեցիներն են քանդւում: 1662 թ. մեծ վեզիր Ահմեդ փաշան հէնց Կ. Պոլսի մէջ, զատկի հանդիսաւոր օրը քանդել է տալիս հայոց և յունաց մի քանի եկեղեցիներ: Նոյնը տեղի է ունենում Ակն, Երզրում Կարս և այլ գաւառական քաղաքներում:

Այդ ու այդ տեսակ բազմաթիւ փաստեր գալիս են ապացուցանելու, որ Թիւրքիան իսկապէս մի կազ-

[1]) Ibid եր. 373.

մակերպած պետութիւն չէր՝ որոշ օրէնքներով ու քաղաքականութեամբ ղեկավարւող, այլ զինւորական մի բանակ էր, որ հրով ու սրով տարածել էր իր իշխանութիւնը և իւրաքանչիւր վայրում այս կամ այն փաշայի քմահաճոյքի առարկայ դարձրել հպատակների կեանքի ու գոյքի ապահովութիւնը։

Օսմանեան պետութեան այն բոլոր հիւանդոտ կողմերը, որոնց պատկերը բաց արինք աշխատութեանս առաջին գլուխներում, ուժեղ կերպով արտայայտւում են հայ ազգաբնակութեան վրա։

Այսպէս անցնում են տարիներ ու դարեր։ Լուսանում է XIX-րորդ դարը, իր հետ բերելով ազգային շարժման փոթորկոտ հոսանքը։

Թիւրքահպատակ քրիստոնեայ ազգութիւնները կազմակերպւած փորձեր են անում ազատութիւն ձեռք բերելու նպատակով։

Բայց հայերը դեռ շատ հեռու էին այդ հոսանքից։ Այդ ժամանակ նրանց ամենից շատ զբաղեցնողը կրօնական հարցերն էին։ Եւ եթէ մտորում էին ազատութեան մասին—այդ էլ կրօնի միջոցով էին անում։

Ինչպէս յայտնի է, դեռ դարեր առաջ հայ հոգևորականութեան և ազնւականութեան մի քանի ներկայացուցիչներ ծրագրել էին հայ ժողովրդին դաւանափոխ անել՝ Հռօմի պապի գերիշխանութեանը ենթարկել, յուսալով, թէ գէթ դրանով կարելի կը լինի թեթևացնել տառապանքի լուծը։

XVII-րորդ դարի վերջերում Իսրայէլ Օրին իր քաղաքական ծրագիրը այդ հեռանկարի վրա էր հաստատել և այդ ուղղութեամբ էլ ջանքեր էր գործ դնում։

Հայերի կողմից այդպիսի տրամադրութիւնը մի նպաստաւոր պայման էր կաթոլիկ քարոզիչներին դէպ Հայաստան գրաւելու համար։

Եւ նրանք գալիս էին. միմեանց յետևից գալիս էին «կաթոլիկութեան լոյսը» հայերի մէջ սփռելու համար։

Սկզբներում ժողովուրդը միանգամայն անտարբեր էր դէպի այդ ինքնակոչ քարոզիչները, իսկ հայ հոգևորականութիւնը շատ սիրալիր ու բարեացակամ։ Այդ սիրալիրութիւնը նոյն իսկ այն աստիճանի էր հասնում, որ 1641 թ. «Նշանաւոր լատին կրօնաւոր Կլեմէն Գալանոսը մինչև անգամ հայ վարդապետական զգեստ հագած Պօլսի հայ պատրիարքարանումն էր ապրում և դասախօսութիւններ անում» [1]...

Բայց կամաց-կամաց սկսւում են վէճերն ու թշնամանքը ոչ միայն Կ. Պօլսում, այլ և գաւառներում և դա ամենասուր կերպարանքն է ընդունում XIX-րորդ դարի սկիզբներում։ Կաթոլիկ քարոզիչներն իրենց դիրքն ամրացնելու նպատակով օգնութեան են դիմում գլխաւորապէս ֆրանսիական դեսպանին և նա միջամտում է ու որոշ իրաւունքներ ձեռք բերում լուսաւորչականութիւնից կաթոլիկ դարձածների համար։

Սակայն թիւրք կառավարութիւնը, մանաւանդ սուլթան Մահմուդ II-ի օրով աւելի հակումն է ցոյց տալիս դէպի հայ-լուսաւորչականները...

Եւ դա ունէր իր քաղաքական աստառը։ Ահա թէ այդ մասին ինչ էր գրում օսմանեան նախարարներից մէկը սուլթան Մահմուդ II-ին, 1827 թ.

—«Ըստ հրամանի այդ խոզի—(այսպէս է անւանում հեղինակը պապին)—կաթոլիկների կանայք շրջում են առանց երեսի քօղի, պասերի ժամանակ ձուկ ու զանազան ծովային կենդանիներ են ուտում. պապը մեղքերի թողութիւն և առհասարակ մեծամեծ թեթևութիւններ է տալիս, որպէսզի որսայ հայերին, պապը

[1]) «Փորձ» 1876 թ. № 1, եր. 387.

համաձայն իրենց դաւանութեան կարող է մինչև անգամ վախճանուած անհաւատներին (քրիստոնեաներին) մեղքերի թողութիւն տալ և անցագիր շնորհել ուղղակի դրախտ մտնելու համար... Ահա այդ պատճառով շատ հայեր փոքր առ փոքր և առանց ոչ ոքի իմացնելու, կաթոլիկ դարձան հազար ու մէկ խորամանկութիւններով և շողոքորթութիւններով, որոնք յատուկ են այն խոզերի երամի վատ բնաւորութեանը և սոցա անիծեալ օրինացը և այդ պատճառով հասարակ կենդանեաց հաւասար են:

Իսկ եթէ պապի իրաւասութեան տակ ազգերից մէկը, օրինակ գերմանացիները կամ վենետիկցիները Օսմանեան տէրութեան դէմ պատերազմ բանան, այն ժամանակ մեր կաթոլիկ հպատակները ամեն միջոց գործ են դնելու բարձրագոյն դրան թշնամիներին օգնելու, որովհետև եթէ նոքա այս օգնութիւնը չը տան, այն ժամանակ, ըստ իրենց կրօնական համոզմունքին, իրենց մարգարէ Յիսուսի առաջ մեղապարտ կը համարուեն:

Յունաց ազգի վարմունքը միանգամայն ապացուցեց այդ բանի ճշմարտութիւնը. այն ինչ հայք, հաւատարիմ մնալով իրենց հայրական աւանդութեանը, ոչ մինի կողմը չեն և բացարձակ հաւատարիմ են գահին...»

Ահա այդ բոլորի հիման վրայ նախարարը պահանջում է խիստ պատիժ այդ «անիծեալ կաթոլիկների մէկ քանիսի համար...»

Եւ սուլթանը նշանակում է այդ «պատիժը»: Նա հրամայում է Փոքր Ասիայի խորքերը գաղթեցնել հայ կաթոլիկներին: Եւ այդ դաժան հրամանը կատարւում է մեծ եռանդով ու շտապողութեամբ:

Մի քանի հազար ընտանիքներ, կանայք ու տղա-

մարդիկ, ծերեր ու երեխաներ ճանապարհ են ընկնում ցրտաշունչ ձմրան օրերին դէպի հեռու վայրեր:

Շատերը մահմեդականութիւն են ընդունում այդ պատժից խուսափելու համար. ոմանք էլ Եւրոպա են փախչում, թողնելով տուն-տեղ ու ապրուստի բոլոր միջոցներ: Աքսորուածների թիւը հասնում էր 12,000-ի, դրանցից ճանապարհին սովից ու ցրտից մեռնում են 400-ից աւելի երեխաներ:

Ա՛յդքան դառնութեան, այդքան մեծ զոհերի վըրէժը հայ լուսաւորչականներից լուծելու համար կաթոլիկներից ոմանք էլ աշխատում էին սուլթանին համոզել, թէ հայ լուսաւորչականները ուզում են սեփական թագաւորութիւն հիմնել, թէ նրանք գաղտնի կապակցութիւն ունեն ռուսների հետ և այլն:

Միևնոյն ժողովրդի երկու հատուածները ամենաստոր միջոցներով էին պայքարում միմեանց դէմ, մատնութեամբ, զրպարտութեամբ էին իրար փասել աշխատում: Եւ այդպէս տարիներ շարունակ:

Այսպէս թէ այնպէս կրօնաւորների ջանքերով երկպառակութեան սերմը ընկել էր թշուառ ժողովրդի մէջ և աւելի ևս դառնացնում էր նրա օրերը:

Վերջապէս ռուս-թիւրքական պատերազմից յետոյ Անդրիանապոլսի դաշնագրում (1829 թ.) դեսպանների ջանքերով յատուկ կէտ է դրւում կրօնի ազատութեան մասին, որով և հայ կաթոլիկները ազատւում են վերոյիշեալ բացառիկ վիճակից: Իսկ 1831 թ. սուլթանը առանձին իրադէով յայտարարում է ի միջի այլոց.

—«Մանուէլեան Յակոբ վարդապետին բոլոր իմ հպատակ հայ կաթոլիկների առաջնորդ նշանակեցի, բայց դորա պէտք է առաջուց 150,000 ղուրուշ ընծայ տան արքունական գանձարանին և տարեկան 3 միլիոն 38 հազար ղուրուշ էլ հարկ»...

1835 թ. սուլթանը մի ուրիշ իրադէով հայ կաթոլիկների առաջորդին պատրիարքական տիտղոս է շնորհում,[1]) ինարկէ դարձեալ մեծ պետութիւնների դրդմամբ:

Այդ բոլորից յետոյ կամաց-կամաց հանդարտւում են կրքերը, նւազում կրօնական վէճերն ու [2]) կռիւները և դրանց փոխարէն հետզհետէ կրթական կուլտուրական հարցերն են առաջ մղւում:

Դրան նպաստում է և այն հանգամանքը, որ երիտասարդ Թիւրքերի ռահվիրայ Ռաշիդ փաշայի ջանքերով հրատարակւում են Օսմանեան ամբողջ կայսրութեան համար նշանակալից հրովարտակները՝ 1839 թ. «Խաթթի շէրիֆը» և 1844 թ. «Թանզիմաթը».

Բարենորոգչական այդ խոստումները և բարձր կառավարութեան խաղաղ քաղաքականութիւնը որոշ քաջալերութիւն է ներշնչում քրիստոնեայ տարրերին, ինքնագործունէութեան եռանդ է զարթեցնում նրանց շարքերում:

Հայերն էլ յետ չեն մնում այդ հոսանքից: Կ. Պոլիսն էր նրանց մտաւոր-կուլտուրական կենտրոնը, ուստի գործունէութեան առաջին արտայայտութիւններն էլ այդտեղից են սկսւում:

Ղեկավար շրջանների առաջին ջանքն է լինում բաւարարութիւն տալ միջնակարգ դպրոցի վաղուց զգացւած կարիքին: Նորոգւում է Իւսկիւտար թաղում գտնւած երուսաղեմապատկան հին շինութիւնը և դառնում առաջին հայկական միջնակարգ գիշերօթիկ դպրոցը (1839 թ.):

[1]) Տես Ա. Պէրպէրեանի «Պատմութիւն հայոց» եր. 220.

[2]) Կրօնական պայքարը նորից բռնկւում է 1846 թ., բայց այս անգամ հայ լուսաւորչականների և բողոքականների միջև: Հարցը այնքան սուր կերպարանք է ընդունում, որ Մատթէոս պատրիարքը նոյն իսկ մի կոնդակով բանադրում է բողոքականների պարագլուխներին: Բայց ժամանակի ընթացքում այդ պայքարն էլ մեղմանում է:

Սակայն բաւական չէր դպրոցը բանալը. հարկաւոր էին և միջոցներ նրա պահպանութեան համար: Ահա այդ միջոցները հայթհայթելու և առհասարակ վարչական ղեկը տանելու համար Յակոբ պատրիարքը ընտրել է տալիս հոգաբարձութիւն:

Ո՞վքեր պէտք է լինէին այդ մարմնի անդամները՝ արդեօք արտօնեալները—ամիրաները, որ վաղուց արդէն իրենց մենարտօնութիւնն էին դարձրել ազգային բոլոր գործերի կարգադրութիւնն ու ղեկավարութիւնը, թէ՞ բուն ժողովրդական ույժեր, որոնք նոր հոսանքների ազդեցութեամբ կամաց-կամաց ձեւաւորւում էին ու իրենց մասին զգացնել տալիս:

Յակոբ Պատրիարքը կողմնակից է հանդիսանում այս վերջին ելքին և ընտրել է տալիս հոգաբարձութեան անդամներ 22 արհեստաւորներ և միայն 2 ամիրաներ: Այդ քայլը մեծ յուզմունք է առաջացնում ամիրաների, էֆէնդիների շրջանում:

—Ինչպէ՞ս. այդ ողորմելի արհեստաւորնե՞րը պիտի ղեկավարեն դպրոցը. դրա՞նք պիտի մեզ հետ հաւասար իրաւունքներ վայելեն... Ո՛չ, դա ազգի կործանում կը նշանակէ... Այսպէս են մտածում էֆէնդիները և միջոցներ ձեռք առնում «չարիքը» հեռացնելու համար:

Եւ միջոցը շատ հեշտութեամբ է գտնւում: Նրանց դրդմամբ կառավարութիւնը սկսում է խուզարկութիւններ ու բանտարկութիւններ:

Արհեստաւոր դասի ընտրած հոգաբարձուների մեծ մասը բանտ է տարւում: Էֆէնդիները հրճւում են իրենց յաղթանակը տեսնելով:

Բայց երկար չէ տեւում այդ հրճւանքը, աշխատաւորութիւնն անպատասխան չէ թողնում այդ քայլը: Մի գեղեցիկ օր ամբողջ հայ արհեստաւորութիւնը փակում է խանութները և ըմբոստ թափօրով դիմում է

կառավարութեանը, կանչելով. —Ազատութի՛ւն, ազատութիւն մեր ընտրած հոգաբարձուներին։

Արձակեցէք նրանց բանտից, նրանք անմեղ են։

Եւ պահանջը կատարւում է։ Կառավարութիւնը ոչ միայն արձակում է բանտարկեալներին, այլ և յատուկ հրովարտակով հաստատում է 27 հոգուց բաղկացած ժողովրդական հոգաբարձութիւն, վերադարձնելով նրան ազգային եկեղեցու ընդհանուր վերահսկողութիւնը։ Սակայն ամիրայական դասը վրէժը լուծելու համար կողմնակի և ուղղակի ճանապարհներով ամէն կերպ աշխատում է նիւթական նեղ վիճակի մէջ թողնել հոգաբարձութեանը, նւազեցնել ու կտրել նրա եկամուտները, որպէսզի «ամբոխները ընկճւեն»։

Պարզ է, ի հարկէ, որ այդ պայքարը կորստաբեր ազդեցութիւն միայն կարող էր ունենալ դպրոցի ապագայի վերաբերմամբ, ուստի և Մատթէոս պատրիարքը հաշտեցնում է ազգային հակադիր հոսանքները և նրանցից մի միացեալ հոգաբարձութիւն կազմում 30 հոգուց բաղկացած (16 ամիրաներ և 14 արհեստաւորներ։

Այդ նոր դրութիւնն էլ բաւարարութիւն չէ տալիս ամիրաներին։ Նրանք չեն կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ մի հասարակ արհեստաւոր կարող է գալ-բազմել իրենց կշտին և ազգի գործերը կարգադրել հաւասար իրաւունքներով...

Նրանք տրտնջում էին այդ իրողութեան դէմ, բայց և այնպէս չէին համարձակւում կտրուկ քայլեր անելու, որովհետև արդէն մի անգամ տեսել էին դեմոսի ույժը, զգացել էին նրա սպառնական ազդեցութիւնը։ Իրերի այդպիսի դրութեան մէջ ամիրայական—էֆէնդիական դասը սկսում է գաղտագողի գործունէութիւնը հզօրների, ազդեցիկների աջակցութեամբ։

Եւ ո՞վ պէտք է լինէր նրա նեցուկը, եթէ ոչ դարձեալ կառավարութիւնը։

Ժողովրդի գերիշխանութիւնը ճնշելու համար էֆէնդիները մտածում են ստեղծել մի այնպիսի վարչական մարմին, որտեղ արտօնեալները լինեն մեծամասնութիւն։ Եւ ահա նրանց ջանքերի շնորհիւ կառավարութիւնը մի առանձին հրովարտակով հրամայում է պատրիարքին հիմնել հոգևոր և քաղաքական ժողովներ, որոնցից առաջինը պէտք է կառավարէր կրօնական գործերը, իսկ երկրորդը՝ քաղաքական։ Թէև երկուսի նախագահն էլ ինքը պատրիարքը պէտք է լինէր, բայց նա իրաւունք չունէր առանց այդ ժողովների որոշման մի որև է քայլ անելու, յարաբերութեան մէջ մտնելու իշխանութեան հետ։ 1847 թ. ընտրւում են այդ ժողովների անդամները՝ 14 հոգևորական և 20 աշխարհական, որոնցից 9-ը յատկապէս ամիրաներից, իսկ մնացած 11-ը վաճառականներ ու արհեստաւորներ։

Դա ներկայացուցչական սկզբունքի առաջին կիրառումն էր, որ յետոյ ծնունդ տւեց «Ազգային սահմանադրութեան»։ Ամիրաները թէև այդ ժողովները հաստատել էին տւել, որպէսզի դրանով իրենց վրէժը լուծեն արհեստաւորների պաշտպան պատրիարքից, կրճատեն նրա իրաւունքները և ապահովեն ազգի «եբեկլիների» գերիշխանութիւնը, բայց և այնպէս նրանց սպասելիքներին հակառակ այդ ժողովները դարձան որոշ խթաններ ժողովրդին ոտքի հանելու համար, նրանց հետաքրքրութիւնը զարթեցնելով դէպի ազգային գործերը։

Էֆէնդիական խումբը իր դաւերով կարողանում է վերջապէս պատրիարքութիւնից հեռացնել Մատթէոսին, բայց նրանց այդ աջողութեանը իսկոյն հետևում է պարտութիւն, որովհետև նոր պատրիարք է ընտր-

ւում (1848 թ.) Յակոբ եպիսկոպոսը, որ դարձեալ ժողովրդասէր մի մարդ էր, ամիրաների հակառակորդ…

Այսպէս. թէ այնպէս նշանաւոր էր այդ տասնամեակը (184′—1850) նրանով, որ առաջին անգամ ժողովրդական շարժման յորձանքներն էին բարձրանում ընդդէմ արտօնեալների:

Տարերային, պատահական բնոյթ էր կրում շարժումը, բայց և այնպէս նա նշանակալից էր իբրև պերճախօս մի արտայայտութիւն ժողովրդի արթնացման տարկական քնից, քարացած անտարբերութիւնից:

Եւ այդ ժամանակաշրջանում մենք տեսնում ենք շարժման առաջապահ շարքերում գլխաւորապէս գաւառից նոր եկած երիտասարդներին:

Բուն երկրում կրած ծով տառապանքը կարծես կռել ու կոփել էր դրանց մէջ ըմբոստ ոգին:

Այդ երիտասարդների մէջ առանձնապէս աչքի էր ընկնում մէկը, իբրև գեղեցիկ ճառախօս ու երկրի վիճակին լաւատեղեակ անձն: Մկրտիչ Խրիմեանն էր այդ երիտասարդը, որ դեռ նոր ամուսնացած՝ պանդխտութեան ցուպն էր ձեռքն առել և Վասպուրականից Պոլիս էր անցել՝ և հաց վաստակելու և մտաւոր պաշարը լրացնելու նպատակով:

Նա արդէն բաւական ծանօթութիւններ էր հաստատել և լայն շրջաններում յայտնի էր դարձեալ իբրև գաւառացի հայրենասէր:

Նա գրեթէ առաջին կենդանի աղբիւրն էր, որ այնպէս ազդու ձևերով հնչեցնում էր բուն ժողովրդի ցաւոտ մրմունջները երկրից կտրուած պոլսեցիների ականջին, պատկերացնում էր թիւրքահայ գաւառների տառապանքը այնպէս ցայտուն գոյներով:

Եւ նրա անունն ու հմայքը աւելի ևս բարձրանում է, երբ 1850 թ. Կ. Պոլսում լոյս է տեսնում նրա

առաջին բանաստեղծական աշխատութիւնը՝ «Հրաւիրակ Արարատեան»:

Դա հայրենասիրական կրակոտ երգ էր, որով [1]) «դիմելով սիրելի հայ մանուկներին, հեղինակը իր հետ դէպի պատմութեան խորքերն է տանում ընթերցողին, բաց է անում նրա առաջ դրախտի կեանքը, պատմում է մարդկութեան առաջին օրերը, հայ ազգի սկզբնաւորութիւնը, և ապա հանգչելով Մասիսի ստորոտում, գովաբանում է Նոյի և Թորգոմի ժամանակները այսպիսի խօսքերով.

«Վա՜շ քանի՜ քաղցր էր նոցին կենցաղ երկրիս Այրարատու,
Յորժամ ոչ էր բռնաւոր և հարկահան անագորոյն.
Ոչ կռփումն անաւագին և աղաղակ զրկեցելոյն,
Ո՛չ իշխան, ոչ իշխեցեալ կամ թագաւոր և ժողովուրդ,
Ո՛չ զօր, ոչ պատերազմ և խաղմարար աշխարհաւեր,
Ոչ ի սուր ձուլէր երկաթ, այլ ի մանգաղ և գերանդի.
Լոկ ի պէտս երկրագործին և ոչ մարդոյն մարդախոշող.
Ոչ զքրտանց վաստակ ուրումն յափշտակէր ոմն անիրաւ…
Ոչ ի գանձս բազմէր ոմն ի յապարանս փողփինափայլ
Ոմն ի դաշտ արևակէզ մինչ ցերեկուն խարշէր քրտամբ…

Ապա պտտեցնում է ընթերցողին Էջմիածնի նշանաւոր վայրերը, տանում է դէպի Աւարայրի դաշտը, խօսեցնում է Մեսրոպի և Վարդանի ուրւականներին, ապա անցնում է Վասպուրական, Տարօն և վերջացնում է իր խօսքը, ողբալով, որ ստիպուած է հեռու Բիւզանդիոնում, պանդխտութեան մէջ երգել իր կարօտ հայրենիքը»:

Դա մի նոր շեշտ էր, որ գալիս էր ցնցելու շատերի մտքերը:

Եւ բնականաբար վանեցի երիտասարդը, հայրենասէր Մկրտիչը դառնում է ուշադրութեան առարկայ.

[1]) Տես Խ. Մալումեան «Խրիմեան» եր. 11—12.

նրա հաչակը բարձրանում է ոչ միայն աշխատաւոր-ների՝ արհեստաւորների շրջանում, այլ և գրական ու մտաւոր խաւերում:

Այդ միևնոյն ժամանակ յեղափոխական ուժգին հոսանքը, որ 1848 թ. վարարել էր Եւրոպայի գլխաւոր կենտրոնները, կարծես իր մեղմիկ հովերն էր հասցընում և դէպի Բօսֆոր ու աւելի հեռուները: Հայ մտաւորականները կարծես ազատական այդ հովերով տարւած կամաց-կամաց մտորում են և հայկական տառապանքների մասին: Եւ վասպուրականցի հայրենասէրի՝ Մկրտիչ Խրիմեանի կրակոտ ճառերն ու տեղեկութիւնները, բանաստեղծական ոգով «Հրաւիրակի» հետ միացած գալիս են ոյժ ու թափ տալու այդ հոսանքին:

Օտեանների տունը, որ Կ. Պոլսի հայութեան ազատական-առաջադիմական այդ հոսանքի կենդրոնն էր, իր դռները լայն բաց է անում Խրիմեանի առջև. Նա երկրից ու ժողովրդից կտրւած այդ փոքրիկ խմբակի խորհրդակցութիւնների մէջ մտցնում է մի թարմ ու կենդանի հոսանք:

—Ժողովուրդը, բուն երկիրը և նրա ցաւերին դարման—ահա այդ պէտք է լինի մեր հոգացողութիւնը, շարունակ կրկնում էր Խրիմեան, երբ ժողովականները երբեմն տարւում էին Պոլսի տրամադրութիւններով ու տենչերով:

—Ժողովուրդն է մեր կեանքի արմատը, նրան փրկեցէք, կենդանացրէք...

Ժողովրդական այդ շարժման, այդ տպաւորութիւնների ազդեցութեան տակ Կ. Պոլսի մի քանի առաջաւոր հայեր մտորել են սկսում, թէ ինչ ձևով հընարաւոր է ժողովրդի պահանջին բաւարարութիւն

տալ, նրան մասնակից դարձնել ազգային-վարչական գործերին:

Նիկողայոս Զալեանն էր այդ հոսանքի ռահվիրան —«դեռ 1844—1845 թ., պատմում է Ռուսինեան էֆենդին[1]), նա մտորում էր ազգի վիճակի մասին, տենչում էր ժողովրդական ներկայացուցչութիւն կազմել... դեռ 1850 թ. նա իր բնակավայրում ուրւագծում էր ազգային սահմանադրութիւնը»:

Հէնց այդ ուրւագիծն էր, որ տարիներ յետոյ Ռուսինեան, Գրիգոր Օտեան, Սերվիչէն, Ստ. Ասլանեան, Նար. Իւթուճեան, Աղաթօնեան էֆէնդիների հետ միասին վերջնականապէս խմբագրելով, նա ընդհանուրի սեփականութիւն դարձրեց՝ «ազգային սահմանադրութիւն» խորագրով:

Թէ ինչ հովերով էին տարւած այդ մարդիկ, ինչպիսի գաղափարներով էին ոգորւած—կարելի է եզրակացնել այն վկայութիւնից, որ տալիս է թիւրքահայ նշանաւոր գործիչներից մէկը՝ Հրանտ Ասատուր[2]).

—«Ֆրանսիական յեղափոխումի, ասում է նա, հայեր, այդ փառաւոր արշալոյս տիեզերական յեղափոխումի, այդ անհուն վառարանի կայծերն, որ այսօր ամենուրեք հրդեհ կը ձգեն, մեր մէջ ալ սփռեց իր կենսաւէտ նշոյլներ: Մեր մէջ ալ արձագանք գտաւ այն բողոքարկու հզօր ձայն, որ անցեալի պատգամին դէմ կը գոռար: Մեր մէջ ալ մուտ գտաւ այն ժողովրդասէր ոգի, որ միապետական գաղափարներն անվըհատ կը հալածէ և կը պաշտէ հաւասարութիւնն: Թիւրքիայի հայութիւնն ալ ունեցաւ արի անհատականութիւններ, որք, ազատ շունչով ոգորուն, եկան արդարութիւն անել նմա, սահմանադրական տաճարն

[1]) Տես «Ատենագրութիւն ազգ. ժողովոյ» 1865 թ.

[2]) Հրանտ Ասատ. «Սահմանադր. և հայ ժողովուրդ» եր. 15

բարձրացունելով։ Այո, 1860-ի սահմանադրութիւնն ծրագրող և գործադրող վեհոգի յեղափոխականներն Միրաբօի Թոռներն էին։ Նրանք կը պաշտէին ազատութիւնն, զոր Աստուած իբր մեծագոյն բարիք նուիրած է մարդ էակին. Նրանք կը պաշտէին հաւասարութիւնն, զոր իբր հիմք պէտք է ունենայ անձնուէր, արդար իշխանութիւն. Նրանք կը պաշտէին եղբայրութիւնն, որ անքակ կերպով կը միացնէ մարդերն, որպէս և ազգերն»։

50-ական Թւականների արիւնոտ անցքերը Ղրիմի պատերազմ 1855—1856 թ.), ապա դրան հետևող նշանաւոր «Խաթթի հիւմայունը» գալիս էին նոր զարկ տալու հայերի ներքին ազատագրական այդ տենչերին։

Թէև «Խաթթի հիւմայունին» էլ վիճակւած էր միւս Խաթթիների նման մեռած տառ մնալու բախտը, բայց և այնպէս նրա մեծագործ խոստումները վարդագոյն հեռանկարներ են բաց անում ազգաբնակութեան առաջ, վառվռուն յոյսեր են ներշնչում ճնշւած տարրերին։

Բնականաբար հայ մտաւորական հոսանքն էլ քաջալերիչ ույժ է զգում իր մէջ և աւելի խրոխտ քայլեր անում։

Պալեանի և Օտեանի վաղեմի մտորումները Ազգային սահմանադրութեան» վերաբերմամբ Խաթթիի յօդ. 3-ի զօրութեամբ արդէն իրականանալու հնարաւորութիւն են ստանում։

ԺԶ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յանձնաժողովներ «Սահմանադրութեան» մշակման համար.—Նրանց հայտարարութիւնը Բ. Դռան.—Հիմնական սկզբունքներ.—Էֆէնդիական դասի ազդեցութիւնը.—Հոսանքներ «սահմանադրութեան» շուրջը.- Լուսաւորեալք և խաւարեալք.—Զէյթունի ապստամբութեան ազդեցութիւնը.—Կ. Պօլսի մամուլի և երիտասարդութեան պահանջները.—Սահմանադրութիւնը հաստատւած.- Թաքթաքեան պատրիարքի վարմունքը։

—

1860 թ. Մայիսի 24-ին Սարգիս պատրիարքը գումարում է «ազգային խառն ժողով» հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներից բաղկացած։ Այդտեղ քննւում է «Հայոց սահմանադրութեան» ուրւագիծը և որոշւում ներկայացնել Բ. Դռանը ի հաստատութիւն։

Բայց այդ հաստատութիւնը շուտ չէ ստացւում։ Անհրաժեշտ է համարւում վերաքննութեան ենթարկել։ Այդ նպատակով Բ. Դուռը իր կողմից նշանակում է յատուկ յանձնաժողով 4 հոգևորական և 8 աշխարհական անդամներից բաղկացած։

Այդ յանձնաժողովը հայերի ընտրած յանձնաժողովի հետ միասին վերաքննելով և վերջնականապէս մշակելով վերոյիշեալ ուրւագիծը, ներկայացնում է Բ. Դռան հետևեալ յայտարարութեամբ [1].

«Կայսերական Տէրութիւնը, ի վաղուց անտի իր արդարասէր հովանաւորութեան ներքև գտնւող ազգա-

---

[1]) «Ազգ. Սահմանադր. հայոց» 1908 թ. Կ. Պօլիս, եր. 4—9.

ղան Ազգաց՝ Կրօնից ազատութեան և առանձին գործոց մասնաւոր Վարչութեան համար առանձնաշնորհութիւններ ու արտօնութիւններ շնորհած է։

Այս արտօնութիւնները թէպէտ և ըստ սկզբանց ամէն ազգաց համար միօրինակ, բայց միանգամայն ամէն մէկուն կրօնական սեպհական կանոնաց և սովորութեանց համեմատ տնօրինուած ըլլալով, իւրաքանչիւն Ազգ զանոնք իր բնիկ սովորութեանց և ընթացից համեմատ ի գործ դնելով վայելած է։

Հայոց ազգը միւս ազգաց պէս մինչև ցայսօր Պատրիարք մը ունեցած է, որ Տէրութեան կողմէն իբր Նախագահ Պատրիարքական Վարչութեան ճանչցուած է, և Ներկայացուցիչ Ազգին ու Միջնորդ գործադրութեան Կայսերական հրամանաց, և որ ի վաղուց անտի հասարակօրէն Եկեղեցական դասէն ընտրուած է, Ազգին զանազան կարգի անհատներէն բաղկացեալ Ընդհանուր ժողովի մը ձեռօք։

Պատրիարքը իր պաշտօնին մէջ՝ որ է Ազգին նախագահել և անոր օգտիցը հսկել, Ազգին՝ Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ ունեցած ազդեցութենէն ու վերատեսչութենէն բնաւ մէկ ժամանակ ազատ եղած չէ. և ասոր ապացոյցն է, Պատրիարքին ամէն ժամանակ Ընդհանուր ժողով հրաւիրելն ու գումարելը, և կամ ըստ պահանջման գործոց կամ Բարձրագոյն Դրան բացորոշ մէկ հրամանին վրայ կարեւոր խնդրոյ մը ծագած ատենը՝ Ընդհանուր ժողովոյ դիմելն ու անոր որոշումը խնդրելը։

Հայոց Ազգը՝ ասկէ քանի տարւոյ չափ առաջ՝ կայսերական Տէրութենէն խնդրեց որ Պատրիարքարանի մէջ Պատրիարքին նախագահութեամբը երկու ժողով հաստատուին. մէկը Կրօնական, միւսը Քաղաքական գործոց համար, որպէս զի Պատրիարքին պաշտօնատա-

րութեանը գործակից և օգնական ըլլան, և Ազգին թէ ըստ Քաղաքականի և թէ ըստ Կրօնականի՝ վաղեմի կանոններէն և սովորութիւններէն որ և է խոտորմանց առաջքը առնուի։

Երբ այս ժողովները հաստատուեցան, ազգային մանրամասն տնտեսութեան համար ալ՝ քանի մը Խորհուրդներ հաստատել հարկ եղաւ։

Բայց որովհետև Ազգային պաշտօնատեարց ամէն մէկուն իշխանութիւնը և պարտաւորութիւնները որոշարար սահմանուած չէին, յայտնի էր որ Ազգին վիճակը բարեկարգելու մասին եղած այս ջանքերը, Ազգային Վարչութեան զանազան մասանց մէջ, նաև յիշեալ Վարչութեան և Ազգին մէջ՝ անպակաս պառակտումներ ծագելուն առիթ պիտի տային. և աս ալ ամէն կողման վերաբերեալ իրաւանց գործադրութեան մասին շատ մը անկարգութիւններ, և Ազգային վարչութեան մէջ ալ շփոթութիւն և խռովութիւն պիտի պատճառէր։

Ահա՝ այս շփոթութեանց և երկպառակութեանց պատճառները վերցնելու և ամէն կողման պահանջմանց փոխակարութիւնը բառնալու նպատակաւ, Կայսերական Տէրութիւնը իր բոլոր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամօքը՝ Ազգիս մէջէն Խառն Յանձնաժողով մը կազմել հարկաւոր դատեց, որպէս զի Հայոց Ազգին Կրօնական և Քաղաքական բնիկ սովորութեանց, նաև ի վաղուց անտի ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստէ։

Այդ՝ Խառն Յանձնաժողովը պատրաստած կը դատէ որ փութացման համար Բարձրագոյն Դրան մատուցուած Սահմանադրութեան ուրուագծին համեմատ՝

Ա. Պատրիարքին ի մէջ Տէրութեան և Ազգին միջնորդ ըլլալու պաշտօնը ըստ առաջին դրութեան մնայ։

Բ. Ընդհանուր ժողովոյ կազմութիւնը առաջինէն աւելի կանոնաւոր կերպիւ նորոգւի։ Եւ ազգային երեսփոխանները Էսնաֆներէն ընտրուելու տեղ (ըստ որում Էսնաֆներուն վիճակը նոյնը չէ ինչ որ առաջ էր), Յունաց Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ աւելի կանոնաւոր և օրինաւոր կերպով՝ Եկեղեցեաց ժողովուրդներէն (այսինքն Թաղերէն) ընտրուին։

Եւ որովհետև գաւառները բնակող հայ ժողովուրդները իրաւամբ կը գանգատին թէ պատրիարքարանը որոշումներուն խորհրդածութեններէն և մասնակցութեններէն բոլորովին զուրկ են, Երեսփոխաններուն մէկ մասը գաւառներուն կողմէն ընտրուին. և Կոստանդինուպօլսոյ Թաղերուն Երեսփոխանաց վրայ աւելցուին։ Եւ ժողովոյն Կրօնական մասը, այսինքն անդամոց քսանը՝ Կոստանդնուպօլիս գտնուող Եկեղեցականներուն կողմէն ընտրուին. որով Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը ընդամէնը հարիւր քառասունի կ'ամփոփւի։

Ասոնց պաշտօնը տասն տարի տևէ, և ամեն տարի տասներորդ մասը փոխելով նորէն ընտրութիւն ըլլայ։

Ընդհանուր ժողովը անուանէ թէ զՊատրիարք և թէ անոր նախագահութեամբը գործող Ազգային երկուց ժողովոց անդամները. և անոնց գործողութեանց վերատեսչութիւն ընէ։

Գ. Կրօնական գործոց տեսչութիւնը՝ Կրօնական ժողովոյն, քաղաքական գործոց տեսչութեանը՝ Քաղաքական ժողովոյն, և խառն գործոց տեսչութիւնն ալ՝ յիշեալ երկու ժողովներուն մէկտեղ գալովը կազմուած Խառն ժողովոյն վերաբերեալ ըլլայ։

Դ. Կրօնական և քաղաքական ժողովները իրենց ձեռնհասութեան շրջանակին մէջ գտնուած թէ Եկեղեցեաց ժողովուրդներուն (թաղականներուն) և թէ Եկեղեցեաց,

դպրատանց, հիւանդանոցաց, վանօրէից և ասոնց նման ուրիշ տեղեաց ազգային գործերուն ամէնն ալ տեսուչ և Թաղական խորհուրդներու միջնորդութեամբ տնօրինեն։

Ե. Վարչութեան կենդրոնը Ազգային Պատրիարքարանն ըլլայ։

Պատրիարքը՝ իբրև պաշտօնական Գլուխ Պատրիարքարանի, թէ Ընդհանուր ժողովոյն և թէ Ազգային կրկին ժողովներուն նախագահութիւն ընէ. և Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամեն գործերը տնօրինէ ընդ վերատեսչութեամբ Ընդհանուր ժողովոյ։

Զ. Գաւառական ժողովրդոց Վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան հետ կապուած ըլլայ։ Եւ գաւառներուն մէջ Առաջնորդները նախագահութիւնն ընեն տեղական ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին ըստ տրամադրութեանց Կոստանդնուպօլսոյ ժողովոց, և նոյն (տեղական) ժողովոց գործերն ալ տնօրինեն։

Է. Գաւառական ժողովները՝ Կենդրոնական Վարչութեան, և սոյն Վարչութեան Խորհուրդներուն ամէն մէկը՝ ո́ր ժողովոյ վերաբերի՝ նոյն ժողովոյն, և Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն. և Պատրիարքը մէկ կողմէն Կայսերական Տէրութեան, և միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան։

Ը. Եւ որովհետև Կայսերական Տէրութիւնը Հայոց Ազգին համար տալու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային Վարչութեան գլուխ Պատրիարքը կը ճանչնայ և անոր կ'ուղղէ իր հարցումները. եթէ Տէրութիւնը Պատրիարքին հրամայէ որ հարցուցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ, Պատրիարքը իր նախագահութեամբը գործող ժողովներուն որոշման համեմատ

շարժի։ Իսկ եթէ Ազգին կարծիքն առնելով Տէրութեան հաղորդել հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Ընդհանուր ժողով հրաւիրէ, և այն Ժողովոյն վերջնական որոշմունքը յայտնէ Տէրութեան։

Թ. Ազգային Վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի, որոց առաջինն է առ Կայսերական Տէրութիւն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, և Ազգին թէ ընդհանրապէս և թէ ի մասնաւորի ամէն մէկ անհատներուն իրաւանց և արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պաշտպանութիւնը ապահովցընել։ Երկրորդն է առ Ազգն, որ է ճշմարտապէս գթութեամբ և հայրաբար վարուիլ։ Եւ երրորդն է առ Աթոռն Էջմիածնի. այն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ։

Ահա՝ ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր Խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ, և զոր կը հաստատէ միւս յանձնաժողովը, որ Ձեր Վսեմութեան հրամանին համեմատ՝ ի դիմաց Ազգին՝ Սահմանադրութեան վրայ իր դիտողութիւնները Բարձրագոյն Դրան ներկայացնելու համար կազմուեցաւ։

Ի Կ. Պօլիս, 16 փետրուար 1862։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Անդամք Բարձրագոյն Բ. Դրան Յանձնաժողովոյ

Ստեփաննոս եպիսկոպոս Նիկոմիդիոյ, Տեղապահ Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպոլսոյ
Յովհաննէս վարդապետ Կապուտիկեան
Յովհաննէս քահանայ Փափազեան
Յովհաննէս քահանայ Հինքեարպէյէնտեան
Գէորգ Երամեան, Յովհաննէս Տատեան, Սերովբէ Վիչէնեան, Գրիգոր Աղաթօն, Յակոբ Մուպահեաճեան, Յակոբիկ Նորատունկեան, Յովհաննէս Եղիազարեան, Գասպար Կիւմիւշճի։

Անդամք Ազգային Յանձնաժողովոյ

Աղաթօնեան Մկրտիչ, Ասլանեան Ստեփան, Մանուկեան Մանուկ, Մինասեան Մինաս, Ռուսինեան, Սուրէնեան Յովհաննէս, Օտեան Գրիգոր։

Այդ յայտարարութեան հետ միասին ներկայացնում են նաև «Սահմանադրութեան» կանոնագիրը, մի շարք կրճատումներ մտցնելով նրա նախնական բնագրի մէջ։

Այստեղ «Հիմնական սկզբունքներ» խորագրի տակ շեշտւում է. 1) Ազգի և անհատի փոխադարձ պարտականութիւնները։ 2) Ազգի զաւակները պարտական են «ազգին պիտոյից» հարկաւոր ծախքին ու զոհաբերութեան մասնակից լինել։ 3) Ազգն էլ պարտական է իր զաւակների բարոյական, մտաւորական, նիւթական և կրօնական պէտքերի մասին հոգ տանել։ 4) Ազգի ներկայացուցչութիւնը «ազգային վարչութիւն» կը կոչուի։ 5) Վարչութիւնը ազգային լինելու համար երեսփոխանական պէտք է լինի։ 6) Երեսփոխանական վարչութեան հիմքը իրաւունքի և պարտականութեան արդար սկզբունքն է։ Նրա ոյժը ձայների բազմութեան մէջ է, որ օրինաւորութեան սկզբունքն է։

Սակայն «ազգ» ասելով, սահմանադրութեան հեղինակները հասկանում էին ազգի գլխաւորապէս արտօնեալ տարրերը։

Որքան էլ որ բարձր ձգտումներով էին ղեկավարւել նրանք, բայց և այնպէս ըստ երևոյթին չէին կարողացել մոռանալ իրենց դասակարգային շահերը, Կ. Պօլսի գերիշխանութիւնը գաւառների վերաբերմամբ և այնպիսի ձևակերպում էին տուել ազգային ժողովի կազմին, որ այդ բոլորն էլ ապահոված լինէր։

—Ազգային ընդհանուր ժողովը, ասւած էր սահմանադրութեան նախնական հրահանգի մէջ, կը բաղկանայ 220 երեսփոխաններէ, որոնցմէ 160-ը Պօլսի թաղերի եկեղեցեաց կողմէն ընտրեալ և 60-ը առաջնորդանիստ գաւառներու կողմէն։ Բացի դրանից անդամակցելու իրաւունք ունեն.

1) Կրօնական ու քաղաքական ժողովներու և 4

տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները։

2) Ազգին կամ տէրութեան ծառայութեան մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք—այն է Կ. Պօլիս գտնուող եպիսկոպոսներ, Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերեցներ։ Ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ, նաև քաղաքական ու զինուորական ծառայութեան մէջ գտնուողներ» [1]։

Այդպիսով ազգային ժողովը կղերականների, էֆենդիների ու այլ արտօնեալների համախմբում պէտք է դառնար։

Սակայն որքան էլ որ նա չափաւոր էր և սահմանափակ ժողովրդի իրաւասութեան ու ակտիւ մասնակցութեան տեսակէտից, բայց և այնպէս իր ժամանակի պայմանների համեմատ մի մեծ քայլ էր դէպի առաջ։

Եւ Նրա շուրջը սկսւում են ոգևորութեան ցոյցերը վարդագոյն երազանքները թէ Կ. Պօլսում և թէ հեռաւոր գաւառներում։

—Կեցցէ ազգն ու սահմանադրութիւն...

Ահա այդ ցնծալի բացականչութիւններն են լսւում ամեն կողմից երիտասարդութեան բերանից։ Եւ երիտասարդական այդ հոսանքին միանում են նաև էֆենդիական դասից շատերը՝ ազատամիտները, սահմանադրութեան կողմնակիցները։

Բայց շուտով դրա հանդէպ կանգնում է յետադիմական հոսանքը, որ միայն արհամարանքի ժպիտով է պատասխանում երիտասարդական բացականչութիւններին և վնասակար ու կործանարար համարում սահմանադրութիւնը ազգի ու եկեղեցու համար։

1) Տես «Ազգային սահմանադրութիւն» յօդ. 9.

Այդպիսով Կ. Պօլսի հայութեան հասարակական մտաւոր ույժերը բաժանւում են երկու մասի։

Լուսաւորեալք կամ սահմանադրականներ և խաւարեալք կամ հակասահմանադրականներ։

Նոյնը արտայայտւում է նաև պարբերական մամուլի էջերում։ Ազատամիտ թերթերը փառաբանում են սահմանադրութիւնը, իսկ պահպանողականները՝ ընդհակառակը։

Այսպէս օրինակ Մ. Մամուրեանը Զմիւռնիայում հրատարակւող «Միութիւն, հանդէս Հաշտենից» թերթում (1860 թ. № 16), «Ազգային սահմանադրութիւն» յօդւածով խօսում է ժողովրդական գործերում տիրող անկարգութիւնների, անարդարութիւնների մասին, յիշում է արտօնեալների, մեծամեծների ապօրինութիւնները և ոգևորւած կանչում.

—«Հայ ժողովուրդ, ձեր փափագն ու իղձը վերջապէս աջողեցաւ... Վասն զի հէնց միայն սահմանադրութիւն բառը ցոյց է տալիս արտօնութիւնների վերանալը, իրաւունքի սահմանը, պարտականութիւն դնելը, արդարասիրութիւն և առաջադիմութիւն»...

Դրա հետ միասին հեղինակը զգուշացնում է, որ սահմանադրութիւն հաստատելով հանդերձ պէտք է ձըգտել գիտութեան ու հասարակական ազատութեան, որովհետև «որքան մարդու զգեստ հագցրած մի կապիկ մարդկութիւնից հեռու է, այնքան մի սահմանադրեալ, բայց տգէտ և անհոգ ժողովուրդ հեռու է սահմանադրական վարչութիւնից»։

Նոյն քաղաքում հրատարակւող «Ծաղիկը» (1861 թ. № 2) շեշտում է, թէ «Սահմանադրութիւնը այն հաստատուն հիմնադրութիւնն է, որուն վրա կըկոթնեն ազգին ապահովութեան փառքին և ապագային սիւները»...

Սահմանադրութեան ջերմ պաշտպան էին նաև Սվաճեանի «Մեղուն», Փանոսեանի «Միւնատեն», ինչպէս նաև «Սէր», «Կիլիկիա», «Արևելեան դար» և այլն։

Բայց ամենից ուշագրաւն ու ազդուն «Արծւի Վասպուրականի» ձայնն էր, որ հնչում էր բուն երկրի ծոցից։

Դեռ 40-ական թւականներին Կ. Պօլսում երևցած վառվռուն երիտասարդ Մկրտիչ Խրիմեանն էր նրա հեղինակը, որ արդէն վարդապետ դարձած հաստատւել էր Վարագայ լեռներում, հիմնել այնտեղ և՛ տպարան և՛ դպրոց և ամսագիր։

Նրա «Արծւի Վասպուրականը» թռուցեալ հայրենասէր թեւօք յԱրծրունի մենաստանի Վարագայ» կարճ միջոցում կարողացել էր որոշ հմայք ստեղծել։ Նա սրտառուչ մրմունջներով կանչում էր իր ընթերցողներին.

—«Ես Արծիւ, ցանկացող կենաց և բարեաց իմ Հայաստանին, նրա լերանց վրայ խոյացայ, նրա դաշտերն ու հովիտը ողջունեցի, նրա տեղն ու քաղաք, շէնն ու աւերակ ես տեսայ, իջեանեցի և անցայ. շատ տեղեր լացի և երբեմն ուրախացայ, տեսածներս ամեն պատգամ յօրինեցի և ձեզ, ով իմ ընթերցողք, ձեզ նւէր բերի, ձօնեցի։

Իմ շրջան այժմ և յաւէտ Հայրենեաց սահմանի մէջն է, ես Հայաստանի սիրահար հաւ մի եմ, իմ ձայն ու եղանակ Հայաստանի և հայրենասիրի երգ է, թէ լամ՝ այդ անունը կը հնչեմ. վերջապէս դա իմ սէրն է, իմ տէրն է, ես նրա անձնանւէր գերին եմ։

Դուք, որդիք Հայաստանի, ուր որ հանդիպեցայք ձեր Արծւոյն, սիրեցէք զինքը, ողջագուրեցէք, գրկեցէք զինքը»...

Եւ ինչպէս սիրւած ու ողջագուրւած այդ թերթը

կրակոտ շեշտերով այժմ գովաբանում էր սահմանադրութիւնը, նրան «ցաւագար հայրենեաց բժիշկ» անւանում։

Ուշագրաւ էր խաւարեալը հոսանքի դէմ ուղղւած այդ կարծիքը, որովհետև «անծանօթ երիտասարդի» «եկեղեցու գործերին անտեղեակ» մի մարդու ձայն չէր, այլ արդէն գրական հասարակական հռչակ ունեցող մի եկեղեցականի կարծիք։

Մամուլի ազատամիտ այդ օրգանների հանդէպ կանգնած էին «Մէճմուան», «Երևակը» և Զմիւռնիայի «Արշալոյս Արարատեան», որ տնքում էին ցայց տալ, թէ սահմանադրութիւնն այդ ձևով օգտակար չէ, թէ աշխարհականները իրաւունք չունին եկեղեցու գործերին խառնւելու, թէ յամենայն դէպս անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որպէսզի շատ ազատ խօսողներ չը լինեն «ազգային ժողովներում» և այլն և այլն։

Այդպէս շարունակւում է լրագրական բանակռիւը ամբողջ ամիսներ և նոյն իսկ տարիներ։ Երիտասարդութիւնը նոյն իսկ սահմանադրութեան տարեդարձն է տօնում, սակայն կառավարութեան կողմից պաշտօնական հաստատութիւնը դեռ չըկար ու չըկար։

Ճիշտ է, պատրիարքարանը առանց դրան էլ, իրերի հրամայողական պահանջով արդէն գումարել էր սահմանափակ ձևով «ազգային ժողով» և նա գործում էր, բայց դժգոհութեան ձայները, մանաւանդ գաւառից, օրէցօր աւելի ու աւելի սաստկանում էին, անորոշ վիճակը շատերին առիթ էր ծառայում ըմբոստանալու, «ժողովի» վճիռներին չը ենթարկւելու։

Անյետաձգելի պահանջ է դառնում սահմանադրութեան վաւերացումը կառավարութեան կողմից, որպէսզի հնարաւոր լինի օրինական սանձահարումը դիմադրողների։

Այդ առիթով նորից սկսւում է բանակցութիւնը Բ. Դրան հետ։ Գրւում են թղթերը, կրկնւում են դիմումները, բայց բոլորն էլ կամ անպատասխան մնում կամ ձգձգող ու անորոշ պատասխանի արժանանում։

Կառավարութիւնը զբաղւած էր աւելի կարևոր գործերով։ Այնտեղ՝ հեռաւոր Լիբանանն էր ապստամբել և ազատութեան դրօշակը պարզել, իսկ այստեղ՝ բալկանների վրայ Բօլգար յեղափոխականներն էին բողոքի, ըմբոստացման շեփորը հնչեցնում ընդդէմ Թիւրքական բռնակալութեան։

Եւ դիպլօմատիան արդէն սկսել էր միջամտող քայլերը։

Այդպիսի պայմաններում Թիւրք կառավարութիւնն անկարող էր ուշքի առնել հայկական թղթէ դիմումները։

Նա իր բոլոր ջանքերը լարել էր յիշեալ փոթորիկները հանգցնելու, սպառնական ձայները լռեցնելու։

Բայց մոռացութեան մատնւած «սահմանադրութիւնը» իսկոյն ասպարէզ է քաշւում, երբ հայկական հօրիզոններից էլ ըմբոստ նշաններ են երևում և ռազմի ձայներ հնչում։

Զէյթունի ապստամբութիւնն էր դա։

Անկարող լինելով տանել տեղական իշխանութեան կամայականութիւնները, զէյթունցիները զէնք են բարձրացնում իրենց իրաւունքները պաշտպանելու համար։ Կառավարութիւնը Ազիզ փաշայի ղեկավարութեամբ մեծաքանակ զօրք է ուղարկում նրանց ջարդելու, բայց ապարդիւն...

Երբ այդ մասին աւետաբեր լուրը հասնում է մինչև Բօսֆոր, Կ. Պօլսի երիտասարդութեան ոգևորութիւնը ծայրահեղ չափեր է ընդունում.

—Կեցցէ Զէյթուն, կեցցէ Հայաստան—ահա սո-

վորական եզրակացութիւնը, ցնծալի բացականչութիւնը միմեանց յաջորդող անթիւ անհամար մանր ու խոշոր ժողովների։

—Զէյթո՛ւն—դա հայկական ոգևորութեան ու երազանքի աղբիւրն էր այդ օրերին։

Եւ այդպիսի մթնոլորտում Կ. Պօլսի առաջաւոր ոյժերը նորից մտաբերում են իրենց «Ազգային սահմանադրութիւնը» և սկսում մտորել, թէ ինչ ձևով հնարաւոր է կառավարութիւնից օրինական հաստատութիւն ստանալ։

Բայց այս անգամ խնդրի, աղերսանքի ձայնը չըկար, այլ միայն պահանջի սպառնական շեշտն էր հնչում։

—«Սահմանադրութիւնը ի՞նչ եղաւ, գրում էր «Ծաղիկը» այդ օրերին[1]), ի՞նչ պատճառաւ ուշացաւ... Վասնզի ափ ի բերան և դանդաղ նստեր ենք, փոխանակ գործելու։ Ծեծ ուտել և լռել ատեն մը հայուն ճակատագիրն էր։ Սահմանադրութիւն մը հաստատել և ջնջել յիմարութիւն է, բայց զայն վերանորոգել և անոր վաւերացման յաւիտեան սպասել-նոյն իսկ վատութիւն է... Մինչև ե՞րբ սպասել... բաւական չեղա՞ւ ազգային անարատ սահմանադրութեան կրած օտարոտի և պիղծ այլայլութիւնները և դեռ կուզեն որ վատարար համբերենք։ Չէ, չէ, ալ մեր համբերութիւնը հատաւ։ Համբերութիւնը և հլութիւնը չունին վարձք այս աշխարհիս վրայ, յանդգնութեամբ և անվեհերութեամբ պարտ ենք կորզել դանդաղութեան, չարակամութեան մեզ զլացածը։ Մինչև որ չի բողոքենք, մինչև որ չստիպենք և ի հարկին մեր բազուկը...»

Եւ պահանջի ցոյցը կազմակերպւում է։

Օգոստոսի 1-ին (1862 թ.) խուռն բազմութիւնը

[1]) «Ծաղիկ» 1862 թ. № 80.

խմբւում է պատրիարքարանի առաջ և խռովատ հնչիւններով կանչում.

—Սահմանադրութի՜ւն, ազգային սահմանադրութի՜ւն, ինչո՞ւ նա մեռած տառ է մնացել...

Վերջապէս ամբոխը լցւում է պատրիարքարան, դուրս է անում պատրիարքական տեղապահին, փակում է դռները և բանալիները իր հետ վերցնելով, դիմում է դէպի Մայր եկեղեցի. ազգային երգերով, ըմբոստ բացականչութիւններով։

Լուրը կայծակի արագութեամբ տարածւում է ամեն կողմ։

—Ապստամբութի՜ւն է, հայերը ապստամբել են, մտածում են շատերը։

Գալիս է Սէլիմ փաշան բազմաթիւ զօրքով, բայց ամբոխը տեղից չէ շարժւում։

—Ձեր մուրատը ի՞նչ է, հարցնում է փաշան ժողովրդից ¹)։

—Սահմանադրութի՜ւն, միաբերան պատասխանում է բազմութիւնը։

—Ինչո՞ւ չէք համբերեր։

—Համբերութիւննիս հատաւ։

—Ինչո՞ւ համար պատրիարքարանը գոցեցիք.

—Ազգին տունը փլելու վրայ է, աւելի շուտով փլցնելու համար։

—Ո՞ւր են բանալիները.

—Ամենուս քովն է։

—Տուէք ինձ.

—Մենք անձամբ և աղերսագրով Բ. Դրանը վաղը կը յանձնենք»։

Եւ փաշան զօրքի հետ հեռանում է։

Ժողովրդական այդ ցոյցը թողնում է իր ազդե-

¹) Տես «Փորձ» 1877 թ. № 3, եր. 170.

ցութիւնը կառավարութեան վրայ։ Բ. Դուռը վերջապէս օրինական ընթացք է տալիս հայոց սահմանադրութեանը և ամիսներ յետոյ պաշտօնապէս յայտարարում իր գրական պատասխանը՝ հաստատութեան հրամանագրով (1863 թ. մարտի 7-ին)։

Բայց Բ. Դուռը մի շարք փոփոխութիւններ էր մտցրել «Սահմանադրութեան» մէջ ¹), ընագրի 150 յօդուածները դարձնելով 99։

Հին կանոնադրութեամբ պատրիարքը պէտք է Էջմիածնի կաթողիկոսից օծեալ մի եպիսկոպոս լինի, իսկ նոր կանոնադրութիւնը (յօդ. 1) վերացնում է այդ պահանջը, փոխարէնը սահմանելով, որ «պատրիարքը տէրութեան կատարեալ վստահութեանն արժանաւոր, և գոնէ իր հօրմէն սկսեալ Օսմանեան հպատակ և 35 տարին լրացուցած ըլլայ»։

Հին կանոնադրութեամբ ազգային ընդհանուր ժողովի անդամների թիւը 220 էր որոշուած—(160 Կ. Պոլսից և 60 գաւառներից), իսկ նոր կանոնադրութեամբ այդ թիւը իջնում է 140-ի, որից 20-ը Կ. Պոլսի հոգևորականներից, 40-ը գաւառներից, իսկ 80-ը Կ. Պոլսի թաղերից ընտրուած (դրանցից առնուազն 7-ը տէրութեան պաշտօնեաներ պէտք է լինեն)։

Ընտրողական իրաւունքի վերաբերմամբ էլ նոր «Սահմանադրութիւնը» որոշում է, որ Կ. Պօլսում իւրաքանչիւր ընտրող պէտք է տարեկան ամենապակասը 75 ղուրուշ ազգային տուրք վճարէ և 25 տարուց աւելի հասակ ունենայ, իսկ գաւառներում նոյն իրաւունքից օգտւում են տէրութեանը I, II, III կարգի հարկ վճարողները։

Բացի այդ բոլորից նոր կանոնադրութիւնը մանրամասնօրէն որոշում է, թէ «ազգային ժողովը» ինչ

¹) Ibid եր. 175—176.

հարցերով կարող է զբաղուել. որոշուածից դուրս հարցերի նկատմամբ իւրաքանչիւր անգամ յատուկ թոյլտուութիւն պէտք է ստացւի Բ. Դռնից։

Այդպէս ուրեմն, թիւրք կառավարութիւնը երեք երկար ու ձիգ տարիներ Հայոց «Սահմանադրութիւնը» քաշքշելուց յետոյ ամեն կերպ սահմանափակում է նրա իրաւասութիւնը, աւելի ևս կրճատում է գաւառների մասնակցութիւնը, ապահովելով իր ազդեցութիւնն ու միջամտութիւնը։

Չը նայելով այդ բոլորին, հաստատութիւնը ըստացուելու առիթով մեծ հրճուանք ու ոգևորութիւն է առաջ գալիս և երախտապարտութիւնը 1863 թ. մայիսի 26-ին մեծ հանդիսով տօնում է սահմանադրութեան երրորդ տարեդարձը Հիւնքեար Իսքելէսէի դաշտավայրում։

Սակայն, ինչպէս ճիշտ կերպով նկատել էր մեծ վեզիր Ալի փաշան, հայոց սահմանադրութիւնը «քառակուսի մի անիւ էր», որ տեղից չէր շարժւում։

Տարիները անցնում են միմեանց յետևից, բայց նրա արդիւնքները բոլորովին չեն նկատւում։ Պատրիարքարանն ու նրա շուրջը խմբուած էֆենդիական դասը, սահմանադրութիւնը դարձնում են իրենց կըրքերն առաջ տանելու, հին ու նոր հաշիւները մաքրելու մի միջոց։ Ազգային ժողովներում ս. Երուսաղէմի պատրիարքութեան, Սսոյ և Աղթամարի կաթողիկոսութեան և այլ նման օրինակ կրօնական հարցերի շուրջը բոնկուած անվերջ վիճաբանութիւնները այնքան սուր կերպարանք, այնպիսի գռեհիկ արտայայտութիւններ են ընդունում, որ Բ. Դուռը այդ հանգամանքը առիթ է դարձնում իր հաստատած «Սահմանադրութիւնը» յետ վերցնելու համար, այն ևս մի քանի հայ «երևելիների» դրդմամբ։ Դրա փոխարէն նա հաստատում է մի առ

ժամանակեայ «խառն ժողով» ընթացիկ գործերը կառավարելու համար։

Այդ հանգամանքը աւելի ևս վարկաբեկեց, առանց այն էլ ժողովրդի աչքին ատելի դարձած Թաքթաքեան Պօղոս պատրիարքին (1863—1869 թ.)․ նոյն իսկ յատուկ թռուցիկներ տպագրւեցին, որով առաջարկում էին այլ ևս չը յիշատակել դաւաճան ու ապիկար պատրիարքի անունը հայոց եկեղեցիներում։

Փոթորկալի հանգամանքները վերջապէս դրդում են պատրիարքին հրաժարուել։ Նրա փոխարէն ընտրւում է Խրիմեանը։ Կրքերը քիչ խաղաղւում են, ժողովրդական յուզմունքը անցնում, մանաւանդ որ կառավարութիւնն էլ նորից վերաքննելով «Սահմանադրութիւնը» թոյլատրում է նրա գործադրութիւնը։

Բայց էֆենդիների յայտնի ու գաղտագողի ոտընձգութիւնները, դաւերը շարունակւում են Խրիմեանի օրով էլ։

ԺԷ. ՀԱՅ ԱԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Կ. Պօլիս և գաւառը.—Ազգային ժողովի առաջին տեղեկագիրը գաւառական հարստահարութիւնների մասին.—Խրիմեանի կարծիքը. Նոր տեղեկագիրներ.—Ընթացիկ գրականութիւնը հայկական տառապանքի մասին.—Բ. Դուռը և Ներսէս Վարժապետեան.—Փաստերի ցուցակը.—Կ. Պօլսի հայ մամուլի բողոքը.—Գաղթականութիւն:

Մինչև այժմ մեր առաջ պատկերանում էր Կ. Պօլսի հայութեան կեանքը իր մտաւոր առաջադիմական հոսանքներով: Նա իր մէջ ամփոփած լինելով գաւառներից եկած ու բնիկ լաւագոյն ոյժերը, դարձել էր գրեթէ ամբողջ թիւրքահայկական յոյսերի ու յոյզերի արտայայտիչը:

Բայց մայրաքաղաքում տեղի ունեցած մի քանի մխիթարական երևոյթները, ազգային սահմանադրութեան ու պատրիարքարանի շուրջը ծագած վէճերը, ազատագրական ձգտումները դեռ չէին կարող բնորոշիչ դառնալ բուն երկրի ցաւոտ իրականութեան:

Այստեղ մարդիկ, համեմատաբար ազատ ու բարեբաստիկ պայմանների մէջ դրուած, կրակոտ ճառերով էին զբաղուած կամ լրագրական պայքարով:

Իսկ այնտեղ տառապանքի մրուրն էր ծածկել ամբողջ ազգաբնակութեանը և ոչ մի ձայն, ոչ մի ծըպտուն դուրս չէր թողնում իր տակից:

Ժողովուրդը խարխափում էր տգիտութեան ու բռնակալութեան ճանկերում և բոլորովին անտեղեակ ու անմասն էր Բոսֆորի ափերին կատարւող անցքերին:

Բայց այս վերջապէս ծովացած տառապանքը իր յորձանքների ձայնը հասցնում է մինչև Կ. Պօլիս:

Առաջին անգամ 1865 թ. «ազգային ժողովը» իր տեղեկագրի մէջ արձանագրում է մի շարք բռնութիւնների ու հարստահարութիւնների մասին: Ահա մի քանի նմուշներ:

Չարսանճաղի հայերը մի քանի տարի շարունակ բողոքներ են ուղղում Կ. Պօլիս դերեբէյներու բռնութեան առթիւ, բայց ապարդիւն:

Քղիի հայ ազգաբնակութիւնը բողոքում է քիւրդերի հարստահարութեան դէմ. ազգային ժողովը միջամտում է, բայց դարձեալ ապարդիւն:

Բաղէշում ժողովուրդը այլ և այլ ոճրագործութեանց ու աւազակութեանց պատճառով միշտ ահ ու դողի մէջ է:

Վանայ ժողովուրդը Թիմուրեան բէկերի անգութ բռնութիւններից է տառապում և ապարդիւն բողոքներ ուղղում Կ. Պօլիս[1]:

Դրանք ի հարկէ, միայն նմուշներ են մինչև պատրիարքարան հասած բողոքներից. այդ բոլոր բողոքները միասին վերցրած գժոխային իրականութեան մի հարիւրերորդ մասն անգամ չէին ներկայացնում:

1871 թւականին Կ. Պօլսի պատրիարքը՝ Խրիմեան Հայրիկը նկարագրելով հայաբնակ գաւառների թշուառ կացութիւնը, բացականչում է[2]:

—«Այնպիսի տեղեր գտնուած եմ, ուր մեռնող մարդուն համար քանի մը կանգուն կտաւ չը գտնուեցաւ և քիչ մը խոտի մէջ պատեցին խեղճ մարդն ու թաղեցին: Դուք տեսե՞ր էք այնպիսի խեղճ կին, որ իր զաւկին պատանք չըգտնայ և իր պատռտած հագուստէն կտոր մը պատռէ ու զաւակը պատանէ»...

---

1) Տեղեկագիր «Քաղաքական ժողովոյ» 1865 թ. եր. 32—36

2) «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ» 1871 թ. եր. 898

Բայց այդ դառն շեշտերը ոչինչ են թւում այն մռայլ պատկերի համեմատութեամբ, որ բաց է անում մեր առաջ «Ազգային ժողովի» կողմից ընտրւած յատուկ յանձնաժողովը—(Ներսէս Վարժապետեանի նախագահութեամբ)—իր ընդարձակ տեղեկագրով։

Այդտեղ գիւղական թղթերի, հաւաքական թագրիրների ու պաշտօնական տեղեկութիւնների հիման վրայ հարստահարութիւնների ու բռնութիւնների այնպիսի տեսարան է ներկայանում, ժողովրդական տառապանքի ա՜յնքան ցաւագին մրմունջներ են հնչում, որ մարդ մի տեսակ սարսուռ է զգում և ակամայից բացականչում.—երկիր չէ դա, այլ կատարեալ դժոխք։ Պետական կարգեր չեն դրանք, այլ դիւային սարսափներ...

Ժողովուրդը գանգատւում է,[1]) որ

1) Արքունական շինութիւնների համար դրամ և մարդ են պահանջում կամայական կերպով։ Ձերբէգների և զօրքերի տեղափոխութեան համար փող են հաւաքում նոյն ձևով։ Թնդանօթները տեղափոխելու համար փոխանակ անասունների լծելու, մարդկանց են լծում և սոսկալի տանջանքներով քաշ տալիս։ Տեղ-տեղ արքունի շինութիւնների պատրւակով նոր տուրքեր են հաւաքում։

2) Ճանապարհների շինութեան համար պահանջում են 4 օրւայ փոխարէն 10—20 օր աշխատել և այդ միջոցով մեծամեծ կաշառքներ են վերցնում խեղճ ու կրակ ժողովրդից։ Զապթիաները այդ առիթով անարգել մտնում են տները, նոյն իսկ եկեղեցիները և ամեն տեսակ բռնութիւններ կատարում։

3) Հարկ ժողովելու ժամանակ զապթիաների գազանութիւններին չափ ու սահման չը կայ։

[1]) «Ատենագրութիւնք» 1871 թ. № 31.

4) Կանանց և անչափահաս երեխաներին բռնի մահմեդականացնում են, իսկ պաշտօնեաները փոխանակ դրա առաջն առնելու, ընդհակառակը քաջալերում են։

5) Գաւառական պաշտօնեաները մեծ մասամբ տեղացի հարուստների ազդեցութեան տակ են և դրանց թելադրութեամբ հովանաւորում են ամեն տեսակի հարստահարութիւններ։

6) Թեմէթթիի վերաբերմամբ շատ զեղծումներ են լինում։ Ղադիները մէկի մահը լսելուն պէս շտապում են նրա տունը և ինչ որ տեսնում են այնտեղ, թէկուզ ուրիշի ապրանք, ցուցակագրում են և դրա համեմատ հարկ վերցնում։

Նոյն տեղեկագրի մէջ յիշատակւում է նաև, որ տառապող ժողովուրդը դեռ 1840-ական 1850-ական թւականներից անընդհատ բողոքներ է թափել պատրիարքարան, որպէսզի իր խոր ցաւերին մի ճար անեն, բայց ապարդիւն։ Այսպէս այդ բողոքների թիւը հասել է.

1.	Էրզրումի վիլայէթից . . .	136
2.	Դիարբէկիրի » . . .	158
3.	Սվազի » . . .	83
4.	Հալեպի » . . .	44
5.	Ադանայի » . . .	19
6.	Տրապիզոնի » . . .	14
7.	Դամասկոսի » . . .	13
8.	Էնկիւրիի » . . .	21
9.	Պրուսայի » . . .	38
10.	Զանազան վիլայէթներից . .	13
	Ընդամենը	529

Եւ այդ բոլորը տեղի են ունեցել մեզանից մօտ կէս դար առաջ, երբ թիւրքահայ ժողովուրդը հլու հը-

պատակութեան մի կատարելատիպ էր ներկայացնում, ստրկական խոնարհութեան մի անսպառ աղբիւր։

Ժողովուրդը արիւն-արցունքով էր ցօղում իր տառապանքը, բայց նա չէր նւազում, այլ ընդհակառակը տարէց տարի աւելի աճում-ուռճանում էր։

Ոչ ժողովրդի սրտամորմոք աղերսանքները, ոչ պատրիարքի «ամենախոնարհ դիմումները» Բ. Դռան, ոչ էլ «Ազգային ժողովի» կարեկից ճառերն ու հայ եկեղեցականների անվերջ բարեմաղթութիւնները «սուլթանի արեւշատութեան» համար, չեն կարողանում մազաչափ անգամ ազդել իրերի ընթացքի վրա։

Բռնութիւնն իր ամբողջ թափով շարունակում է տարածւել ու լայնանալ և նրա հարւածներից թափւում են ցաւոտ մրմունջները գաւառներից դէպի Կ. Պոլիս։

Երկրորդ տեղեկագիրը հրատարակելուց հազիւ մի երկու տարի անցած «Ազգային ժողովը» ստիպւած է լինում երրորդ տեղեկագիրը կազմել «գաւառական հարստահարութեանց» մասին, ուր ժողովրդի տառապանքը շեշտւում է նոյն մռայլ գոյներով։

Ահա մի քանի նմուշներ այդ տեղեկագրից, միայն 1872 թւականի ընթացքում տեղի ունեցած բռնութիւնների մասին[1]).

Հալեպում օրը ցերեկով սպանւում է հեռագրատան մի հայ պաշտօնեայ—Սաատուր անունով, բայց կառավարութիւնը անպատիժ է թողնում մարդասպանին, որովհետև նա մահմեդական էր։

Սղերդի Սասուն աւանի քիւրդ պէյերը հաւաքում են հայերից արքունի հարկերը, բայց կառավարութեանը չեն յանձնում։ Կառավարութիւնը զինւորական

[1]) «Ատենագրութիւնք ազգային ժողովոյ» 1872 թ. Սեպտեմբեր 17։

ուժով է վերցնում, սակայն պէյերը դրա փոխարէն սկսում են հայերից երկրորդ անգամ հաւաքել հարկերը և սոսկալի բռնութիւններ գործ դնում։ Բողոքներն ու խնդիրներն ապարդիւն են մնում։

Տիգրանակերտի շրջանում իշխանութիւնը այնքան քաջալերում է մահմեդական ոճրագործներին ու հարստահարիչներին, որ նոյնիսկ մի մահմեդական կին՝ Մինթեհա անունով սեփականացնում է Սաթը գիւղի արտերը և հայ գիւղացիներին ստիպում իրան հարկ վճարել։

Նոյն գաւառի Սեվերեկ գիւղի հայերը գանգատւում են զինւորական տուրքի առիթով գործադրւած սոսկալի բռնութիւններից։

Կարնոյ վիլայէթում, Բայբուրդ գաւառի Բումէլի գիւղում 1872 թ. Մայիսին Սեֆեր Ալի օղլի մի թիւրք առևանգում է 14 տարեկան հայ աղջկան։ Իշխանութիւնը միջամտում է, բայց մահմեդական ամբոխը սպառնալիքով յայտարարում է, թէ աղջիկը արդէն իսլամական կրօնն է ընդունել։

Բայց մի քանի օր չանցած աղջիկը փախչում է իր ծնողների մօտ։ Մահմեդականները նորից ոտքի են կանգնում և լուր տարածելով, թէ հայերը փախցրել են իսլամացած աղջկան, մօտ 2000 բազմութեամբ յարձակւում են հայերի վրայ, աւերում ու թալանում նըրանց տները, խանութները և մօտ 30 հոգու վիրաւորում և սպանում[1])։

Հայերի բողոքը բոլորովին անհետևանք է մնում։

Խարբերդ գաւառի Ներքի Զարմանճաղի գիւղերի բոլոր տները, խանութները, պարտէզները, այգիներն ու արտերը բռնի կերպով սեփականացնում են Իսհագ պէյը և մի քանի ուրիշ թիւրք աղաներ։ Դրանք ստի-

[1]) Ibid եր. 238.

պում են յիշեալ գիւղերի հայերին յատուկ վարձք վըճարել իրենց և հողային բերքի կէսն էլ տալ։ Հայերը 15 տարի շարունակ վէճ ու գանգատներ են ունենում, բաւական փող ծախսում, բայց դարձեալ զրկուած մընում։

Սեբաստիայի Գանդալի Էար Յիսար գիւղի հայերից արտերը խլում է միւդիր Աբդուլ-Ռահման աղան և չերքէզներ բնակեցնում։

Վանայ գաւառում կատարուած բռնութիւններն անչափ, անսահման են։ Իբրև ապացոյց բաւական է յիշել այն փաստը, որ քիւրդ ու թիւրք զանազան աղաներ յափշտակել են 27 հայաբնակ գիւղերի արտերը, արօտները—այսինքն այն հողերը, որ հայ աշխատաւոր գիւղացիութեան ապրուստի միակ աղբիւրն են կազմում։ Այդ գիւղերից ամենաշատ փչաւածներն են՝ Ճանիկ, Դերբէկ, Դալաճոխ, Լիմ, Հաշպիշատ, Քարդալան, Նորշէն, Աթկուչալ, Ֆարուզ և այլն։

Իսկ թէ Մշոյ դաշտը ինչ վիճակի մէջ է եղել, գաղափար կարելի է կազմել նրանից, որ միայն Մորկան հայ գիւղերից քիւրդերը յափշտակել են [1]։

Գիւղ	Ոչխար	Կաու (Թափ)	Դրամ (ղրուշ)	Հարկատու (մարդ)	[illegible]
1. Մէսթօ	40	28	3000	»	400
2. Քեանլօ	56	63	5850	»	»
3. Բաշաղ	100	30	4000	20	250
4. Էսէն	50	40	7000	30	300
5. Խօր	15	15	2000	»	250
6. Մէրէզաղ	13	15	1300	13	150
7. Գազախ	15	15	4500	»	100
8. Հօրսէնգ	12	25	2500	10	100
9. Մ.հզօգ	25	15	3500	10	200
10. Բերութ գ.	15	»	1500	8	»
11. Քարբ	»	»	2000	8	200
12. Գօրֆօ	115	»	11260	30	»
13. Մարգօրգ	39	15	1200	»	»
14. Խամպէլ	»	»	2120	»	»
15. Դօմէսի	44	»	720	»	»

[1] «Ատենագրութիւնք Ազգ. ժողովոյ» 1876 թ. եր. 218.

և այլն։

Ծործատիրական բնորոշ պատկեր։ Հայ գիւղացիութիւնը հայթհայթել է քիւրդ պէյերին և՛ ուտելիք և՛ հագնելիք և՛ դրամ և՛ անասուններ։ Բայց այդ բոլորից յետոյ դարձեալ ազատ չէ մնացել անձի ու ընտանեկան պատուի դէմ կատարուող ոճիրներից։

Ուշագրաւն այն է, որ վերևում առաջ բերած փաստերը ոչ պատահական են և ոչ էլ մասնաւոր աղբիւրներից բղխած, այլ պաշտօնապէս քննուած-ստուգուած և հէնց սուլթանական մայրաքաղաքում տպագրութեամբ հրապարակ հանած դեռ 70-ական թուականների սկիզբներին։

Նոյն ժամանակաշրջանի ընթացիկ գրականութիւնն էլ շեշտում է ժողովրդական տառապանքի այդ ցաւոտ նշանները։

—Մեր գաւառաբնակ անմեղ հայերը, ասում է Պ. վ. Նաթանեան [1]), ուղղակի կամ անուղղակի սոսկալի հալածանքներ, տառապանքներ կը կրեն Տաճկաստանի օրէնքները չճանաչող այն բարբարոս անօրինաց ձեռքէն, որ յիրաւի ճշմարիտ մարդու արիւն կրող սիրտ մը չի դիմանար, երբոր նրանց աղաղակը կլսէ ու անոնց թշուառ կացութիւնը կտեսնէ»...

[1]) Պօղոս վ. Նաթանեան, «Տեղեկագիր Սեվրի Հիսարի», Կ. Պօլիս 1872. երես 22.

Նոյն հեղինակը մի այլ գաւառի հայերի կրած հարստահարութիւնների ու բռնութիւնների մասին խօսելով և ժողովրդի թշուառութիւնը յիշելով, արձանագրում է [1])—«գիւղացի հայ աշակերտք՝ տղայք և աղջկունք դպրոց գացած-եկած ատենին ահ ու դողով կը լցուին յերեսանց բռնութեան և անառակութեան...

Հայ կանայք ջուր առնելու համար աղբերց առջև հազիւ հազ կը մօտենան»...

Այսպէս անվերջ կարելի է շարունակել նոյնանըման փաստեր առաջ բերել, քանի որ նրանք անսպառ են՝ տարիների ընթացքում հետզհետէ աճող, բազմացող։

Այդպիսի պայմաններում, ի հարկէ, պատրիարքարանը բոլորովին անտարբեր ու լուռ չէր մնում։ Այսպէս օրինակ Վարժապետեանը 1874 թ. օգոստոսի 24-ին մի դիմում է անում Բ. Դռանը վերևում առաջ բերած բռնութիւնների ու հարստահարութիւնների նկատմամբ։

Բ. Դուռը հարցին անտեղեակ ձևանալով փաստեր է պահանջում։

Փաստե՞ր... դրանք անթիւ, անհամար էին և ահա պատրիարքարանը մի մանրամասն ցուցակ է ներկայացնում այն գիւղերի մասին, որտեղ յափշտակութիւններ են կատարել։

Եւ պարզւում է այդ ցուցակից [2]), որ Կարնոյ կուսակալութեան Վանայ գաւառում միայն մի տարւայ ընթացքում հետևեալ յափշտակութիւններն են տեղի ունեցել.

[1]) Պ. վ. Նաթանեան, «Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Գաղատիոյ» Կ. Պօլիս, 1873 թ. եր. 77.

[2]) «Առենագրութիւնք Ազգ. ժողովոց» 1876 թ. եր. 223-227

Ո՞ր գիւղի.	Ի՞նչ են յափշտակել.	Ո՞վ է յափշտակել.
Ասաւածածի գիւղի	արտերը	Բրդաց Շիվէ ցեղէն Սատօնք օղլու հաջի Մուստաֆա և Տուփէսլի Գաբիլ
Ծանիկ	հողերը և ջուրը	Տերբերեկցի Մահմուդը
Տերբէկ	հողերն ու մարգ.	
Գալաճօխ	հողերը	Շիվէ ցեղի պէյերը
Կեպէկեկ	արտերը	Թոփճու զադէ Սելիմ աղա
Լիմ	»	Խան օղլուները
Հաշպիշատ	»	Ճամուշչի օղլի Նիւման աղան
Բարդալան	»	Պէյզադէ օղլի Եուսուֆ խան և եղբայրք
Ալուր	մարգերը	Այանս գիւղի մահմեդականները
Ֆարուզ	հողերը	Մոտի քիւրդերը։
Պէլթենց	»	Արդուլլահ պէյ
Նորշէն	»	Շիվէ ցեղի քիւրդերը։

Այդպէս նաև ուրիշ գիւղերում։ Յափշտակութիւն կատարել է՝

Վանայ գաւառակի	27	գիւղերում
Խօշապ »	5	»
Նորդուզ »	7	»
Պէրկեր »	3	»
Էրտեշ »	11	»
Գօտօլ »	5	»
Շատախ »	32	»
Գեավաշ »	7	»
Ռստան »	7	»
Մշոյ գաւառի	3	»
Բղի գաւառակի	2	»
Գօզաա »	6	»
Երզնկայ »	9	»
Ընդամենը՝	160	գիւղերում

Տիգրանակերտի կուսակալութեան մէջ—(Սղերդ, Խիզան, Խարբերդ, Բալու և այլ գաւառներում)—110 գիւղ, Գաղատիոյ կուսակալութիւն—6 գիւղ, նոյնանման փաստեր նաև Տրապիզօնի և Սեբաստիայի կուսակալութիւնների մէջ։

Այդպիսով դուրս է գալիս, որ մօտ 300 հայկական գիւղերից քիւրդ և թիւրք արտօնեալները կամ հասարակ մահմեդական ժողովուրդը խլել են վարելահողեր, արօտատեղեր ու ջրեր։ Մի քանի գիւղերում նոյն իսկ բռնութեամբ դուրս են արել ամբողջ ազգաբնակութեանը և սեփականացրել են նրանց հողերը, ինչպէս նաև միւս ունեցւածքը (օրինակ Տիգրանակերտի կուսակալութեան Խիզան գաւառակում—Լի, Հուրճուգ, Բեթամ, Խաչկանց, Գամլանս և այլն)։

Սակայն միայն սեփականատիրութեան վերաբերմամբ չէն բռնութիւններ տեղի ունեցել, այլ նաև ուրիշ ասպարէզներում։

Պէտք էր սպասել, թէ այդքան պերճախօս փաստերից յետոյ կառավարութիւնը այլևս անտարբեր չի մնայ։ Ապարդիւն սպասելիքներ։ Այդ փաստերը դուցէ և պերճախօս էին ու կարևոր դիւանագիտական արխիւների համար, բայց դառն իրականութիւնը մազաչափ անգամ չէր փոխւում նրանց ազդեցութիւնից։

Ընդհակառակը մենք տեսնում ենք չարիքը տարեց տարի աւելի մեծացած։ Այդ առիթով Կ. Պոլսի «Ասիա» թերթը[1]) մեղադրում է ազգային երեսփոխաններին անգործութեան մէջ, շեշտելով, որ «դրանք միայն խօսել գիտեն, բայց ոչ գործել»։

Իսկ «Մասիսը» անընդհատ բռնութեան փաստեր է արձանագրում, ենթադրելով, թէ հնարաւոր է դրանով կառավարութեան ուշադրութիւնը զարթեցնել։

[1]) «Ասիա» 1873 թ. № 103.

Նրա էջերից գանգատւում են Զարսանճագի 5000 տուն գիւղացիները, բաց անելով հարստահարութեան սու- կալի պատկերները։ Գանգատւում են[1]) Բագրևանդի Ուչքիլիսէ վանքի վարդապետները Միրզա աղայի բռնութիւններից ու հարստահարութիւնից։ Վերջապէս Պայազեդի գաւառի հայ վարդապետները, քահանաներն ու գիւղացիները թիւրք գիւղացիների հետ միացած բողոքում են Իբրահիմ աղայի անիրաւութիւնների դէմ[2])։

Եւ այսպէս անվերջ... Գանգատները, բողոքները հեռու գաւառներից հասնում են մինչև Բօսֆոր, Ազգային ժողովների ու մամուլի նիւթ դառնում, բայց առանց որև է դրական հետևանքի։

Այդ բոլորից յետոյ, 1876 թւականին, երբ հայոց «Ազգային ժողովը» որոշում է շնորհաւորական ուղերձ մատուցանել սուլթան Համիդին գահակալութեան առիթով, երեսփոխաններից Փափազեան Ս. էֆ. մի երկար ճառով յիշեցնում է գաւառական հարստահարութիւնների մասին և ի միջի այլոց շեշտում. «ինչու Զէյթունի մարդասպան գայմագամը չը կախւեցաւ, ինչու Մշոյ հայ աղջիկն առևանգող չարագործը չպատըժւեցաւ. ինչու մի շարք գաւառներում մեր ազգայնոց պսակի հրամանը տուողները քիւրդերը կըլլան. ինչու անզէն հայը տուրք տայ անէրութեան, իսկ զինեալ քիւրդը տուրք չտայ, կեղեքէ զհայն և անկէ տուրք առնու...»

Պատրիարք Ներսէս Վարժապետեանը այդ առիթով պատասխանում է, որ ինքը յիշեալ դէպքերի մասին Բ. Դռանը դիմումներ արել է, բայց ապարդիւն։

Հայկական բոլոր բողոքները դիպչում էին Եըլդըզի անտարբերութեան ժայռին և բեկոր-բեկոր վար

[1]) Տես «Մասիս» 1876 թ. № 1811.
[2]) Ibid 1876 թ. № 1802.

թափում, շրջակայքում թողնելով միայն հեծեծանքի ցաւոտ մրմունջները:

Այդպիսի պայմաններում ծնունդ է առնում գաղթականութիւնը:

—Գաղթականութիւն—դա այն աւերիչ հոսանքն է, որ հեղեղի նման քանդում է երկրի բարեկեցութիւնը և նրա ծաղիկ ոյժերը հայրենի հողից պոկելով, տանում է դէպի օտար հորիզոններ, ուր չարքաշ ու անտանդական կեանքն է սպասում:

Եւ դատարկւում է երկիրը տարէցտարի, աստիճանաբար:

Պատճառը ոչ հողի սակաւութիւնն է, ոչ ազգաբնակութեան խտութիւնը, այլ այն արիւնոտ կարգերը, որի տակ հեծում է ամբողջ Թիւրքիան:

Այս գաղթականութիւնը, ինչպէս նաև տաճկահայկական տառապանքի միւս արտայայտութիւնները, ծնունդ են առել շատ հին ժամանակներից, երբ հայի երևակայութեան մէջ անգամ չը կար նոյն իսկ աղօտ գաղափարը յեղափոխութեան մասին: Իբրև ապացոյց բաւական է վերցնել հետևեալ նմուշը, որ անպաճոյճ կերպով արձանագրում է Պ. վ. Նաթանեան իր մի աշխատութեան մէջ [1]:

—Վանից քսան ժամ հեռաւորութեան վրա, դէպի հարաւ-արևմուտք գանւող Խիզան գաւառը դեռ 50-ական թւականներին անվերջ գաղթականութեան շնորհիւ գրեթէ դատարկւում է հայերից: Այսպէս օրինակ այդ գաւառում հայ տների թիւը եղել է.

Գիւղ	1858 թ.	1878 թ.
1. Կարսու	109	15
2. Կապան	15	0
3. Տարօնիս	30	18
4. Խուբ	30	3
5. Անդից	15	8
6. Հայ Հրիթ	100	20
7. Շէն	80	12
8. Ամփիս	20	0
9. Լի	100	5
10. Փարս	10	1
11. Ուրանիս	90	60
12. Օղանդ	20	7
13. Նուրուր	30	5
14. Սև-Քար	18	10
15. Դաշտ	25	6
16. Զմէն	30	16
17. Կրաւ	18	5
18. Խութ	25	10
19. Կօնէս	15	0
20. Գիւղէնց	20	0
21. Մէշա	40	2
22. Ապարանց	60	3
23. Աւին	20	10
24. Հապային	50	15
25. Մըրջ	10	0

[1] «Արտօսր Հայաստանի», եր. 170—174.

Եւ այդպէս անվերջ: Բոլորովին ամայացած գիւղերի մասին վկայում են կանգուն կամ կիսաւեր եկեղեցիները և հարևանների պատմութիւնը:

Ինչու էր գաղթում ժողովուրդը:

Այդ ցաւոտ հարցի միակ պատասխանը այն դառն վիճակն էր, որի մէջ դրուած էր աշխատաւոր գիւղացիութիւնը և հակառակ իր բոլոր ջանքերի ոչ մի տեղից օգնութիւն ու թեթևութիւն չէր գտնում:

Նրան հալածում էին կառավարական պաշտօնեաները, կեղեքում էին քիւրդ բէկերը:

— Թիւրք Բէկեր բէկը, ասում է Նաթանեան[1]), հայոց գիւղեր երթալիս, իր հրացանին միւֆթի և սուրին զատաւոր կը կոչէր:

— Այսչափ առնելիք ունիմ ձեզմէ, կըսէր, վճարեցէք: Եթէ մէկը համարձակւում էր հարցնելու, թէ ինչ ստակ է պահանջածը, պէյը հրացանը և սուրը ձեռք առնելով կուգար՝ ահաւասիկ զատաւոր և միւֆթի, որոնք կը վաւերացնեն առնելիքն»...

Կարող էր արդեօք խաղաղ ու բնական ճանապարհով զարգանալ մի երկիր, ուր այդպիսի կարգեր էին տիրում, ուր ոչ օրէնք կար, ոչ արդարութեան նշոյլ, ուր միայն դաժան ույժն ու կամայականութիւնն էին իշխում:

Երբէք:

Հիւանդոտ իրականութեան ծանր լուծն էր, որ օրէցօր աճեցնում-զարգացնում էր գաղթականութիւնը: Եւ թիւրքահայ ժողովուրդը ակամայից ենթարկւելով նրա տարերային հոսանքին, անընդհատ հնչեցնում էր ցաւոտ մրմունջները,

Իմալ պըտի էնենք, ես լը չըմ գինայ,
Որ չը թօրկենք, քոչենք՝ մեր տուն ու վաթան:

Նա կրել էր թիւրքական բռնակալութեան անվերջ կըռկիծները, զգացել էր իր ստրկական կացութիւնը և խոստովանում էր, որ

Ձը կայ իմցող խայու ցաւը.
Մեզնէ լաւ է ճանճն ու խաւը...

Բայց դրա հետ միասին նա գիտէր, որ վարդեր չեն փռւած օտարութեան մէջ, որ պանդխտութեան ցուպը դէպի չարքաշութեան դուռն է տանում:

Ա՜խ, շաշխուն եմ, ինչ էրի.
Ղարիբ ընկայ, սիրտս կէրի.

երգում էր նա լալագին շեշտերով, բայց և այնպէս

[1]) «Արտօսր Հայաստանի» երես 174.

աւելի լաւ էր համարում պարիութեան մէջ «սիրտն երել», քան թէ հայրենի երկրում լուիկ-մնջիկ թաղւել:

Եւ գաղթականութիւնը տիրապետող բռնութեան հետ միասին շարունակւում էր զուգընթացաբար:

Տառապանքի ճշգրիտ աստիճանաչափն էր դա, որ տարէցտարի արագացնում էր իր թռիչքները, որովհետև բռնութեան ու հարստահարութեան հարւածներն էլ թափւում էին արագօրէն:

ԺԸ. ԱՂԵՐՍԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՆՔԸ

Հայերի վերաբերմունքը դէպի բօլգարական ապստամբութիւնը.— Վարժապետեանի կոնդակը.—Հայ կամաւորներ սուլթանական զօրքի հետ.—Կառավարութեան հայաջինջ ծրագիրը.— Վանի հրդեհը.— Բագրեանդի և Ալաշկերտի կոտորածը.—Խրիմեանի «Վանգոյժն» ու «Հայգոյժը.—Հայկական հարցը Սան Ստեֆանօի և Բերլինի դաշնագրերում.—Հիասթափում.—Նոր գործելակերպի կոչեր:

—

Արիւնոտ տարիներ էին: Բալկանեան թերակղզին նման էր ալեկոծ ծովի, ուր յորձանքների փոխարէն մարդկային համախմբումներն էին իրար դէմ ծառանում, արիւն ու աւեր պատճառում:

Բօլգարները պարզել էին ապստամբութեան դրօշակը՝—Ազատութի՜ւն կամ մահ...՜ նշանաբանով:

Իսկ թիւրք կառավարութիւնը հաւատարիմ մնալով իր վաղեմի քաղաքականութեան՝ դժոխային սարսափներով էր աշխատում խեղդել ապստամբութեան հրդեհը:

Եւ արիւնը հոսում էր առատօրէն:

Վերջապէս ասպարէզ է մտնում Ռուսաստանը, բռնկւում է ռուս-թիւրքական ահեղ պատերազմը «յանուն ազատութեան, յանուն քրիստոնեաների պաշտ-

պանութեան» (1877 թ.)։ Բօլգար ժողովուրդն էլ լալում է իր վերջին ճիգերը, առանց ընկճուելու ծանր զոհերից, դժնդակ պայմաններից։

Եւ Օսմանեան հորիզոններում ազատութեան զանգն է սկսում ղօղանջել՝ մեղմիկ, կամացուկ, իսկ յետոյ աւելի ու աւելի ուժգին։

Եւ այդ ձայնը կանչում է բոլոր ճնշուածներին, հալածուածներին գլուխ բարձրացնելու իրենց մարդկային իրաւունքները պաշտպանելու համար։

Բայց հայը, երկար դարերի այդ սորուկը, հեռու գաւառներում ագիտութեան և բռնութեան թանձր քօղի տակ մտած, կարծես չէր լսում այդ ղօղանջիւնը, չէր տեսնում բացւող արշալոյսը։

Իսկ Կ. Պօլսի էֆենդիական դասն աւելի ևս նըպաստում էր այդ սարկական լռութեանը, մի խորհըրդաւոր շեշտով մրմնջալով.

—Զգո՛յշ, զգո՛յշ, բօպէն վտանգաւոր է, ո՛չ մի բողոք փադիշահի դէմ, ո՛չ մի տրտունջ բարեխնամ կառավարութիւնից։

Նոյն իսկ այն ժամանակ, երբ ազատ Զէյթունից խորհուրդ էին հարցնում, թէ արդեօք նպատակայարմար չէ՞ բօլգարների օրինակին հետևել, հայերի կողմից էլ բողոքի մի ուժգին ձայն բարձրացնել, քաղաքագէտ էֆենդիները դարձեալ շշնջում են.

—Օ՜հ, ազգը կը կործանուի։

Զգո՜յշ, խաղաղ ճանապարհով, աղերսանքով աշխատենք մի բան ձեռք բերել։

Եւ այդ քաղաքականութիւնը հասնում է այնպիսի ծայրայեղ չափերի, որ նոյն իսկ Ներսէս պատրիարք Վարժապետեանը մի յատուկ կոնդակ է հրատարակում (1876 թ. Յուլիս) [1]), որով յիշեցնում է հայերին այն

[1]) Տես իմ «Գրական-գիտական ժողովածու» 1908 թ. եր. 67.

բոլոր «բարիքներն» ու «շնորհները», որ դարեր շարունակ վայելել են նրանք սուլթանական կառավարութեան շնորհիւ և վերջում կոչ է անում.

ա) աղօթել սուլթանի արևշատութեան համար.

բ) աղօթել, որ Աստուած «կայսերական արխագունդ բանակաց և զինուց աջողութիւն շնորհէ»։

և գ) օգնութիւն հասցնել «թէ նիւթական և թէ անձնական ծառայութեամբ»։

Պատրիարքական այդ կոչը միայն կովկասեան հայ առաջադիմական մամուլի զայրոյթն է շարժում, իսկ Կ. Պօլսում ընդհակառակը՝ հայ թերթերը եռանդագին գովաբանում են ու իրենց կողմից էլ նոյնը քարոզում։

Եւ կղերական-էֆենդիական ջանքերը գործնական որոշ արդիւնքի հասնում են։ Մօտ 40 հայ երիտասարդներ իբրև կամաւորներ միանում են սուլթանական զօրքերին, որպէսզի գնան զարկելու ապստամբ բօլգարներին։

Գովելի մի անձնազոհութիւն կարող էր համարուել դա, եթէ հարցը իսկապէս հայրենիքի պաշտպանութեան մասին լինէր։

Բայց ցաւն այն է, որ կառավարութիւնը, իր երկրի շահերը ոտնատակ տալով, արիւնոտ սարսափներով լռեցնել էր ուզում մի բուռն ժողովրդի, որը համարձակուել էր մարդկային իրաւունքներն յիշել, կեանքի ու գոյքի ապահովութիւն պահանջել։

Այդպիսի պարագաներում զինակից դառնալ սուլթանական զօրքերին կը նշանակէր ոճիր կատարել ազատութեան գաղափարի դէմ։

Եւ մի այդպիսի ոճիրը աւելի քան անպատշաճ էր մանաւանդ հայերին, որովհետև նրանք բօլգարներից ոչ պակաս տառապում էին տիրող բռնակալական կարգերից։

Ուշագրաւն այն է, որ հէնց այն ժամանակ, երբ Կ. Պօլսի հայերը սուլթանասիրութեան ջերմաջերմ ցոյցերն էին անում, աղօթքներ էին մրմնջում—կառավարութիւնը զբաղւած էր հայաջինջ մի ծրագրով։

—«Մայրաքաղաքին թիւրք լրագիրներէն մին բացէ ի բաց յայտարարած էր [1]), թէ Թիւրքիա կարող էր իր բոլոր ույժը Պալքաններու կողմը կենտրոնացնել, քանի որ հայերը որեւ է վտանգ չէին ներկայացնէր բացի Վանայ քաղաքէն, ուր հարկաւոր էր զսպել կասկածելի տարրերը։ Եւ զսպումը կատարւեցաւ հրդեհումով ու թալանումով խաղաղ ազգաբնակութեան մը, որ ոչ մէկ ապստամբական կամէութիւն ցոյց տւած էր»...

Այո, զգուշաւորութեան այդ ծրագրով էր, որ 1876 թ. նոյեմբերին տեղի ունեցաւ Վանի հայկական մասի սոսկալի հրդեհը թիւրք զինւորների ձեռքով, որին հետեւեց և թալանը։

Այդպիսով հազարաւոր մարդիկ մնում են անտունանտէր իրենց քանդւած օջախների շուրջը արիւն արցունք թափելու։

Այդ առիթով Խրիմեանը գրում է իր նշանաւոր «Վանգոյժը» իբրև «մի կաթիլ ջուր այրւած հայրենիքի վրայ»։

—«Ողորմիմ քեզ, ժողովուրդ հայոց, ասում է նա [2]), ողորմիմ. արդեօք լաւագոյն չէ՞ր քեզ, որ մի անգամ մեռնէիր և կնքէիր քո հանգստեան գերեզման և դու երթայիր դադարէիր առ հարս քո, քան թէ այսպէս ի գետին թաւալելով արիւնացամաք մեռնիս։

Ո՛հ, մինչև ե՞րբ անսամ քեզ, որ ինքնագոհ մեռնիլ սովիս, աշխարհ սովեցաւ այդ դասը, իր մրցանակն առաւ, դու դեռ անուս մանուկ մնացիր...»

[1]) Տես «Անահիտ» 1907 թ. № 1—2 եր. 9։

[2]) «Վանգոյժ» եր. 7.

Անձնապահութեան, ինքնապաշտպանութեան կռւի դասն էր, որ դեռ չէր սովորել հայը և Խրիմեանը վշտով, դառնութեամբ յիշեցնում է նրան այդ։

Ահա նա խօսում է Ղուրանի ու նրա թելադրած արարքների մասին, միևնոյն ժամանակ յուսոյ կոչ անելով հրդեհւած, թալանւած վանեցիներին։

—«Սակայն դուք մի վհատիք, Աւետարանի հալածեալ որդիներ, ասում է նա [1]). յոյս առ ու քաջալերւէ, ժողովուրդ հայոց, երկհազար ամ է, որ միշտ կը ջախջախւիս ու չես մեռնիր. պարսիկ, յոյն, արաբացին և կովկասեան բարբարոս ազգերը միշտ արշաւեցին ու քանդեցին քո հայրենիք, բայց դու անվկանդ, անյուսահատ տոկացող ոգի մի ունիս, որով կապրիս ու կը մնաս մինչև ցայսօր»։

Յոյս, տոկունութիւն, որովհետև

—«Գարուն մօտ է, հայոց աշխարհ, և պիտի գայ ծիծեռնակ քեզ աւետիս տայ, թէ Թիւրքիոյ աշխարհին երկունք կանցնի և իր վերածնութեան օրը հասած է, և դու տես յայնժամ թէ ինչպէս այդ մոխրակոյտ ագարակն անդրէն բողբոջելով կը կանաչի, և քո վերջին բարգաւաճ կը լինի քան զառաջին»։

Բայց դեռ այդ «գարունը» չը բացւած՝ տեղի է ունենում Բագրևանդի ու Ալաշկերտի հայերի սոսկալի կոտորածը, ըստ երևոյթին դարձեալ նոյն «զսպումի» նպատակով։ Կառավարութիւնը զսպում էր մի ժողովրդի, որ աւելի քան զսպւած էր ստրկութեան պինդ զսպանակով։

Խրիմեանը նորից բարձրացնում է իր ձայնը «Հայգոյժի» միջոցով հայի վիշտը ողբալու։

—Ո՛հ, ես կը փափագիմ, գրում է նա, որ մի անգամ արձակւիմ այս պանդխտութեան շղթայէն, եր-

[1]) Ibid եր. 11 և 15.

թամ ոտքով շրջեմ և աչքով տեսնեմ մեր աւերուած աշխարհ, և թէ լամ՝ թող արտասուքս այն կարմիր հողոյն վրայ թափի, ուր կոտորեցան հայեր և ուր թափեցաւ անմեղ մանուկներուն և անբիծ կոյսերուն արիւնը։ Ո՜վ անպարտ զոհերու հրաշագործ արիւն, արդեօք հայոց մեռեալ ու մոխրացեալ հողերուն նոր կենդանութիւն պիտի տաս»...

Սակայն «Խրիմեանը մի լալկան մանուկ չէր»։

Լացի հետ միասին նա յուսոյ և բողոքի շեշտն էր հնչեցնում.

—«Զրկւարանենք սակայն, ասում է նա, և ողբերով չը յուսահատինք... Լանք, ապա և բարձրաձայն աղաղակենք»...

Այո, ողբում է Հայրիկ հայոց աշխարհի արիւն-ցաւերը, ողբում է մորթոտուած անմեղ մանուկներին, որդեկորոյս մայրերին, բռնաբարուած ու յօշոտուած կոյս աղջիկներին, բայց այդ բոլորից յետոյ իր առաջ վառում է վարդ-հեռանկարը՝ «հայոց աշխարհի ազատութիւնը»։

—Ողբամ զքեզ, ասում է նա [1]), մանուկ մայրակորոյս, կասեն թէ քո մայր մինչ ի փախուստ կը խուճապէր, մոռցաւ մայրական սրտի գորով, ձգեց թողուց զքեզ մի վարած արտի ակօսին մէջ, թերևս հաւատաց Քրիստոսի խօսքին և ասաց, թէ մանկիկս իբրև ցորենահատիկ մի ցանեմ հայրենի հողին մէջ. թող մեռնի, որ բեղմնաւորի հատիկս բազմապատիկ հատօք ցորենով։

Եւ ինչ է այդ—Հայոց աշխարհի ազատութիւն»։

Հայրիկը շատ լաւ գիտէր, որ բուն ինքնագործունէութեան ուղին է միայն, որ տանում է դէպի

[1]) «Հայգոյժ» եր. 15.

ազատութիւն։ Նրա ողբերի մէջ կարմիր թելի նման նշմարւում է այդ գաղափարը։

Ահա նա դիմում է հայոց մայրերին և կանչում [1])։

—«Ողբամ զձեզ, հայոց մայրեր, որ կորուսիք ձեր լծակից ամուսիններ և սիրական զաւակներ, թէ մեռաք՝ երանի ձեզ. թէ ողջ մնացեր էք՝ եղո՜ւկ ձեզ։

Ա՜հ, ինչ կը լինէր, որ դուք եւ այն Մշեցի դիւցազն կնոջ պէս զօրանայիք, ձեր վշտակրութեան և հալածանաց մէջ կամակար մեռնէիք կրօնի սրբութեան համար, ձեր զաւակաց սիրոյն համար, ձեր համեստ պատկառանաց համար. միթէ այժմ կապրէ՞ք դուք, և լուսագոյն չէ՞ր ձեզ մեռնիլ, քան այդ չարավիշտ կեանք»։

Դիւցազնական մահով մեռնել և ոչ ստրկական—այդպէս էր թելադրում Հայրիկը հայ մայրերին։

Բայց աւելի ուժգին, աւելի ցասկոտ է նրա կոչը ամբողջ ժողովրդին ուղղած։

—Յո՜ւշ, յո՜ւշ, ո՜վ կոտորուած զառներ, ո՜վ հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, որ դեռ պիտի կոտորւիք, դեռ պիտի մորթւիք, քանի որ անզէն, անեղջիւր, անասպար կապրիք։ Դուք մարդ էք, ձեռք և բազուկ ունիք, միթէ անզգացած մեռե՞ր է ձեր սրտմտութեան հոգին. միթէ կը հաւատա՞ք որ իշխանութեան աչքը հասնի մինչև Հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեզ պահապան լինի»...

Դա առաջին բացարձակ կոչն էր հայ մամուլի մէջ զէնքի, բազուկների գործունէութեան վերաբերմամբ։

Բայց, ինչպէս ասացինք, այլ կերպ էին մտածում «ազգի երեսլիները», Կ. Պոլսի էֆէնդիները։ Զէնքերի շաչիւնը, ապստամբական զոռ հնչիւնները սարսուռ էին ազդում նրանց վրայ, ուստի սողալու, աղերսելու միջոցն էր թւում միակ փրկութիւնը։

Միակ ըմբոստացումը դրանց կողմից բռնկումն է

[1]) «Հայգոյժ» եր. 16.

միայն այն ժամանակ, երբ սուլթանական կառավարութիւնը Ռուսաստանի յաղթանակներից ճնշուած հրամայում է քրիստոնեաներից էլ զօրք հաւաքել՝ պատերազմի դաշտ ուղարկելու համար:

Ազգային ժողովը այդ հարցին բացասական պատասխան է տալիս, որով սուլթանական հրամանը մեռած տառ է թողնւում հայերի կողմից:

Այսպէս թէ այնպէս պատերազմը մօտենում է իր վախճանին և հայոց պատրիարքն ու մի խումբ էֆենդիներ եռանդուն փորձեր են սկսում յանուն հայկական դատի: Նրանք աշխատում են մի կողմից սուլթանի սիրտը սիրաշահել, որպէս զի նա հայկական դիմումները ըմբոստացում չը համարէ, իսկ միւս կողմից բաղխում են դիպլոմատիայի դուռը՝ ցանկալի բարենորոգումներ ստանալու նպատակով:

Եւ Ներսէս Վարժապետեանի ջանքերի շնորհիւ աջողւում է Սան-Ստեֆանօի դաշնագրում (1878 թ.) յատուկ յօդուած մտցնել հայերի մասին (§ 16).

—«Քանի որ ռուսաց զօրքերը, ասում է այդ յօդուածը, Հայաստանում գրաւած երկիրներից յետ քաշւելու դէպքում յիշեալ տեղերում կարող են տեղի ունենալ կռիւներ ու բարդութիւններ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները խանգարել կարող են, ուստի Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական կարիքները հայոց բնակած նահանգներում և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քիւրդերի և չէրքեզների դէմ»:

Հայերը շատ լայն մտքով են բացատրում այդ յօդուածը, ենթադրելով, թէ արդէն իրականութիւն է դառնում հայկական ինքնավարութիւնը:

Իսկ դիպլոմատիան դա մի պատրուակ է համարում Ռուսաստանի ձեռքում՝ գրաւած հայկական նահանգներից չը հեռանալու համար:

Թէ այդ կէտը և թէ առհասարա՛կ Սան-Ստեֆանօի ամբողջ դաշնագիրը բնաւ չէր կարող հաճելի լինել եւրոպական մեծ պետութիւններին և մանաւանդ Անգլիային, ուստի և վերջինս փորձում է խոչնդոտներ բարձրացնել:

Թիւրքիայի հետ գաղտնի կերպով կնքելով Կիպրոսի դաշնագիրը, Անգլիան հարց է դնում, որ Սան-Ստեֆանօի դաշնագիրը վերաքննութեան ենթարկւի:

Եւ Ռուսաստանը համաձայնում է, չուզենալով վտանգաւոր բարդութիւնների տեղիք տալ:

Որոշւում է Բերլինում գումարել վեհաժողով: Այդ հանգամանքից դրդուած Ներսէս պատրիարք Վարժապետեանը յատուկ պատգամաւորութիւն է ուղարկում եւրոպական արքունիքները՝ հայոց ցաւերը պատմելու և դեղ ու դարման աղերսելու համար:

Խրիմեանը Մինաս Չերազի ուղեկցութեամբ գնում է Հռոմ, Փարիզ, Լոնդոն և Բերլին, իսկ Խորէն Նարպէյը՝ Պետերբուրգ և ապա Բերլին [1]:

Ուշագրաւն այն է, որ պատրիարքարանը այդ բոլոր քայլերը կատարում էր սուլթանական թոյլտւութեամբ:

Առհասարակ թիւրք. կառավարութիւնը այդ տարիներում մի առանձին սիրալիրութիւն էր արտայայտում դէպի հայերը:

Մեծ վեզիր Միդհատ փաշան Վարժապետեանի մօտ այցելելութեան գալով խոստումներ է տալիս՝ սիրելի հայոց ազգի տառապանքները վերացնել:

Սուլթան Աբդուլ Համիդը Օսմանիէ շքանշանն է շնորհում Վարժապետեանին, ասելով.

—«Ես սիրում եմ իմ բոլոր հպատակներին և մանաւանդ իմ հայոց ազգը, որ այժմեան ծանր հանգամանքներում ցոյց տուեց իր անխախտելի հաւատարմութիւնը»:

Աննպատակ չէր, ի հարկէ, Եւլդըզի այդ փայփայանքը հայերի վերաբերմամբ: Դա մի միջոց էր նրանց պահանջկոտութիւնը թմրեցնելու, արտաքին յոյսերը նսեմացնելու համար:

Բայց առանց դրան էլ հայ էֆենդիներին վիճակւած չէր իրենց սպասելիքների իրականացումը տեսնել:

Բերլինի վեհաժողովը ոչ միայն անուշադիր է

---

[1]) Մանրամասները տես իմ «Հայկական շարժման արշալոյսին» յօդուածում 1908 թ. «Գրական գիտական ժողովածուի» մէջ եր. 66—104.

թողնում Վարժապետեանի ծրագիրը «հայկական ինքնավարութեան» մասին, այլ և Սան-Ստեֆանօի § 16-ը ոչնչացնում է, փոխարէնը դնելով դժբաղդ 61-րորդ յօդուածը, որ ասում է.

—«Բ. Դուռը յանձն է առնում անյապաղ իրականացնել բարեփոխութիւնները և վերանորոգումները, որ պահանջում են տեղական պէտքերը հայաբնակ նահանգներում և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չէրքեզների և քիւրդերի դէմ:

Բ. Դուռը այդ նպատակով ձեռք առած միջոցների մասին պարբերաբար պէտք է տեղեկութիւն տայ մեծ պետութիւններին, որոնք հսկելու են նրանց գործադրութեան վրա»:

Հայ պատգամաւորութիւնը Բեռլինից վերադառնում է հիասթափուած ու յուսախաբուած, նախապէս մեծ պետութիւնների ներկայացուցիչներին ուղղելով մի բողոքագիր, որի մէջ դառնութեամբ յիշւում է, թէ հայերը արդէն հասկանում են, որ «սխալած են, որովհետև խաղաղասէր եղան»:

Դրանից աւելի ուշագրաւ է հայ մտքի կերպարանափոխութիւնը Կ. Պօլսում: Այստեղ ղեկավար ույժերը կարծես մէկը միւսին գերազանցել են ուզում՝ ժողովրդին նոր կոչեր ուղղելու մէջ:

Խրիմեան Հայրիկը իր քարոզում [1]) ազատութիւնը նմանեցնում է հարիսայի, որը ձեռք բերելու համար երկաթէ շերեփներ՝ զէնքեր պէտք է ունենալ:

Խորէն Նար-Բէյ [2]) հայկական անաջողութեան պատճառը ժողովրդի անտարբերութիւնն ու անգործութիւնն է համարում:

Վարժապետեանը [3]) շեշտում է, որ պէտք է պատրաստել ապագայի համար:

Մինաս Չերազ [4]) և Գարեգին վ. Սրւանձտեան [5]) խորհուրդ են տալիս այլևս օտարի վրայ յոյս չը դնել, այլ անձամբ պատրաստել ու գործել:

Իսկ սահմանից այս կողմը՝ հայի ազգային ցա-

[1]) Տես «Արմենիա» 1881 թ. № 7.

[2]) «Ատենագրութիւնք ազգ. ժողովոյ» 1878 թ. եր. 212.

[3]) Ibid եր. 68.

[4]) «Ի՞նչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն» և «Հայաստան և Իտալիա» գրքոյկները:

[5]) Տես «Փորձ» 1879 թ. № 2, եր. 166.

ւերի երգիչ Գամառ-Քաթիպան իր ոտանաւորներով բացարձակ կոչ է անում թիւրքահայերին «վիզ չը ծկել», »հաստատութիւնը չը մուրալ» այլ զէնքով պահանջել:

Րաֆֆին էլ իր վէպերով այդպիսի գործունէութեան ուղեգիծն է պատկերացնում:

Մի խօսքով՝ բոլոր ծայրերից, բոլոր շրջաններից կոչեր են հնչում դէպի ինքնագործունէութիւն յանուն ազատութեան:

Իսկ կեանքը այդ կոչերից աւելի մեծ թափով մղում էր ժողովրդին դէպի գործնական բողոքի ու ինքնապաշտպանութեան կազմակերպման ուղին:

Ելդըզը, որ պատերազմի ընթացքում այնպէս գուրգուրում էր «իր սիրելի հայոց ազգին», շատ շուտով մոռանում է բոլոր խոստումները և Բերլինի դաշնագրի 61-րորդ յօդուածն էլ թաղում խոր գերեզմանում:

Բռնութիւնը, հարստահարութիւնը ոչ թէ մեղմանում են, այլ օրէցօր ուժեղանում:

Միդհատեան սահմանադրութիւնը ոչնչացնելուց և երիտասարդ թիւրքերին բոլորովին քայքայելուց յետոյ սկսուած հալածանքի քաղաքականութիւնը ամենամեծ չափերով իր լուծը գցում է հայերի վզին, հէնց դրանով նպաստելով ըմբոստ հոսանքի առաջ գալուն ու զարգանալուն:

Բայց այդ նոյն քաղաքականութիւնը և երկրի օրէցօր աճող թշւառութիւնը նորից ոտքի են հանում բողոքող ույժեր նաև թիւրքական շրջաններից, նորից ասպարէզ են քաշում երիտասարդ թիւրք հոսանք:

Տեսնենք ուրեմն թէ միևնոյն պայմաններում, թէև տարբեր ժամանակներում և տարբեր ուժգնութեամբ ծնունդ առած հայկական ու թիւրքական այդ հոսանքները ի՞նչ ուղիով են հասել ներկայ օրերին, ի՞նչ ելևէջներ են ունեցել և ի՞նչ չափով շփւել ու գործակցել են միմիանց:

Այդ հարցերի լուսաբանութեանը նւիրուած կը լինի աշխատութեանս երկրորդ մասը:

ԳԼԽԱՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐԸ

Ո՞ր երես.	Ո՞ր տող	Տպւած է	Պէտք է լինի
30	7	ամբո այսրութիւնը	ամբողջ կայսրութիւ-
45	9	սետաքսէ	մետաքսէ
52	3	յամաւոր	յարմարաւոր
63	19	պօսթաքենդ	պօսթաքենտ
66	4	խոցերի	խուցերի
77	10	140 ֆրանկ	140 միլլիօն ֆրանկ
102	5	ռավարւելու	ռավարելու
126	16	գե	գի
134	13	փոփոխութիւը	փոփոխութիւնները
141	22	որի	որք
143	22	արամադրութիւն.	տրամադրութիւններ
156	24	պնւճէն	պիւճէն
156	29	որ եղած. են	որ եղած են։
179	31	պնդութեամբ։	պնդութեամբ
196	5	ունեի	ունեն
197	15—16	օրինտկան	օրինակ
212	10	եկեկւայ	երեկւայ
224	12	չախով	չափով

Բացի այս բոլորից 152 երեսում, 27—28 տողում աւելորդ շարւած է «Նմանապէս Նախարարց հետ ի միասին»։

Ռաշիդ անունը գործ է ածւում մերթ իբրև Ռեշիդ, մերթ իբրև Բեշիդ։ Բոլոր տեղերում պէտք է կարդալ՝ Ռաշիդ։

Թայիֆ գործ է ածւած՝ Այիֆ, Տայիֆ, պէտք է կարդալ Թայիֆ։

Բովանդակութիւն

Ա. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԶՕՐԱՆԱԼԸ

Թիւրքերի նախնական հայրենիքը.—Գաղթականութիւն դէպի Արևմուտք.—Թիւրքերը-մահմեդական.—Նրանց ռազմական դերը.—Օսմանեան պետութեան հիմնւելը.—Արագընթաց հզօրութիւն.—Թիւրքիան՝ հիւանդ . . . . . . եր. 4—12

Բ. ԻՍԼԱՄԻ ԴԵՐԸ

Ղուրանը.—Իսլամը և ազգային հարցը.—Աշխարհի երկու մասերը ըստ ղուրանի.—Իսլամի դերը պատերազմների ժամանակ.—Ղուրանն ու աւետարանը.—Խալիֆ Օմարի պատւիրանները.—Ղուրանը իբրև քաղաքացիական օրինագիր.—Իրաւական անհաւասարութիւն.—Նմուշներ հայ իրականութիւնից.—Հիւպատոսների կարծիքները.—Իսլամի դերը մահմեդականների վերաբերմամբ.—Ընտանեկան կեանք.—Մահմեդական կինը.—Կրթական գործը . . . . եր. 13—29

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՕՆՆԵՐ

Թիւրքիայի մեծութիւնը.—Վիլայէթներն ու սանջակները.—Ազգաբնակութիւն.—Երկրի բնական հարստութիւնները.—Հողատիրութեան ձևերը.—Երկրագործութիւնը և նրան փասող պայմանները.—Անասնապահութիւն.— Ջկնորսութիւն.— Արդիւնագործութիւն.—Հաղորդակցութեան միջոցներ.—Վաճառականութիւն, եր. 30—54

Դ. ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Սուլթանների քաղաքականութիւնը.—Կրօնական ազգային խտրութիւնը.—Բէդել-ասկերիէն.—Աշար և միւս հարկերը.—Կեղեքման նմուշներ.—Բռնութեան սարսափ-

ներ.—Բիւրոքների, չերքեզների դերը.—Կառավարութիւնը ի՞նչ է ստանում ժողովրդից և ի՞նչ է անում. եր. 55—69

Ե. ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Սուլթանը Խալիֆ.—Նրա ազդեցութիւնը.—Ինչպէս են ծախսւում ժողովրդական փողերը.—Աբդուլ Ազիզի և Աբդուլ Համիդի հարեմները.—Հարեմի ծախսերը.—Սուլթանը և միւս միապետները.—Պաշտօնեաները.—Բաշխիշի դերը.—Մինիստրներ ու լրտեսներ. եր. 70—80

Զ. ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՅՔԱՅՈՒՄ

Ի՞նչ էր կատարւում երկրի ներսում.—Արտաքին ազդեցութիւններ.—Մեծ պետութիւնների և կապիտալիզմի ձգտումները.—Թիւրքիայի կորուստները.—Ջանքեր դրա դէմ. . . . . . եր. 81—85

Է. ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Հին ցաւը.—Ենիչերիների դերը և նրանց ոչնչացումը.—Ռաշիդ փաշան.—Խաթթի Շերիֆը.—Թանզիմաթը.—Ղրիմի պատերազմը և Խաթթի Հիւմայունը.—Դրութիւնը չէ փոխւում.—Ապստամբական կայծեր.—Պարիզի կոմմունան և երիտասարդ Թիւրքերը.—Հիասթափումն. . . . . . եր. 86—108

Ը. ՊԱԼԱՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐ

Սուլթան Աբդիւլ Ազիզի շռայլութիւնը.—Հալածանքներ.—Գրաքննութիւն.—Բօլգարական նոր ապստամբութիւն.—Սօֆտաների դասադուլը.—Աբդուլ Ազիզը գահընկեց.—Սուլթան Մուրադի հրովարտակները.—Սուլթան Մուրադը խելագար.—Աբդիւլ Համիդը գահ է բարձրանում.—Դեսպանաժողով Կ. Պօլսում.—Երիտասարդ Թիւրքերի ջանքերը. . . եր. 109—129

Թ. ՄԻԴՀԱՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Սուլթանական Խաթթին Միդհատ փաշայի անունով.—Աբդուլ Համիդը գահ բարձրանալուց յետոյ.—Շեղումն խոստումներից.—Ի՞նչ փոփոխութիւններ է մտցնում.—

Սահմանադրութեան հրատարակումն.—Նրա բովանդա- եր. 130—160
կութիւնը. . . . .

Ժ. ՄԻԴՀԱՏ ՓԱՇԱՆ ՀԱԼԱԾԱԿԱՆ

Սուլթանը Միդհատ փաշայի դէմ.—Միդհատի Թագրիրը.
—Սուլթանի երկիւղը.—Միդհատ փաշան բանտարկւած.
—Աքսոր.—Միդհատը նորից պաշտօնի է կանչւում.— . եր. 161—167
Ջերբակալութիւն. . . .

ԺԱ. Դ Ա Տ Ե Ւ Մ Ա Հ

Դատավարութիւն վրանում.—Ո՞վքեր են մեղադրւում.
Դատավարութիւն վրանում.—Ո՞վքեր են մեղադրւում.
—Հարցաքննութիւն.—Սուլթանի գաղտնի հրահանգ-
ները.—Դատավճիռ.—Վրդովմունք Եւրոպայում.—Անգ-
լիայի միջամտութիւնը.—Գլադստոնի ճառը պարլա-
մենտում.—Գործի վերաքննութիւն.—Միդհատ փաշայի
ճառը.—Մահւան դատավճիռը փոխւած.—Փաշաներըթա-
յիֆ աքսորավայրում.—Ի՞նչպէս մահացրին նրանց.— եր. 168—183
Միդհատ փաշայի գլուխը Եւլըզում. .

ԺԲ. ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Պարլամենտի բացումը.—Սուլթանի պատգամագիրը.—
Առաջի նստաշրջանի գրագմունքներ՝ ազգային իրաւա-
հաւասարութեան, փոքրամասնութեան իրաւունքի, լե-
զուների, պատերազմական ծախքի ու պաշտօնեաների
ռոճիկի հարցերը.—Հայկական հարցը.—Օրինագծեր.—
Երկրորդ նստաշրջան.—Սուլթանի ճառը.—Բողոքներ.—
Հարցապնդում պատերազմի մասին. — Պարլամենտը
փակւած. . . . . եր. 184—207

ԺԳ. ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԸ ՄԻԴՀԱՏ ՓԱՇԱՅԻՑ ՅԵՏՈՅ

Միահեծանութիւն և կեղծ սահմանադրականութիւն.—
Սուլթան Համիդի գործելակերպը.—Սահմանադրու-
թիւնը թաղւած.—Բռնակալութիւնը ուժեղանում է.—
Ի՞նչ են անում երիտասարդ Թիւրքերը.—Արտագաղթ
և կերպարանափոխութեան շրջան.—Էվօլիւցիայից դէ-
պի ռեվօլիւցիա.—Ի՞նչ գնով. . . եր. 208—214

ԺԴ. ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Վիճակագրութեան բացակայութիւն. — Կառավարու-

թեան ձգտումը.—Ի՞նչ են ասում հին ու նոր աղբիւրները.—Ամփոփումն. . . . եր. 215—224

ԺԵ. ՀՈՍԱՆՔՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Հայերը և Թիւրքական արշաւանքները.—Սուլթանների հովանաւորութիւն.—Գաղթ դէպի Կ. Պօլիս.—Հայ կաթոլիկների և լուսաւորչականների պայքարը.—Հալածանք կաթոլիկների դէմ.—Նոր հոսանքներ.—Արհեստաւորների և ամիրաների պայքարը դպրոցական հարցի շուրջը.—Խրիմեանի և գաւառացի երիտասարդութեան ազդեցութիւնը.—Հայոց ազգային սահմանադրութեան նախօրեակին. . . եր. 225—240

ԺԶ. ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յանձնաժողովներ «Սահմանադրութեան» մշակման համար.—Նրանց յայտարարութիւնը Բ. Դռան.—Հիմնական սկզբունքներ.—Էֆէնդիական դասի ազդեցութիւնը.—Հոսանքներ «սահմանադրութեան» շուրջը.—Լուսաւորեալք և խաւարեալք.—Զէյթունի ապստամբութեան ազդեցութիւնը.—Կ.Պօլսի մամուլի և երիտասարդութեան պահանջները. — Սահմանադրութիւնը հաստատուած.—Թաքթաքեան պատրիարքի փորձունքը. եր. 241—257

ԺԷ. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Կ. Պօլիս և գաւառը.—Ազգային ժողովի առաջին տեղեկագիրը գաւառական հարստահարութիւնների մասին.—Խրիմեանի կարծիքը. Նոր տեղեկագիրներ.—Ընթացիկ գրականութիւնը հայկական տառապանքի մասին.—Բ. Դուռը և Ներսէս Վարժապետեան.—Փաստերի ցուցակը.—Կ. Պօլսի հայ մամուլի բողոքը.—Գաղթականութիւն. . . . եր. 258—273

ԺԸ. ԱՂԵՐՍԱՆՔՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Հայերի վերաբերմունքը դէպի բուլգարական ապստամբութիւնը.—Վարժապետեանի կոնդակը.—Հայ կամաւորներ սուլթանական զօրքի հետ.— Կառավարութեան հայաջինջ ծրագիրը.—Վանի հրդեհը.—Բագրեւանդի և Ալաշկերտի կոտորածը.—Խրիմեանի «Վանգոյժն» ու «Հայգոյժը».—Հայկական հարցը Սան Ստեֆանօի և Բերլինի դաշնագրերում.—Հիասթափում.—Նոր գործելակերպի կոչեր. . . եր. 273—283

Հայաստանի Ազգային գրադարան
NL0422882

18245